

ԽԱՉԻԿ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ
ԽԱՉԻԿ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



THE COLOPHONS OF THE
ARMENIAN MANUSCRIPTS
KHACHIK A. HARUTYUNYAN



Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋեՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի տպագրությունը հովանավորելու համար

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book



MATENADARAN
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

KHACHIK A. HARUTYUNYAN

**THE COLOPHONS OF THE
ARMENIAN MANUSCRIPTS**

YEREVAN
2019

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԽԱԶԻԿ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ
2019

ՀՏԳ 09
ԳՄԳ 76.11
Հ 422

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

հմբագիր՝ պ.գ.դ. Գեվորգ Տեր-ՎԱՐԳԱՆՅԱՆ

Հարությունյան Խ. Ա.
Հ 422 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ/
Խ. Ա. Հարությունյան.- Եր.: Մատենադարան, 2019.- 432 էջ
(16 էջ ներդիր):

Ուսումնասիրությունը նվիրված է հայ միջնադարյան գրչաշխարհում լայն տարածում ունեցած հիշատակարանագրության ավանդույթի բացահայտմանն ու արժևորմանը: Աշխատանքում ֆննդության են առնված հայերեն հիշատակարանների բաղադրատարրերը, վերջիններիս արտահայտության տարաբնույթ եղանակները, կաղապարային դրսևորումները: Քննված են նաև հայերեն հիշատակարանների գրական արժեքն ու լեզվական ընդհանուր նկարագիրը: Առանձին անդրադարձ է արվում հայերեն հիշատակարանների հավաքման և հրատարակման պատմությանը: Ուսումնասիրության նպատակն է առավել ամբողջական և համակողմանի ներկայացնել գրավոր այս հուշարձանն իր հիմնական առանձնահատկություններով և դրսևորման եղանակներով: Գիրքը նախատեսված է ձեռագրագետների, միջնադարագետների, աղբյուրագետների, բանասերների, արվեստաբանների և հայ գրչության պատմությամբ հետաախրվողների համար:

ՀՏԳ 09
ԳՄԳ 76.11

ISBN 978-99941-890-9-0
© Մատենադարան, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	9
1. Հայերեն ձեռագրերի հիշատակարանների հավաքման և հրատարակման ընթացքը. ԺԹ-ԻԱ. դարեր	15
2. «Հիշատակարան» բառի իմաստային կիրառությունները հայ մատենագրության մեջ. հիշատակարանը՝ որպես եզր	37
3. Հիշատակարանի սահմանումը, զարգացման ընթացքը և տեսակները՝ ըստ գրչության ժամանակի և հիշատակագիրների	46
4. Հիշատակարանի տեղը ձեռագրում	62
5. Հայերեն ձեռագրերի հիշատակարանների կառուցվածքը և բաղկացուցիչ տարրերը	84
5.1. Փառատրական հատվածը	86
5.2. Ընդօրինակված մատյանի ներկայացումը և արժևորումը	91
5.3. Գրչության թվականի արձանագրումը	97
5.4. Գրչության վայրի արձանագրումը	105
5.5. Գրչի անվան արձանագրումը	111
5.6. Ծաղկողի անվան արձանագրումը	133
5.7. Պատվիրատու-ստացողի անվան արձանագրումը	141
5.8. Գաղափար օրինակի հիշատակումը	158
5.9. Ընթերցողներին ուղղված՝ հիշատակագիրների խնդրանք-հորդորները	172

5.9.1. Հիշման արժանի անելու խնդրանք.....	172
5.9.2. Ձեռագրի պահպանմանն ուղղված հորդոր-խնդրանք	177
5.9.3. Հիշատակարանը չփչացնելու և անունները չեղծելու խնդրանք	186
6. Հիշատակարանային կաղապարներ	198
7. Հիշատակարանները ձեռագրաստեղծման գործընթացի և ձեռագրերի առքուվաճառքի մասին	218
8. Կենցաղը հիշատակարաններում	246
9. Սուրբգրային վկայակոչումները հիշատակարաններում	261
10. Ովքե՞ր և ի՞նչ նպատակով են սովորաբար նշվել հիշատակարաններում	277
11. Հիշատակարանների գրական արժեքը, գրիչը՝ որպես հեղինակ	287
12. Հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, ընդհանուր նկարագիր	307
13. Հիշատակարանները և գրավոր նմանաբնույթ հուշարձանները	318
14. Մատենագիտություն հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակությունների	332
Պատկերաշար	351
The Colophons of the Armenian Manuscripts (summary)	369
Վկայակոչված գրականություն	376
Օժանդակ գրականություն	398
Անձնանունների ցանկ.....	404
Տեղանունների ցանկ.....	427

*Ո՛հ, ո՛ր ձեռք, որ փտիս,
Ո՛ր մատունք, որ հողանաս,
Ո՛ր հոգի, որ Աստուած դառնաս.
Ձեռս փտի եւ գիրս յիշատակ մնայ...*

Մարգար գրիչ, 1657 թ., ՄՄ Հ^մ 5875, 251ա



УУ 2^др 189, 469uu



ԱՌԱՋԱԲԱՆ

Միջնադարյան հայկական գրավոր հուշարձանների շարքում իրենց ինքնատիպ ու հարուստ տեղեկութուններով առանձնահատուկ տեղ են գրավում հայերեն ձեռագրերի հիշատակարանները: Գրավոր այս աղբյուրները նախ և առաջ հայոց գրչաշխարհի, նրա անխոնջ մշակների, ձեռագրակերտման օջախների և ձեռագրաստեղծ աշխատանքի մասին վկայող առաջնակարգ սկզբնաղբյուրներ են, և նրանցում պահպանված ու սերունդներին ավանդված բազմաթիվ տեղեկութունները մեծ արժեք են ներկայացնում հատկապես հայկական ձեռագրագիտությանը վերաբերող ամենատարբեր հարցերի ուսումնասիրության և լուսաբանման համար:

Հատկանշելի է, սակայն, որ գրավոր այս հուշարձանները ոչ միայն մատյանների ստեղծմանը, գնմանը կամ նորոգմանն առնչվող մանրամասների հիմնական տեղեկատուն են, այլև շատ հաճախ ժամանակի հասարակական, քաղաքական անցուղարձերի, կենցաղի, ժողովրդական նիստուկացի մասին վկայող եզակի սկզբնաղբյուրներ, որի շնորհիվ մշտապես եղել են տարբեր բնագավառների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հայերեն հիշատակարանների նկատմամբ այդ հետաքրքրությունն այսօր էլ չի նվազում. հրատարակված և հրատարակության պատրաստվող հիշատակարանային նորանոր հատորները սպասված են հայոց միջնադարի ամենատարբեր հարցեր քննող մասնագետների համար: Հայերեն ձեռագիր հիշատակարաններին նվիրված տասնյակ ուսումնասիրությունները, որոնք մատենագիտական ցանկի տեսքով մեկտեղել ենք սույն

գրքի «Մատենագիտություն հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակությունների» բաժնում, հաստատում են քննվող գրավոր հուշարձանների ընձեռած աղբյուրագիտական լայն հնարավորությունները:

Պետք է նաև նկատել, որ ձեռագրի հիշատակարանը՝ իբրև գրական երևույթ, ինքնուրույն հուշարձան է, հիշատակագրի մտավոր աշխատանքի արգասիքը, և, որպես կանոն, այն անկախ է մատյանի բովանդակությունից: Այդ գիտակցումով հիշատակագիրներից ոմանք չեն բավարարվել հիշատակարանի տարածված և ավանդական կաղապարներով ու հանդես են եկել իբրև ստեղծագործ անհատներ, հորինել ու շարադրել են գեղեցիկ բանաստեղծություններ, տաղատիպ հիշատակարաններ կամ ծավալուն պոեմներ՝ ընդարձակելով հիշատակարանագրության սահմաններն ու հարստացնելով գրավոր այս հուշարձանների արտահայտության ձևերը: Կարելի է վստահորեն նշել, որ իր դրսևորման տարբեր եղանակներով հիշատակարանը հայերեն ձեռագրի անբաժանելի մասն է, նրա անքակտելի բաղադրիչը: Մեր այս խոսքի հիմքում ներկա ուսումնասիրության մեջ բերվող վիճակագրական տվյալներն ու համեմատություններն են, որոնք վկայում են հայկական ձեռագրաստեղծման մշակույթում հիշատակարանագրության սովորույթի տարածվածության մասին: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հայերեն ձեռագիրը դժվար է պատկերացնել առանց հիշատակարանի, եթե վերջինիս բացակայությունը պատճառաբանված չէ:

Հարկ է նկատել, որ մատյանում հիշատակարան գրելը և ձեռագրաստեղծման հանգամանքների մասին տեղեկություններ հաղորդելը գուտ հայկական երևույթ չէ. գրանք հատուկ են ձեռագրական գրեթե բոլոր մշակույթներին (հունական, լատինական, ասորական, ղպտական, եթովպական, արաբական, սլավոնական, չինական, հնդկական և այլն), սակայն ինչպես ցույց են տալիս մեր որոնումները, հայերեն հիշատակարանները վերջիններից տարբերվում են մի կողմից իրենց քանակով, ծավալով և բովանդակային բազմազանությամբ, մյուս կողմից՝ կառուցվածքային և լեզվա-ոճական ընդհանրություններով, որոնք էական

դեր և նշանակություն են ունեցել գրավոր այս հուշարձաններին ինքնուրույնություն հաղորդելու և ինքնատիպ ժանր ձևավորելու հարցում: Նշենք նաև, որ ժանրային որոշակի կանոններն ու հիշատակարանագրություն ավանդույթը չխախտելու, լեզվական մեղանշումներից խուսափելու և հիշատակագիրների աշխատանքը դյուրացնելու նպատակով միջնադարյան հայկական գրչօջախներում ստեղծվել են մինչև անգամ հիշատակարանային կաղապարներ, ձևավորվել լեզվական կայուն արտահայտություններ և դարձվածներ, որոնք մեծ տարածում են գտել հայոց գրչաշխարհում:

Հայերեն հիշատակարանների այս դրսևորումներն աննկատ չեն մնացել նաև նախընթաց շրջանի հետազոտողների և առաջին հերթին հիշատակարանների ժողովածուները կազմողների շրջանում, որոնք սովորաբար իրենց երկերի առաջաբաններում արել են արժեքավոր դիտարկումներ գրավոր այս հուշարձանների տարբեր առանձնահատկությունների վերաբերյալ: Առանձին հետազոտողներ ևս տարբեր առիթներով անդրադարձել են հայերեն հիշատակարանների պատմական, կառուցվածքային, բովանդակային և այլ դրսևորումներին, դրանց յուրահատկություններին, որոնց մասին խոսվում է սույն գրքի համապատասխան բաժիններում, մյուսներն էլ տեղ են գտել «Մատենագիտություն» բաժնում:

Վերջին տարիներին հետաքրքրության աճ է նկատվում գրավոր այս հուշարձանների ուսումնասիրության ուղղությամբ, որն արտահայտվում է ոչ միայն հրատարակվող բազմաբնույթ հոդվածներով, այլև թեկնածուական տարբեր ատենախոսություններով: Առանձնանշելի է նաև 2012 թ. «Հայկական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության» (AIEA) աջակցությամբ Իտալիայի Բոլոնիա քաղաքում տեղի համալսարանի պրոֆեսոր Աննա Շիրինյանի գլխավորությամբ կազմակերպված «Հայերեն հիշատակարանները՝ համեմատությամբ» («Colofoni armeni a confronto») ընդհանուր խորագրով միջազգային աշխատաժողովը, որի՝ ձեռագրական տարբեր մշակույթներում հիշատակարանագրության առանձնահատկություններ

րին վերաբերող նյութերը հետագայում ամփոփվեցին մեկ ընդհանուր ժողովածուի մեջ և ինչ-որ առումով լրացուցիչ խթան եղան ձեռագրական առանձին այս միավորի՝ հիշատակարանների համեմատական քննություն համար: Հիշատակելի է նաև 2017 թ. Օքսֆորդի համալսարանում կազմակերպված աշխատա-
ժողովը՝ «Աշխարհը միջնադարյան հայ գրիչների աչքերով» խորագրով:

Ներկա ուսումնասիրությունը հայկական հիշատակարանագրության ավանդույթի բացահայտմանն ու արժևորմանն ուղղված ևս մեկ քայլ է: Աշխատանքում փորձել ենք համակողմանի քննության առնել հայերեն հիշատակարանների բաղադրատարրերը, վերջիններիս արտահայտության տարաբնույթ եղանակները, կատարել ենք հայերեն հիշատակարանների որոշ դասակարգումներ՝ ըստ գրչության ժամանակի, հիշատակագիրների և բովանդակության, առանձին կերպով ներկայացրել ենք հայերեն հիշատակարաններում հանդիպող բաղադրիչ-միավորները՝ հնարավորության դեպքում այս ամենը համեմատելով ձեռագրական այլ ավանդույթներում հանդիպող նմանատիպ դրսևորումների հետ: Առանձին բաժնով անդրադարձել ենք նաև հիշատակարանների և նմանաբնույթ գրավոր հուշարձանների փոխառնչություններին և ընդհանրություններին, անցկացրել համապատասխան զուգահեռներ՝ շեշտելով այդտեսակ գրությունների ստեղծման միևնույն շարժառիթը և դրանից բխող կառուցվածքային ու լեզվա-ոճական ընդհանրությունները: Այստեղ քննության ենք առել նաև հայերեն հիշատակարանների գրական արժեքն ու լեզվական ընդհանուր նկարագիրը: Միաժամանակ մեր ուշադրության կենտրոնում են եղել հիշատակարանների հավաքման և հրատարակման ընթացքը, «հիշատակարան» բառի իմաստային կիրառությունները և մի շարք այլ դրսևորումներ, որոնց հանգամանալից անդրադարձել ենք գրքում: Վերջում պատկերաչարի ձևով ներկայացրել ենք հիշատակարանային ուշագրավ նմուշների մի համեստ ընտրանի, որը լրացնում է հայկական հիշատակարանագրության մասին մեր պատկերացումները:

Այսպիսով, ուսումնասիրողների դատին է հանձնվում հայերեն ձեռագրի անբաժանելի բաղկացուցչի՝ հիշատակարանի քննութայանը նվիրված մի նոր աշխատություն, որի նպատակն է առավել ամբողջական և համակողմանի ներկայացնել գրավոր այս հուշարձանն իր հիմնական առանձնահատկություններով: Անշուշտ, հեռու ենք այն մտքից, որ ներկա աշխատությունը ներառում է հազարավոր հայերեն հիշատակարանների բոլոր մասնավոր դրսևորումները կամ զերծ է վրիպակներից: Ուստի՝ փոխառելով հայոց գրչաշխարհում տարածված արտահայտություններից մեկը՝ գրչական ոճով դիմում ենք մեր ընթերցողներին. «Նւ սխալանաց գրիս անմեղադի՛ր լերուք, զի այդ էր կարն մեր»:

Գրիչներն իրենց հիշատակարաններում բարի և ջերմ խոսքերով մշտապես նշել են իրենց աջակցողներին, քաջալերողներին, խորհրդով կամ գործով սատարողներին. ամենափոքր օգնություն ցուցաբերողն անգամ արձանագրվել է անվանապես՝ ի նշան երախտագիտություն: Հետևելով գրիչների այդ գեղեցիկ ավանդույթին՝ մենք էլ մեր երախտագիտությունն ենք հայտնում բոլոր այն մարդկանց, որոնք աջակցել են մեզ խորհուրդներով կամ օգտակար նյութերով: Նախ և առաջ շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի «Ձեռագրագիտության» բաժնի մեր գործընկերներին, որոնք ձեռագրերի նկարագրության ընթացքում իրենց հանդիպած հիշատակարանային հետաքրքիր միավորների կամ ուշագրավ օրինակների մասին մշտապես տեղեկացրել են մեզ: Շնորհակալ ենք մեր գործընկերներ պ. գ. թ. Լուսինե Թումանյանին և պ. գ. թ. Արսեն Հարությունյանին՝ աշխատանքին առնչվող տարբեր հարցերում ցուցաբերած աջակցության, ինչպես նաև բ. գ. թ. Անի Առաքելյանին՝ գրքի սրբագրման համար: Օտարալեզու գրականության ձեռքբերման հարցում անգնահատելի է եղել բելգիացի հետազոտող էմմանուել Վան Էլվերդինգեի, ինչպես նաև Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր Աննա Շիրինյանի աջակցությունը,

որոնց հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը: Հետազոտություն ընթացքում օգտակար խորհուրդներով և անհրաժեշտություն դեպքում համապատասխան նյութերով մշտապես աջակցելու համար շնորհակալ ենք Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն, պ. գ. դ., պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանին:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում սույն գրքի խմբագրին՝ Մատենադարանի «Զեռագրագիտության» բաժնի վարիչ և գլխավոր ավանդապահ, պ. գ. դ. Գևորգ Տեր-Վարդանյանին աշխատանքի խմբագրումը ստանձնելու և արժեքավոր դիտարկումներ անելու համար:

**1. ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ.
ԺԹ-ԻԱ. ԴԱՐԵՐ**

«Հայաստանի և հայ ժողովուրդի պատմության հիմնական չորս աղբյուրներն են՝ հայ պատմիչները, օտար պատմիչները, վիմակալ արձանագրությունները և ձեռագիրներու յիշատակարանները»¹

Շատ հաճախ գրված լինելով տարաբնույթ իրադարձությունների ականատեսների, անմիջական մասնակիցների կամ ժամանակակիցների կողմից՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններն աներկբայորեն ձեռք են բերել առաջնակարգ վավերագրերի արժեք և համարվել հայոց պատմության կարևոր սկզբնաղբյուրներից: Ուստի և պատահական չէ աղբյուրներին նկատմամբ այն հետաքրքրությունը, որը նկատվում է ուսումնասիրողների շրջանում: Ուշագրավ է, սակայն, որ այդ հետաքրքրությունը ձգվում է դարերի խորքը, իսկ արդեն նոր շրջանում հանգեցնում գիտական սկզբունքներով հիշատակարանային ժողովածուներ կազմելու գաղափարին:

Ձեռագրերի հիշատակարաններն՝ իբրև հավաստի սկզբնաղբյուրներ, կիրառվել են որոշ հայ պատմագիրների երկերում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս ԺԳ. դարում Սյունյաց նշանավոր մետրոպոլիտ և պատմագիր Ստեփանոս Օրբելյանն իր «Պատմութիւն նահանգին Սիսական» մեծարժեք երկը շարադրելիս, ի շարս այլ աղբյուրների, գործածել է

¹ **Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչև 1250 թ.), 48 նմանահանություններով, Անթիլիաս, 1951, էջ ԻԸ (այսուհետ՝ Յիշատակարանք ձեռագրաց):**

նաև վիճաբեր և ձեռագիր հիշատակարաններ²: ԺԷ. դարի նշանավոր պատմագիր Առաքել Դավրիժեցին նույնպես իր «Գիրք պատմութեանց» երկի սկզբնաղբյուրի մեջ ներառել է ձեռագրերի հիշատակարանները: Դավրիժեցին քանիցս նշում է այն փաստը, որ հընթացս տարբեր աղբյուրների քննության ծանոթացել է նաև նյութին առնչվող ձեռագիր հիշատակարաններին: Նման մի օրինակ գտնում ենք Պարսից արքա շահ Աբասի կազմակերպած հայերի բռնի տեղահանությունների նկարագրությանը նվիրված հատվածում, ուր կարդում ենք.

«Եւ գայս գործ, որ գազգն Հայոց քշեաց և տարաւ, ո՛չ թէ մի անգամ կամ երկիցս և երիցս արար և եկաց, այլ գտի հաւաստեաւ բազում արս՝ որք ինքեանք իսկ քշածք էին, յորոց հարցեալ տեղեկացայ, Աս և ի յիշատակարանաց գրոց՝ գորս ընթերցայ (ընդգծումը մերն է – Խ. Հ.), զի եօթն և ութն անգամ որիշ որիշ գկնի միմեանց քշեալ և տարեալ է»³:

Առանձին դեպքերում պատմագիրը ոչ միայն վկայակոչում է հիշատակարանը, այլև որպես սկզբնաղբյուր՝ այն տեղադրում է շարադրանքում: Իր «Պատմության» Լ. գլխում խոսելով Լուսավորչի Աջի մասին՝ Դավրիժեցին երկիցս գործածում է նաև հիշատակարանային տվյալներ. «Տեսաք ճաշոց մի՛ որոյ յիշատակարանն էր ըստ այսմ օրինակի...», ապա շարադրում է հիշատակարանի բովանդակությունը: Շարունակելով նույն հատվածը՝ պատմագիրը դարձյալ վկայակոչում է հիշատակարանային տեղեկություն: Այս անգամ սկզբնաղբյուրի դեր կատարած հիշատակարանը Ավետարանից է. «Այլ եւ գտաք Աւետարան մի, իբրև ընթերցաք գյիշատակարանն, և էր գրեալ այսպես...»:

² **Ստեփանոս Օրբելյան**, *Մյունիքի պատմություն*, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ա. Ա. Աբրահամյանի**, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1986, էջ 20:

³ **Առաքել Դավրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, աշխատասիրությամբ **Լ. Ա. Խանկարյանի**, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990, էջ 147:

Դավրիժեցու վկայակոչած այս վերջին հիշատակարանը մեզ ծանոթ է. այն թողել է Ավետիք գրիչը 1444 թ. իր ընդօրինակած Ավետարանում, որի գտնվելու վայրն այսօր անհայտ է, մինչդեռ հիշատակարանն արտագրված է ներկայումս Մաշտոցյան Մատենադարանի երկու առանձին ձեռագրերից բաղկացած Հ^մ 1771 ժողովածուի ԺԶ-ԺԷ. դդ. թվագրվող երկրորդ ձեռագրում⁴: Սույն հիշատակարանը հրատարակել է ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը ԺԵ. դարի հիշատակարանների իր կազմած ժողովածուում:

Զուգադիր սյունակներում տեղադրենք և համեմատենք նույն հիշատակարանի՝ Դավրիժեցուց քաղված հատվածը Լ. Խաչիկյանի հրատարակության հետ՝ պահպանելով տպագրությունների ուղղագրությունը, կետադրական նշաններն ու ընդգծումները.

Առաքել Դավրիժեցի,
«Գիրք պատմութեանց»

Հիշատակարանի
խաչիկյանական
հրատարակությունը

«Եւ արդ՝ սկսեալ եղև սուրբ աւետարանս յԱրդնի, ի վերադիտողութեան հայկազեան սեռի երկուց կաթողիկոսաց տէր Գրիգորին եւ տէր Կիրակոսին, զի յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս այս Դ. ամ էր, որ Լուսաւորչի Աջն կորեր էր ի Սոյ՝ և էլ համբաւն ի Վաղարշապատ, վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք, եօթն հարիւր

«Եւ արդ, սկսեալ եղև սուրբ աւետարանս յԱրդնի, ի վերադիտողութեան հայկազեան սեռի երկու կաթողիկոսաց՝ տէր Գրիգորին եւ տէր Կիրակոսին: Զի յորժամ գրեցաւ սուրբ աւետարանս՝ չորս ամ էր, որ Լուսաւորչի աջն կորեր էր ի Սըսոյ, եւ էլ համբաւն ի Վաղարշապատ: Վասն որոյ ժողովեցան վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք՝ եւթնհարիւր անձն, եւ

⁴ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Ե., կազմեցին՝ **Օ. Եգանեան**, խմբագրութեամբ՝ **Յ. Քեօսեանի**, **Ա. Ղազարոսեանի**, **տ. Շահէ քիչ Հայրապետեանի**, ցանկերը կազմեց՝ **Վ. Դեւրիկեանը**, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 1149-1156, տե՛ս էջ 1154:

անձն, և հաստատեցին զԱթոռն յԼեւոնացիս, և եղին զոմն Կիրակոս անուն այր առաքինի և ճգնատր կաթողիկոս, և հաստատեցին զաթոռ սուրբ Լուսատրչիս»⁵:

հաստատեցին զաթոռն յԼեւոնացիս, և եղին զոմն Կիրակոս անուն այր առաքինի և խստակրոն ճգնատր՝ կաթողիկոս, և հաստատեցին զաթոռ սուրբ Լուսատրչիս»⁶:

Հիշատակարանային վկայակոչումները Դավրիժեցու երկուս այսքանով չեն սահմանափակվում իհարկե, սակայն նշված օրինակներն էլ բավական՝ են փաստելու, որ իր «Պատմութիւն»-ը շարադրելիս Դավրիժեցին անհրաժեշտ է համարել օգտվել հիշատակարաններից կամ ճշտումներ անել այդ աղբյուրների միջոցով:

Հիշատակարանային տվյալներից օգտվել է նաև Ժէ. դարի երկրորդ կեսի եկեղեցական գործիչ, պատմագիր Զաքարիա Սարկավազ Քանաքեռցին, որը տարբեր առիթներով իր «Պատմագրության» սկզբնաղբյուրների մասին խոսելիս նշում է նաև ձեռագրերի հիշատակարանները. «Սակայն զոր ինչ լուսաք ի համբաւոյ եւ ի պատմագրաց, եւ ի յիշատակարանաց գրոց եւ յարձանաց, զնոսին գրեցաք եւ նշանակեցաք՝ թէ ուստի՞ գտաք», – կարգում ենք Զաքարիա Քանաքեռցու տողերը⁷: Առանձին դեպքերում պատմագիրը մեջ է բերել նաև ամբողջական հիշատակարաններ⁸:

⁵ **Առաքել Դարիժեցի**, *Գիրք պատմութեանց*, էջ 330:

⁶ *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.)*, կազմեց **Լ. Ս. Խաչիկյան**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1955, էջ 575-576:

⁷ **Զաքարիայ Սարկավազի Պատմագրություն**, հ. Գ., Վաղարշապատ, ի տպ. Ս. Կաթողիկե Էջմիածնի, 1870, էջ 28:

⁸ *Նշվ. աշխ.*, էջ 22: Հիշատակարանը հետագայում արտացոլվել է նաև Հ. Շահխաթունյանցի երկում. տե՛ս **Յ. Եպս. Շահխաթունյանց, Մտորոգություն կաթողիկե Էջմիածնի եւ հինգ զաւատացն Արարատայ**, աշխատասիրությունը **Ա. Տեր-Ստեփանյանի**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2014, էջ 276:

Հիշատակարաններ է հավաքել նաև Ժէ. դարավերջի և ԺԸ. դարասկզբի եկեղեցական նշանավոր գործիչ, մատենագիր, Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Վերջինս վիճագրերի հավաքչական գործունեության ընթացքում գրառել է նաև իրեն հանդիպած ձեռագրերի հիշատակարաններ, որոնցից մի քանիսը գտնուում ենք ՄՄ Հ^տ 7821 գրչագրում⁹:

Նշված օրինակները եզակի չեն. տարբեր հեղինակներ իրենց երկերում նույնպես ըստ հարկի գործածել են հիշատակարանները՝ դիտելով դրանք որպես արժանահավատ և վստահելի վավերագրեր: Իբրև այդպիսին՝ գրավոր այս հուշարձաններին հղումները հաճախադեպ են նաև հայ պատմագիտության նահապետ, Մխիթարյան միաբան, հայր Միքայել Չամչյանի հեղինակած «Պատմութիւն հայոց» եռահատորյակում, որի սկզբնաղբյուրների համառոտագրությունների մեջ հայր Չամչյանն արձանագրել է նաև հիշատակարանները. «Յիշատ. Յիշատակարանք զանազան գրեանց»¹⁰: Առանձին կամ ի շարս այլ աղբյուրներին՝ «Յիշատ.» նշումը բազմիցս հանդիպում է եռահատորյակի տարբեր էջերի լուսանցքներում հավաստելով գրավոր այս հուշարձանների կարևորությունը հայոց պատմության տարբեր անցքերի լուսաբանման կամ պարզաբանման համար:

Մի փոքր առաջ անցնելով՝ նշենք, որ հայերեն ձեռագրերի հիշատակարանների ԺԵ. դարի երկրորդ հատորում առաջաբանի փոխարեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը շարադրել է «Համառոտ ակնարկ քաղաքական կյանքի պատմության» ուսումնասիրությունը՝ գերազանցապես հիշատակարանային տվյալների հի-

⁹ Ա. Հարությունյան, Եսայի Հասան-Ջալալյանի վիճագրագիտական վաստակը (ըստ ՄՄ Հ^տ 7821 ձեռագրի), «Էջմիածին», 2015 (10), էջ 158:

¹⁰ Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն. 1784, յօրինեալ ի հայր Միքայել վարդապետէ Չամչեանց Կոստանդինուպօլսեցոյ, Կ. Ա., Վենետիկ, Մխիթարեան տպ., 1784, էջ 19:

ման վրա: Անվանի պատմաբանն այդ մասին նշել է իր ուսումնասիրությունյան առաջին իսկ տողերում¹¹:

Հիշատակարանների աղբյուրագիտական նշանակությունը գիտակցումով էլ ժԹ. դարի երկրորդ կեսին ձևափոխվեցին գրավոր այս աղբյուրների հավաքման և հրատարակման առաջին փորձերը: Այս գործի նախակարավետը եղավ Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանը: Տարիների ընթացքում ամենատարբեր հայաբնակ վայրեր, վանքապատկան մատենադարաններ, եկեղեցիներ այցելությունների ընթացքում Փիրղալեմյանն ընդօրինակել է ոչ միայն տեղի արձանագրությունները, այլև կատարել է շնորհակալ մի գործ ևս՝ արտագրելով այդ վայրերում գտնվող ձեռագրերի հիշատակարանները: Ավելի ուշ գրավոր այդ վավերագրերից նա մի ընտրանի է կազմում, խորագրում այն «Նօտարք հայոց» և տպագրություն հանձնում Կոստանդնուպոլսում: «Նօտարք»-ի համեստ առաջաբանում Փիրղալեմյանը գրում է. «Ըստ պայմանի խոստման իմոյ յօժարեցայ հանել ի հրապարակ՝ զայս ներկայ աշխատությունս՝ զոր բազում նեղությունմբ և չարաչար աշխատությունմբ սրտամաշ պանդխտությունմբ անհանգիստ անձնագոհողությունմբ եղի ի գործ վասն մտադրեալ նպատակիս այսորիկ. բերել ի ձեռն եւ հաւաքել ի մի թէ ի Ձեռագիր մատենից. թէ ի Տարեգրությունց, թէ յԱրձանագրությունց վանօրէից եւ եկեղեցեաց...»¹²: «Նօտարք»-ի առաջաբանում կարելի է տեսնել Փիրղալեմյանի մտահոգությունն ու թերահավատությունը իր գործի հաջողության առիթով, ուստի՝ ավելորդ ծախսերից խուսափելու նպատակով, ինչպես ինքն է տեղեկացնում, սահմանափակ օրինակներով է հրատարակել արժեքավոր ժողովածուն: Այդ մտահոգությունն ամփոփված է հետևյալ տողերում. «Իսկ եթէ, մի՛ արասցէ Տէր, հակառակին հանդիպեալ չը գտի յուստեքէ ինձ

¹¹ ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմեց՝ **Լ. Ս. Խաչիկյան**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ VII:

¹² *Նօտարք հայոց*, հաւաքեալ եւ ի լոյս ընծայեալ ձեռամբ **Ղ. վրդ. Փիրղալեմյան** **Տոսրեցոյ**, Կ. Պօլիս, տպ. Նշան Կ. Պերպլեթեան [հրատարակման թիվը նշված չէ, 1883?], էջ Ե:

քաջալերութիւն սպառնամք օրինակաց ներկայ հատորոյս, լքեալ պարտասեալ ցաւ ի սիրտ մեկնիմ ի գրական յասպարիզէ աստի. և առ այս մի ոք ինձ անգիտակցաբար մեղադիր լիցի, զի չեմ կարող ես տանել տոկալ յետ այսքան աշխատանացս ի ժամանակի նշխարեալ ծերութեան իմոյ, յորում պէտք են ինձ մեծի մխիթարութեան»¹³:

Մաշտոցյան Մատենադարանում են այսօր պահւում տարիների ընթացքում Փիրղալեմյանի հավաքած հարյուրավոր հիշատակարանների անտիպ էջերը՝ «Յիշատակարանք կամ նշխարք պատմութեան հայոց» խորագրով¹⁴, որոնք զգալիորեն նպաստել են հետագայում հայերեն ձեռագրերի հիշատակարանային ժողովածուների պատրաստմանը:

Հիշատակարանների հավաքման և հրատարակման գործում միևնույն ժամանակահատվածում մեծ ներդրում ունեցավ նաև նշանավոր բանահավաք, ազգագրագետ Գարեգին վրդ. Սրվանձտյանցը: Վերջինս, շրջելով Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերով, ընդօրինակել է իրեն հանդիպած ձեռագրերի հիշատակարանները, որոնք հետագայում ամփոփել է «Թորոս աղբար. Հայաստանի ճամփորդ» երկհատորյակի երկրորդ հատորի վերջում՝ «Ձեռագիրք եւ յիշատակարանք» խորագրի ներքո¹⁵: Ինչպես Փիրղալեմյանը «Նօտարք»-ի առաջաբանում, այնպես էլ Սրվանձտյանցն այստեղ նշում է, որ նման

¹³ Նօտարք հայոց, էջ 2:

¹⁴ Հատոր Ա.՝ ՄՄ Հ^մ 6273, հատոր Բ.՝ ՄՄ Հ^մ 4515: Փիրղալեմյանի գրչին են պատկանում նաև ՄՄ Հ^մ 6332 և 9027 ձեռագրերը, որոնք դարձյալ պարունակում են հիշատակարանների, արձանագրությունների, տարեգրությունների ընդօրինակություններ և որոնք ծառայել են Հ^մ 6273 գրչագրի կազմությանը:

¹⁵ Թորոս աղբար, մասն Բ., գրեց **Գ. Վ. Սրուանձտեանց**, Կ. Պոլիս, տպ. Գ. Պաղտատլեան (Արամեան), 1885, էջ 253-486: Հիշատակարանների մի քանի նմուշներ կան նաև Սրվանձտյանցի մեկ այլ երկում. տե՛ս Հնոց և նորոց. պատմութիւն վասն Դաւթի և Մովսէսի Խորենացոյ, Թուղթ Դիոնէսիոսի, օրինակք յիշատակարանաց, դամբարան Ա. Սութիասանց, ձեռագիրք մատենայն, Թէ՛է Պօլէ, հրատարակեց **Գ. Վ. Սրուանձտեանց**, Կ. Պոլիս, տպ. Ե. Մ. Տնտեսեան, Էսստ էֆենտի խան, թիւ 11, 1874, էջ 116-134:

աղբյուրների հրատարակութունը պահանջում է գիտական որոշակի սկզբունքներ՝ համապատասխան ծանոթագրութուններով, սակայն տարբեր պատճառներով և մասնավորապես ժամանակի ու այլ միջոցների սղության պատճառով իրեն չի հաջողվել գլուխ բերել այդ գործը. «Կարի օգտակար կը լինէր եթէ ծանօթութեամբ հրատարակէինք յիշատակարանները, բայց ես անձեռնհաս կը գտնուիմ ժամանակի եւ այլ միջոցներու առջեւ», – գրում է Սրվանձտյանցը¹⁶: Բանագետի համոզմամբ՝ ցիրուցան եղած ձեռագիր մատյաններից հիշատակարանների հավաքումն ու հրատարակումը մեծապես կնպաստեն հայոց պատմության տարբեր հարցերի պարզաբանմանը. «Յիշատակարանաց տպագրութիւնը յոյժ պիտանի գործ մի է, որ կը լուսաւորէ պատմութիւնը, կը ցուցնէ անյայտ եւ շփոթեալ անունները անձանց եւ տեղեաց, կ'ուղղէ տարեգրութիւնները, կը յայտնէ իրողութիւններ եւ սովորութիւններ», – կարդում ենք հիշատակարանների առիթով Սրվանձտյանցի գրած տողերում¹⁷:

Առանձնահատուկ կերպով պետք է ընդգծել այն հանգամանքը, որ Ղ. Փիրզալեմյանի և Գ. Սրվանձտյանցի այս գործերն ավելին են, քան լոկ հիշատակարանների ժողովածուներ լինելը. ժամանակի փորձությանը չգիմացած, հայ ժողովրդին պատուհասած տարբեր արհավիրքներին զոհ զնացած և այսօր անհետ կորած բազմաթիվ ձեռագրերի երբեմնի գոյության լուռ վկաներն են այն հիշատակարանները, որոնք ընդօրինակել և հաջորդ սերունդներին հասանելի են դարձրել այս երկու երախտավորները¹⁸:

¹⁶ *Թորոս աղբար*, մասն Բ., էջ 250:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նյութի առնչությամբ մանրամասն տե՛ս Ս. Գօլանճեան, Յ. վրդ. Հիւսեան, Բ. աթոռակից կթղկս Կիւլտերեան, Գ. Տէր-Վարդանեան, *Եղևնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկությունները*, հրատարակության պատրաստեց՝ Գ. Տէր-Վարդանեանը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2015, էջ 48-50:

Հիշատակարանների հրատարակման մի նոր շրջափուլ սկսվեց հայերեն ձեռագրերի գիտական նկարագրությունների մեկնարկով, որը տրվեց ԺԹ. դարավերջին: Մեկը մյուսին հաջորդող ձեռագրացուցակների շարքում (ինչպես օրինակ՝ Ն. Քարամյանցի¹⁹, Գ. Գալեմբյարյանի²⁰, Տ. Պալյանի²¹, Ստ. Կանայանցի²², Հ. Թոփճյանի²³, Հ. Աճառյանի²⁴ և այլոց մեծարժեք ու ձեռագրական տվյալներով հարուստ ցուցակները²⁵) առանձնանշելի են Վիեննայի Մխիթարյան միաբանության հայր Հակոբբոս Տաշյանի կազմած Վիեննայի Կայսերական զբաղարանի և Մխիթար-

¹⁹ *Verzeichniss der Armenischen Handschriften der Königlichen Bibliothek zu Berlin*, von Dr. **N. Karamianz**, Berlin, A. Asher & Co., 1888.

²⁰ *Ցուցակ հայերէն ձեռագրաց Արքունի մատենադարանին ի Մխնիսէն*, կազմեց **Հ. Գ. Վ. Գալեմբարեան**, Վիեննա, Մխիթարեան տպ., 1892:

²¹ *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա*, հ. Ա., Կեսարիոյ վիճակ, Տետր Ա., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Սարգսի վսնաց ի Կեսարիա*, կազմեց **Տ. վրդ. Պալեան**, Կ. Պոլիս, տպ. եւ վիմագր. Գ. Պաղտատեան, 1892: *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա*, հ. Ա., Կեսարիոյ վիճակ, Տետր Բ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Կեսարիոյ եւ Սուրբ Գեորգ եկեղեցւոյն Գրրշէիլիի*, կազմեց **Տ. վրդ. Պալեան**, Կ. Պոլիս, տպ. եւ վիմագր. Գ. Պաղտատեան, 1893:

²² *Ցուցակ հայերէն ձեռագիրների Թիֆլիզի Ներսիսեան հոգևոր դպրանոցի*, կազմեց **Ստ. Կանայանց**, տպ. Շարաձէի, Թիֆլիզ, 1893:

²³ **Յ. Յ. Թօփճեան**, *Ցուցակ ձեռագրաց Դաթեան Խաչիկ վարդապետի՝ ժողոված 1878-1898*, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, մասն Ա., 1898, մասն Բ., 1900:

²⁴ *Ցուցակ հայերէն ձեռագրաց Սանասարեան վարժարանի ի Կարին*, կազմեց **Հր. Յ. Աճառեան**, Վիեննա, Մխիթարեան տպ., 1900:

²⁵ Ձեռագրացուցակների մատենագիտությունը տե՛ս **Հ. Ս. Անասյան**, *Հայկական մատենագիտություն*, Ե-ԺԸ որ., հ. Ա, Ա -Առաքել Սալաձորեցի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1959, էջ LXXVII-XCII, հ. Բ., Առաքել Սիւնեցի-Բէատրիկէ Հոռմայեցի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ V-XXII, **B. Coulie**, *Répertoire des bibliothèques et des catalogues de manuscrits arméniens (Corpus Christianorum, Series Graeca)*, Turnhout, Brepols, 1992: **B. Coulie**, *Répertoire (...). Supplément I*, “Le Muséon”, 108 (1995), pp. 115-130, *Répertoire (...). Supplément II*, “Le Muséon”, 113 (2000), pp. 149-176, *Répertoire (...). Supplément III*, “Le Muséon”, 117 (2004), pp. 473-496: Պետք է նկատի ունենալ, որ մատենագիտական այս ցանկերի հրատարակումից հետո էլ շարունակում են լույս տեսնել նորանոր ցուցակներ:

յան միաբանութեան Վիեննայի մատենադարանի ձեռագրացուցակները²⁶, որոնցում միաժամանակ մշակվել են նաև հայերեն ձեռագրերի գիտական նկարագրութեան հիմնական սկզբունքները: Մասնակի փոփոխութիւններով այդ սկզբունքներն այսօր էլ ընկած են Մաշտոցյան Մատենադարանի ընդարձակ ձեռագրացուցակի հիմքում²⁷: Գիտական նկարագրութիւններում այդուհետ առանձին բաժին էր կազմում «Յիշատակագրութիւնք»-ը, որի ներքո ամբողջութեամբ կամ մասնակի կրճատումներով տրվում էին ձեռագրի գրչութեանը ժամանակակից կամ հետագայում հավելված հիշատակարանները:

Առանձին ձեռագրացուցակներից զատ՝ ձեռագրերի նկարագրութիւններին, այդ թվում՝ հիշատակարանների տպագրութեանը մեծապես նպաստեցին նաև ժամանակի հայագիտական հանդեսները («Բազմավէպ», «Հանդէս ամսօրեայ», «Արարատ», «Բանասէր», «Անահիտ», «Սիոն» և այլն) և պարբերական մամուլը («Բիւզանդիոն», «Արեւելք», «Մշակ» և այլն), որոնց էջերում լույս տեսան խիստ արժեքավոր նկարագրութիւններ և հիշատակարաններ: Մեծաթիվ հիշատակարաններ և ձեռագրական վկայութիւններ լույս տեսան նաև «Ազգագրական հանդէս»-ի տարբեր հատորներում:

Անշուշտ, հիշատակարանների հավաքման ընթացքն այսքանով չի սահմանափակվել. առանձին գիտնական բանասերներ գրավոր այս հուշարձաններում վկայված պատմական կարևոր հիշատակումներն ուսումնասիրելու և իրենց հրատարակութիւններում գործածելու նպատակով հավաքել և կազմել են իրենց անձնական հիշատակարանային ժողովածուները, ինչպես

²⁶ Յուզակ հայերէն ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա, կազմեց Հ. Յ. Տաշեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1891: Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վիեննա, կազմեց Հ. Յ. Վ. Տաշեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1895:

²⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չէլթունյան, Փ. Անթարթյան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականյանի, Օ. Եգանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ ԽԲ-ԾԳ.:

օրինակ՝ Ղևոնդ Ալիշանը²⁸, Ներսես Ակինյանը²⁹ և ուրիշներ³⁰:
Մեծաթիվ արժեքավոր հիշատակարաններ են պարունակում նաև

²⁸ Հ. Ղ. Ալիշան, [Յիշատակարանք] (անտիպ), տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ որդ., հ. Ա, էջ XCII: Ավերորդ չենք համարում այս առիթով մեջ բերել մի արժեքավոր տեղեկություն, որ հաղորդում է Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գ. Տեր-Վարդանյանը. «Ղևոնդ վ. Ալիշանն ունի իր գործերի սկզբնաղբիւնների՝ ձեռագիր եւ տպագիր աղբիւններից արուած քաղուածքների՝ «Հայկարան» ընդհանուր խորագրով մեծադիր (մօտ 30×40 սմ չափսի) մատենաններ, որոնցից ճրդի (Ը.) 2.200 էջերում ժամանակագրական կարգով մանրագիր ընդօրինակուած են զուտ ձեռագրական յիշատակարաններ», տե՛ս Ս. Գօլանճեան, Յ. վրդ. Հիւսեան, Բ. արթոռակից կարթողիկոս Կիլիսեբեան, Գ. Տեր-Վարդանեան, Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորուստներն ու փրկութիւնները, էջ 21:

²⁹ Տե՛ս նույն տեղում: Հայր Ներսես Ակինյանի այս Հավաքածուից մեծապես օգտվել է Վիեննայի Մխիթարյանների մեկ այլ նշանավոր ներկայացուցիչ՝ հայր Համազասպ Ոսկյանը: Ակինյանի այդ ժողովածուից մասնակի կամ ամբողջությամբ քաղված հիշատակարաններ կարելի է տեսնել հայր Ոսկյանի տարբեր ուսումնասիրություններում: Տե՛ս օրինակ, Հասարակական-Վանի փանքերը, մաս Ա., գրեց դկտ. Հ. Հ. Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1940, էջ 62, 64, 66, 374-375 եւ այլուր:

³⁰ Հայտնի է, օրինակ, որ Մշո ձեռագրերի հիշատակարանների մի ժողովածու էլ կազմել է Գեղամ Տեր-Կարապետյանը (Մշո Գեղամ), սակայն ժողովածուի գտնվելու վայրն առայժմ անհայտ է: Տե՛ս Գ. Տեր-Վարդանեան, Յիշատակարանների ժողովածուներ կազմելու Լեոն Խաչիկյանի մշակած սկզբունքները եւ ներկայիս անեղիքները, «Լեոն Խաչիկյան-90», Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.), «Նաիրի» հրատ., Երևան, 2010, էջ 12: Ծուշիի և նրա շրջակայքի հիշատակարանների ժողովածու են կազմել Սիմեոն քահանա Տեր-Պողոսյանը և Արիստակես վրդ. Սեդրակյանը՝ Յիշատակարանք Ծուշիի եւ շրջակայից (Ագուլիս, Գանձասարայ փանք, Նուխի) գրչեայ մատենից, այս մասին տե՛ս Գ. Տեր-Վարդանեան, Լեոն Խաչիկյանի սկզբունքները եւ Մատենադարանի հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի պատրաստման ներկայ ընթացքն ու հեռանկարները, «Լեոն Խաչիկյան, հարյուրամյակ», Նյութեր ակադեմիկոս Լեոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.), խմբ.՝ Գ. Տեր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2019, էջ 61:

Հ. Բարաղամյանի³¹, Մ. Մաքսուտյանի³² և այլոց հավաքումները: Հայտնի է նաև, որ Գ. Հովսեփյանը հավաքել և մինչև 1934 թ. կազմել էր հիշատակարանների իր անձնական ժողովածուն՝ 248 միավորով, որը հետագայում ընդարձակվեց և լույս տեսավ 1951 թ.: Հիշատակարաններից և մասամբ վիմագրերից քաղված նյութերի հիման վրա է, օրինակ, Գ. Հովսեփյանը շարագրել իր «Խաղբակյանք կամ Պոռոջյանք Հայոց պատմության մեջ» պատմագիտական ուսումնասիրությունը³³:

Իրենց ուսումնասիրություններում կամ ձեռագրացուցակներում ընդարձակ կամ համառոտ հիշատակարաններ են հրատարակել նաև տեղագիրները (Մ. Սմբատյանց, Ն. Սարգիսեան, Ս. Զալալյան և ուրիշներ), պատմական Հայաստանի տարբեր գավառների պատմությունն ու ազգագրությունը, ինչպես նաև սրբավայրերին նվիրված աշխատությունների հեղինակները (Հ. Ծանիկյան, Ե. Շահազիզ, Ս. Հայկունի, Ե. Լալայան, Հ. Ոսկյան, Գ. Շերենց, Ա. Ալպոյաճյան և ուրիշներ) և հայ ձեռագիր մշակույթի և հատկապես հիշատակարանների հարկն ու արժանիքները գիտակցող բազմաթիվ այլ անհատներ, որոնց անուրանալի աշխատանքի արդյունքում հետագայում հնարավոր եղավ նախաձեռնել հայերեն ձեռագիր հիշատակարանների գիտական հրատարակության գործը:

Ի. դարի երկրորդ կեսին սկիզբ դրվեց առանձին ժողովածուներով և ժամանակագրական կարգով հայերեն ձեռագրերի հի-

³¹ Յ. Բարաղամյան, *Յուզակ ձեռագրաց Վաստուրյականի*, ՄՄ ՀՊՐ 6333 (անտիպ): Պարունակում է հիմնականում Լիմ, Կտուց անապատների և Վարազավանքի ձեռագրերի համառոտ նկարագրություններ և հիշատակարաններ:

³² Մ. վրդ. Մաքսուտեան, *Նկարագրություն և յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովնայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցոյն Տանակերտ գեղոջ եւ անձանց մասնատրաց*, հողվածաշարը տե՛ս սույն գրքի Մատենագիտություն բաժնում:

³³ Յիշատակարանք ձեռագրաց, էջ ԺԵ.:

չատակարանների գիտական հրատարակությանը: Նախակարապետն այդ աշխատանքների լույս տեսավ 1950 թ. ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի աշխատասիրությամբ: Ժողովածուն պարունակում է Ժ. Դարի 845 հիշատակարանային միավոր՝ քաղված ժամանակին գիտնականին հասանելի ամենատարբեր ձեռագրական ժողովածուներից, անտիպ ու տպագիր ցուցակներից, գիտական հանդեսներից: Հիշատակարանների նորատիպ ժողովածուն օժտված էր նաև առարկայական, տեղանունների և անձնանունների արժեքավոր ցանկերով: Միևնույն ժամանակ ժողովածուի առաջաբանում Լ. Խաչիկյանը նշում է, որ դեռևս տպագրված կամ ամբողջացած չէին հայերեն ձեռագրերով հարուստ տարբեր կենտրոնների, ինչպես նաև հայկական մի քանի խոշոր հավաքածուների ձեռագրացուցակները, որոնց թվում՝ Վենետիկինը և Երուսաղեմինը³⁴: «Այսպիսով, – գրում է Լ. Խաչիկյանը, – Ժ. Դարի հիշատակարանների սույն ժողովածուի հրատարակությամբ, որը պարունակում է 845 արժեքավոր հիշատակարաններ, չեն սպառվում այդ դարում գրված բոլոր հայերեն հիշատակարանները: Պետք է հուսալ, որ վերը նշված բոլոր հավաքածուների օգտագործմամբ հնարավոր կլինի այդ թիվն ավելացնել

³⁴ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռագրացուցակի առաջին երկու հատորները կազմել և համապատասխանաբար 1914 և 1924 թթ. լույս էր ընծայել հայր Բ. Սարգիսյանը (*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, յօրինեց Հ. Բ. Վ. Սարգիսեան, Վենետիկ-Սբ. Ղազար, հ. Ա., 1914, հ. Բ., 1924), իսկ հետագա հատորները լույս են տեսնում 1966 թ. սկսած: Երուսաղեմի հայկական ձեռագրական հավաքածուի 164 ձեռագրերի նկարագրությունն պարունակող մի ցուցակ էլ 1948 թ. լույս էր ընծայել Արտավազդ արքեպս. Սյուրմեյանը (*Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց վանքի*, հ. Ա., կազմեց Ա. արքեպս. Սիւրմեան, [Վենետիկ], Սբ. Ղազար, 1948), սակայն 1966 թ. Նորայր եպս. Պողարեանը նախաձեռնեց նոր ցուցակի կազմությունը՝ առաջին թվահամարից սկսած, որը չհաջորդեց Սյուրմեյանի նշյալ ցուցակին (*Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. Ա., կազմեց Ն. եպս. Պողարեան, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1966):

և հասցնել առնվազն 1000-ի»³⁵: Պատմաբան Վ. Հակոբյանն իր գրախոսականում, որ նվիրված էր հիշատակարանների այս անդրանիկ հատորին, բարձր է գնահատում կատարված աշխատանքը: Թեև նա մատնանշում է հիշատակարաններ պարունակող որոշ կարևոր աղբյուրներ, որոնք դուրս էին մնացել Խաչիկյանի ուշադրութունից, սակայն արձանագրում է, որ հրատարակվածը «խոշոր» աշխատանք է³⁶:

Խաչիկյանի հրատարակութունից մեկ տարի անց՝ 1951 թ., լույս է տեսնում Գարեգին Ա. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի կազմած «Յիշատակարանք ձեռագրաց» հիշատակարանների ժողովածուն, որի նյութն ընդգրկում է Ե. դարից մինչև ԺԳ. դարի կես³⁷: Մեծավաստակ գիտնականի այս հատորը ներառում է 458 հիշատակարանային միավոր և ևս 14-ը հավելվածի տեսքով: Ժողովածուի առաջաբանից պարզ է դառնում, որ Հովսեփյանն այդ հիշատակարանների մի մասը հավաքել էր մինչև 1934 թ.՝ դրանք գործածելով նաև իր գիտական բազմաբնույթ աշխատութուններում: Հիշատակարանների առանձին ժողովածու կազմելու մտադրութամբ, սակայն, իր օգնականների հետ նա կրկին ձեռնամուխ է լինում ձեռագրերից, տպագիր և անտիպ աղբյուրներից, մամուլից հիշատակարանների հավաքմանը: Ամբարված նյութն ընդգրկում է Ե-ԺԸ. դարերը: «Յիշատակարանք ձեռագրաց-ը (ընդգծումը – Գ. Հ.) բովանդակում է նիւթեր Ե-ԺԸ. դարի սկիզբը, սկզբում քիչ քիչ, ապա Ժ. դարից սկսում է բազմանալ եւ ԺԲ. դարի երկրորդ կեսից դառնալ բովանդակութեամբ ճոխ, հետաքրքրական եւ բազմակողմանի», – կարդում ենք «Յիշատակարանք»-ի առաջաբանում³⁸: Նախատեսվել է հավաքված

³⁵ ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ XXIX-XXX:

³⁶ Վ. Հակոբյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները, ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1951 (3), էջ 63-69:

³⁷ Տե՛ս ծնթ. 1:

³⁸ Յիշատակարանք ձեռագրաց, էջ ԺԴ.:

նյութը լույս ընծայել **4** հատորով³⁹, սակայն առաջին հատորից հետո ծրագիրն անավարտ է մնացել:

Գ. Հովսեփյանի գնահատականը գրավոր այս հուշարձանների նկատմամբ ամփոփված է հետևյալ տողերում. «Կարելի է ասել այդ փոքրիկ Յիշատակարանները իրենց բազմատեսակ մանր տեղեկութիւններով մոզայիկի գոյնզգոյն քարեր են, որոնցից արուեստագէտը ի մի բերելով եւ օգտագործելով հարկաւորը իւր նպատակի համար, կազմում է գունազարդ, կենդանի եւ գեղարուեստական պատկեր»⁴⁰:

1955-1967 թթ. ընթացքում տպագրվում է ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների եռահատոր ժողովածուն՝ աշխատասիրությամբ դարձյալ Լ. Խաչիկյանի: Առաջին հատորի հրատարակության առիթով անվանի պատմաբան, արևելագետ Հ. Փափազյանն իր գրախոսականում օրինակելի է համարում հիշատակարանների բնագրերի հրատարակությունը, որոնք «վերծանված և ընթերցված են ամենայն ուշադրությամբ և գիտական բարեխղճությամբ»⁴¹: Նույն դարի հիշատակարանների երկրորդ հատորը (տպագրվել է 1958 թ.) Հ. Փափազյանի հետ համահեղինակությամբ գրախոսել է մեկ այլ անվանի պատմաբան, բյուզանդագետ Հ. Բարթիկյանը: Նրանք բարձր են գնահատել կատարված հսկայական աշխատանքը և հատկապես հատորի սկզբում գետնդրված Խաչիկյանի գիտական առաջաբանը⁴²:

Նկատենք, որ ԺԵ. դարի հիշատակարանների հաջորդ՝ երրորդ հատորը լույս է ընծայվել երկրորդից 9 տարի անց: Այսպիսի ընդմիջումը պայմանավորված էր մի կողմից Հայաստանից դուրս գտնվող հայերեն ձեռագրերի նորակազմ ցուցակների

³⁹ Նշվ. աշխ., էջ ԻԸ.:

⁴⁰ Նշվ. աշխ., էջ ԺԳ.:

⁴¹ Հ. Փափազյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի Ա հատորը, ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1956 (10), էջ 119:

⁴² Հ. Փափազյան, Հ. Բարթիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Բ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1958, 600 էջ, «ՊԲՀ», 1959 (4), էջ 322-327:

տպագրությամբ և նոր հիշատակարանների ի հայտ գալով, մյուս կողմից՝ Մաշտոցյան Մատենադարանի «Ցուցակ ձեռագրաց»-ի պատրաստմամբ, որի առաջին հատորը լույս էր տեսել 1965 թ.⁴³ նպաստելով խաչիկյանական վերջին հատորի համալրմանը: Բավական է նկատել, որ ԺԵ. դարի հիշատակարանների ժողովածուի երրորդ հատորում մոտ 170 էջ (305-473) զբաղեցնում է «ԺԵ դարի նորահայտ հիշատակարաններ» խորագրով հավելվածը՝ 246 նոր հիշատակարանով: Այսպիսով՝ ԺԵ. դարի եռահատորյակը միասին պարունակում է 2133 հիշատակարանային միավոր: Յուրաքանչյուր հատոր ավարտվում է առարկայական, անձնանունների, տեղանունների և օտար բառերի հարուստ ցանկերով: Երկրորդ և երրորդ հատորներն ունեն նաև մականունների և ազգանունների ցանկեր: Վերջին հատորի սկզբնամասում ազգարարվում է նաև, որ հրատարակության են պատրաստվում ԺԳ. և ԺԶ. դարերի հիշատակարանները: Այդ հատորների կազմումը հանձնարարված էր համապատասխանաբար Արտաշես Մաթևոսյանին և Սամսոն Լալաֆարյանին: Միևնույն ժամանակ Խաչիկյանը նշում է, որ ավարտին են մոտենում ԺԷ. դարի ձեռագիր հիշատակարանների հավաքման և հրատարակման աշխատանքները՝ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի և բանասեր Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ⁴⁴:

Այս տեղեկությունները հավաստում են, որ հիշատակարանային ժողովածուների գիտական հրատարակման աշխատանքները, որոնք սկիզբ էին առել դեռևս Ի. դարակեսին, ծրագրված կերպով և ակտիվորեն շարունակվում էին՝ հիմքում ունենալով խաչիկյանական սկզբունքները: Եվ ահա, չուշացան նաև նշյալ ժողովածուները. 1974 թ. Վ. Հակոբյանի և Ա. Հովհաննիսյանի

⁴³ *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, Կ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեյթունյան, Թ. Անթաթյան, ներածությունը՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965:

⁴⁴ *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.)*, կազմեց Լ. Ա. Խաչիկյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 6:

(հետմահու) աշխատասիրությամբ լույս տեսավ Ժէ. դարի առաջին քսանամյակն արտացոլող (1601-1620 թթ.) և 1041 հիշատակարանային միավոր պարունակող առաջին հատորը, որին հաջորդեցին նույն հեղինակների կազմած⁴⁵ և 1978 ու 1984 թթ. լույս տեսած համապատասխանաբար երկրորդ (1621-1640 թթ.) և երրորդ քսանամյակներն (1641-1660 թթ.) ընդգրկող հիշատակարանային ժողովածուները: Եռահատորը միասին պարունակում է 3778 միավոր: Այս հատորաշարը ևս օժտված է առարկայական, հատկանվանական (անձնանուններ և տեղանուններ) և օտար բառերի բացատրական մեծարժեք ցանկերով: Առաջին հատորի առաջաբանում Վ. Հակոբյանը նշում է, որ լույս տեսած ժողովածուն շարունակությունն է Լ. Խաչիկյանի սկզբնավորած հրատարակությունների⁴⁶ և որ հաջորդիվ պատրաստվելիք հատորները լրացնելու են տասնամյակներ առաջ մեկնարկած այս մատենաշարը: Հատկանշական է, որ հենց այս հատորի առիթով Լ. Խաչիկյանը գրում է բավական ընդարձակ մի գրախոսություն⁴⁷, որն ինչպես իր ժամանակ, այնպես էլ այսօր արդիական է աղբյուրների՝ մասնավորապես հիշատակարանների հրատարա-

⁴⁵ Վ. Հակոբյանի առաջաբանից (էջ ԻԳ.) տեղեկանում ենք, որ ԺԷ. դարի հիշատակարանների կազմման աշխատանքներն սկսել է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը, նրա դադարեցնելուց հետո աշխատանքները շարունակել է Վ. Հակոբյանը: Առաջին հատորի լույսընծայումից երկու տարի առաջ վախճանվել էր Ա. Հովհաննիսյանը (1972 թ.), իսկ Վ. Հակոբյանի կազմած երրորդ հատորը լույս տեսավ նրա մահվանից երկու տարի անց՝ 1984 թ.: Այս անգամ հատորը հրատարակության էր պատրաստել Ա. Մաթևոսյանը:

⁴⁶ Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. Ա, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ ԻԳ.:

⁴⁷ Լ. Խաչիկյան, ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին հատորը (քննություն և քննադատություն), «Լեւոն Խաչիկեան. Աշխատություններ», հ. Ա., «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, Երևան, 1995, էջ 334-386, վերահրատ., Երևան, «Նաիրի» հրատ., 2012, էջ 444-511:

կուլթյան տեսանկյունից⁴⁸: Գրախոսության մեջ արծարծվող խնդիրները ակադեմիկոս Խաչիկյանը խմբավորում է 14 կետերի ներքո (հիշատակարանների ընտրություն, շարակարգություն կամ համարական հերթաշար, տոմարագիտական ու ժամանակագրական խնդիրներ և այլն), որոնց հաջորդում է եզրակացությունը. «Մեր միջնադարյան հիշատակագիրների վաստակի նկատմամբ հպարտության զգացումով առլեցուն, արձանագրելով այս փաստը՝ գիտակցում ենք նաև այն մեծ պատասխանատվությունը, որ դրված է բոլոր այն հայ բանասեր-աղբյուրագետների ուսերին, որոնք իրենց նպաստն են բերում հիշատակարանների հավաքման, գիտական մշակման ու հրատարակման կարևոր աշխատանքներին... մենք այսօր իրավունք ունենք ավելի մեծ պահանջներ ներկայացնելու դեռևս անտիպ հայերեն հիշատակարանների ուսումնասիրողներին ու հրատարակության պատրաստողներին»⁴⁹:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանների հաջորդ՝ ԺԳ. դարն ամփոփող ժողովածուն հրատարակվեց ԺԷ. դարի հիշատակարանների երրորդ հատորին համընթաց. 832 հիշատակարանային միավոր պարունակող սույն ժողովածուն ուսումնասիրողների սեղանին դրվեց 1984 թ.: Այն կազմել էր պատմաբան և հմուտ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը⁵⁰: Այս հատորը ոչ միայն ներառում էր Գ. Հովսեփյանի վերոհիշյալ ժողովածուի՝ ԺԳ. դարին վերաբերող նյութերը, այլև պատմագիտության ու բանասիրության համար մեծ կարևորություն ունեցող հարյուրավոր նոր հիշատակարաններ:

⁴⁸ Գ. Տեր-Վարդանեան, *Յիշատակարանների ժողովածուներ կազմելու Լեոն Խաչիկյանի մշակած սկզբունքները եւ ներկայիս անելիքները*, էջ 11-19:

⁴⁹ Լ. Խաչիկյան, *ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին հատորը (քննություն և քննադատություն)*, էջ 510:

⁵⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984:

Դարձյալ Ա. Մաթևոսյանի աշխատասիրութեամբ 1988 թ. լույս տեսավ մատենաշարի հերթական հատորը, որն ընդգրկում է Ե-ԺԲ. դարերի 357 հիշատակարան⁵¹: Սուլյն ժողովածուն արժեքավոր է ոչ միայն իր հնագույն հիշատակարաններով, այլև գրավոր այս հուշարձաններին նվիրված ընդարձակ մի ուսումնասիրութուն-առաջաբանով, որտեղ առաջին անգամ մանրամասնորեն շարադրված են հայերեն ձեռագիր հիշատակարանների կառուցվածքին, բաղադրիչներին, ձևավորման ժամանակին և նրանց բովանդակային առանձնահատկություններին առնչվող հարցեր⁵²: Ժողովածուի առաջաբանում անվանի ձեռագրագետը գրում է. «Հիշատակարանը ներկայացնում էր ձեռագիրը, նրա ծնունդը, ստեղծման հանգամանքները, նպատակը, պատմությունը: Այն ձեռագրի անկապտելի մասն էր, տվյալ ձեռագրի ստեղծման վավերացումը, նրա գրչության հանգամանքների պատմությունը»⁵³:

Այսպիսով, 1950 թ. «Նյութեր հայ ժողովրդի պատմության» մատենաշարով սկիզբ առած հայերեն ձեռագրերի հիշատակարանների հավաքման և հրատարակման աշխատանքների արդյունքը մոտ չորս տասնամյակ անց տպավորիչ էր. ըստ դարաշրջանների՝ լույս էին տեսել Ե-ԺԲ., ԺԳ., ԺԴ., ԺԵ., ԺԶ. (մինչև 1660 թ.) դարերի հիշատակարանային ժողովածուները, որոնք միասին պարունակում էին 7945 մեծ և փոքր հիշատակարաններ: Գ. Հովսեփյանի հրատարակած ժողովածուի հետ միասին 1988 թ. դրութեամբ ուսումնասիրողներին հասանելի էր հայերեն ձեռագիր հիշատակարանների 10 հատոր՝ 8417 միավոր հիշատակարանով:

Նկատի պետք է ունենալ, որ ցայժմ անտիպ են ԺԶ., ԺԸ., ԺԹ. դարերի հիշատակարանային ժողովածուներն ամբողջութեամբ և ԺԷ. դարավերջի չորս տասնամյակն ամփոփող հատորները. ուս-

⁵¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրություններ Ա. Մ. Մաթևոսյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1988:

⁵² Նշվ. աշխ., էջ Ե-ԻԵ.:

⁵³ Նշվ. աշխ., էջ Ձ.:

տի՝ հիշատակարանային ժողովածուների և նրանցում ներառված հիշատակարանների վերոնշյալ թվերն առաջիկա տարիներին անպայմանորեն աճելու են: Անկասկած է նաև, որ արդեն իսկ լույս տեսած հատորները ժամանակի ընթացքում լրացվելու անհրաժեշտություն են ունենալու: Այս ուղղությունը աշխատանքներն արդեն իսկ մեկնարկել են: Երկար ընդմիջումից հետո՝ 1988 թվականից ուղիղ երեք տասնամյակ անց, 2018 թ. լույս տեսավ հիշատակարանների նոր ժողովածուն, որն ընդգրկում է Ժ. Դարի առաջին քառորդում գրված հիշատակարանները: Հատկանշական է, որ սույն հատորի կազմման աշխատանքները սկիզբ էին առել տասնամյակներ առաջ՝ Լ. Խաչիկյանի հանձնարարություններով, ապա ընդհատվել և նորից շարունակություն ստացել մեր օրերում՝ Մատենադարանի մեր ավագ գործընկեր Արփենիկ Ղազարոսյանի շնորհակալ աշխատանքի շնորհիվ⁵⁴: Թեև հատորը գերծ է վրիպակներից և որոշ բացթողումներից⁵⁵, այնուամենայնիվ այն հետազոտողներին է ներկայանում ոչ միայն բազմաթիվ ճշտումներով, նախորդ հիշատակարաններից պակասող հատվածների համալրումներով⁵⁶, այլև մի քանի տասնյակ նոր հիշատակարաններով: Այս ամենի շնորհիվ դարի առաջին քառորդն ընդգրկող հատորն իր ծավալով և պարունակած նյութով ավելին է, քան նախորդ՝ ամբողջ դարն ընդգրկող և ըստ էության հիշատակարանների գիտական հրատարակու-

⁵⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ժ. Դ. դար, մասն Ա. (1301-1325 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, «Նաիրի» հրատ., Երևան, 2018:

⁵⁵ Լ. Յովսեփեան, Գ. Ղազարեան, Դիտարկումներ հայերեն ձեռագրերի Ժ. Դ. դարի առաջին քառորդի յիշատակարանների հատորի ստիժով (հրատարակության է հանձնված «ԲՄ» 28-րդ համարին):

⁵⁶ Հայտնի է, որ ձեռագրերի հիշատակարանների հրատարակություններում շատ հաճախ բաց են թողնվել նրանց փառատրական հատվածները, որոնք երբեմն բավական ընդարձակ են եղել, ընդհուպ մի քանի էջ: Առանձին դեպքերում բաց են թողնվել նաև այլ հատվածներ, որոնք, ըստ հրատարակիչների, «պատմական տեղեկություններ չպարունակող և նվազ հետաքրքրություն ներկայացնող նյութեր» են եղել:

Թյուևը սկզբնավորած խաչիկյանական հատորը⁵⁷: Ավելի քան տեղին է այստեղ կրկին հիշել մեծ պատմաբանի այն խոսքը, որ ԺԴ. դարի հիշատակարանների իր հրատարակած ժողովածուն անաջիկայում համալրման կարիք է զգալու:

Լիահույս ենք, որ անաջիկա տարիներին հայկական աղբյուրների ուսումնասիրութամբ զբաղվողների սեղանին կդրվեն նաև պակասող հատորները, որոնք իրենց նոր ու արժեքավոր տեղեկութուններով կհարստացնեն ժամանակի տարբեր անցքերի վերաբերյալ մեր ունեցած գիտելիքները:

⁵⁷ Խաչիկյանական հատորի 845 հիշատակարանային միավորից առաջին 253-ը արտացոլում են 1301-1325 թվականների պատկերը: Հիշատակարանների այս նոր հատորը նույն ժամանակահատվածի համար ունի 459 միավոր հիշատակարան, այսինքն՝ գրեթե նույնքանով ավելի: Այս պակասի գիտակցումով է, որ հատորի լրացման աշխատանքները մեկնարկել են դեռևս Լ. Խաչիկյանի օրոք՝ նրա իսկ հանձնարարությամբ, ապա շարունակվել Ա. Մաթևոսյանի, իսկ մեր օրերում՝ Ա. Ղազարոսյանի կողմից:

**2. «ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ» ԲԱՌԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԵԶ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ՝ ՈՐՊԵՍ ԵԶՐ**

*«Որ կարդա գիշատակարանս,
Տէր Աստուած ողորմեսցի նմս. ամէն»
Ղազար գրիչ, 1214 թ. [Հ/Է. ԺԳ, 87]*

Մատյանի բաղկացուցիչ այս միավորը հայկական ձեռագրական ավանդույթում դարեր շարունակ կրում է հիշատակարան անվանումը: Բաղադրյալ այս բառը կազմված է երկու բաղադրիչներից՝ հիշատակ «հուշ, հիշողություն» բառից (հիմքում՝ յիշ կամ յուշ իրանական բառարմատն է⁵⁸) և «վայր, տարածք, տեղ», առանձին դեպքերում նաև՝ «ժողովածու» իմաստներն արտահայտող -արան վերջավորութայունից⁵⁹: Ըստ այսմ՝ հիշատակարան բառը նշանակում է «հիշատակման (հիշողության) համար նախատեսված տեղ, հիշատակման վայր», ինչպես նաև՝ «հիշատակների ժողովածու» կամ «ընդունարան յիշատակաց», ինչպես դիպուկ մեկնում է Նոր հայկազյան բառարանը⁶⁰:

⁵⁸ Հ. Աճառեան, *Հայերէն սրմատական բառարան*, հ. 3, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1926, (վերահրատ., հ. 3, Երևան, 1977), էջ 399: Տե՛ս նաև Հ. Աճառեան, *Հայոց լեզվի պատմություն*, I մաս, Պետական համալսարանի հրատ., Յերևան, 1940, էջ 273⁸⁴⁸⁻⁸⁴⁹:

⁵⁹ Բառակազմական այս կադապարը բավական տարածված է հայերենում, այդ նույն սկզբունքնով են բաղադրված, օրինակ, *ուսումնարան, ցանկարան, ընդունարան, գանձարան, տաղարան, երգարան* և մի շարք այլ բառեր, որոնք մի կողմից նշանակում են ուսման, ընդունելության վայր, իսկ մյուս կողմից՝ գանձերի, տաղերի, երգերի ժողովածու (դրանք իր մեջ ընդունող մատյան):

⁶⁰ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, երկասիրութիւն երից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ արքայազոր Հ. Գ. Աւետիքեան, Հ. Խ. Մխրմէլեան, Հ. Մ. Ազգերեան, հ. 2, վերահրատ. Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1979, էջ 359 (այսուհետ՝ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*):

Քննվող բառն ավանդված է գեռևս Ե. դարի հայ մատենագրությամբ և աչքի է ընկնում իր բազմիմաստությամբ. մատենագիրների երկերում այն գործածվել է «հիշատակ, պատմություն, մատյան, վավերագիր» և այլ իմաստներով⁶¹: Վկայակոչենք մի քանի օրինակ. Փավստոս Բուզանդի «Պատմության» մեջ կարդում ենք. «...այսինքն են սոքա չորք մատենք եւ չորեքին միոյ իրաց յիշատակարանք են» (այսուհետ ընդգծումները մերն են – Խ. Հ.)⁶²: Նույն հատվածի աշխարհաբար թարգմանության մեջ Ստ. Մալխասյանցն անփոփոխ է թողել հիշատակարան բառը. «...այսինքն՝ սրանք չորս մատյան են և չորսն էլ միևնույն անցքերի հիշատակարաններ են»⁶³ (իմա՛պատմություններ, վավերագրեր – Խ. Հ.):

Սյունյաց Վասակ իշխանի նկատմամբ Վարդան Մամիկոնյանի գորքերի տարած հաղթության և Քրիստոսի Հայտնության տոները միասին նշելու առիթով Եղիշեն գրում է. «...զի անխափան կացցէ մեծ յիշատակարանս այս ընդ աստուածային անանց տաւնին»⁶⁴: «Յիշատակարան» բառն այստեղ արտահայտում է «հուշ, հիշատակ» իմաստը, ինչպես գտնում ենք նույն հատվածի՝ Ե. Տեր-Մինասյանի աշխարհաբար թարգմանության մեջ. «...որպեսզի այս մեծ հիշատակը անխափան մնա աստվածային անանց տոնի հետ»⁶⁵: Դարձյալ «հիշատակ, վկայություն» իմաստն է արտահայտում Ղազար Փարպեցու «Պատմության» հետևյալ նախադասության մեջ կիրառված «յիշատակարան»

⁶¹ Նույն տեղում:

⁶² Փավստոս Բուզանդ, *Պատմություն հայոց*, Մատենագիրք հայոց, Ե. դ., հ. Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 277:

⁶³ Փավստոս Բուզանդ, *Պատմություն հայոց*, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Հասարակական հրատ., Երևան, 1968, էջ 63:

⁶⁴ Եղիշե, *Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին*, Մատենագիրք հայոց, Ե. դ., հ. Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 614:

⁶⁵ Եղիշեի *Վարդանանց պատմությունը*, թարգմանությամբ և ծանոթագրություններով պրոֆ. դ-ր. Ե. Տեր-Մինասյանի, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 75:

բառը. «Եւ եղեալ ի մատրանն ի Հաղամակերտի, որոյ յիշատակարանն ընդ անուանս վկայիցն սրբոց պատմեալ քարոզի մինչեւ ցայսաւր...»⁶⁶:

Եղիշեի «Մեկնութիւն Յետուայ եւ Դատաւորաց» խորագիրը կրող փոքրիկ երկում «հիշատակարան»-ն ավանդված է «մատյան, գիրք» իմաստով, իսկ մեր առանձնացրած հատվածում մատենագիրը նկատի ունի Սուրբ Գիրքը, երբ գրում է. «Որպէս եւ ինքնասաց ձայն Աստուծոյ յայտ առնէ ի սուրբ յիշատակարանին. Եթէ սատանայ զսատանայ մերժէ, յանձն իւր բարժանեցաւ... (Մատթ., ԺԲ. 26)»⁶⁷: Դարձյալ «մատյան, վավերագիր» նշանակութեամբ է քննվող բառն իր «Թղթեր»-ից մեկում գործածել Ջ. դարի գործիչ Վրթանես Քերթովը. «Քանզի այսպէս ունի պատմութիւն անսուտ յիշատակարանաց մերոց, թէ Թէոդորիտոս, որ համագոյգ Նեստորի գտեալ, լուծեալ եղեւ յեպիսկոպոսութենէ իւրմէ»⁶⁸: Նույն իմաստով բառը գտնում ենք նաև Է. դարում «...զոր գրեալ է յիշատակարանսն, թէ՛ աղաղակեցին բազումք, թէ՛ այս Նեստորի աղանդն է»⁶⁹:

Երուսաղեմի Զիթենյաց լեռան լանջին՝ ներկայիս ոռոսական վանքի տարածքում, ԺԹ. դարավերջին բացված և Զ-Է. դդ. թվագրվող հայերեն խճանկարային արձանագրութեան մեջ դարձյալ վկայված է քննվող բառը. «Բարեխաւս ունելով առ Աստուած զսուրբ Էսայի եւ զերանելի հարսս՝ ես՝ Վաղան, արարի

⁶⁶ **Ղազար Փարպեցի**, *Պատմություն Հայոց*, Մատենագիրք հայոց, Ե. դ., հ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2205:

⁶⁷ **Եղիշե**, *Մեկնություն Յետուայ եւ Դատաւորաց*, բնագիրը կազմեց **Յ. Քէնսէան**, Մատենագիրք հայոց, Ե. դ., հ. Ա., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 945:

⁶⁸ **Մովսէս Քերթով**, *Պատասխանի երրորդ թղթոյն Մովսէսի եպիսկոպոսի ի Վրթանիսէ*, բնագիրը կազմեց **Յ. Քէնսէան**, Մատենագիրք հայոց, Զ. դ., հ. Գ., Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 512:

⁶⁹ *Կոմիտասի Հայոց կաթողիկոսի եւ Պիռոսի արշիապատրիարքի հարցաքննություն եւ վիճաբանություն վասն հաւատոյ եւ կարգաց եկեղեցոյ եւ վասն տնտեսութեան բանին*, բնագիրը կազմեց **Յ. Քէնսէան**, Մատենագիրք հայոց, Է. դ., հ. Դ., Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 321:

վասն թողութեան մեղաց գլխատակարանս դայս»⁷⁰: Ամենայն Հավանականութեամբ, «յիշատակարան» բառն այս նախագատութեան մեջ արտահայտուած է «գերեզման» կամ «դամբարան» իմաստը, որն իր Հերթին այլ աղբյուրի վկայակոչումով արձանագրուած է նաև Նոր Հայկազյան բառարանում⁷¹: Որպէս նշյալ իմաստի կարևոր կովան՝ պետք է նշել, որ սուլյն արձանագրութիւնը թողնուած է Հենց դամբարանի վրա⁷²: Նկատենք նաև, որ դա տեղում հայտնաբերուած միակ հայերէն արձանագրութիւնը է, որում վկայուած է մեզ հետաքրքրող «հիշատակարան» բառը: Նույն ժամանակահատվածով է թվագրուած նաև խճանկարային հետեյալ արձանագրութիւնը. «Այս յիշատակարան տեառն Յակովբայ, որ եղել ի ձեռն խնդրելոյ»⁷³:

Զանց առնելով այստեղ ներկայացնել «հիշատակարան»-ի արդէն նշուած իմաստների մատենագրական այլ վկայութիւններ՝ դարձյալ արձանագրենք, որ իր մի շարք իմաստներով այն ավանդուած է արդէն Ե. դարում և բազմիցս կիրառուել է դասական և հետդասական շրջանի երկերում⁷⁴:


⁷⁰ Գ. վրդ. Յովսէփեան, *Գրչութեան արուեստը հին հայոց մէջ*, մասն Գ., Քարտեզ հայ հնագրութեան (հայ գրի գիւտի 1500 ամեակի առթիւ), 95 տախտակով, Վաղարշապատ, Ելեքտրաշարժ տպ. Ս. Էջմիածնի, 1913, էջ 5:

⁷¹ Նոր բառգիրք հայկազնան լեզուի, հ. Բ, էջ 359:

⁷² *The Caucasian Archaeology of the Holy Land: Armenian, Georgian and Albanian Communities between the Fourth and Eleventh Centuries CE*, by **Y. Tchekhanovets**, Brill, Leiden | Boston, 2018, pp. 69-70.

⁷³ *Corpus Inscriptionum Iudaeae/Palaestinae. A multi-lingual corpus of the inscriptions from Alexander to Muhammad*, vol. I: Jerusalem, part 2: 705-1120, ed. by **H. M. Cotton, L. Di Segni, W. Eck, B. Isaac, A. Kushnir-Stein, H. Misgav, J. Price, A. Yardeni**, with contributions by **R. Daniel, D. Feissel, R. Hoyland, R. Kool, E. Lupu, M. Stone, Y. Tchekhanovets**, with assistance of **M. Heimbach, D. Koßmann, N. Shneider**, De Gruyter, 2012, p. 155⁸³⁷.

⁷⁴ Ահա նշյալ բառի մի քանի վկայութիւններ ևս՝ «...գայս ինչ գրեալ էր ի գիրս յիշատակարանին» (Բ. Եզր. 2: 2), «Գրեցաւ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն», **Եղիշէ**, *Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին*, նշվ. հրատ., էջ 685, «...գմտաւ ածելով յիշատակարանս առանձին մատենանշան ծաղկեցուցանել եւ մինչ դեռ անդէն ի խորհրդանոցի մտացս վասն յուշ արկանելոյ միայնագործ հոգայի», **Կորիւն**, *Վարք Մտարոյս պարդապետին*, Մատենագիրք հայոց, հ. Ա., Ե. դ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 229:



Նկ. 2, ՄՄ Հ^Թ 2374, 230ա. հատված էջմիածնի Ավետարանի
հիշատակարանից

Մեր որոնումները ցույց են տալիս, որ առնվազն ժ. դարում «Հիշատակարան» բառի իմաստային դաշտը հարստացել էր ևս մեկ նշանակութային՝ անվանելով հիմնականում ձեռագրերի ավարտին մատենագիրների, ընդօրինակող գրիչների կամ այլոց թողած հեղինակային գրությունները, որոնք գերազանցապես առնչվում են տվյալ երկի ստեղծման, ստացման հանգամանքներին, իսկ դրանց հեղինակները սովորաբար խնդրում են հիշել իրենց և իրենց հարազատներին⁷⁵: Այսպես, 989 թ. Բղենո Նորավանքում ընդօրինակված նշանավոր Էջմիածնի Ավետարանի վերջում Հովհաննես գրիչը նախ արձանագրում է «յիշատակարան» բառը, ապա շարագրում է իր հիշատակարանը (նկ. 2)⁷⁶:

Քիչ ավելի ուշ գրված «Մատեան ողբերգութեան» պոեմի ավարտին Գր. Նարեկացին թողել է «Յիշատակարան մատենիս գրութեան»⁷⁷ բառակապակցությունը, ապա գրել իր հիշատակարանը: 1094 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում էլ կարգում ենք. «Գրեցաք յիշատակարանս ի թուականիս ՇևԳ. (1094)» [Հիշ. Ե-ԺԲ, 116]⁷⁸: 1101 թ. գրչագրված մեկ այլ ձեռագրում կրկին վկայված է «հիշատակարան»-ը. «Այլ եւ դուք, ո՛վ

⁷⁵ Չենք կարող բացատել, որ այդ նույն նշանակությամբ բառը գործածվել է ավելի վաղ ստեղծված ձեռագրերում, սակայն բառարանագրական հուշարձանները և մեզ հասած հիշատակարանների տվյալներն իմաստային այս կիրառության ավելի վաղ օրինակներ չեն հայտնում:

⁷⁶ *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 155-160: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 71-72: Ձեռագրի նկարագրությունը տես Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է. (ձեռագիրք 2101-2400), խմբագրությամբ՝ Գ. Տեր-Վարդանեանի, «Նայիրի» հրատ., Երևան, 2012, էջ 1119-1124:

⁷⁷ **Գրիգոր Նարեկացի**, Մատենագիրք հայոց, հ. ԺԲ., Ժ. դ., հատորը կազմեց Հ. Թանրազեանը, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 604-605:

⁷⁸ Տողատակերը չձանրաբեռնելու նպատակով ձեռագրերի հիշատակարանների հղումներն այսուհետ նշում ենք շարադրանքում ուղիղ փակագծերում՝ համապատասխան համառոտագրումներով, որոնցից առաջինը նշանակում է հիշատակարանի ժողովածուն՝ ըստ դարաշրջանի, ապա հատորը (ըստ հարկի) և էջը:

սրբասնեայ մանկունք եկեղեցւոյ, գնո՛յն մաղթեցէք եւ ի յիշատակարանէ ընդաւրինակագրաց մի՛ պակասեցուցանէք զյիշատակն նորա» [Հիշ. Ե-ԺԲ, 137]:

Հաջորդող դարերում «հիշատակարան» բառի այս գործածութիւնը ձեռագրերում ավելի հաճախադեպ է դառնում, որն էլ իր հերթին հանգեցնում է նշյալ բառի իմաստային մյուս կիրառութիւնների սահմանափակմանը: Բավական է ասել, որ Ժ. դարից սկսած՝ «հիշատակարան»-ը, գրեթե առանց բացառութիւնների, հանդիպում է իբրև մատյանում գրիչների հեղինակային գրութիւնների անվանում, որի առանցքային բաղադրիչը «յիշման արժանի առնել»-ու խնդրանքն է և այդ նպատակով բազմաթիվ անունների արձանագրումը: Ուշագրավ է, որ այս ազդեցութեամբ վաղ շրջանի որոշ վիմագրեր երբեմն «հիշատակարան» են անվանվել ճիշտ այնպես, ինչպես սովոր ենք տեսնել ձեռագրերում: Ահա մեր խոսքը հաստատող երկու օրինակ Անիի վիմագրական ժառանգութիւնից: Անիի մայր տաճարի հարավային պատի ծավալուն արձանագրութեան ավարտին կարդում ենք. «Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ Բենէ»⁷⁹: Կրկին Անիում՝ այս անգամ Ապուխանմի եկեղեցու մուտքի վերևում՝ քիվի տակ, կա հետևյալ արձանագրութիւնը. «...գրեցաւ յիշատակարան Ապուխանմ իշխանի, որ տուեալ է զՏոգո թոշակ ի սուրբ եկեղեցիս»⁸⁰:

Նկատենք նաև, որ պատմագիր Ստ. Օրբելյանը վիմագրերը կոչում էր նաև «յիշատակագիր արձան»։ «Եւ կարգէ յիշատակագիր արձանի ի վերայ սուրբ եկեղեցւոյն (իմա՛ Կոթիի Սուրբ Աստուածածինի – Խ. Հ.)», – գրում է Սյունյաց մետրոպոլիտը⁸¹:

⁷⁹ Գիվան հայ վիմագրության, պր. I, Անի քաղաք, կազմեց Հ. Ա. Օրբելի, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., Երևան, 1966, էջ 35₁₀₁:

⁸⁰ Նշվ. աշխ., էջ 34₉₉:

⁸¹ Պատմությունն ասիական Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբելյանն արքայակոտոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ. Վրդ. Ծահնագարեանց, ի գործատան Կ. Վ. Ծահնագարեանց, հ. Ա., Փարիզ, 1859, էջ 221:

Հարկ ենք համարում նշել նաև հետևյալը. հիշատակարան բառի՝ մեզ հետաքրքրող իմաստով Ժ. դարի վկայությունը և նրա աստիճանական հաստատումը իբրև մատյանի բաղկացուցիչ միավորի անվանում, ամենևին չեն կարող կռվան լինել Հայերեն ձեռագրերում հիշատակարան գրելու սովորությունից ձևավորման ժամանակը որոշելու հարցում, որը կարոտ է լրացուցիչ ուսումնասիրությունների:

Այսպիսով՝ առկա նյութը մեզ թույլ է տալիս ասել, որ Հայ մատենագրության սկզբնավորման շրջանից ավանդված հիշատակարան բազմիմաստ բառը, Ժ. դարից սկսած, գործածվում է նաև մատյանի ավարտն ազդարարող և գրչության հանգամանքներն ու նրան առնչվող անձանց մասին տեղեկություններ պարունակող միավորի նշանակությունը՝ ձեռք բերելով առավել լայն եզրի արժեք:

Նկատենք, որ հիշատակարան բառը գործածվում է նաև արդի շրջանում: Ձեռագրական եզր լինելուց բացի, որի կիրառությունն այսօր սահմանափակվում է հիմնականում գիտական և մասնագիտական շրջանակներով, մեզ հետաքրքրող բառը հաճախ գործածվում է նաև «հուշ», «հուշերի ժողովածու» իմաստներով, որոնք իրենց հերթին բնորոշ են հուշագրության կամ օրագրության ժանրերին⁸²: Եվ պատահական չէ, որ այս բնույթի երկերի (այդ թվում՝ գեղարվեստական) խորագրերում շատ հաճախ կարելի է նկատել «հիշատակարան» բառը, ինչպես՝ Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը», որն ընթերցողներին է ներկայանում իբրև օրագրային նշումների ժողովածու՝ քաղված «երևելի խաչագող» Մուրադի օրագրություններից⁸³:

Հետաքրքիր է նաև 1925 թ. Բաքվում լույս տեսած «Արձակուրդ գնացողի հիշատակարանը» վերնագրով գրքույկը,

⁸² Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Կ-Մ, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1974, էջ 353:

⁸³ Բաֆֆի, Խաչագողի հիշատակարանը, տե՛ս Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան), Երկերի ժողովածու տասը հատորով, հտ. երկրորդ, Հայպետհրատ, Երևան, 1962, էջ 312:

որի շապիկի դարձերեսին տպագրված է անգամ՝ «Ինչպես պիտի գրել յեվ ինչպես ոգտվել հիշատակարանից» վերտառությամբ մի ուղեցուլց: Հուշագրության ժանրի հետաքրքիր նմուշներից է նաև ԺԹ. դարի երկրորդ կեսի ականավոր հայ թատերական գործիչ Գևորգ Չմշկյանի հուշերի ժողովածուն՝ «Իմ հիշատակարանը» խորագրով, որը լույս է տեսել 1953 թ.⁸⁴: Մեր օրերում էլ «հիշատակարան»-ը կարելի տեսնել տարբեր երկերի խորագրերում՝ դարձյալ նույն իմաստով (Հ. Խաչատրյան, Գրական հիշատակարան, Երևան, 1996, Գ. Կիլիկյան, Հրեշտակ.am, դիվա-հարի հիշատակարանը, Երևան, 2016, Կ. Վարդանյան, Կամիթավոր հիշատակարան, Երևան, 2019 և այլն):

⁸⁴ **Գևորգ Չմշկյան**, *Իմ հիշատակարանը*, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ս. Ա. Մելիքսեյանը, ՀՍՍՌ-ԳԱ հրատ., Երևան, 1953:

3. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՅՔԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ՝ ԸՍՏ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԱԳԻՐՆԵՐԻ

«Արդ, աղաչեմ գամենեսեսան զվերջին յիշատակարանս գրողն՝
գանուամբ միայն էրէցս զԱստուածատուրս յիշել ի Տէր»
Աստվածատուր երեց, 1413 թ. [Հ/շ. ԺԵ, Ա, 330]

Հիշատակարանը ձեռագրի ծննդյան վկայականն է, նրա ստեղծմանն առնչվող հանգամանքների գլխավոր տեղեկատուն՝ անկախ ձեռագրական ավանդույթից և գրչուլթյան լեզվից: Հիշատակարանն է ձեռագրի ընդօրինակման վայրի ու ժամանակի, գրչի ու պատվիրատուի, ստացողի կամ փրկողի մասին կարևոր տեղեկուլթյունների ստացման աղբյուրը: «Ով ցանկանում է տեղեկուլթյուններ ստանալ այս մատյանների մասին, թող կարգահիշատակարանը և այնտեղից քաղի դրանք», – գրում է վրացի մի գրիչ 1047 թ. իր հիշատակարանում⁸⁵:

Ճիշտ է նաև նկատված, որ առանձին դեպքերում հիշատակարանն իր պարունակած տեղեկուլթյունների շնորհիվ ձեռագրին կարող է հաղորդել բացառիկ կարևորուլթյուն⁸⁶: Հայերեն հիշատակարաններն առատ են այդտեսակ արժեքավոր տեղեկուլթյուններով. նրանցում հաճախադեպ են ժամանակի հոգևոր և

⁸⁵ G. Shurgaia, *Colophon e archeologia del codice*, “Colofoni armeni a confronto, Le sottoscrizioni dei manoscritti in ambito armeno e nelle altre tradizioni scritte del mondo mediterraneo”, Atti del colloquio internazionale, Bologna, 12-13 ottobre 2012, a cura di A. Sirinian, P. Buzi, G. Shurgaia, (Orientalia Christiana Analecta 299), Roma 2016, p. 115: Վրացերեն հիշատակարանի թարգմանությունը իտալերենից մերն է:

⁸⁶ E. Balicka-Witakowski, S. P. Brock, D. G. K. Taylor, W. Witakowski, *The Heirs of the Ancient Aramaic Heritage*: S. P. Brock, *The Art of the Scribe* (“The Hidden Pearl. The Syrian Orthodox Church and Its Ancient Aramaic Heritage”, vol. 2), Rome, 2001, p. 247.

աշխարհիկ առաջնորդների անունների արձանագրումները, պատմական անցքերի և ժողովրդական կենցաղի նկարագրությունները, որոնք բազմիցս ծառայել և շարունակում են ծառայել հայոց պատմության տարաբնույթ հարցերի լուսաբանմանը:

Հիշատակարանը հայերեն ձեռագրի անբաժանելի բաղկացուցիչն է: Այս մասին են վկայում ոչ միայն հայերեն հիշատակարանների տպագրված և տպագրվող առանձին հատորները, այլև վիճակագրությունը. ըստ Ա. Շիրինյանի հաշվարկի՝ հայերեն 10 ձեռագրերից 8-ը կամ ամբողջի մոտ 80%-ը պարունակում է տարաբնույթ հիշատակարաններ: Այս թիվն ավելի ազդեցիկ է դառնում, երբ այն դիտարկում ենք համեմատության մեջ: Ա. Շիրինյանի ներկայացրած մեկ այլ հաշվարկի համաձայն՝ բյուզանդական ձեռագրերի 10-ից 1-ն է հիշատակարան պարունակում⁸⁷: Ըստ որում՝ ինչպես հայտնի է, բյուզանդական գրչագրերի հիշատակարանները բավական սակավախոս են և հաճախ աչքի են ընկնում իրենց կաղապարային բնույթով⁸⁸. սովորաբար այստեղ բավարարվել են գրչի, ստացողի անունների և գրչույթյան ժամանակի ու վայրի գրանցումներով: Մեզ հասած ասորական շուրջ 10.000 ձեռագրերից թվակիր հիշատակարաններ ունեն մոտ 3000-ը⁸⁹: Միջնադարյան եբրայական գրչագրերը ևս աչքի չեն ընկնում հիշատակարանների առատությունը. մի հաշվարկի

⁸⁷ **A. Sirinian**, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, “Armenian Philology in the Modern Era, from Manuscripts to Digital Text”, ed. by **V. Calzolari** with the collaboration of **M.E. Stone**, Brill, Leiden-Boston 2014, p. 65 (ծնթ. 2): Այս վիճակագրական տվյալին համահունչ է նաև Մարիա Լուիզա Ագատիի վկայակոչումն առ այն, որ հունական միջավայրում հիշատակարանագրությունը շատ տարածված չի եղել, և միայն Ժ. դարից սկսած է նկատվում որոշ ակտիվացում, տե՛ս **M. L. Agatti**, *Il libro manoscritto da Oriente a Occidente. Per una codicologia comparata*, «L’ERMA» di Bretschneider, Roma, 2009, p. 289.

⁸⁸ **А. П. Каждан**, *Книга и писатель в Византии*, Москва, изд. «Наука», 1973, стр. 39.

⁸⁹ **S. P. Brock**, *The Art of the Scribe*, p. 245.

Համաձայն՝ 10 գրչագրից կրկին 1-ն է պարունակում հիշատակարան⁹⁰: Ի լրումն այս վերջինի՝ կարելի է նշել և այն, որ 169 ձեռագրական միավոր պարունակող Մաշտոցյան Մատենադարանի եբրայերեն ձեռագրերի ցուցակում արձանագրված գրչագրերի էջերին չկան հիշատակարանային նշումներ⁹¹: Եթովպական հնագույն գրչագրերում էլ, ըստ ամենայնի, տարածված չի եղել հիշատակարանագրությունը. արդեն դիտված է, որ եզակի միավորներից զատ՝ հիշատակարանների աճը ձեռագրական այս ավանդույթում նկատվում է միայն ԺԴ-ԺԵ. դդ. ընթացքում⁹², և առկա նյութի հիման վրա կարելի է ասել, որ իրենց կառուցվածքով և բովանդակությամբ դրանք զգալիորեն ազդված են հու-

⁹⁰ **M. Perani**, *I colofoni dei manoscritti ebraici: tipologia, formule e caratteri specifici*, “Colofoni armeni a confronto”, p. 353. Հաշվարկն արված է միջնադարյան 40.000 եբրայական ձեռագրերի հիման վրա: Ընդհանուր առմամբ՝ եբրայական թվակիր հիշատակարանների թիվը 3300 է, ևս մի քանի հարյուրը անթվակիր են, սվյալները տե՛ս **M. Beit-Arié**, *Colophons in Hebrew Manuscripts: Source of Information on Book Production and Text Transmission*, “Scribi e colofoni. Le sottoscrizioni di copisti dalle origini all’avvento della stampa”, Atti del seminario di Erice, X Colloquio del Comité international de paléographie latine (23-28 ottobre 1993), a cura di **E. Condello** e **G. De Gregorio**, Spoleto, Centro italiano di studi sull’alto medioevo, 1995 (այսուհետ՝ “Scribi e colofoni”), p. 498.

⁹¹ Տե՛ս *Ցուցակ Մատենադարանի եբրայերեն ձեռագրաց*, երկեզու հայերեն-անգլերեն հրատարակություն, կազմող՝ **Ռ. Պողոսեան**, «Նաիրի» հրատ., Երևան, 2017:

⁹² *Ethiopic Codicology: Colophons*, in *Comparative Oriental Manuscripts Studies: An Introduction*, ed. by **A. Bausi**, **P. G. Borbone**, **F. Briquel-Chatonnet**, **P. Buzi**, **J. Gippert**, **C. Macé**, **M. Maniaci**, **Z. Melissakis**, **L. E. Parodi**, **W. Witakowski**, project ed. **E. Sokolinski**, COMSt 2015, p. 171. **A. Bausi**, *I colofoni e le sottoscrizioni dei manoscritti etiopici*, “Colofoni armeni a confronto”, p. 241: Հետաքրքիր է նկատել, որ եթովպական հնագույն և վստահելի թվագրում ունեցող ձեռագիրը ԺԳ. դարից է, թեև ավելի վաղ թվագրվող մի քանի ձեռագրեր ևս նշվում են, որոնց ստեղծման ժամանակի վերաբերյալ, սակայն, կան տարակարծություններ, տե՛ս **A. Bausi**, *Writing, Copying, Translating: Ethiopia as a Manuscript Culture*, “Studies in Manuscript Cultures, vol. 1: Manuscript Cultures: Mapping the Field”, ed. by **J. B. Quenzer**, **D. Bondarev** and **J.-U. Sobisch**, De Gruyter, Berlin, 2014, p. 48.

նական հիշատակարաններից, ինչպես նշում է եթովպական ձեռագրերի ճանաչված մասնագետ Ա. Բաուսին⁹³: Գրեթե նույն պատկերն է նաև ղպտական հիշատակարանների պարագայում: Այստեղ, սակայն, առանձնանում է 1929 թ. լույս տեսած ղպտերեն 126 հիշատակարանային միավոր պարունակող ժողովածուն,⁹⁴ որն ընդհանուր կերպով ուրվագծում է այս ավանդույթում հիշատակարանագրության առանձնահատկությունները և ժամանակային սահմանները⁹⁵:

Ձեռագրական տարբեր ավանդույթներում հիշատակարանագրության համեմատական այս շատ ընդհանուր պատկերը մեզ հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս ընդգծել հայ գրիչների բեղմնավոր և շնորհակալ աշխատանքը՝ հիշատակարան գրելու նրանց այդ բացառիկ սովորությունը: Ճիշտ է նկատել Ա. Աբրահամյանը, երբ գրել է. «Գրիչները, հայ մատենագրության ասպարեզում, այլ ձեռագիր ընդօրինակություններից բացի, կատարել են շնորհակալ մի այլ գործ ևս. նրանք իրենց ընդօրինակած ձեռագրերի բացատներում կամ տեքստերի վերջերում թողել են գրառումներ և հաղորդել անչափ արժեքավոր պատմական տեղեկություններ ձեռագրի արտագրության հանգամանքների, գրության վայրի, պատվիրատուի, ժամանակակից քաղաքական իրադարձությունների և բազմաթիվ այլ հարցերի մասին»⁹⁶: Այս միտքն ավելի է հստակեցնում Ա. Մաթևոսյանը՝ գրելով. «Հիշատակարանը ներկայացնում էր ձեռագիրը, նրա

⁹³ **A. Bausi**, *I colofoni e le sottoscrizioni dei manoscritti etiopici*, pp. 238-239.
⁹⁴ *Recueil des colophons des manuscrits chrétiens d’Egypte*, par **A. van Lantschoot**, t. 1, *Les colophons Coptes des manuscrits shahidiques*, Fascicule 1. *Textes*, Fascicule 2. *Notes et Tables*, Louvain, J.-B. Istas, Impr., 1929.
⁹⁵ Ըստ վերոնշյալ ժողովածուի՝ ղպտերեն հնագույն թվակիր հիշատակարանը 822-823 թթ. է (տե՛ս հ⁴⁹ 1 հիշատակարանը): Նույն հատորի համաձայն՝ կա նաև Ե-Չ. դդ. թվագրվող մեկ հիշատակարան (տե՛ս հ⁴⁹ 123 հիշատակարանը): Տե՛ս նաև **P. Buzi**, *Titoli e colofoni: riflessioni sugli elementi paratestuali dei manoscritti copti saidici*, “Colofoni armeni a confronto”, pp. 203-207.
⁹⁶ **Ա. Գ. Աբրահամյան**, *Հայ գրի և գրչության պատմություն*, Հայպետհրատ, Երևան, 1959, էջ 379:

ծնունդը, ստեղծման հանգամանքները, նպատակը, պատմությունը»⁹⁷: Իսկ ահա ակադեմիկոս Լ. Խաչիկյանը ժէ. դարի հիշատակարանների ժողովածուի Ա. հատորի հրատարակութայան առիթով գրած իր գրախոսութայան մեջ այսպես է սահմանում ձեռագրի անբաժանելի այդ միավորը.

«Մեր կարծիքով հիշատակարան պետք է կոչել և ըստ այդմ՝ հիշատակարանների ժողովածուների մեջ տեղ հատկացնել գրիչների, ծաղկողների, ստացողների, կազմողների, նորոգողների, գերությունից ազատողների կամ ձեռագրի հետ մի այլ կերպ առնչվող անձնավորությունների կողմից ու նրանց անունով շարադրված տեղեկությունները, որոնք առնչվում են տվյալ ձեռագրի կամ նախագաղափարի ընթրիմակության, նկարագարուման, նորոգման, օտարման, ձեռքբերման հանգամանքներին»⁹⁸:

*Մեր կարծիքով՝ ակադեմիկոս Լ. Խաչիկյանի այս սահմանումը միանգամայն ընդունելի և բնորոշ է ոչ միայն հայերեն ձեռագրերի հիշատակարանների համար, այլև ընդհանրապես կարող է դիտվել որպես այս եզրի ամենաընդգրկուն և դիպուկ բացատրություններից մեկը, այդ թվում՝ ժԸ. դարավերջից ձեռագրագրիտական եզրի արժեք ստացած colophon բառի սահմանման համեմատ*⁹⁹: Ի միջի այլոց նկատենք, որ միջագային գրիտական շրջանակներում կիրառվող անգլերեն colophon եզրը, որ սերում է հունարեն κολοφών «որևէ բանի ավարտ կամ գագաթ» բա-

⁹⁷ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, Երևան, «Վան Արյան» հրատ., 1998, էջ 8:

⁹⁸ Լ. Խաչիկյան, ժԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին հատորը, էջ 449:

⁹⁹ Այս մասին տե՛ս An Essay on Colophons with Specimens and Translations, by A. W. Pollard, and an Introduction by R. Garnett, Burt Franklin, New York [originally published Chicago, 1905], p. X. Տե՛ս նաև M. Schiegg, Scribes' Voices: The Relevance and Types of Early Medieval colophons, "Studia Neophilologica" 88 (2016), p. 130.

ուից¹⁰⁰, ձեռագրագիտական բառարաններում, ըստ էություն, բացատրվում է որպես ձեռագրի ավարտական միավոր-կաղապար, որն ամբողջություն է հի արտացոլում ձեռագրի այս կարևոր բաղկացուցիչ գործառույթը¹⁰¹: Մասնավորապես Դ. Մուզեռելլի հեղինակած ձեռագրագիտական տերմինների նշանավոր բառարանում *colophon* եզրը բացատրված է այսպես. «Ավարտական կաղապար, որում գրիչը նշում է գրչություն տեղը կամ ժամանակը, կամ և՛ մեկը, և՛ մյուսը»¹⁰²: Այսպիսի բացատրություն ունի նշյալ եզրը նաև Մ. Մանիաչի հեղինակած ձեռագրագիտական բառարանում, ուր նախորդի համեմատ ավելացված է միայն պատվիրատուի և ստացողի անունների առկայությունը¹⁰³: Մինչդեռ հիշատակարանը, հիրավի, մատյանի պատմության հիմնական վավերագիրն է. այն կարող է լինել ոչ միայն մատյանի ժամանակակիցը, այլև գրված լինել հետագայում և բոլորովին այլ տեղեկություններ հաղորդել մատյանի գտնվելու վայրի, նրա ձեռքբերման և այլնի վերաբերյալ: Ուստի՝ ձեռագրի պատմության և այլ հանգամանքների ներառմամբ

¹⁰⁰ A *Greek-English Lexicon*, compiled by **H. G. Liddell** and **R. Scott**, revised and augmented throughout by **S. H. Stuart Jones**, with the assistance of **R. Mckenzie** and with the cooperation of many scholars, Oxford, 1996, p. 974.

¹⁰¹ Վերջին արձագանքներից մեկին կարելի է ծանոթանալ այստեղ՝ **A. Soldati**, *Some Remarks about Coptic Colophons and Their Relationship with Manuscripts: Typology, Function and Structure*, “COMSt Bulletin”, vol. 4, Spring 2018 (1), pp. 116-117.

¹⁰² Բառարանը հասանելի է հետևյալ երկու առցանց հարթակներում՝ <http://codicologia.irht.cnrs.fr/> և <http://www.palaeographia.org/vocabulaire/vocab.htm> (ստ. 22. 11. 2019): Նկատենք, որ 1985 թ. լույս տեսած այս բառարանում հիշատակարանների հնարավոր բաղադրիչները դասակարգված են 435.03-435.20 ենթահամարների ներքո:

¹⁰³ **M. Maniaci**, *Terminologia del libro manoscritto*, préface di **D. Muzerelle**, Istituto centrale per la patologia del libro, Milano-Roma, 1996, p. 227. Այս բառարանների նմանությամբ այդ մոտեցումն է ցուցաբերված նաև Ագատիի ընդարձակ և շատ արժեքավոր ուսումնասիրության մեջ, տե՛ս **M. L. Agati**, *Il libro manoscritto da Oriente a Occidente. Per una codicologia comparata*, p. 288.

հիշատակարանների խաչիկյանական սահմանումը, մեր կարծիքով, նախընտրելի է և արտացոլում է գրավոր այս հուշարձանների բնույթը՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից:

Հայերեն ձեռագրերում հիշատակարան գրելու սովորույթի սկզբնավորման վերաբերյալ մեր տեղեկությունները խիստ սահմանափակ են. մեզ հայտնի չէ, թե ով, որտեղ, երբ և ինչ բովանդակությամբ ու ծավալով է առաջին անգամ հայերեն ձեռագրում հիշատակարան թողել: Հնարավոր չէ նաև հաստատել կամ հերքել հայ մատենագրության սկզբնավորման փուլում կամ նրան հաջորդող առնվազն երկու դարերի ընթացքում հիշատակարանների գոյություն փաստը, քանի որ այդ դարերից մեզ ամբողջական թվակիր ձեռագրեր չեն հասել: Արևելաքրիստոնեական ձեռագրական մյուս մշակույթները, որոնց հետ հայկական ձեռագրական ավանդույթն ունեցել է սերտ առնչություններ, մեր դիտարկմամբ՝ չեն պարունակում այնպիսի տվյալներ կամ տեղեկություններ, որոնք կարող են հանգուցալուծել մեզ հետաքրքրող հարցը¹⁰⁴:

Արդ, ե՞րբ է ձևավորվել հիշատակարանագրությունը հայերեն ձեռագրերում իր այն տեսքով, ինչպիսին արդեն կա թ. դարավերջին. պետք է ընդունել, որ այս հարցին առայժմ դժվար է պատասխանել: Առ այս կարևոր ենք համարում մի դիտարկում անել, որն առնչվում է հայերեն հիշատակարանների հրատարակված երկու մեծարժեք հատորներին. ինչպես հայտնի է, նախ Գ. Հովսեփյանը, ապա Ա. Մաթևոսյանը հիշատակարանային իրենց ժողովածուները հրատարակելիս խորագրերում նշել են Ե. դարը՝ «Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա. (Ե. դարից մինչև

¹⁰⁴ Տարբեր ավանդույթներում կան տարբեր թվագրումներ ունեցող անթվական ձեռագրեր. դրանցից մի քանիսը միաժամանակ պարունակում են հիշատակարանատիպ նշումներ: Նման նշումներ կան նաև հայերեն ձեռագրերում. բավական է հիշել Է. դարով թվագրվող ՄՄ Հ^մ 10680 «Վեհամոր» Ավետարանը: Լրացուցիչ տե՛ս ծնթ. 109 և 110:

1250 թ.)» և «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր»։ Արդյո՞ք այս փաստը կարելի է իբրև կռվան ընդունել և նշել, որ հայերեն ձեռագրերում հիշատակարաններ են գրվել դեռևս Ե. դարում։ Մասնավորապես այս տեսակետն է առաջադրել գրականագետ Հ. Բախչինյանը՝ նշելով, որ հայ մատենագրության արշալույսին հայկական ձեռագրական ավանդույթում եղել է նաև հիշատակարաններ թողնելու սովորություն¹⁰⁵։ Մեզ հայտնի է այս հարցում Գ. Հովսեփյանի կարծիքը, սակայն Ա. Մաթևոսյանը կարծում էր, որ Ե. դարում հայերեն մատյաններում հիշատակարան գրելու առանձին անհրաժեշտությունն էր զգացվել, քանի որ այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք էին գրչի անունը, վայրը, ժամանակը և այլն, լրացվում էին երկերի առաջաբաններում, ուստի. «Ե. դարում գրիչները հիշատակարան գրելու սովորությունն չեն ունեցել», – եզրակացրել է բազմափորձ ձեռագրագետը¹⁰⁶ և 887 թ. նշանավոր «Լազարյան» Ավետարանի հիշատակարանն այս առումով համարել է «կատարյալ նմուշ»¹⁰⁷։ Նկատենք նաև, որ ակադեմիկոս Լ. Խաչիկյանի կարծիքով ևս ձեռագիր մատյաններում հայ գրիչները, պատվիրատուները սկսել են սեղմ հիշատակարաններ թողնել՝ Թ. դարից սկսած¹⁰⁸։ Իսկ Գ. Հովսեփյանի և Ա. Մաթևոսյանի կազմած հիշատակարանների նշյալ ժողովածուներում տեղ գտած մինչև է. կամ Ը. դարերի միավորները հիմնականում տարբեր պատմություններ, վկայաբանություններ, ժամանակագրություններ կամ առաջաբանություններ հիշեցնող մեծ և փոքր միավորներ են,

¹⁰⁵ Հ. Գ. Բախչինյան, *Ձեռագրական հիշատակարանների զարգացման ընթացքը*, «ԼՀԳ», 1973 (6), էջ 83: Այս կարծիքը նա կրկնել է նաև իր մենագրության մեջ, տե՛ս Հ. Գ. Բախչինյան, *Հայկական ձեռագրերի հիշատակարանները*, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, էջ 50:

¹⁰⁶ Ա. Մաթևոսյան, *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր*, էջ 11:

¹⁰⁷ Ա. Մաթևոսյան, *Լազարյան նեանարանի հնագույն ձեռագիրը*, «ԴԲՀ», 1973 (1), էջ 128:

¹⁰⁸ *Հայ ժողովրդի պատմություն*, հ. Գ., ՀՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976, էջ 815:

որոնք ինչ-որ առումով մոտ են հիշատակարանի ընդհանուր հատկանիշներին և պահպանվել են հիմնականում ավելի ուշ ընդօրինակված ձեռագրերում:

Թվակիր հնագույն ձեռագրի՝ 887 թ. ընդօրինակված Լազարյան Ավետարանի հիշատակարանը¹⁰⁹ հաստատում է, որ Թ. դարում արդեն (գուցե ավելի վաղ¹¹⁰) հայ գրիչները սովորովյուն

¹⁰⁹ Նկատենք, որ, ըստ ամենայնի, Լազարյան Ավետարանից 25 տարով վաղ է գրչագրված Մլբե թագուհու անունով հայտնի Վենետիկի Հ^{ՍԻ} 1144/86 Ավետարանը, որի գրչության 862 թվականը երբեմն տարակարծությունների առիթ է տվել, մասնավորապես ձեռագրի նկարագրության առիթով այն Հայոց Յ. (851) թվական է ընթերցել Հ. Բարսեղ Սարգիսյանը, տե՛ս *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարանց ի Վենետիկ*, Կ. Ա., յօրինեց Հ. Բ. Վ. Սարգիսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1914, էջ 380 և 389: Գ. Հովսեփյանն այն հարցականով համարում է 912 թ., տե՛ս *Յիշատակարանը ձեռագրաց*, էջ 107-112: Նույն տեղում կարելի է ծանոթանալ նաև թվագրման այլ վարկածների: Արդի ուսումնասիրություններում թվականի վիճահարույց հատվածը ընթերցվում է ՅԺԱ. (862) ձևով: Տե՛ս նաև՝ Հ. Գ. Անանեան, *Արծրունեաց տոհմին Աւետարանը Մլբէ թագուհիի անունով ծանօթ*, «Բազմավեպ», 1994, էջ 117-130: Հենց այդ թվականի տակ է այն դրված նաև Ա. Մաթևոսյանի կազմած հիշատակարանների ժողովածուում, տե՛ս *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Ե-ԺԲ դարեր, էջ 34: Նույն կարծիքին են նաև հայ հնագրության արքունը կազմող հեղինակները, տե՛ս Մ. Է. Սթոուն, Տ. Գոյումճեան, Հ. Լեմանն, *Հայկական հնագրությունն ալբոմ*, անգլերենից թարգմանեցին՝ Գ. Մուրադեան, Ա. Թոփչեան, «Տիգրան Մեծ» հրատ., 2006, էջ 122-123: Այնուամենայնիվ, որոշ վերապահումներ այսօր էլ արվում են այս և 887 թ. Ավետարանների ժամանակագրության մասին խոսելիս: Հստակ է միայն, որ 887 թ. հիշատակարանն ամբողջական է իր հաղորդած տեղեկություններով և նրանում վկայված անձանցով, իսկ վենետիկյան ձեռագրից հիշատակարանային փոքրիկ նշում է գրչության ժամանակի վերաբերյալ և հիշատակարանի կառուցվածքի դիտանկյունից տեղեկություններ չի պարունակում:

¹¹⁰ Մեր համոզմամբ՝ ձեռագրում հիշատակարան թողնելու ավանդույթը մեզանում ձևավորվել է Թ. դարից էլ վաղ. ձեռքի տակ չունենալով վստահելի և անհերքելի աղբյուրներ՝ գերծ ենք մնում վերջնական պնդումներից, սակայն որոշ օրինակների առկայությունը մեր ենթադրության օգտին է խոսում. նախ և առաջ չպետք է մոռանալ Է. դարով թվագրվող ՄՄ Հ^{ՍԻ} 10680 «Վեհամոր» Ավետարանը, որի էջերին կան հիշատակարանատիպ սեղմ նշումներ, իսկ որպես գրչավայր («ընդ հովանեաւ») նշված է Մուրբ Երրորդություն վանքը (տեղորոշումն անհայտ է): Յավոք, վերջից ընկած թերթե-

են ունեցել ձեռագրի ընդօրինակումից հետո հիշատակարան թողնել: Այդ սովորությունն իր անխախտ շարունակությունն է գտնում հատկապես հաջորդող դարերի ընթացքում, և գրավոր այս հուշարձաններն իրենց կառուցվածքային հիմնական դիմագծով ոչ միայն ամրապնդվում են ձեռագրերում, դառնում վերջիններիս անբաժանելի բաղադրատարրը, այլև ժամանակի ընթացքում վերածվում են մինչև անգամ գրական ինքնատիպ ժանրի: ԺԳ. դարի երկրորդ կեսից և ԺԴ. դարասկզբից ի վեր սովորական են դառնում նաև ստեղծագործ գրիչների՝ գեղարվեստական պատկերներով հարուստ հիշատակարանները, որոնք աչքի են ընկնում իրենց բովանդակային բազմազանությունը: Մյուս կողմից՝ արձակ հիշատակարանների կողքին հետզհետե աճում է նաև չափածո հիշատակարանների թիվը: Նշյալ չըջանից սկսած՝ ընդարձակ, մինչև անգամ մի քանի էջ զբաղեցնող հիշատակարանները դառնում են հաճախադեպ:

Նկատելի է, որ ժամանակի ընթացքում աճում է հիշատակարաններում անվանապես նշվել ցանկացողների թիվը. ԺԴ. դարում և հատկապես ԺԵ. դարասկզբից սկսած՝ երեքից մինչև վեց տասնյակ անձանց անուններով հիշատակարանները սովորական բնույթ են կրում: Երբեմն միևնույն ձեռագրում կարելի է նկատել նաև բազմաթիվ կարճառոտ, հիմնականում միատիպ հիշատակարաններ (հատկապես Հայամավուրք, Ճառընտիր մատյաններում), որոնց մի մասում բաց են թողնված անձնանունների

րի պատճառով հայտնի չէ՝ Ավետարանն ունեցել է հիշատակարան, թե ոչ, սակայն նույնիսկ այդ տեսքով փաստվում է հիշատակարանային փոքրիկ նշումների առկայությունը: Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ ԺԴ.: Ընդգծենք նաև, որ նույն դարաշրջանի գործիչ Դավիթ Հարքացու անունով մեզ հայտնի «Յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս» երկի ավարտին կա հեղինակի հիշատակարանը, որն ունի այս ժանրին բնորոշ բաղադրիչներ, տե՛ս **Դաւթի Հարքացոյ եւ փոխտփային որ յիմաստասիրական եւ յիմաստասիրելի հարցուածս**, բնագիրը կազմեց՝ **Յ. Քնուտեան**, Մատենագիրք հայոց, Է. դ., հ. Ե., Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 1143: Այլ խոսքով՝ առնվազն Է. դարում նկատվում են հիշատակարանագրության առանձին դրսևորումներ, որոնց ուղղությամբ առաջիկա ուսումնասիրությունները կարող են նոր արդյունքներ տալ:

տեղերը, որոնք, ըստ հարկի, կարող էր լրացնել նաև ձեռագրի գնորդը: Առանձնանշելի է, որ գրքի վաճառքի ակտիվացումը նույնպես իր ուրույն ազդեցությունն է ունենում հիշատակարանների լեզվի, ոճի և կառուցվածքի վրա. որպես կանոն՝ վաճառքի համար ստեղծված ձեռագրերում գրիչներն աննշան փոփոխություններով թողնում էին հիմնականում իրենց միաձև հիշատակարանները, որոնցում լրացնում էին պատվիրատու-ստացողների անունները, գրչության ժամանակն ու վայրը, և հակառակը՝ նշյալ հատվածները բաց էին թողնվում գնորդի բացակայության պարագայում: Ահա թե ինչու մի շարք մատյաններ մեզ են հասել առանց հիշատակարանների կամ այնպիսի հիշատակարաններով, որոնցում բաց են թողնված անձնանունները, տեղանունները և գրչության ժամանակը:

Դարերի ընթացքում գրավոր այս հուշարձանները հիմնականում պահպանել են իրենց կառուցվածքը. միաժամանակ գրիչների լեզվում ձևավորվել և տարածում են գտել կաղապարային բնույթ ունեցող զանազան կառույցներ, արտահայտություններ, որոնք լայնորեն կիրառվել են հիշատակարաններում՝ անկախ նրանց գրչության վայրից ու ժամանակից: Ըստ որում՝ հատկանշելի է, որ ձեռագիր հիշատակարանի կայուն կառուցվածքն ու նրա հիմնական բաղադրիչները հայ գրատպության սկզբնավորումից հետո փոխանցվել են նաև տպագիր գրքերին: 1513 թ. Հակոբ Մեղապարտի հրատարակած Պատարագատետրի հիշատակարանում կարդում ենք առաջին տպագիր հիշատակարանը. «Գրեցաւ սուրբ տառս ի ԶԿԲ. (1512) ի աստուածապահ քաղաքս ի Վէնէժ, որ է Վենետիկ Ֆռանկստեան, ձեռամբ մէղապարտ Յակոբին: Ով որ կարգայք, մեղաց թողութիւն խն[ը]րեցէք Աստուծոյ»¹¹¹:

¹¹¹ [Պատարագատետր], տպագրիչ՝ Յ. Մեղապարտ, Վենետիկ, տպ. Յակոբ Մեղապարտի, 1513, վերջին թերթի ա երեսին (Չ մամուլի 7-րդ էջին): Տե՛ս նաև Ն. Ա. Ոսկանյան, Բ. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին. հայ հնատիպ գրքի մատենագիտություն, առաջաբանը՝ Ն. Ա. Ոսկանյանի, խմբագրությամբ՝ Ռ. Ա. Իշխանյանի, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարան, Երևան, 1988, էջ 3:

Ահա 1565-1566 թթ. Աբգար դպիր Թոխաթեցու հրատարակած Սաղմոսարանի հիշատակարանից մի հատված, որը գրեթե ոչնչով չի տարբերվում ձեռագիր հիշատակարանից.

«Փառք անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդութեան Հայր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ յաիտեանս. ամմէն:

Կազմեցաւ սուրբ երգարանս Դարթի լաւ եւ իրնդիր արիննակէ Գառնեցոյ վարդապետի ի թշակամիս Հայոց ՌԺԵ. (1566), մայիս ԺԵ. (15), արն ուրբաթ, ԺԲ. (12) ժամն, ի հայրայպետութեան Հայոց Մեծաց տէր Միքայէլիսն և իւր համայսոն եղբարցն եւ Փոքր Հայոց տէր Խաչատուկիսն ի չորրորդ ամի...»¹¹²:

Հիշատակարանների առատությամբ աչքի են ընկնում հատկապես ԺԷ. և ԺԸ. դարերը. այս հանգամանքը պայմանավորված է նշյալ շրջանում Հայաստանում և հայկական գաղթավայրերում ձեռագրաստեղծման օջախների, անհատ ընդօրինակողների գործունեության վերելքով, ինչպես նաև ձեռագիր գրքի աճող պահանջարկով: Այս շրջանի հիշատակարանները, թեև կառուցվածքային ընդգծված տարբերություններ չունեն նախորդ դարերի հիշատակարանների համեմատ, սակայն աչքի են ընկնում իրենց ընդարձակությամբ և հատկապես չափածո հիշատակարանների առատությամբ: Այս շրջանի հիշատակարանները, պատմական իրադարձություններին և հասարակական կյանքին առնչվող տեղեկություններից զատ, հարուստ են նաև նորակերտ գրչօջախներին, ձեռագրաստեղծմանը, ձեռագրերի փրկագնմանը, նորոգմանն ու կազմմանը, ձեռագրերի առքուվաճառքին վերաբերող տեղեկություններով: Ըստ այսմ՝ համաձայն չենք գրականագետ Հ. Բախչինյանի այն մտքին, որ հիշատակարանները ԺԷ. դարից ի վեր «խամրում են»¹¹³: Ճիշտ հակառակ

¹¹² [Սաղմոսարան], տպագրիչ՝ Աբգար Թոխաթեցի, Վենետիկ, տպ. Աբգար Թոխաթեցու, 1565-1565, ԼԴ. մամուլի նախավերջին էջին: Տե՛ս նաև Ն. Ա. Ոսկանյան, Բ. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավայան, *նշվ. աշխ.*, էջ 9:

¹¹³ Հ. Գ. Բախչինյան, *Ձեռագրական հիշատակարանների զարգացման ընթացքը*, էջ 91:

պատկերն է, ինչպես վկայում են նույն այդ գրավոր հուշարձանները հրատարակված եռահատորյակով:

Հիշատակարանագրությունը հայերեն ձեռագրերում շարունակվել է ընդհուպ ժԹ. դարավերջ և Խ. դարասկիզբ: Նկատենք միայն, որ այս շրջանի հիշատակարանները, որպես կանոն, սեղմ են և հիմնականում աչքի չեն ընկնում հարուստ տեղեկություններով: Հիշատակարանային տվյալներին ինչ-որ առումով գալիս են փոխարինելու նորաստեղծ երկերի վերնագրերը: Հաճախադեպ են նաև զուտ մեկտողանի գրությունները, որոնցում գրանցված են գրչության վայրը, ժամանակը և գրչի անունը: Հասկանալի է, որ ձեռագրեր ընդօրինակելու ավանդույթի մարումը նաև հիշատակարան գրելու ավանդույթի դադարեցման բնական պատճառ է դառնում:

Հայերեն հիշատակարանների ժամանակագրական այս ընդհանուր և համառոտ ուրվագծով փորձեցինք որոշակի պատկերացում տալ գրավոր այս հուշարձանների ձևավորման և զարգացման ընթացքի վերաբերյալ, իսկ հիշատակարանների առանձին դրսևորումներին, կառուցվածքին և առանձնահատկություններին անդրադառնում ենք սույն գրքի համապատասխան բաժիններում:

Տարբեր դարաշրջաններում հայերեն ձեռագրերում հիշատակարաններ են թողել ոչ միայն ընդօրինակող գրիչները, մատյանների պատվիրատու-ստացողները, այլև ավելի ուշ այդ նույն մատյանները նորոգողները, կազմողները և մատյանի հետ առնչություն ունեցած այլ անձինք: Այդ նպատակով ընդունված է հիշատակարանները տարբերակել՝ ըստ ժամանակի և հիշատակագիրների:

Ըստ ստեղծման ժամանակի՝ առանձնացվում են երկու կարգի հիշատակարաններ՝ գրչության ժամանակի և հետագայի:

Առաջինը մատյանի ժամանակակիցն է, նրա ստեղծման վկայականը՝ գրված հիմնականում ընդօրինակողի, ծաղկողի, երբեմն նաև կազմողի կամ պատվիրատու-ստացողի կողմից, ըստ այսմ՝

տարբերակվում են նաև գրչի, ծաղկողի, կազմողի և ստացողի հիշատակարան հասկացությունները:

Հետագայի հիշատակարանը մատյանի ստեղծմանը հաջորդած որևէ ժամանակաշրջանում գրված հիշատակարանն է, որն անբաժան է տվյալ մատյանի պատմությունից: Հայկական ձեռագրավեստում հետագայի հիշատակարանները հիմնականում հեղինակել են լրացնող գրիչները, հետագա գնորդ-ստացողները, գերութունից ազատողները, նվիրատուները, նորոգողներն ու կազմողները: Հայերեն ձեռագրացուցակների և հիշատակարանների հրատարակված ժողովածուներում սովորաբար նման հիշատակարանները տարբերակված են ըստ առանձին հիշատակագիրների (նվիրատուի, նորոգողի, կազմողի և այլն): Նկատենք նաև, որ հաճախ են օրինակները, երբ հիշատակարան է թողել ձեռագրի հետագա գնորդը կամ փրկագնողը, որը միաժամանակ նաև մատյանի պակաս հատվածների լրացնողը, նորոգողն ու կազմողն է եղել:

Հայերեն ձեռագրերում սակավ չեն այն դեպքերը, երբ ձեռագրի միևնույն էջին հանդիպում են թե՛ գրչու թյան ժամանակի և թե՛ հետագայի հիշատակարանները: Ահա, օրինակ, 1494 թ. Հաղբատում ընդօրինակված ՄՄ Հ^{մբ} 8357 Ձեռաց Մաշտոցի 80ա և 80բ երեսներին շարադրված են նախ գրչի գլխավոր հիշատակարանը (ցավոք, գրիչն իր անունը չի հայտնել), ապա ստացող Հակոբ քահանայի սեղմ հիշատակարանը: Ոմն տեր Սարգիս հավանաբար ժէ. դարում գրչի հիշատակարանի վերջում գրել է. «Ես՝ տեր Սարգիս, գրեցի վրայ Մաշտոցին», իսկ ստացող Հակոբ քահանայի հիշատակարանի վերջում նույն տեր Սարգիսը լրացրել է նաև իր ընտանիքի անդամների անունները (նկ. 3): Դատելով այն հանգամանքից, որ նշյալ ձեռագիրը նորոգվել և բնագրի գունաթափ տառերի թանաքը տեղ-տեղ թարմացվել է դարձյալ ժէ. դարում, կարելի է ենթադրել, որ նույն տեր Սարգիսը եղել է նաև ձեռագրի նորոգողը:

Սա, անշուշտ, եզակի դեպք է. հետագա ստացող-նորոգողների հիշատակարանները նույնպես հաճախադեպ են հայերեն ձեռագրերում:

Եթե ձեռագրի ընդօրինակման ժամանակ գրիչը հոգացել և արտագրել է նաև գաղափար օրինակ ծառայած մատյանի հիշատակարանը, ապա այն կոչում ենք նախագաղափար: Գաղափար օրինակի հիշատակարանի ընդօրինակումով՝ պահպանվում էին նաև նրա գրչի կամ նրանում հիշատակված անձանց անունները: Հայերեն հիշատակարաններում շատ հաճախ կարելի է հանդիպել գրիչների թախանձագին տողերի, որոնցով ապագա ընդօրինակողներին խնդրում են անտես չառնել նաև իրենց հիշատակարանի ընդօրինակումը: 1303 թ. գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Եւ դուք, ո՛վ աշակերտք բանի, որք պատահէք այսմ աստուածային հանդիսի օրինակելով զսա, գրեսջի՛ք եւ զսակաւ զայս արձան յիշատակի մերս տաժանմանց, զի մի լինի՛ջիք բազմիս առօղ եւ սակաւին՝ ոչ տուող» [Հիշ. ԺԴ, Ա, 56]:

Առանձին դեպքերում տարբերակում ենք նաև հեղինակի կամ թարգմանչի հիշատակարանը, երբ ընդօրինակված մատյանն օժտված է երկը հեղինակողի կամ այն թարգմանողի հիշատակարանով: Օրինակ՝ ԺԷ. դարում Նոր Զուղայում գրչագրված ՄՄ Հ^մ 2642 ժողովածուն պարունակում է ոչ միայն Գր. Նարեկացու «Մեկնութիւն Երգ երգոցի» երկը, այլև հեղինակի հիշատակարանը: Ըստ այսմ՝ ձեռագրացուցակում այն տեղ է գտել հիշատակարան հեղինակի խորագրի ներքո¹¹⁴: 1125 թ. Գրիգոր կրօնավորը թարգմանել է Սուրբ Պարսամի վարքը, որից հետո գրել է իր թարգմանությունը հավաստող հիշատակարանը. «Թարգմանեցաւ Պատմութիւն երանելոյն, ի թՎականիս Հայոց ի նորում շրջանի յամի քառասներորդի առաջներորդի (1125)... ձեռամբ Գրիգորի մեղապարտ կրաւնաւորի» [Հիշ. Ե-ԺԲ, 158]: Սա էլ, ըստ էութեան, թարգմանչի հիշատակարանն է:

¹¹⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը. (ձեռագիրք 2401-2700), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեւրիկեան, «Նայիրի» հրատ., Երեւան, 2013, էջ 886: Հմմտ. Մատենագիրք հայոց, հ. ԺԲ., Ժ. դ., Գրիգոր Նարեկացի, էջ, 882-883:

4. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՏԵՂԸ ՁԵՌԱԳՐՈՒՄ

«Ահա թողաք զկնի սորա յոյով թուղթ անգիր.
եթէ կամիցիք, անդ գրեսցիք զձեր [յիշատակարան]»
Պարսամ գրիչ, 1641 թ. [Հիշ. ԺԷ, Գ, 20]

Ընդարձակ հիշատակարանները հայերեն ձեռագրերում սովորաբար գրվել են վերջնամասում՝ հաջորդելով ընդօրինակված բնագրին: Համեմատաբար ծավալուն այդ հիշատակարանները հիմնականում թողնում էին ձեռագիրն ընդօրինակող գրիչները, և որպես կանոն՝ դրանք տարբերվում էին ձեռագրի այլ հատվածներում գրված հիշատակարան-հիշատակագրություններից իրենց ծավալով և բովանդակությամբ: Ըստ այդմ՝ գրիչների նշյալ հիշատակարաններն արդարացիորեն ստացել են գլխավոր անվանումը: Դրանք առանձնանում են նաև իրենց բնորոշ «փառք-սկսվածքներով», որոնց մասին կխոսենք հիշատակարանների կառուցվածքային առանձնահատկություններին նվիրված հատվածում:


Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուն բնագրից իրենց գլխավոր (և ոչ միայն) հիշատակարանները տարբերակելու կամ տարանջատելու նպատակով գրիչները շատ հաճախ կիրառել են տարբեր եղանակներ. մի դեպքում բովանդակության ավարտին պարզ կամ ձևավոր բաժանարար գծեր են քաշել, ապա շարադրել հիշատակարանը (հատկապես երբ միևնույն էջում հիշատակարանն անմիջապես հաջորդել է բնագրին), մեկ այլ դեպքում դրանք շարադրվել են բովանդակությունից տարբերվող գրով (տառաչափերի, տառաձևերի և մինչև անգամ գրատեսակի փոփոխությամբ), իսկ եզակի դեպքերում հիշատակարաններն առանձին ռճավորում են ստացել: Ավելի տարածված են հիշատակարանի սկիզբն ազդարարող բառի առաջին նախադասության բառի կամ տառի որևէ կերպով ընդգծումը, ձևավորումը կամ կարմրով ներկումը: Այժմ օրինակներով քննենք ասվածը:

Գրչական թվականով հնագույն մատյանի՝ 887 թ. ընդօրինակված Լազարյան Ավետարանի վերջում՝ առաջին սյան վեցերորդ տողի ավարտին, նկատելի են մատյանն ընդօրինակած Սահակ Վանանդացու գրչով արված իրար գուգահեռ երկու կետագծեր, որոնք տարանջատում են գլխավոր հիշատակարանը Ավետարանի բուն շարադրանքից (նկ. 4):



Նկ. 4, ՄՄ Հ^մ 6200, 229ա. հատված
Սահակ Վանանդացու հիշատակարանից

1046 թ. գրչագրված և Հովհան Ոսկեբերանի ճառերը պարունակող ՄՄ Հ^մ 988 ձեռագրում բովանդակությունն ու հիշատակարանը սահմանազատված են ոչ միայն ալիքաձև (ղարձղարձիկ) հորիզոնական բարակ գծով, այլև հիշատակարանի տառերի ակնհայտ տարբերությամբ. երկու դեպքում էլ գրատեսակը ուղղաձիգ երկաթագիրն է, սակայն հիշատակարանի գիրը բնագրի գրի համեմատությամբ ավելի շեղ է և չափերով փոքր: Ակնառու է նաև բնագրի և հիշատակարանի թանաքների տարբերությունը (նկ. 5):



Նկ. 5, ՄՄ Հ^մ 988, 283բ. հատված հիշատակարանից, 1046 ք.

Գրեթե նույն մոտեցումն ենք նկատում նաև 973 թ. Տարոնում ընդօրինակված ՄՄ Հ^մ 2684 մատյանի պարագայում: Ձեռագիրն ամբողջովթյամբ ուղղագիծ երկաթագրով է, այդ թվում՝ բնագրին հաջորդող հիշատակարանը, սակայն գրչագրի այդ երկու միավորները միմյանցից տարանջատելու նպատակով Պետրոս գրիչը հիշատակարանը գրել է բնագրից համեմատաբար փոքր և ավելի բարակ տառերով¹¹⁵: Ըստ էություն՝ նման երևույթները բացառիկ կարևորություն ունեն նաև հայ հնագրությունից դիտանկյունից և հնարավորություն են ընձեռում ծանոթանալ միևնույն գրատեսակի տարբեր դրսևորումներին:

¹¹⁵ Մ. Է. Սթոուն, Տ. Գոյումենան, Հ. Լեմանն, Հայկական հնագրության պրոմ, էջ 132-133.

Ավելին, որոշ դեպքերում հիշատակարանի գիրը կարող է ավելի մեծ արժեք հաղորդել բուն գրչագրին, ինչպես օրինակ՝ հայր Ղևոնդ Ալիշանի հրատարակած 999 թ. Կոզովիտում գրված հիշատակարանի պարագայում, որում վկայված է բոլորգրի կիրառության հնագույն նմուշներից մեկը¹¹⁶: ԺԱ. դարով թվագրվող ՄՄ Հ^մ 2877 Ավետարանի 75բ երեսին՝ աստիճանավոր խաչակիր պատվանդանի ստորին հատվածում, գրիչը շեղ բոլորգրով թողել է հետևյալ սեղմ հիշատակագրութունը. «Սո՛ւրբ խաչ, յորժամ ծագիս յարեւելից, լուսաւորեա՛ զԳրիգորի հօգին, գրագրին. ամէն» (տե՛ս պատկեր 8)¹¹⁷: Այս փոքրիկ հիշատակարանի գիրը նույնպես բոլորգրի հնագույն դրսևորումներից է և հայ հնագրության կարևոր օրինակներից մեկը¹¹⁸:

Հայկական հնագույն հիշատակարանների շարքում առանձնահատուկ հետաքրքրութուն ունեն 974 թ. ընդօրինակված և ներկայումս Վրաստանի Ախլցխայի շրջանի Ծողղրութ գյուղի նշանավոր Ավետարանի և ԱՄՆ Բալթիմորի Ուոլթերս թանգարանում պահվող 966 թ. Ավետարանի հիշատակարանները: Այդ երկու հիշատակարաններն իրենց հորինվածքներով եզակի են հայկական ձեռագրարվեստում: Առաջինը գրված է հետաքրքիր ոճավորմամբ պատկերված խաչի մեջ՝ հաջորդելով Մատթեոսի Ավետարանի նախագրությանը: Բնագրի և հիշատակարանի անջատման համար հիշատակագիրը նույն թանաքով ալիքաձև գծիկներ է վրձնել: Հիշատակարանը շարունակվում է նաև խաչից դուրս՝ վերջինի եզրերով¹¹⁹ (նկ. 6): Ուոլթերսի Ավետարանի

¹¹⁶ Այրարատ, բնաշխարհի Հպատատանայց, տեղագրեաց Հ. Ղ. վ. մ. Ալիշան, Վենետիկ-Ս.Ղազար, 1890, էջ 498 (նկ. 191):

¹¹⁷ Ձեռագրի ամբողջական նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ. (ձեռագիրք 2701-3000), խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, «Նայիրի» հրատ., Երևան, 2017, էջ 1053-1064:

¹¹⁸ Գ. վրդ. Յովսէփեան, Գրչութեան արուեստը հին հայոց մէջ, մասն Գ., Քարտէզ հայ հնագրութեան, էջ 25, տախտակ ԻԱ., նկ. 46:

¹¹⁹ Ավետարանի մասին տե՛ս Գ. վ. [Յովսէփեան], Ծորոյթի հին Աւետարանը, «Արարատ», 1898, ԺԱ-ԺԲ, էջ 519-520, Ն. Քոթանջյան, Ծորոյթի ավել-

հիշատակարանը ևս հետաքրքիր ձևավորում ունի. այն գրված է դեղին, կապույտ, կարմիր գույներով երիզված ուղղանկյունու մեջ (նկ. 7)¹²⁰: Այս դեպքում էլ հիշատակարանը շարունակվում է նաև ուղղանկյունուց դուրս: Ժ. դարի այս երկու մատյաններն ուշադրութուն են գրավում նաև այն հանգամանքով, որ դրանց գլխավոր հիշատակարանները գրված են ոչ թե ձեռագրի ավարտին, այլ սկզբում, այսինքն՝ նախորդում են բնագրին¹²¹: Ըստ որում՝ սա այս երկու գրչագրերի միակ ընդհանրութունը է. հատկանշական է և այն, որ Ծուղրութի Ավետարանի հիշատակարանն ընդունած խաչն իր հորինվածքով և հատկապես շղթայաձև հանգույցներով հիշեցնում է Ուոլթերսի գրչագրի Յա երեսին պատկերված խաչը: Այս նմանութունն ավելի վաղ արձանագրել է նաև նշանավոր արվեստաբան Ս. Տեր-Ներսեսյանը՝ 966 թ. Ավետարանի մանրանկարների ուսումնասիրության առիթով¹²²:

1113 թ. Դրազարկում ընդօրինակված ՄՄ Հ^մ 6763 Ավետարանի ստացող Կիրակոսի (Կիւրակոս) ընդարձակ հիշատակարանը (նկ. 8) նույնպես զետեղված է մատյանի բովանդակութունից առաջ (20ա-2ա), իսկ 23բ, 102բ, 145բ երեսներին թողնված սեղմ հիշատակարաններն առնված են ուղղանկյունների մեջ:

966, 974, 1113 թթ. հիշատակարանները և համանման ևս մի քանի օրինակներ ցույց են տալիս, որ երբեմն գրիչները հիշատակագրելու համար նպատակահարմար են գտել ձեռագրի սկզբնամասը:

տարանը, 974 թ., Երևան 2006: Հիշատակարանի լուսանկարը տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում լուսանկարիչ Հրայր Բագին:


¹²⁰ Մանրամասն տե՛ս *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, by S. Der Nersessian, Baltimore, published by the Trustess, 1973, pp. 1-5. Ձեռագրի էլեկտրոնային տարբերակը հասանելի է նաև առցանց՝ <http://thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/html/W537/> (առ 10.09.2019):

¹²¹ Տե՛ս նաև A. Sirinian, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, p. 74.


¹²² S. Der Nersessian, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 5.



Նկ. 6, Մուրոբի Ավետարանի հիշատակարանը, 974 թ.




Նկ. 7, W537 Ավետարանի հիշատակարանը, 966 թ.



Նկ. 8, ՄՄ Հ^մ 6763, 20ա.

«Գիր յիշատակի Աւետարանիս», 1113 ք.

Գլխավոր հիշատակարանի և բնագրի սահմանազատման դեպքերը չեն սահմանափակվում վաղ շրջանի ձեռագրերով: Նման բազմաթիվ օրինակներ հանդիպում են նաև միջնադարյան և համեմատաբար ուշ շրջանի՝ ԺԷ. կամ ԺԸ. դարերի ձեռագրերում: 1687 թ. եվդոկիայում Մկրտում Ջուղայեցու ընդօրինակած ձեռագրում տեսնում ենք հիշատակարանի և բնագրի սահմանազատման միանգամից երեք եղանակ՝ Հորիզոնական ալիքաձև գծեր, հիշատակարանի սկիզբն ազդարարող Փ տառի թռչնագիր ձևավորում և կարմրով գրված «Յիշատակարան սուրբ գրոցս» խորագիրը:



Նկ. 9, ՄՄ Հ^մ 1370, 391ա. հատված հիշատակարանից, 1687 թ.

Գլխավոր հիշատակարանից բացի՝ Հայերեն ձեռագրերում հաճախադեպ են նաև սեղմ և փոքրածավալ հիշատակարանները, որոնք թողնվել են ձեռագրերի տարբեր հատվածներում՝ բնագրային շարադրանքից ազատ մնացած մասերում, ինչպես նաև մատյանների լուսանցքներում: Այստեսակ հիշատակարանները


Հիմնականում արտահայտվում են կարճառոտ նախադասութ-
 թյուններով կամ մեկ-երկու պարբերություններով: Հիշատակարանա-
 յին փոքրածավալ այդ միավորները սովորաբար անվանվում են
 հիշատակագրություն¹²³: Բովանդակությունն առումով դրանք
 խիստ տարբերվում են. շատ են հատկապես ձեռագրաստեղծման
 մասնակիցներին, գրչության ընթացքին, հանգամանքներին,
 ընդհուպ եղանակային պայմաններին առնչվող նշումները, ինչ-
 պես նաև մատյանը հետագայում ձեռքբերողների հավելումնե-
 րը: 1303 թ. ընդօրինակված մատյանի ստորին լուսանցքում
 գրիչ Դանիելը դժգոհել է ճանճերից և շոգից. «Աւանդ զայս շոճս
 ու զճանճերս զաչքս կու հանեն», մեկ այլ էջի ստորին լուսանց-
 քում նույն գրիչն արդեն աշխատանքային տեղեկություն է
 հայտնում. «Աւանդ յայս ճառէս թուղթ է անկեալ, վերջքն չկայ»
 [Հիշ. ԺԴ, Ա, 39]: 1687-1689 թթ. ընդօրինակված ՄՄ Հ^մ 2448
 ժողովածուի ստորին լուսանցքներում գրիչը սեղմ նշումներ է
 արել գրչության թվականի վերաբերյալ. «Գրեցաւ ՌձԼԶ. (1687)
 թՎին, Փետրվարի Գ.»», «Սկիզբն եղև Քերականիս ՌձԼԸ. (1689)
 թՎին, Փետրվարի ԻԳ. (23), օրն չաբաթ»¹²⁴:

Բնագրի ընդօրինակումից հետո ազատ մնացած մի հատվա-
 ծում սեբաստացի գրիչ Միքայելը գետեղել է ստացող Մինաս
 Ամդեցուն վերաբերող կարճառոտ մի տեղեկություն, որի ավար-
 տին թողել է նաև ընդօրինակման ժամանակի վերաբերյալ ծած-
 կագրված նշում (նկ. 10).

¹²³ Հետաքրքիր է նկատել, որ պատմաբան Ա. Աբրահամյանը հիշատակա-
 գրություն է կոչել հետագայում շարադրված հիշատակարանները, տե՛ս Ա.
 Գ. Աբրահամյան, *Հայոց գիր և գրչություն*, Երևանի համալսարանի հրատ.,
 1973, էջ 301: Այդ հատվածը նկատել և դրա նկատմամբ իր անհամաձայ-
 նությունն է հայտնել գրականագետ Հ. Բախչինյանը, տե՛ս Հ. Գ. Բախչին-
 յան, *Հայկական ձեռագրերի հիշատակարանները*, էջ 40-44: Բախչինյանը ևս
 հիշատակարանի և հիշատակագրության տարբերակման հիմքում դնում է
 վերջինի փոքր ծավալը, որը միանգամայն ընդունելի մոտեցում է մեզ
 համար ևս:

¹²⁴ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, Կ. Ը.,
 էջ 136:

«ԶՄինաս վարդապետն յԱմթեցի՝ գտաւցօղ սորք տա-
 ռիս, յիշեալի՞ք ի Քրիստոս: Եւ զՄարկոս վարդապետն ԾԵՆ-
 քուշցի՝ զոգօտոր ուսուցիչն իւր, այլեւ զԾճօղսն իւր՝ մահտե-
 սի Առաքելն եւ զՀռեմիսիմէն, եւ զհաւանիկն իւր՝ զմահտեսի
 Պահրիհն, եւ զայլ արեանառու մերձաւորսն: Գրեցաւ
 ԹԷԻՆՉ. (1687) հայոց թըլակահիս»¹²⁵:




Նկ. 10, ՄՄ Հ^մ 1149, 212ա. ծածկագիր թվական, 1687 թ.

Այսպիսի սեղմ նշումներն առանձնահատուկ կարևորութիւն
 են ստանում հատկապէս այն դեպքերում, երբ, օրինակ, ընկած
 կամ վնասված է գլխավոր հիշատակարանը: Ըստ էութեան՝ լու-
 սանցային կամ բնագրի ազատ հատվածներում թողնված հիշա-
 տակարաններն այս պարագայում դառնում են մատչանի մասին
 հիմնական տեղեկատուն: Այդպէս է ստորև նշվող օրինակի պա-
 րագայում: Փարիզի Հայկական գրադարանի ԺԴ. դարով

¹²⁵ Ծածկագրութիւնը վերծանելու համար անհրաժեշտ է գումարել նշված
 տառերի թվային համարժեքները, ապա հավելել 551:

Թվագրվող Հ^մ 52 մատյանը, որ Գր. Նարեկացու «Մատենանոց բերգութեան» պոեմի ընդօրինակություն է, սկզբից և վերջից պակասավոր է, չունի գլխավոր հիշատակարան: Գրչի անունը հնարավոր է լինում պարզել բացառապես մի փոքրիկ և ծածկագրված հիշատակարանի շնորհիվ, որն ընդօրինակման ժամանակ վերջինս թողել է ձեռագրի էջերից մեկի ստորին լուսանցքում. «Զփցուն գրիչս մի՛ մոռանայք, մաղթեմ, սախդնագ (=գԱնդրէաս) անպիտա[ն]»¹²⁶:



Նկ. 11, Փարիզի Հայկական գրադարան, Հ^մ 52, 31ա.
գրչանվան ծածկագրում, Ժ. Կ. Կ.¹²⁷

Հայերեն ձեռագրերի շարքում փոքրածավալ հիշատակարանների առատությունը աչքի են ընկնում հատկապես Հայսմավուրք, Ճառընտիր, Ճաշոց և Տոնապատճառ մատյանները, որոնցում բնագրային միավորների ավարտին հաճախադեպ են եր-

¹²⁶ Աջից ձախ ծածկագրության եղանակի և լրացուցիչ նմուշների համար տե՛ս Ա. Գ. Արրահամյան, Հայոց գիր և գրչություն, էջ 256, նույնի, Հայկական ծածկագրություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, էջ 74-75:

¹²⁷ Լուսանկարի աղբյուրը՝ <https://bvmc.irht.cnrs.fr/mirador/index.php?manifest=https://bvmc.irht.cnrs.fr/iiif/22675/manifest> (առ 19.09.2019): Պատկերի գործածությունը թույլատրելու համար շնորհակալ ենք Փարզի հայկական թանգարանի սնօրեն Ֆրեդերիկ Ֆրիդգայանին:

կու-երեք նախադասութեամբ կարճ հիշատակարանները: Այդ ձեռագրերում հիշատակարան-հիշատակագրութունների թիվը կարող է հասնել մի քանի տասնյակի կամ գերազանցել հարյուրը: Դրանցում շատ հաճախ գրանցված են գրչի, ստացողի և նրանց հարազատների անունները վերջիններիս հիշման արժանի անելու մեկ-երկու նախադասութեամբ: Վկայակոչենք մի քանի նման օրինակ: 1703 թ. Բաղեշի Ամիրզոլու վանքում գրչագրված ՄՄ Հ^{մր} 2771 Տոնապատճառի տարբեր էջերին՝ բնագրային միավորների ավարտին, ընդհանուր առմամբ հանդիպում են 28 ընդարձակ և սեղմ հիշատակարաններ¹²⁸, նույն ձևով ԺԳ. դարով թվագրվող ՄՄ Հ^{մր} 2756 ձառընտրում առկա է գրչութան ժամանակի 16 հիշատակարան, որոնց հետագայում հավելվել են ևս 7-ը¹²⁹: Իսկ ահա ԺԵ. դարի ՄՄ 2782 թվակիր ձառընտրում միայն գրչութան ժամանակի մեծ և փոքր հիշատակարանների թիվն անցնում է 100-ը¹³⁰: Նույն դարով թվագրվող ՄՄ Հ^{մր} 7543 Հայամավորքում հաշվվում են գրչութան ժամանակի 250-ից ավելի մանր հիշատակագրութուններ, իսկ հետագա նույնատիպ հիշատակարանների հետ միասին¹³¹ այդ թիվը գերազանցում է 300-ը (նկ. 12): Այս շարքը կարելի է դեռ երկար շարունակել, սակայն ինչպես երևում է նշված օրինակներից, առանձին դեպքերում հայերեն գրչագրերն իսկապես գերհագեցած են հիշատակարան-հիշատակագրութուններով*:

¹²⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Թ., էջ 471-474: Նկատենք, որ ձեռագրացուցակի սկզբունքներով պայմանավորված՝ ավելորդ ծավալ չգրադեցնելու նպատակով միանման հիշատակարանները հիմնականում խմբավորվում են «նման» բառի ներքո:

¹²⁹ Նշվ. աշխ., էջ 374-377:

¹³⁰ Նշվ. աշխ., էջ 545-548:

¹³¹ Նկատենք, որ առաջին ստացողի հիշատակագրությունների զգալի մասի վրա փակցված են հետագայի հիշատակագրություններ փոքրիկ թերթիկների վրա, որոնք հետագայում պոկելու փորձ է արվել: Դրա հետևանքով այդ գրությունները տեղ-տեղ եղծվել են:

* Այս իրողությունը պայմանավորում է Յայսմաուրք, Ճառընտիր եւ նման այլ ձեռագրերի պարունակած բնագրերի մեծ քանակով, ստենք՝ Յայսմաուրքի մէջ տարուայ ամէն օրուայ ներքոյ կայ մէկ կամ աւելի վարք-վկայաբանութիւն, եւ ամէն այսպիսի միաւորի յաջորդում են գրչութեան ժամանակի, երբեմն նաեւ՝ հետագայ յիշատակագրութիւններ – ծնթ. խմբ. Գ. Տ-Վ.:

ին յոյժ. և աղարակէ ին միա
 բան. իմ գէւս տոր մեզ տեղ.
 Եւ զայն լըւէ գրեգորեան յը
 դեաց արեւն. և սասաց. Եւ սոաց
 ձեզ տեղի անդ որդի որ այլայն
 պիտի ոչ է եղեալ. Եւ ձոյն զ
 մանայն. անկաւ ի վրայն ան
 որդ անուրիցաւ. և ոչ հոգ
 մայեր զան ձեան իրցեալ է
 ինս սասակում մի յոյժ.
 Զորմէ երկուց էր սպասիւն
 զան ի ծառայնայն սքե գրե
 գոր. և նա զնայր զհեանց
 և յիւրաբանս եւրտուանտա
 ներ. և աղաւ ընդ ծառա
 տեր զանան հալածիչ և եր
 բառե ալք այնու հարածո
 մք զարձանի հաւանացի
 և մկրտեցան. Ընեսուերա
 ներ ին գրե գոր ի սո զան բաղ
 այն հաւատացել ի քն և ուր
 ծիւղեղ յոյժ. Բայց միայն
 մէ որդի բառայն չափու
 զոր ի սկզբանն ի մտաներն է
 բաղ պն, Եգիտ հաւատացե
 այն չ այն չափու ըմնացին
 ան հաւատք. Եւ քն գրեգոր
 արտաւեր զն նոյ որ զարկեց
 ան ի հաւատոցն քն. Եւ նա
 սեալ ի բարաք ձերու ընէ
 մերձ եղան մ մնկ մաւ հան
 իւրոց. Զ ռամայ եց գրեգոր
 եր մանն Եւր յոտար տեր ի
 ար սայնե որ անէն և ին յիշա
 տակ ան ան իւրոյ ոչ երեւ
 զի. Ը յաւայ եւ ըն գրեգոր
 ի հեւր անտ ընէ իւրու՛մ տե
 ղն ոչ գուաւ. Ե մ համենիւր

անէն
 Եւ ու

ուն. և ստար զը յեղ մանն ը
 ղեցաւ. Եւ այլ ընս որ անէ
 լըւ. արաթ սքե գրեգոր պան
 ձեղ ագոր ծն զտայն գրե ին.
 վն. Ընես հաւատ ի նէ ոչ սք
 կարագորն իցն. Ը զ զայս
 քան փոք յատե. գրեաց յը
 գրեգոր նիւսացին. վն յիշա
 տակ եւ յիշա ինոյ երեկոյն ի
 Որոյարաւ. Ը ի քն որոսն քն
 սասաց ոչ ի. Զ սմա ձեղ եւ
 յոհ անիւրեւ և մեղ քե տե
 ղն. Ը ընես ի նէ ի նէ
 ինոյ գրեց հայոց բալլ
Մ ինոյ գրեգորն և սպան
 ի սպան սքե գրեգորն
 ռոպ աչակերտեր մեծ ի հոյն
 նեռնեթի. և նստար և սար
 կաւ ան սորին. Եւ այ ի ստեր
 ընք սրբոյն սահակայ որոյց մե
 ծին ներեսի. Ի ըստ գեւանտ
 ըն սք գրոց. Եւ ի կար երն բառ
 հաճում ըն համաց գիտն կա
 տարել ի յոյն լեզու եւ յասոր
 ոց. ի հայ բարբառս. Ը մ որոզ
 րոք եանն. Ը պմ մտաւած էլ
 հայ գիր աննել. Չի մի ան մե
 իս ըսար. մնացին յըն ը եր
 նուն զս ճաշուչ գիրուն յայլ
 եւ յայլ լեզուս. Եւ ընգրե զե
 ուամ շապ ուհ. Ետեւ զսք ի սք
 է սահակ. Եւ գրեգորն մեար ույ
 ինոյն հոգաց զ արանու մն.
 Եւ սոաց նոյ վն քն է միոյ սար
 ոյ զանի ել անուն. Ը ընես
 տացաւ աննել նյսն սգ ինս
 հայոց լեզուս. Եւ սոսպեալ
 բերին զնա և սասոյցեալ ման
 կունս. զանու քն և ոչ կարացին

Նկ. 12, ՄՄ Հ^մ 7543, 113բ. հիշատակագրության նմուշ
 բնագրային միավորի վերջում

Ինչ վերաբերում է հետագա հիշատակագիրներին, ապա նրանք հիշատակարաններ են թողել մատյանի ազատ մնացած տարբեր հատվածներում, լուսանցքներում, ինչպես նաև ձեռագրի վերջում, եթե գրչության ժամանակի հիշատակարանից հետո նոր հիշատակարան գրելու համար տեղ է թողնվել: Այս վերջինի մասին կարելի է անգամ վկայություններ գտնել ընդօրինակող գրիչների հիշատակարաններում. վերջիններս նշում են, որ ազատ տեղ են թողել նոր հիշատակարանի համար և խնդրում են իրենց հիշատակարանները չջնջել: Այդ մասին է, օրինակ, Պարսամ գրչի վերը նշված գրառումը. «Արդ, ահա թողաք զկնի սորա յուրվ թուղթ անգիր. եթէ կամիցիք, անդ գրեսձիք զձեր, եւ զմերս յիշատակ թողձիք աստ» [Հիշ. Ժէ, Գ, 20]:

Քիչ չեն և մանրանկարների մաս կազմող, ամբողջութամբ նրանց ձուլված հիշատակարանային բնույթ ունեցող մակագրությունները, որոնք երբեմն լրացնում են պատկերը, ներքին կապ և անմիջականություն ստեղծում: Ավելի հաճախ նման հիշատակագրությունը դառնում է «պատկերի զարգահարդարանքային տարրերից մեկը», ինչպես նկատել է արվեստաբան Հ. Հակոբյանը¹³²: Ահա օրինակ՝ 1593 թ. Մոկոսում գրչագրված ՄՄ Հ^մ 300 Ավետարանի 12բ երեսին պատկերված «Ահեղ դատաստանը» խորհրդանշող խաչի ձախ անկյունում ծնկած վիճակում պատկերված է ձեռագրի ստացող Հյուսն Ոսկոնց Կիրակոսը, որի առջև նրա մասնագիտական գործիքներն են՝ դանակը, սղոցը և մուրճը: Գոտուն ամրացված է նաև կացինը (նկ. 13): Դեպի խաչը պարզած ձեռքերում էլ պատկերված է իր ստացած Ավետարանը՝ հոգու փրկություն գրավականը: Ստացողի թիվունքում կարմրով արձանագրված է. «Հիւս Կիրակոս խնդրէ զթողութիւն մեղաց»¹³³:

¹³² Հ. Հակոբյան, Գիրք Վասպուրականի մանրանկարչության մեջ, «ԼՀԳ», 1979 (9), էջ 95:

¹³³ Ա. Գևորգյան, Արիեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, «Հայաստան» հրատ., 1978, XI պատկերաշար, նկ. 1:



Նկ. 13, ՄՄ Հ^մ 300, 12բ. մեղեի բողոքյուն հայցող
հյուն Կիրակոսը, 1593 թ.

1441 թ. Քաջբերունյաց երկրում Թովմա Մեծոփեցու գրչագրած Ավետարանի 10բ երեսին նույն դիրքով՝ ծնրադիր, նկարված է ձեռագրի ստացող Գուլփաշան (Գուլփաշէ): Առաջ պարզած ձեռքերի դիմաց պատկերված է իր պատվիրած Ավետարանը, իսկ թիկունքում դրոշմված են հետևյալ տողերը. «Յիշեցէ՛ք ի Քրիստոս զմահղասի պառաւղ՝ ստացող սուրբ Աւետարանիս» (նկ. 14) [Հիշ. ԺԵ, Ա, 521]:

Նմանօրինակ հիշատակագրություններով աչքի է ընկնում նաև Սկեռայի գրչօջախում 1293 թ. գրված ՄՄ Հ^մ 5784 Ավետարանը¹³⁴, որի գեղեցկատիպ մանրանկարներից մի քանիսն ունեն հիշատակարանային բովանդակությամբ հետագայի (1444 թ.) ոսկեգիր մակագրություններ, որոնք գունային առումով ներդաշնակեցված են մանրանկարների հորինվածքին: Ավետարանի 3ա երեսին՝ «Քառասնաւրայ գալուստն» և «Մկրտութիւն» ոսկեգիր մակագրությունները կրող մանրանկարներից դուրս՝ աջ մասում, ոսկեգույն երկաթագրով գրված է հետևյալը. «Ստացաւ սուրբ Աւետարանիս գտէր Սարգիս եւ զամենայն արեան մերձաւորս իւր յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր»: Ավետարանի 5ա երեսին «Ծառգարդարն» ոսկեգիր մակագրությամբ Քրիստոսի մուտքը Երուսաղեմ ներկայացնող մանրանկարի տակ դարձյալ ոսկեգիր տառերով կարդում ենք. «Զվերըստին ստացաւ սուրբ Աւետ[ար]անիս գտէր Սարգիս եւ զՀայրն իւր՝ Սողոմոն, եւ զմայրն իւր՝ զՈւլուխաթուն, եւ զեղբայրն իւր՝ Ամիր Ազիզ, եւ զՀաւրեղբարն իւր՝ զտէր Դաւիթ, եւ զՀանիկն իւր՝ զՍիթխաթուն, եւ զամենայն արեան մերձաւորսն իւր յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր» [Հմմտ. Հիշ. ԺԵ, Ա: 574-575] (նկ. 15):

¹³⁴ Զեռագրի վերաբերյալ մանրամասն տե՛ս **Լ. Ռ. Ագարյան**, *Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ.*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 75-76, **Հ. Բաղայան**, *Սկեռայի գրչության կենտրոնը*, Երևան, «Նաիրի», 2010, էջ 14:



Նկ. 14, ՄՄ Հ^մ 3892, 10բ. ձեռագրի ստացող Գուլիաշան, 1441 թ.



Նկ. 15, ՄՄ Հ^մ 5784, 5ա. մանրանկարին ձուլված ոսկեգիր հիշատակարանը, 1444 թ.

Հետաքրքիր մի օրինակ ևս. 1402 թ. ընդօրինակված ՄՄ Հ՞Բ 5562 գրչագրի 10ա երեսի մանրանկարն աչքի է ընկնում իր պատկերագրական հագեցվածությամբ (նկ. 16): Մանրանկարը բաժանված է երկու հիմնական մասի: Վերին հատվածում չորեքկերպյան աթոռն է, որին բազմել է Սուրբ Երրորդությունը (ունի հետևյալ մակագրությունը՝ «Սուրբ Երրորդություն է բազմեալ յաթոռս չորեքկերպեան»), աթոռի շուրջ ավետարանիչների խորհրդանիշներն են՝ մարդը, առյուծը, արծիվը և եղը: Ուշարժան է հատկապես մանրանկարի ստորին հատվածը: Այստեղ պատկերված են Հովհաննես քահանան, կինը և իրենց հանգուցյալ որդին՝ Թումայ քահանան: Երեքն էլ ձեռքերը և հայացքներն ուղղել են առ չորեքկերպեան դահը և պատկերված են, ասես, աղոթքի պահին: Մանրանկարի շուրջ կարգում ենք. աջից՝ «Յոհաննէս քահանայն եւ կենակիցն իւր աղաչեն զԱստուած վասն թողութեան մեղաց իւրեանց եւ ծնողացն», կենտրոնում պատկերված քահանայի գլխավերևում՝ «Յովհաննէս քահանայ», նրանից աջ որդին է՝ գլխավերևում՝ «Թումայ քահանայ» գրությունով: Թումայի թիկունքում իր իսկ անունից գրված է. «Ես Յոհաննէս քահանային որդին եմ՝ Թումայ քահանայն, որ տարածամ փոխեցայ ի Քրիստոս: Ո՛հ, ո՛հ, ո՛հ»: Մանրանկարի ստորին հատվածում կարգում ենք. «Զմեր գանգատս ի յիշատակարանն բա՛ց եւ կարգա՛» [Հիշ. ԺԵ, Ա, 22-23]: Գրիչն այս վերջինում նկատի ունի իր գլխավոր հիշատակարանը:

Մանրանկարի շուրջ կամ մեջ գրվող հիշատակագրությունների բազմաթիվ այլ օրինակներ կան¹³⁵, և դրանք նույնպես պետք է դիտել իբրև տվյալ մանրանկարի բաղկացուցիչ տարրեր, որոնք առավել կենդանի և անմիջական են դարձնում պատկերը:

¹³⁵ Այլ օրինակների համար տե՛ս Հայկական մանրանկարչություն. դիմանկար, կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց Ա. Գևորգյանը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1982, նկ. 28-30, 42, 47, 56, 57 և այլն:

Առանձին կերպով պետք է նշել նաև այն բազմաթիվ ծաղկողների մասին, որոնք իրենց անունները հայտնել են իրենց իսկ կերտած պատկերների կողքին կարճ գրուկթյունների միջոցով: Եվ շատ հաճախ հենց այդ գրուկթյունների շնորհիվ էլ բացահայտվում է ծաղկողի ինքնությունը, քանի որ գրչի հիշատակարանում միշտ չէ, որ ծաղկողն առանձին հիշատակված է լինում (տե՛ս նկ. 20, պատկեր 11):

Տեղին է հիշել նաև նշանավոր Մշո Տոնական-Ճառընտրի ծաղկող Ստեփանոսին, որն իր անունը զարդագիր ձևով թողել է միայն մատյանի գլխագարգերից մեկում¹³⁶:

Հիշատակարան-արձանագրուկթյուններ են թողնվել նաև ձեռագրերի կազմերին կամ կրկնակազմերին, որոնք, որպես կանոն, պարունակում են զուտ կազմին՝ իբրև «ձեռագրի գոյացման ավարտական փուլ»-ին¹³⁷ առնչվող տեղեկուկթյուններ՝ կազմարար, կազմուկթյան վայր, ժամանակ, մեկենաս և այլն: Այդտեսակ արձանագրուկթյունները նույնպես կարող են լինել ձեռագրին ժամանակակից կամ հետագայի:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ հայերեն ձեռագրերում գրչի հիշատակարանը, մասնավորապես գլխավորը, ավանդաբար շարադրվել է մատյանի վերջում, թեև, ինչպես տեսանք, որոշ դեպքերում գլխավոր հիշատակարաններ են գրվել նաև ձեռագրերի սկզբնամասում: Հայ հիշատակագիրները, սակայն, չեն սահմանափակվել մատյանի վերջնամասով կամ գլխավոր հիշատակարանով, նրանք հիշատակարաններ են թողել մատյանի ազատ մնացած այլ հատվածներում ևս, այդ թվում՝ լուսանցքներում, բնագրային միավորների միջև, ինչպես նաև մանրանկարներում և մատյանների կազմերին՝ առանց ժամանակային սահմանափակումների:

¹³⁶ Ա. Մաթևոսյան, Եջրք և որտե՞ղ է գրվել Մշո Տոնական-Ճառընտիրը, «ԲՄ», 2 (1969), էջ 151:

¹³⁷ Ա. Ա. Մալխասյան, Կազմի գրի պահպանում, հեղինակային հրատ., Երևան, 2018, էջ 7:

5. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՏԱՐՐԵՐԸ

Հիշատակարանը, որոշ իմաստով, գրչի անձնական տարածքն է ձեռագրում: Մատյանի այս հատվածում վերջինս ոչ թե ընդօրինակող է, այլ հեղինակ, որն ազատ է սեփական շարադրանքի բովանդակության, ձևի և ոճի (արձակ, թե չափածո) հարցում: Այդ են վկայում այն բազմաթիվ հիշատակարանները, որոնք պարունակում են նաև հիշատակագիրների գրական ստեղծագործություններ՝ բանաստեղծություններ, ընդարձակ պոեմներ, իմաստասիրական կամ խրատական բնույթի մտքեր, որոնց զգալի մասն ունի նաև գեղարվեստական արժեք: Երբեմն միևնույն ձեռագրում միմյանց կարող են հաջորդել արձակ և չափածո հիշատակարաններ. ասես, հիշատակագիրները ցանկանում են ի ցույց դնել իրենց ստեղծագործական ունակությունները: Ահա օրինակ՝ 1222 թ. Սեբաստիայում ընդօրինակված Ավետարանի վերջում գրիչ Նորոգեսն իր գլխավոր հիշատակարանի վերջում հյուսել է հանգավոր մի փոքրիկ բանաստեղծություն՝ հայցելով աստվածային ողորմություն.

«Ո՛վ արարիչ իմ Տէր եւ յոյս,
Եւ յուսատու խաւարելոյս,
Մեպել ի ճար աճաւարելոյս,
Կարեկցելով իճճ Աեղելոյս:
Ձեռնտո՛ւ լեր ծփելոյս,
Ծովակեճցաղ ընկլուզելոյս,
Գովեալ փրկիչ յուսացելոյս» [Հիշ. ԺԳ, 132]:

Հատկանշելի է, որ եթե շարադրանքի բովանդակության և ոճի հարցում հիշատակագիրները հիմնականում ազատ են, ապա նույնը չի կարելի ասել հիշատակարանների կառուցվածքի մասին. գրավոր այս հուշարձանների կառուցվածքային քննությունը երևան է հանում բաղադրիչ տարրերի մի հիմնափունջ, որն ընդհանուր է տարբեր դարաշրջաններում գրված հիշատա-

կարանների համար: Ավելին, այդ բաղադրիչների առկայութեամբ են հատկանշվում և գրավոր մյուս հուշարձաններից տարբերվում ձեռագրերի հիշատակարանները՝ որպես գրական ուրույն ժանր: Կառուցվածքային տարրերից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, դրսևորման եղանակներն ու արտահայտչամիջոցները՝ քարացած և բանաձևի արժեք ստացած արտահայտություններ, բառակապակցություններ, ընդհուպ՝ բառեր ու բառաձևեր:

Թվակիր հայերեն հնագույն գրչագրի՝ 887 թ. Լազարյան Ավետարանի հիշատակարանում ձեռագրագետ Ա. Մաթևոսյանն առանձնացնում է 9 բաղադրիչ՝ ա. փառատրական հատված, բ. ձեռագրի վրա աշխատողների հիշատակում, գ. ձեռագրի ներկայացում, դ. գրչության ժամանակ, ե. ժամանակի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների հիշատակում, զ. գրչի և նրա հարազատների հիշատակում, է. մեղքերի թողության հայցում, ը. գրչության վայր (իրականում այս հիշատակարանում գրչություն վայրը նշված չէ, սակայն, ըստ ամենայնի, Վանանդն է, քանի որ գրչի և հոր անուններին կից առկա է «Վանանդացի» տեղանվանացույց մականունը), և թ. ստացող (այս պարագայում գրիչն է) [Հիշ. Ե-ԺԲ, ԺԷ-ԺԸ.]¹³⁸:

¹³⁸ Գր. Խալաթյանը գրչի և նրա հոր տեղանվանացույց մականուններից ենթադրել է, որ գրչության վայր կարող է լինել հենց Վանանդը, ըստ որում հարցականով «Կարո՞ւց»: Տե՛ս *Անտարան ըստ թարգմանության նախնեաց մերոց, գրեալ ՅԼԶ թ. հայոց եւ յամի Տեառն 887*, լուսատիպ հրատարակությւն գրչագրի Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց արդեամբք պատուոյ հոգաբարձուի ճեմարանիս իշխան Սիմեօնի Աբամելիք-Լազարեան, Մոսկուա, 1899, Յառաջաբան, էջ Բ.: Տե՛ս նաև Ա. Մաթևոսյան, *Լազարյան ճեմարանի հնագույն ձեռագիրը*, «ՊԲՀ», 1973 (1), էջ 128-130, **նույնի**, *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր*, Երևան, «Վան Արյան» հրատ., 1998, էջ 20: Նկատենք, որ Վանանդ անվամբ «Տեղանունների բառարան»-ում արձանագրված է մի քանի բնակավայր, տե՛ս **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 4, Ե-Վ, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1998, էջ 753:

Ըստ էություն՝ հայերեն հնագույն այս հիշատակարանի վերը թվարկված բաղադրիչ տարրերը հայկական հիշատակարանագրության առանցքն են կազմել նաև հետագա դարերում, որոնց արձանագրումից զատ՝ հիշատակագիրները շատ հաճախ ընդարձակել են իրենց խոսքը և օժտել իրենց շարադրանքը լրացուցիչ տեղեկություններով կամ արտահայտություններով, որոնք ժամանակի ընթացքում վերաճել են հիշատակարաններին բնորոշ նոր տարրերի, ինչպես օրինակ՝ գաղափար օրինակի արժևորումը, մատյանի պահպանմանն ուղղված գրչական կարգադրությունները, անեծքներն ու օրհնանքները և այլն:

Այժմ առանձին քննենք հայերեն ձեռագիր հիշատակարանների բաղադրիչներն ու նրանց դրսևորումները:

5.1. ՓԱՌԱՏՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԸ

«Փառք, պատիւ եւ գովույթիւն Սուրբ Երրորդութեանն, այժմ եւ հանապազ, յախտեսնս. ամէն»
Սահակ Վանանդացի, 887 թ. [Հիշ. Ե-ԺԲ, 40]


Որպես կանոն՝ գլխավոր հիշատակարանները սկսվում են Սուրբ Երրորդությանը ձոնված փառաբանական տողերով, որոնցում գրիչները գովաբանության և երախտագիտական խոսք են ուղղում Սուրբ Երրորդությանը, որն ուժ ու կարողություն է տվել իրենց տվյալ ձեռագրի ընդօրինակման համար: 1304 թ. Մկրտիչ քահանան այսպես է սկսում իր հիշատակարանը. «Փառք միաբուն, կատարեալ Սուրբ Երրորդութեանն, այժմ եւ յանկէտ յաւիտեանսն. ամէն: Որ գաւրացոյց զտկարս առ ի հասումն վերջագիծ տառիս, զի այնպէս ծիփելի գոր աւրինակ՝ ոք ի յովկիանու կոհական ծիփակոծ լինի, եւ ըղձագերծ անել յայնման» [Հիշ. ԺԴ, Ա, 65]:

Գրիչները «Փառք»-ի այդ բաղադրիչին երբեմն հատկացնում են մեկ-երկու նախադասություն, որին հաջորդում է բուն հիշատակարանը, ինչպես՝ «Փառք, պատիւ եւ գովութիւն Սուրբ Երրորդութեանն այժմ եւ հանապազ յաւիտեանս. ամէն» [Հիշ.

ԵժԲ, 40], «Փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ արժանի արար զեղկելի գրիչս տեսանել զվերջին գիծս. ամէն, ամէն» [Հիշ. ԺԳ, 140], «Փա՛ռք, փա՛ռք, փա՛ռք քեզ Քրիստոս Աստուած, յոյսդ իմ, որ ետուր ինձ զաւրութիւն հասանել ի վերջին գիծ գրոյս» [Հիշ. ԺԳ, 687], կամ պարզապէս՝ «Փառք ամենասուրբ Երրորդութեանն. ամէն» [Հիշ. ԺԳ, 143]:

Ավելի հաճախ պատահում են ընդարձակ ու երբեմն սուրբ-գրային մեջբերումներով, աստվածաբանական դատողութիւններով «Փառք»-եր, որոնք կարող են լինել ոչ թե մեկ-երկու նախադասութիւն, այլ նույնքան կամ ավելի պարբերութիւն: Ահա օրինակ՝ Ներսէս գրչի 1304 թ. հիշատակարանի փառատրական հատվածը, որում հիշատակագիրը շատ սեղմ վերապատմել է Ադամի ստեղծման, դրախտից եվայի հետ նրա վտարման, մարդկային բազմազան մեղքերի հետեւանքով աստվածային պատիժների առաքման, տարասեռ նյութերից կուռքերի ստեղծման և այդ չարիքներից մարդկությանը մաքրելու եկած միաձին Որդու մասին.

«Փա՛ռք ամենասուրբ Երրորդութեանն՝ Հար եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ յաիտեանս. ամէն: Միաձին Որդին, որ ի ծոց Հար, որ խորհրդեամբ ընդ Հար եւ Հոգւոյն արար եւ պատկեր իր զմարդն առաջին: Իսկ յանցանեալ մարդոյն զպատուիրանաւ Նորայ հանել ի դրախտէն եղ ի յերկիրս յայս, յորում զանիծից եւ զցաւոց ժառանգեաց զկեանս հանգեալ ի ծառայութիւն աստանաի: Եւ լցեալ ազգի-ազգի եւ զանազան մեղաւք եւ անառակ վարիւք, յորմէ զպատուհասն կրեցին ջրով եւ հրով եւ ոչ այնու խրատեալք, այլ արարին իրեանց աստուածս յուկոյ եւ յարծաթոյ եւ յալլ ճիւղից աշխարհի եւ փոխանակ Արարչին՝ արարածոց երկիր պագանէին: Իսկ բարերարն Աստուած Բանն, տեսեալ զայնպիսի աղետս եւ զմոլորութիւնս ազգի մարդկան, եկն կամաւ Հար եւ Սուրբ Հոգոյն յարարածս, եղեւ մարդ ի Կուսէն եւ կոչեաց զամենիսեան առ ինքն քաղցր բարբառով մերոյ, որ է արին-նեալ յաիտեանս» [Հիշ. ԺԴ, Ա, 61]:



Նկ. 17, ՄՄ Հ^մ 3845, 385բ.

«Փառք»-ի նմուշ, 1173 թ.

Որոշ դեպքերում կարելի է տեսնել անգամ էջեր զբաղեցնող «Փառք»-եր: 1640 թ. Գրիգոր քահանայի շարադրած գլխավոր հիշատակարանն ունի մոտ 4 էջ ծավալ, որի գրեթե կեսը զբաղեցնում է «Փառք»-ի մասը: Գրիչն այն սկսում է այս տարրին բնորոշ տողերով՝ «Փառք համալգոյ, անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեան՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն», ապա ընդարձակում է իր շարադրանքը և ավարտում Քրիստոսի հետևյալ խոսքով. «Եկա՛յք առ իս յամենայն աշխատեալք եւ ծանրաբեռնեալ մեղօք, եւ ես հանգուցից զձեզ (Մատթ., ԺԱ. 28), եւ թէ՛ Ուր եսըն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի (Յովհ., ԺԲ. 26)»: Փառաբանական հատվածի ավարտին հետևում է Գրիգոր քահանայի բուն հիշատակարանը. «Վասն որոյ եւ ես՝ սուտանուն, վըստահացայ եւ գրեցի սուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգւոյ իմոյ...»¹³⁹:

Առանձնահատուկ կերպով պետք է նշել, որ ընդարձակ «Փառք»-երում գրիչները սովորականից ավելի պերճախոս են. շատ հաճախ այս հատվածներում նրանք գործածում են շարահյուսական խրթին կառույցներ, նորակերտ բառեր և կապակցություններ, որոնք վկայում են գրիչների ստեղծագործ մտքի և հայերենի հարուստ բառազանձից հմտորեն օգտվելու նրանց ունակությունների մասին:

Նախկինում շատ հաճախ փառատրական այդ հատվածները կրճատվել կամ ընդհանրապես դուրս են թողնվել հիշատակարանների հրատարակության ժամանակ: Օրինակ՝ ԺԵ. դարի հիշատակարանների ժողովածուում Գրիգոր քահանայի վերոնշյալ հիշատակարանը ևս արձանագրված է, սակայն ըստ ժամանակին գործող սկզբունքի¹⁴⁰՝ փառատրական մասն ամբողջությամբ

¹³⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, էջ 205-206:

¹⁴⁰ «Հիշատակարանների սկզբում եղած «Փառք»-երը, որոնք պատմական արժեք չունեն եւ շատ հաճախ կանոնականացված ընդարձակ բանաձևեր են, չենք վերցրել», - կարդում ենք ԺԷ. դարի հիշատակարանների ժողովա-

կրճատված է, որն այս պարագայում նշանակում է կիսով չափ պակաս հիշատակարան [Հիշ. ԺԷ, Բ, 806]:

Բարեբախտաբար ձեռագրերի մերօրյա նկարագրություններում, հիշատակարանների նորատիպ հրատարակություններում, անկախ այդ միավորների ծավալից, դրանք տպագրվում և հասանելի են դառնում հետազոտողներին:

ծուի առաջին հատորի առաջաբանում [Հիշ. ԺԷ, Ա, ԻԵ]: Հատորի հրատարակիչներն այս մոտեցմամբ հետևել են հիշատակարանների ժողովածուների նախորդ հատորներից եկող «ավանդույթին»: Լ. Խաչիկյանը 1950 թ. իր հրատարակության առաջաբանում այսպես է գրել. «Հիշատակարանների սկզբի մասը («Փառք»-ը), որը գուրկ է պատմական արժեքից՝ չենք հրատարակել» [Հիշ. ԺԴ, XXXII]: «Փառք»-ի այդ հատվածները, որոնք ակնհայտ դավանաբանական արժեք ունեն, դուրս են թողնվել նաև խորհրդային գաղափարաբանության թելադրանքով:

5.2. ԸՆԴՈՐԻՆԱԿՎԱԾ ՄԱՏՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

*«Մայ է դուռն էրկնից, բանալի արքայություն, ճանապարհ
նորոգելոց, հաց քաղցելոց, աղբեր ծարաւելոց,
պարծանք արդարոց եւ յոյս հաւատացելոց»
Բարսեղ երաժիշտ, 1294 թ. [Հիշ. ԺԳ, 729-730]:*

Ընդարձակ հիշատակարաններում փառատրական հատվածին սովորաբար հաջորդում են գովաբանական առանձին տողեր, մակդիրներ, համեմատությունների և փոխաբերությունների առատ շարքեր, որոնք գրիչները ձոնում են ընդօրինակված մատյանին՝ նշելով, որ այն գիտելիքի ստացման, հավատի գորացման աղբյուր է՝ նախատեսված իմաստուն, բանիմաց, ուսումնասեր և գրքի հարգն իմացող անձանց համար. «Եւ որ շատ աշխատի ընթերձումն նորա (նկատի ունի մատյանը – Խ. Հ.), նա ճաշակէ գմեծապանծ գեղեցկութիւն սորա», – գրում է Վարդան Այգեկցին իր հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 64]: 1310 թ. Հովհաննես գրիչն էլ նշում է. «Եւ իմաստնոց միայն յայտ է, թէ որպէս կամ զինչ կայ ամբարեալ մթերք բարեաց բանի եւ գծի եւ առոգմամբ քերական արուեստի» [Հիշ. ԺԴ, Ա, 181]:

Առանձին դեպքերում ձեռագիրն անվանելու համար հիշատակագիրները գործածում են նաև տարբեր բառեր, բառակապակցություններ՝ այլաբանորեն բնորոշելով մատյանի բովանդակությունը: Այսպես, Աստվածաշունչ, Ավետարան ընդօրինակած գրիչները հաճախ այն անվանել են «աստուածախաւս մատեան» բառակապակցությամբ. «Փառք... որ ետ կարողութիւն իմոյ տկարութեանս ժամանել ի կատարումն սուրբ եւ աստուածախաւս աւետարներ աւետեաց Աւետարանիս» [Հիշ. ԺԳ, 59], «Փառք Սուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ

այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ի թուականիս Հայոց ՈԿԹ. (1220) եղեւ աւարտումն աստուածախաւս մատենիս աւետարանութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» [Հիշ. ԺԳ, 120], «Գրեցաւ աստուածախաւս մատենան այս ի թուի Հայոց ՉԾԳ. երրորդի (1304)» [Հիշ. ԺԴ, Ա, 78], «Ո՛հ գնուաստ կազմաւղ աստուածախաւս մատենիս զՅակոբ Մեծպարոնենց աղաչեմ յիշել ի Տէր Յիսուս» [Հիշ. ԺԴ, Ա, 164]: Երբեմն էլ միւսնույն նշանակութեամբ կիրառուում է «աստուածային տառ» կապակցութիւնը: Բարսեղ գրչի ընդօրինակած Սաղմոսարանի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ աստուածային տառս մարգարէին Դաւթի թվին Հայոց ՉԾԴ. (1305), ձեռամբ յոգնամեղ գրչի՝ Բարսղի» [Հիշ. ԺԴ, Ա, 98]:

Երաժշտական բովանդակութեամբ ձեռագրերի՝ Շարակնոցի, Մանրուսմունքի, Գանձարանի, Տաղարանի դեպքում հանդիպում են «եղանակաւոր տառ», «եղանակաւոր մատեան» երբեմն էլ «եղգարան» անվանումները¹⁴¹. «Կատարեցաւ Երգարանս տաղաց ձեռամբ Յոհաննիսի», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 221]: 1301 թ. ընդօրինակված Մանրուսմունքի հիշատակարանում էլ գրիչն այսպես է արձանագրել. «Գրեցաւ Եղանակաւոր մատեանս, ի թու[ին] Հայոց ՉԾ. (1301)» [Հիշ. ԺԴ, Ա, 14]: 1305 թ. Շարակնոցի հիշատակարանում դարձյալ նշյալ կապակցութիւնն է գործածված. «Գրեցաւ Եղանակաւոր տառս ի թվականիս Հայոց ՉԾԴ. (1305)» [Հիշ. ԺԴ, Ա, 97], ահա ևս մի քանիսը. «Գրեցաւ Եղանակաւոր տառս ի թու[ին] ՉԾԵ. (1306)» [Հիշ. ԺԴ, Ա, 110], «Արդ, գրեցաւ Եղանակաւոր տառս եւ լուսազարդ Երգարանս ի թուականին Հայոց ՊԾԵ. (1406)» [Հիշ. ԺԵ, Ա,

¹⁴¹ Այս մասին մանրամասն տե՛ս **Յ. Ստեփանեան**, Հայ միջնադարեան երաժշտութեան տեսութեանն առնչուող յիշատակութիւնները Ե-ԺԵ. դդ. ձեռագրերի յիշատակարաններում, «Հայկագեան հայագիտական հանդէս», հ. ԻԶ., Պէյրուք, 2006, էջ 30: Տե՛ս նաև **A. Sirinian**, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, p. 74.

60]: Ռստակես գրիչն էլ այսպես է հիշատակագրել. «Գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի Մանրուսումն» [Հիշ. ԺԵ, Ա, 53]:

Սակավաթիվ չեն նաև այն հիշատակարանները, որոնցում գրիչները ներկայացնում են ընդօրինակված մատյանն իր կառուցվածքով և բովանդակութամբ: Սիրոն գրչի ընդօրինակած Հայամավուրքի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ տառս տէրունական աստուածային գանձուցն, որ ունի յինքեան բովանդակեալ զամենայն տաւնս եւ զյիշատակ սուրբ եւ աստուածախաւս մարգարէիցն, եւ զսրբոց առաքելոց, եւ զհայրապետաց, եւ զարեամբ նահատակեալ մարտիրոսաց, եւ զսրբոց կուսանաց, եւ զընթանուր ամենայն սրբոց» [Հիշ. ԺԴ, Ա, 384-385]:

1319 թ. Աղթամարում գրչագրված ձառնցի հիշատակարանում ձեռագրի ծավալուն և մանրամասն նկարագրություն է անում Կարապետ գրիչը: Հիշատակարանում հաղորդվող այդ տեղեկություններն արժեքավոր են առաջին հերթին բնագրագիտության և աղբյուրագիտության դիտանկյունից, ուստի՝ ավելորդ չենք համարում նաև ամբողջութամբ այն ներկայացնել այստեղ.

«Աստանար սկզբնաւորեալ աստուածային եւ հոգեկիր գանձս եկեղեցոյ՝ ընթերցմունքս բովանդակ տարեան, որ ունի շարակարգեալ յինքեան զամենայն տաւնս տէրունականաց, նաեւ զյիշատակս սրբոցն զառաջնոցն եւ զվերջնոցս, զնախահարցն սրբոց եւ զմարգարէիցն հոգեկիրից, զառաքելոցն սրբազանից եւ զհայրապետացն ուղղափառացն, զմարտիրոսացն քաջամարտից եւ զթագաւորացն բարեպաշտից, զվարդապետացն հոգիացելոց եւ զմիանձանց ճգնագգեստից, զաւրավարացն քաջաց եւ զսուրբ կանանցն պարկեշտից: Այլ եւ կայ ի սմա գրեալ ընթերցուածք սուրբ Քառասնորդացն պահոց՝ սահմանեալն ի սուրբ առաքելոյն Յակովբայ՝ յեղբարէն Տեառն ըստ մարմնոյ, եւ ի քաջ ախոյսանէն Կիրղէ հայրապետէն Երուսաղէմի: Ընդ մին եւ

Գործքն բովանդակ՝ գրեալ ի Ղուկասու անտարանչէ, եւ Եւթն թուղթ Կաթողիկէիցն, եւ Աւետարան Յոհաննոս, զորս ընթեռնուն զոսա յաւորս Յարութեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ջայս ամենայն հաւաքեալ եւ ի մի վայր ժողովեալ՝ գծագրեցաւ կարգաւորաբար՝ սկսեալ ի յիշատակի ատոր Ծննդեան Փրկչին եւ միոյ Աշունով, առանց մոլորութեան, ասարտեալ մինչեւ ի տաւն սուրբ հայրապետին Բարսուղի Կեսարոս» [Հիշ. ԺԴ, Ա, 375]:

Նորակերտ մատյանի ներկայացման, նրա արժևորման հարցում վայելչախոս գրիչները չեն վարանում ի ցույց դնել իրենց պատկերավոր մտածողությունն ու բառակազմական ունակությունները: Պատահական չէ, որ երբեմն հայերեն հիշատակարաններում այդ հատվածները վերածվում են երկարաչունչ տողերի, որոնք աչքի են ընկնում խոսքի պատկերավորման հարուստ միջոցներով: Շարագրանքը չծանրաբեռնելու նպատակով բազմաթիվ օրինակներից առանձնացնենք մի քանի նմուշ միայն, որոնցում գրիչները գովեստի և մեծարանքի խոսքերով են ներկայացնում ընդօրինակված մատյանը: 1323 թ. Ներսես դպիրն իր հիշատակարանում գրում է. «Աւարտեցաւ քրիստոսահիմն, առաքելախաւս, մարգարէաչէն, հոգիաբուխ այս տառս ի թուաբերութիւն հայկազեան սեռիս տումարի ՉՀԲ. (1323)» [Հիշ. ԺԴ, Ա, 459]: Հակոբ գրիչը 1294 թ. Ավետարանի ընդօրինակման ավարտին նման կերպ է արձանագրում. «Գծագրեցաւ վսեմական, անբաղդատելի, աստուածունակ, արփիափայլ եւ գերահրաշ տառս Նորոյ Կտակարանաց» [Հիշ. ԺԳ, 735]:

1310 թ. բաբերդցի Ավագ գրիչն իր հիշատակարանում ընդարձակ մի հատված է հորինել՝ գովերգելու նորագիր մատյանը.

«Իմոյ ձեռամբ գրեցի զսուրբ Աւետարանս, որ է անտիս կեանաց եւ պարծանք հաւատոյ եւ զլուխ անկեան քարանց շափիղաից, որ ի հիմունս Սիովնի, քանգի սովաւ զարդափայլ պայծառանայ զարմ քրիստոնէից, սովաւ հիմնացեալ

հաստատի կաթոլիկէ եկեղեցի, սովա լուսաւորի վերստին ծնունդն սեր ի ձեռն սուրբ աւագանին, սովա արհմեալ երկրպագի կենարար Աշանն փրկութեան՝ խաչն լուսոյ, սովա ձեռնադրին հայրապետք եւ վարդապետք եւ քահանայք՝ ի սպասաւորութիւն սուրբ եկեղեցոյ, սովա հզարանան թագաւորք՝ իշխանական եւ պետական մահանգաւք, սովա միացաւորք մեծամարտեալք վանեն զամենաչար թշնամին»:

Գրեթե մեկ էջ զբաղեցնող այս տողերի շարադրումից հետո անգամ Ավագ գրիչը կարծում է, որ «սուղ բանիւք» դժվար է ամբողջութեամբ ներկայացնել մատյանը. «Եւ արդ, ո՞ր պատմեցէ սուղ բանիւք ի դոյզն ժամանակի զանբաւ զաւրութիւն սորա բարձրութեան, եւ վասն զի գլուխ ամենայն բարութեանց է սայ եւ ցանկալի ամենեցոյն» [Հիշ. ԺԴ, Ա, 184-185]:

Դրագարկում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում Բարսեղ երաժիշտը հետևյալ կերպ է արժևորում մատյանը.

«Զի եթէ պատահեսցի այր խնդրող սորին եւ փափաքէ ըմբել ի կենաստու աղբերէս յայսմանէ եւ կալցէ շնորհս գիտութեան, եւ գտանիցէ զսա, հրճուացի ի վերա սորա եւ ուրախութեամբ արկցէ ընդ պարանոցս եւ լաւ համարի զսա, քան զականս պատուականս եւ մարգարիտս գեղեցիկս... սայ է դուռն երկնից, բանալի արքայութեան, ճանապարհ մոլորելոց, հաց քաղցելոց, աղբեր ծարաւելոց, պարծանք արդարոց եւ յոյս հաւատացելոց» [Հիշ. ԺԳ, 729-30]:

Հետաքրքիր է նկատել, որ մատյանը ներկայացնող ընդարձակ և գեղեցկախոս այսպիսի տողերը, հաճախ նաև առանձին արտահայտութիւնները մասնավոր փոփոխութիւններով անցնում են հիշատակարանից հիշատակարան՝ ձեռք բերելով կաղապարային միավորի արժեք: Ըստ որում՝ միանման այդ տողերը հանդիպում են ոչ միայն միևնույն գրչի տարբեր հիշատակարաններում, այլև բոլորովին տարբեր գրիչների հեղինակած հիշատակարաններում: Ուշագրավ է նաև, որ որոշ դեպքերում այդ

արտահայտութիւնները տեղային ընդհանրութիւններ ունեն: Ահա նման մեկ օրինակ, ուր բերկրեցի երկու գրիչների ընդօրինակած և գրչութիւն ժամանակով միմյանցից տարբեր Ավետարանների հիշատակարաններում դժվար չէ նկատել ակնհայտ նմանութիւնները.

Ավետարան, 1316 թ., Հագարակն
գյուղ, գրիչ՝ Հովսիան

«Գծագրեցաւ վսեմական անբաղ-
դատելի, աստուածունակ, ար-
փիաճրաշ, գերափայլ եւ տիեզե-
րալուր չորեքծագեան կտակա...:
Եւ է սա յորախորթին տրտմեցե-
լոց, բժիշկ ճիւղանոց, քաւութիւն
մեղաց, լոյս խաւարելոց, դաս-
տիարակ մանգանց, սփոփանք
երիտասարդաց, հաստատութիւն
ծերոց, կենդանութիւն մահացելոց,
արբիչ ամենայն ախտից, սարսա-
փումն եւ հալածիչ դիւաց գնդին եւ
անմահութիւն կենդանութեան
պարգեւեսցէ, որք պատսպարին ի
սա» [Հիշ. ԺԴ, Ա, 300]:

Ավետարան, 1318 թ., Բերկրի քա-
ղաք, գրիչ՝ Հակոբ կրոնավոր

«Գծագրեցաւ վսեմական անբաղ-
դատելի, ամենամուշակ, աստուա-
ծաճրաշ եւ գերափայլ տիեզերա-
լուր եւ չորեքծագեան մշտահոս
վտակա...: Եւ է սա ուրախութիւնն
տրտմեցելոց, բժիշկ ճիւղանոց,
քաւիչ մեղաց, լոյս խաւարելոց,
լուծիչ կապելոց, ազատիչ գերե-
լոց, դաստիարակ մանգանց, սփո-
փանք երիտասարդաց, պսակ կու-
սանաց, հաստատութիւնն ծերոց,
կենդանութիւնն մահացելոց, արբիչ
ամենայն ախտից, սաւսափումն եւ
հալածիչ դիւաց եւ արբիչ ամենայն
ախտացելոց եւ անմահութիւնն
կենաց պարգեւեսցէ ամենեցուն»
[Հիշ. ԺԴ, Ա, 342]:

Ամփոփելով նշենք, որ մատյանը ներկայացնելու, այն արժեւորելու գրիչների սովորութիւնը դարեր շարունակ անխախտ է մնացել. տարբեր են միայն եղանակներն ու ընտրված արտահայտչամիջոցները, որոնք ուղղակիորեն կապված են գրիչների ստեղծագործական ընդունակութիւնների, նրանց

խոսքի ճկունություն հետ: Ակնհայտ է, որ մի շարք գրիչներ հատուկ ուշադրություն են դարձրել հիշատակարանի այս բաղադրիչին: Դրանք այստեղ աչքի են ընկնում իրենց գեղեցիկ և պերճախոս բառապաշարով, հարուստ մտապատկերներով, որոնք ինչ-որ առումով գեղարվեստականություն են հաղորդում գրավոր այս հուշարձաններին: Ըստ այսմ՝ ձեռագիրը բնութագրող, նրա կառուցվածքային կամ բովանդակային առանձնահատկություններն ընդգծող այս հատվածն իր ուրույն տեղն ունի հիշատակարանի բաղադրիչների շարքում:

5.3. ԳՐԶՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

«Ձեռամբ նուաստի Միքայիլ

Եղև գրոյս այսմիկ գրիչ,

Առ յթուսկանիս ՄԻԷԾԸՆԱՆԻԼ»

Միքայել գրիչ, 1687 թ. (ՄՄ Հ^տ 1149, 238բ)

Գրչություն թվականի ու վայրի գրանցումներն իրենց հարակից ճշգրտող նշումներով, հիշատակվող անձանցով, որոնք խիստ բնորոշ են հայերեն ձեռագրերի հիշատակարաններին, արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հիշատակագրի ապրած միջավայրի, հոգևոր և աշխարհիկ առաջնորդների և մի շարք իրադարձությունների մասին: Տեղին է հիշատակել Ա. Մաթևոսյանի այն միտքը, որ եթե գրչության վայրը ձեռագրի ծննդավայրն է, ապա ընդօրինակման ավարտն ազդարարող թվականը միևնույն ժամանակ ձեռագրի ծննդյան տարեթիվն է¹⁴²: Հատկանշական է, որ «ծննդյան» տարեթիվը նշելու այդ սովորությունը շնորհիվ մեզ հասած երեսուն հազարից ավելի հայերեն ձեռագրերի զգալի մասն այսօր ունի գրչության ստույգ թվական, իսկ հիշատակարանակիր, բայց անթվական գրչագրերի

¹⁴² Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, էջ 23:

մի մասն էլ հնարավոր է գրեթե անսխալ թվագրել այդ նույն հիշատակարաններում նշված դեմքերի և դեպքերի շնորհիվ¹⁴³: Ահա մի այդպիսի օրինակ անթվական հիշատակարանից. «Քրիստոս, զօրացո՛ղ զնորոգ օծեալ բարեպաշտ թագաւորս մեր Աւշին...»: Ա. Մաթևոսյանը հիշատակարանի ծանոթագրութեան մեջ նշում է, որ Օշինը թագադրվել է 1308 թ., հետևաբար «զնորոգ օծեալ» բառակապակցութունը հուշում է, որ եթե ոչ նույն տարում (այդ դեպքում սպասելի կլիներ՝ «յայսմ ամի» կամ նման մի կառույց – Խ. Հ.), ապա առնվազն մեկ տարի անց կարող է ընդօրինակված լինել տվյալ ձեռագիրը, ըստ այդմ՝ այն տեղադրվել է 1309 թ. հիշատակարանների շարքում [Հիշ. ԺԴ, Ա, 167]:

Ընդօրինակման թվականն արտահայտելու համար հայ գրիչները դիմել են տոմարական տարբեր հաշվարկների ու եղանակների, որոնց ամենայն մանրամասնությամբ ժամանակին անդրադարձել է Ա. Աբրահամյանը¹⁴⁴: Հիշատակարաններում թվականանիշ այդ հատվածներն ուղեկցվում են համապատասխան բառակապակցութուններով, որոնցից առավել տարածվածները հետևյալներն են՝ «ի թուին Հայոց», «ի թուականութեան Հայոց» «յամի Տեառն», «ի Հայկազեան տոմարիս», «ի Հայկազեան սեռիս», «յելանելոյն Ադամայ ի դրախտէն» և այլն: Այս բառակապակցութուններին սովորաբար հաջորդում է հայոց այբուբենի տառերով արտահայտվող թվականը, թեև հաճախադեպ են նաև բառակապակցութուններով թվականները: Նշենք մի քանի օրինակ՝ «ի թուականութեանս Հայոց ի ՈՒՄԹ. (1200) գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Բարսղի մեղուցեալ աշխատողի»

¹⁴³ **D. Kouymjian**, *Dated Armenian Manuscripts as a Statistical Tool for Armenian History*, “Medieval Armenian Culture”, ed. by **Th. J. Samuelian** and **M. E. Stone**, Chico, CA: Scholar Press, 1983 [1984], pp. 425-438. Տե՛ս նաև **D. Kouymjian**, *Notes on Armenian Codicology. Part 1: Statistics Based on Surveys of Armenian Manuscripts*, “COMSt Newsletter”, 2012 (4), pp. 18-23.

¹⁴⁴ **Ա. Գ. Աբրահամյան**, *Հայոց գիր և գրչություն*, էջ 96-177:

[Հիշ. Ե-ԺԲ, 308], «Ի Թվին Հայոց ՋԳ. (1454)» [Հիշ. ԺԵ, Բ, 49], «Ի վեցից հարիւրից եւ յօթեկենից մի (=50 – Խ. Հ.) եւ ի տասն համարուց (1211)... գրեցաւ տառս աստուածաշունչ» [Հիշ. ԺԳ, 77], «Ի Հայկազնեայ Թուաբերութեանս ի վեց հարիւրերորդի վաթսներորդի առաջնորդի (1212)...» [Հիշ. ԺԳ, 81], «Ի Թուական Հայկազեան տուժարիս ՉԿ. (1311)» [Հիշ. ԺԴ, Ա, 208] և այլն: Երբեմն միևնույն հիշատակարանում կարող են գուգորդվել Թվականի արտահայտման տարբեր եղանակներ, ինչպես՝ «Ի վեց հազարերորդի չորեքհարիւրերորդի իննաներորդի եւ չորք թվի (6494) ելանելոյն Ազամայ ի փառակենցաղ դրախտէն, եւ յեւթն հարիւր քառասուն եւ երկու թվականի հայկական տուժարի (1293)» [Հիշ. ԺԳ, 762]: Հովհաննէս գրիչն իր ընդօրինակած Ավետարանի թվականն այսպես է արձանագրել հիշատակարանում.

«Գրեցի անարժան ձեռաք իմովք... ըստ արարչութեանցն չափեալ յելանելոյն Ադամա ի դրախտէն՝ ԶՌ. եւ ԶԸ. եւ Ա. (6601) ամ, ըստ երթանանիցն, որում մեք վարիմք, եւ է ի մարդէտութեանէ Բանին Աստուծոյ ժամանակ Էին եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս ՌՅԼ. (1330), իսկ ըստ թուոյ խոսրովային Յարեթեանս տումարի՝ ԶԶ. (1331), եւ էր սեճ շրջանին ՄԽԵ. (245)» [Հիշ. ԺԴ, 234]:

1388 թ. Ղրիմում գրչագրված Ավետարանի հիշատակարանում Մարկոս գրիչը միաժամանակ մի քանի ազգերի տոմարական հաշվարկներով է ներկայացրել մատյանի ընդօրինակման տարեթիվը.

«Գրեցաւ յիշատակարանս ի թվաբերութիւնս ի ծննդեանէ Քրիստոսի, ըստ Հայոց հաշուի՝ ՌՅՂ. (1390), եւ ըստ Յունաց՝ ՌՅՂԶ. (1396), եւ ըստ Ֆռանգաց՝ ՌՅԶԸ. (1388), եւ ըստ Ասորոց՝ ՌՅՀԺԱ. (1381), եւ Հարեթական տումարիս Հայոց՝ ՊԼԷ. (1388), ի փետրուարի ամսոյ ԻԹ. (28), անհանջի ամի» [Հիշ. ԺԴ, 575]:

Նույն գրչի մեկ այլ հիշատակարանում ևս գրչութեան թվականը ներկայացված է տարբեր տոմարներով [Հիշ. ԺԵ, Ա, 19]:

Առանձին հիշատակագիրներ թվականի արտահայտման համար դիմում են նաև ծածկագրման տարբեր եղանակների (նկ. 18): Հիշատակարաններից մեկում կարողում ենք.

«Յանգելումն ասարտի,
Յաբեթական տումարի,
Ի հնկետասան որելեհի ($15 \times 50 = 750$),
Ի յերիս տասնեկի (3×10)
Եւ եզակ եթանեկի (7)»:

Փակագծերում տրված թվերի գումարին (787) ավելացնելով տոմարական տարբերություն 551 տարին¹⁴⁵, գրչության թվականը վերծանվում է 1338¹⁴⁶:

ԺԷ. դարի բազմադրյուն գրիչ Միքայելի մի շարք հիշատակարաններում հանդիպում են թվականի ծածկագրման տարբեր եղանակներ. «Արդ, գրեցաւ եւ շնորհիւ Տեառն յանկ ելեալ կատարեցաւ ի թուահաշուութեան Յաբեթական հայասեռ տումարի երկշրջանի, երկերեսնի եւ վեց ի վերայ եռապատկի ($2 \times 532^{147} + 2 \times 30 + 6 \times 3 = 1142 + 551 = 1693$)», – գրում է Միքայելը¹⁴⁸: Մեկ այլ ձեռագրի հիշատակարանում նույն գրիչը թվականը ծածկագրել է հետևյալ կերպ.

«Ձեռամբ անաստի Միքայիլ
Եղեւ գրոյս այսմիկ գրիչ,
Առ թըրականիս ՄԻԷԾԸՆԱՆԻԼ,
Ամիս անխնի ամուսն լիմիլ»:

¹⁴⁵ Տոմարական տարբերության 551 տարվա մասին տե՛ս Հ. Մ. Բաղայան, *Օրացույցի պատմություն*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 62-82, Ա. Գ. Աբրահամյան, *Հայոց գիր և գրչություն*, էջ 96-114:

¹⁴⁶ Ա. Գ. Աբրահամյան, *Հայկական ծածկագրություն*, 1978, էջ 191:

¹⁴⁷ Մեկ շրջանը հավասար է 532 տարվա, ըստ այսմ՝ երկշրջանը հավասար է 2×532 : Այս մասին առավել հանգամանալի տե՛ս Հ. Մ. Բաղայան, *նշվ. աշխ.*, էջ 62-80:

¹⁴⁸ Խ. Հարությունյան, *Միքայիլ անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, «Նսաիրի» հրատ., Երևան, 2016, էջ 190:

Այս ծածկագիրը վերծանվում է ընդգծված բոլոր տառերի թվային արժեքների միմյանց գումարումով և տոմարական տարբերություն 551 տարվա հավելումով: Արդյունքում գրչունթյան թվականը ստացվում 1687¹⁴⁹:

Գրիչները սովորաբար չեն բավարարվել միայն գրչունթյան տարեթվի գրանցումով: Հաճախ նշել են նաև ամսաթիվը և շաբաթվա օրը, օրինակ՝ «Գրեցաւ ի թուին ԶԿԱ. (1312), ի դեկտեմբեր ԻԹ. (29)» [Հիշ. ԺԴ, Ա, 189], «Ի թվին Հայոց ԶԾԹ. (1310) կատարեցաւ յամսեանն Արաց ի Ժէ. (17), յաւուր Հինգշաբթի» [Հիշ. ԺԴ, Ա, 186], «Արդ, եղեւ աւարտ գրչունթեան սորա ի թվին Հայոց ի ԶԿԸ. (1319) յամսեանս յուլիսի ի ԻԹ. (29), յաւուր յուրբաթու» [Հիշ. ԺԴ, Ա, 362], «Եւ գրեցաւ սա ի թուաբերութեանս Հայկազ[ե]ան տուճարիս ԶԿԸ. (1319) եւ ի յունիս Ա. (1), յաւուր ուրբաթու կատարեցաւ» [Հիշ. ԺԴ, Ա, 391]:

Թումա (Թոմա) գրիչն արձանագրել է նաև օրվա ժամը. «Կատարեցի զսուրբ եւ զկենսաբեր Աւետարանս ի թուականութեանն Հայոց ԶԿԴ. (1315), յամսեանն Արեգ ԺԲ. (12), յաւուր երկուշաբթի, Ժ.եր<բ>որդ (10) ժամու» [Հիշ. ԺԴ, Ա, 287]: Այսպես մանրամասն է արձանագրված նաև Աբգար Թոխաթեցու հրատարակած Սաղմոսարանի հիշատակարանում. «Կազմեցաւ սուրբ երգարանս Դաւթի լաւ եւ յընդիր աւրինակէ Գառնեցոյ վարդապետի ի թվականիս Հայոց ՌԺԵ. (1566), մայիս ԺԵ. (15), աւրն ուրբաթ, ԺԲ. (12) ժամն»¹⁵⁰: Իսկ եթե այդ օրը համընկել է եկեղեցական որևէ տոնի հետ, ապա այն նույնպես հիշատակվել է. «Բայց կատարեցաւ գիրքս յաւուր Մեծի Հինգշաբթի, յորում եղեն խնդութիւնք երկնաւորաց եւ երկրաւորաց» [Հիշ. ԺԴ, Ա, 239]: Հիշատակարաններից մեկում էլ գրչունթյան թվականի, ամսաթվի և տարվա եղանակի հետ միասին արձանագրված է նաև նույն օրը տեղի ունեցած երկրաշարժը. «Գրեցաւ Տաւնապատճառս ի թվին ԶԻԹ. (1280) եւ կազմեցաւ յաւուր վճարման մարե-

¹⁴⁹ Նշվ. աշխ., էջ 166:

¹⁵⁰ [Սաղմոսարան], տպագրիչ՝ Աբգար Թոխաթեցի, Վենետիկ, տպ. Աբգար Թոխաթեցու, 1565-1566, ԼԳ. մամուլի նախավերջին էջ:

րի ԻԸ.ն (28) եւ Հռոմոց նոեմբերի Գ.ն (4)՝ յաշնան եղանակիս, որ ահագին շարժ եղեւ ի մէջ գիշերիս, ի մի շաբաթն Բ. (2) գիր» [Հիշ. ԺԳ, 497]:

Գրչուծյան թվականին շատ հաճախ հաջորդում է ժամանակի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների անուսնների արձանագրումը, որն ինքնին կարևոր սկզբնաղբյուր է այդ դեմքերին առնչվող տարբեր հարցերի ճշգրտման համար: «Ի թուականութեանս Հայոց ՈԿԵ. (1216) ի կաթողիկոսութեանն տեառն Յոհաննիսի եւ ի ժամանակիս քրիստոսապսակ թագաւորին Հայոց Լեւոնի», – գրում է Ստեփանոս գրիչը [Հիշ. ԺԳ, 96]:

Որպես այս բաղադրիչի եզրափակիչ հատված և այն ուղեկցող միավոր՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հաճախադեպ են դառնում և վշտաբեր ժամանակն ընդգծող կաղապարային արտահայտությունները, որոնցից առավել տարածվածներն են մի քանիսը մեկական վկայութայնք ներկայացնում ենք ստորև՝

ա. «Գրեցաւ ի թվին ՉԽԱ. (1292), ի ժամանակիս դառն եւ դժնդակ...» [Հիշ. ԺԳ, 686],

բ. «...ի նեղ եւ յանձուկ ժամանակի» [Հիշ. ԺԳ, 696],

գ. «...ի պիղծ եւ ի դառն ժամանակիս» [Հիշ. ԺԳ, 723],

դ. «...ի եղեռն եւ ի դառն ժամանակս» [Հիշ. ԺԳ, 798],

ե. «...ի դառն եւ ի վշտաբեր ժամանակի» [Հիշ. ԺԳ, 799],

զ. «...ի տրտմական ժամանակիս» [Հիշ. ԺԴ, Ա, 295],

է. «...ի դառն եւ ի տարտարոս ժամանակիս» [Հիշ. ԺԴ, Ա, 298],

ը. «...ի նեղութեան եւ ի դառն չար ժամանակի» [Հիշ. ԺԴ, Ա, 343],

թ. «...ի նեղ եւ ի ստորասուզեալ ժամանակիս» [Հիշ. ԺԵ, Ա, 440],

ժ. «...ի ժամանակն վերջացեալ» [Հիշ. ԺԵ, Ա, 437]:

Առավել ստեղծագործ հիշատակագիրները, չբավարարվելով այս սեղմ կաղապարով, գրչուծյան թվականն արձանագրելուց հետո «վշտաբեր» կամ «դառն» ժամանակի մասին առավել մանրամասն են շարադրել: 1318 թ. դրագարկցի գրիչ Ստեփանոսն այսպես է հիշատակագրել. «Եւ կայ ի մեծ նեղութիւն եւ տառա-

պանք, այնքան զի հարք զորդիս վաճառեն, եւ այլք ի բանտի եւ ի կախաղանս վճարեցին, զկեանս իւրեանց, քանզի յամենայն կողմանց պատեալ պաշարեալ է ի նեղութիւն» [Հիշ. ԺԴ, Ա, 367]: ԺԷ. դարասկզբի անհայտ գրիչը մի իսկական պատմական բանաստեղծութիւն է հորինել ժամանակի ողբերգական անցքերի՝ արյունարբու ավազակների իրագործած կողոպուտների և կոտորածների, ավերածութիւնների վերաբերյալ: Բանաստեղծութիւնը սկսվում է հետեյալ տողերով.

«Արդ՝ Հայկազնեան մեծ տօմարի,
ՌԾ. ութերորդի (1609),
Արքայութեան տաճկաց ազգի,
ԺԴ. (14) ամն սուլթան Ահմատի:
Ի ժամանակն վերջացեալ,
Երկիրս անթիւ չարիք լցեալ,
Տէրունական բանն կատարեալ,
Չոր կանխագոյն մեզ ծանուցեալ» [Հիշ. ԺԷ, Ա, 437]:

Չափածո ընդարձակ շարադրանքում իրադարձութիւնների մանրամասն նկարագրութիւնից հետո գրիչը ներկայացնում է դրանց ծանր հետևանքները.

«Բայց զայն չարիքն, որ հայոց լիեալ,
Որ մի ի գիրս չեմ յիշեալ,
Որ ոչ երբէք է այս եղեալ,
Ի յԱդամայ մինչ մեզ հասեալ...
Բայց Հայաստան այնպէս ջնջեալ,
Որ շէն բնաւ չի մնացեալ,
Ի Թավրիզու մինչ ի Ստամպոլ
Քար քարի վրայ չէ մնացեալ» [Հիշ. ԺԷ, Ա, 449]:

Պատմական անցքերի հանգամանալի արձանագրումները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում եզակի չեն. դրանց գրանցումը գրչութեան թվականին զուգահեռ հիշատակարանին հաղորդում է պատմական վավերագրի արժեք:

5.4. ԳՐՉՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒՄԸ

«Եւ գրեցաւ սա... ի լեառն, որ կոչի Ալիսակունդ,
ի գեղն Մուշեղկայ, ի յանապատն Նորսեպի՝
առ որան աստուածաբնակ Մուրք Աստուածածնին»
Միոն գրիչ, 1210 թ. [Հիշ. ԺԳ, 67]

Ձեռագրերի ընդօրինակումն ու ծաղկումը իրականացվել են մեծ և փոքր քաղաքներում, գյուղերում, վանքերում, վերջիններին կից գործող գրչատներում, որոնց անունները, իբրև հայկական գրչօջախներ, պահպանվել և մեզ են հասել հիմնականում այդ նույն ձեռագրերի հիշատակարանների շնորհիվ: Գրչավայրերի հիշատակումները, դրանց հաճախակի նկարագրությունները, տեղական գործիչների ու իրադարձությունների վերաբերյալ գրչական վկայությունները միաժամանակ այդ վայրերի մասին տեղեկությունների անփոխարինելի սկզբնաղբյուրներ են: Շատ հաճախ առանձին գրչավայրերի (հատկապես գյուղական փոքր եկեղեցիներ, անապատներ և այլն) երբեմնի գոյություն մասին կարելի է տեղեկություններ ձեռք բերել բացառապես հիշատակարանների շնորհիվ: Ըստ այսմ՝ գրչություն վայրի գրանցումը գրավոր այս հուշարձաններում նպաստում է ոչ միայն ընդօրինակված մատյանի մասին տեղեկությունների ամբողջացմանը, այլև արձանագրում է տվյալ վայրում հայկական գրչօջախի առկայությունը: Ասվածը դիտարկենք հետևյալ օրինակներով. 1297 թ. Սարգիս անունով գրիչը ձեռագիր է ընդօրինակել երևանամերձ Նորք գյուղաքաղաքում՝ հիշատակարանում արձանագրելով այդ մասին. «Ի գեղէքաղաքս ի Նորքս, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսի», – գրում է նա [Հիշ. ԺԳ, 794]: Նույն գրչից մեզ հայտնի է ևս մեկ մատյան՝ հավանաբար դարձյալ նույն վայրում գրչագրված [Հիշ. ԺԳ, 795]: Այս երկու ձեռագրերը ոչ միայն երևանում կամ նրա մերձակայքում ընդօրինակված և այդտեղից մեզ հասած հնագույն ձեռագրերն են, այլև ԺԳ. դարում Նորքում Սուրբ Ստեփանոս եկեղեցու երբեմ-

նի գոյության խոստուն վկաներն են¹⁵¹: 1288 թ. նույնանուն մեկ այլ գրիչ Ավետարան է ընդօրինակել Վանա լճի հյուսիս-արևելքում գտնվող Առեղս գյուղում՝ Բերկրիի մերձակայքում¹⁵². «Արդ, գրեցաւ ի դուռն Նախավկայի եւ յառաջին սարկաւագի, եւ այլ սրբոցս, որ կան շուրջ գմեաւք, ի գեղս Առեղս, երկիրս Տարբերունոյ, որ կոչի Բերկրի» [Հիշ. ԺԳ, 615]: Եզակի այս վկայության շնորհիվ միայն հայկական գրչօջախների շարքում իր տեղն է զբաղեցնում նաև նշյալ գյուղը¹⁵³: Այդպես է նաև Դերսիմի նահանգի Չմշկածագ գյուղաքաղաքի շրջակայքում գտնված Ասորեմայր անապատը¹⁵⁴, որտեղից մեզ է հասել ընդամենը մեկ ձեռագիր՝ գրչագրված 1208 թ. «ի գաւառս Ծոփաց, յանապատս, որ կոչի Ասորեմայր, ընդ հովանեաւ Սուրբ Կիրակոսի» [Հիշ. ԺԳ, 61]:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հաղորդում են նմանաբնույթ բազմաթիվ վկայութուններ, որոնք մեծարժեք են ինչպես առհասարակ հայ գրչության, այնպես էլ հայ միջնադարյան կրթամշակութային և կրոնական կյանքի կազմակերպման դիտանկյուններից: Շատ հաճախ ձեռագրերի հիշատակարանները լրացնում են նաև հայտնի վանքերի, անապատների, նրանց կից գործող տարաբնույթ կառույցների կամ բնակավայրերի մասին մեր ունեցած տեղեկութունները:

¹⁵¹ Ա. Մաթևոսյան, *Երևանի գրչության կենտրոնները*, «Երևանի հոբելյանը. քաղաքի 2750-ամյակի հոբելյանական տարեգրություն», հեղինակ-կազմող Ա.Վ. Խաչիկյան, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, էջ 114:

¹⁵² Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 1, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986, էջ 324-325:

¹⁵³ Տե՛ս Կ. Մաթևոսյան, Լ. Թումանյան, Հ. Բաղայան, Ա. Ավետիսյան, Ա. Թամրազյան, *Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի գրչության կենտրոնները (10-15-րդ դդ.)*. տեղեկագիր քարտեզի վերաբերյալ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2012, էջ 14:

¹⁵⁴ Հ. Հ. Գասպարյան, *Դերսիմ (Պատմաագագրական ակնարկ)*, «ՊԲՀ», 1979 (2), էջ 206: Ասորեմայր անապատը ներկայացված է ավերակ վանքերի շարքում:

Այսպիսով, հիշատակարաններում նման գրանցումների շնորհիվ նախ և առաջ հնարավոր է դառնում ամբողջական պատկերացում կազմել ձեռագրաստեղծման հայկական կենտրոնների մասին: Այս ուղղությամբ առանձին աշխատանքները մեզանում մեկնարկել են անցյալ դարի կեսերին հայերեն ձեռագրերի խորագրիտակ մասնագետ Ա. Մաթևոսյանի նախաձեռնությամբ: Տարիների ընթացքում անվանի ձեռագրագետը ստեղծել է հայկական առանձին գրչավայրերի 1500 անուն պարունակող մի քարտարան¹⁵⁵ (ձեռքով արված նշումներ են հազարավոր քարտերի վրա), որի հիման վրա կազմել է նաև Գրչության կենտրոնների ֆաբրեզը (ցուցադրվում է Մատենադարանի գլխավոր ցուցասրահի մուտքի մոտ): Քարտարանն ու քարտեզը իրավամբ կարելի է համարել շտեմարաններ, որոնք վկայում են հայկական գրչօջախների առատության մասին ոչ միայն պատմական Հայաստանի ողջ տարածքում, այլև նրա սահմաններից դուրս: Գրչության վայրը հիշատակարաններում արձանագրելու հայ գրիչների սովորության շնորհիվ պարզվում է, որ տարբեր դարաշրջաններում հայերեն ձեռագրեր են գրչագրվել Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Օսմանյան կայսրության, Ռուսաստանի, Իրանի, Եգիպտոսի, Հնդկաստանի և Արևելքի ու Արևմուտքի բազմաթիվ այլ քաղաքներում, հայկական տարբեր գաղթօջախներում: Ահա ընդամենը մի քանի օրինակ. Գրիգոր գրիչն իր ձեռագիրն ընդօրինակել է 1283 թ. «յաշխարհիս Ֆռանկաց, ի Սայլեոն (Սալեոնո, Իտալիա – Խ. Հ.), ընդ հովանեալ Սուրբ Մատթէոսի առաքելոյս, ի տունս Հայոց» [Հիշ. ԺԳ, 546]: Մարգարէ անունով գրիչն էլ Աստվածաշունչ է գրչագրել 1269 թ. «ի նահանգիս յԻտալական, ի գերահռչակ եւ յականաւոր մայրաքաղաքիս Հռոմ... ի հանգստարանիս Հայոց» [Հիշ. ԺԳ, 368], իտալական մեկ այլ՝ Ֆաբրիանո քաղաքում էլ 1319 թ. Վարդան երեցն ավարտել է իր մատյանի ընդօրինակումը. «Գրեցաւ սա ի քաղաքն Փափրիան, ի տունն Հայոց» [Հիշ. ԺԴ, Ա, 392]: Վկա-

¹⁵⁵ Ա. Մաթևոսյան, Մեծուխականքի գրչության կենտրոնը (ԺԲ-ԺԵ դդ.), տպ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 1997, էջ 15:

յաբերված հիշատակարաններից, փաստորեն, տեղեկանում ենք իտալական միաժամանակ մի քանի քաղաքներում ձեռագրակերտմամբ զբաղված հայազգի գրիչների և նրանց ընդօրինակած ձեռագրերի մասին: Դժվար չէ նկատել նաև, որ նշված բոլոր հիշատակարաններում քաղաքների անուններն արձանագրելուց բացի, գրիչները հաղորդել են նաև «Հայոց տուն», «Հայոց հանգստարան» անուններով կառույցների մասին վկայութուններ, որոնք, ըստ ամենայնի, Հռոմում եւ իտալական այլ քաղաքներում եկեղեցիներին կից գործող հայկական հյուրատներ են եղել¹⁵⁶:

Սեբեր գրիչը ձեռագիր է ընդօրինակել Սուրխաթում՝ գրելով. «Աւարտեցաւ գրկոյնքս ի քաղաքս Սուրխաթ, ձեռամբ Սեբեր Արզրումցոյ, ի թվին ՉՀԳ. (1324)» [Հիշ. ԺԴ, Ա, 482], մեկ ուրիշը՝ Կաֆայում. «Արդ, յամի թուաբերութեան Հայոց ՊԾ. (1401) աւարտեցաւ մատեանս յաշխարհս Կազարիոյ, յաստուածապահ քաղաքս Կաֆա» [Հիշ. ԺԵ, Ա, 20]: Կարապետ գրիչն էլ 1407 թ. ձեռագիր է ընդօրինակել Երուսաղեմում՝ գրելով. «ձեռամբ յոգնայմեղ եւ անպիտան Կարապետ սուտանուն արեղայի, ի յաստուծայկոխ եւ յերկնահանգէտ մայրաքաղաքս Երուսաղէմ» [Հիշ. ԺԵ, Ա, 84]: 1608 թ. Կ.Պոլսում մի Տոնացույց է ընդօրինակել Առաքել Բաբերդացի անունով գրիչը. «Գրեցաւ ձեռամբ Առաքել Բաբերդացոյ ի խնդրոյ տէր Աստուածատուր քահանային... թվին ՌԾԷ. (1608), ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլսոյ» [Հիշ. ԺԷ, Ա, 316]: 1740-1741 թթ. Հովհաննես Չարստանյան Ջուղայեցի գրիչը ձեռագիր է գրչագրել Ս. Պետերբուրգում. «Գրեցի ձեռամբ մեղապարտ գրիչ տէր Յոհանիսիս, ի յարքայա-

¹⁵⁶ L. B. Zekiyani, *Le colonie armene in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli Armeni in Italia)*, “Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena (Bergamo, 28-30 giugno 1975)”, a cura di G. Ieni, L. B. Zekiyani, San Lazzaro-Venezia, 1978, pp. 851-859. A. Sirinian, *La presenza degli armeni nella Roma medievale: prime testimonianze manoscritte ed epigrafiche (con un’iscrizione inedita del XVI secolo)*, “Rendiconti”, vol. LXXXVI, anno accademico 2013-2014, Atti Pontificia Accademia Romana di Archeologia (serie III), Tipografia Vaticana, 2014, pp. 7-13.

նիստ քաղաքն Սանկթ Պետրսբուրք»¹⁵⁷: ԺԹ. դ. Հնդկական հեռավոր Մուսբայ քաղաքում ձեռագիր է գրել Էջմիածնի միաբան Հակոբ նվիրակը¹⁵⁸: Այս թվարկումը կարելի է երկար շարունակել, այդպիսի հնարավորություն մեզ ընձեռում են ձեռագրերի հիշատակարանները:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հայ գրիչները շատ հաճախ չեն բավարարվել զուտ գրչավայրի հիշատակումով, երբեմն նրանք մասնավորեցրել և տեղագրական բնույթի լրացուցիչ տեղեկություններ են հաղորդել տվյալ վայրի վերաբերյալ, այսինքն՝ որտե՛ղ, ո՛ր գավառում է գտնվում կամ աշխարհագրական ուրիշ ի՛նչ հայտնի միավորին է հարևան այն քաղաքը, գյուղը կամ եկեղեցին, որտեղ կամ որի հովանու ներքո իրենք ընդօրինակել են մատյանները: Ասվածը կրկին դիտարկենք օրինակներով. «Այլ եւ գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Բզնունեաց՝ ի գեղս առ ասին ծովու, որ կոչի Աղէթ, ընդ հովանեաւ Սրբոյ Կարապետին», – գրում է Հովհաննես գրիչը [Հիշ. ԺԴ, 234]: Մեկ այլ հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ ի գաւառիս Ապահունեաց՝ ի գիւղս Թոնրակս, ընդ հովանեաւ Սուրբ Ատոմայ» [Հիշ. ԺԴ, 238]: Ահա մեկ ուրիշը. «Բայց գրեցաւ ի գաւառիս Վանայ, ի գեաւղս, որ կոչի Աւանս, ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննու Կարապետի եւ Սուրբ Գրիգորի Լուսաւորչի» [Հիշ. ԺԴ, Ա, 141]: Տեղագրական որոշակի հստակություն ենք նկատում նաև հետևյալ նվիրատվական հիշատակարանում. «Տուաք զսուրբ գիրքս ընծայ Ստեփանոս Նախավայրին, որ ի յՈստան քաղաք, յերկիրն ըմշտունեաց, որ է հանդէպ լերինն Արտուսայ» [Հիշ. ԺԴ, Ա, 333]: Միոն գրիչն իր հիշատակարանում գրչուլթյան վայրի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Եւ գրեցաւ սա, յորում էր թուական Հայոց ՈՄԹ. (1210), ի լեառն, որ կոչի Ակսակոմեր, ի գեղն Մուշեղկայ, ի յա-

¹⁵⁷ Մայր ցուցակի հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ., ձեռագիրք 3001-3400, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, Մատենադարան, 2019, էջ 1492:

¹⁵⁸ Նշվ. աշխ., էջ 1352:

նապատն Նորսեսի՝ առ դրան աստուածաբնակ Սուրբ Աստուածածնին» [Հիշ. ԺԳ, 67]: Գրիգոր Արծկեցու հիշատակարանում էլ կարգում ենք.

«Արդ, գրեցաւ եւ աւարտեցաւ քրիստոսախօս Աւետարանս ի գաւառիս Ծամբի Ձորոյ, ի մեծաստանսիս, որ մակաւնուամբ Մաղարդայ վանք կոչի, ընդ հովանեաւ քրիստոսահիմն եւ առաքելաշնորհ սուրբ խորանացս՝ Սուրբ Աստուածածնի եւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկայի եւ Սրբոյն Գեորգեայ զօրավարիմ, որ կառուցեալ կան ի հարաւակոյս կողմանէ՝ հանդէպ Երասխ գետոյ» [Հիշ. ԺԵ, Ա, 365]:

Գրչավայրերի այսպիսի հանգամանալի արձանագրումը հարուստ նյութ է տրամադրում նաև հայկական տեղանվանագիտութեանը: Բավական է նշել, որ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի¹⁵⁹ տվյալների մի զգալի մաս քաղված է հայերեն ձեռագրերի հիշատակարաններից, իսկ բազմաթիվ բառահոլովածներում կարելի է նկատել գրչութեան կենտրոն լինելու մասին նշումներ:

Ձեռագրերի հիշատակարաններում արձանագրված աշխարհասփյուռ հայկական գրչավայրերի ուսումնասիրություններն այսօր էլ շարունակվում են: Ա. Մաթևոսյանի կազմած վերոհիշյալ քարտեզից տասնամյակներ անց՝ 2012 թ., լույս տեսավ «Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի գրչութեան կենտրոնները X-XV դդ.» քարտեզն իր օժանդակ տեղեկագրով, որը պարունակում է 330-ից ավելի գրչօջախների անվանում¹⁶⁰: Վերջին տարիներին հրատարակվում են նաև առանձին գրչութեան կենտրոններին նվիրված կարևոր աշխատություններ: Այս հարցում նախակարապետը դարձյալ Ա. Մաթևոսյանն էր: 1997 թ. լույս տեսավ Քաջբերունիք գավառի հոգևոր և կրթական նշանավոր կենտրոններից մեկի՝ Մեծոփավանքի գրչութեան կենտրոնին

¹⁵⁹ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1-5, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1986-2001:

¹⁶⁰ Տե՛ս ծնթ. 153:

նվիրված նրա ուսումնասիրությունը, որով հիմք դրվեց հետագայում այս ուղղությունը կատարվելիք աշխատանքների¹⁶¹: Հայկական գրչություն կենտրոններին նվիրված առանձին հրատարակությունների շարքում հիշատակենք նաև Անիի¹⁶², Սկևռայի¹⁶³, Արցախի¹⁶⁴, Խոր Վիրապի¹⁶⁵ ձեռագրական ժառանգություններն արտացոլող ուսումնասիրությունները, որոնք կարևոր ներդրում են հայկական գրչօջախների բացահայտման գործում: Անհամեմատ ավելի շատ են թեմային առնչվող հոդվածները, որոնք նույնպես մեծ արժեք ունեն:

Համոզված ենք, որ առաջիկայում բազմապատկվելու է այս ուղղությունը հետազոտությունների թիվը՝ շնորհիվ հայերեն հիշատակարաններում գրչավայրերի առատ արձանագրումների:

5.5. ԳՐԶԻ ԱՆՎԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

*«Չար արինակ նա իտովեալ փոյթա ի նաւահանգիստ,
նոյնպէս եւ գրիչն ի վերջին գիծ»
Գրիգոր գրիչ, 1297 թ. [ՀՊ. ԺԳ, 808]*

Ձեռագրաստեղծման բազմաճյուղ գործընթացի կենտրոնական դեմքը գրիչն է. նրա անդուլ աշխատանքի վաստակն են

¹⁶¹ **Ա. Մաթևոսյան**, *Մեծփայլանքի գրչության կենտրոնը (ԺԲ-ԺԵ դդ.)*, տպ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 1997: Այս աշխատանքը եղել է Ա. Մաթևոսյանի թեկնածուական ատենախոսությունը, որը պաշտպանել է 1970 թ.: Գրքի «Առաջաբանի փոխարեն» հատվածում զետեղված են դեռևս թեկնածուականի պաշտպանության առիթով ստացված երկու կարծիքներ, որոնց հեղինակները՝ Եվգենիա Գրանստրեմը և Ասատուր Մնացականյանը, բարձր են գնահատել կատարված աշխատանքը:

¹⁶² **Կ. Մաթևոսյան**, *Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը*, տպ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, Ս. Էջմիածին, 1997:

¹⁶³ **Հ. Բաղայան**, *Սկևռայի գրչության կենտրոնը*, Երևան, «Նաիրի» հրատ., 2013:

¹⁶⁴ **Թ. Մինասյան**, *Արցախի գրչության կենտրոնները*, Երևան, «Նաիրի» հրատ., 2015:

¹⁶⁵ **Ա. Հարությունյան**, *Խոր վիրապ. պատմությունը, ձեռագրական և վիմագրական ժառանգությունը*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2017:

Հագարավոր ձեռագիր մատյանները, որոնք ստեղծվել են գործընթացին մասնակից այլ անձանց հետ բազմակողմ համագործակցության արդյունքում: Գրիչը շատ հաճախ նաև իր ընդօրինակած ձեռագրի թանաք պատրաստողն է, տողատողն է, սրբագրիչն է, երբեմն էլ՝ ծաղկողն ու մանրանկարիչը: Դիպուկ է այս առումով պատմաբան Ա. Աբրահամյանի այն բնորոշումը, որ «Հայ մատենագրության հուշարձանները դարերին ավանդելու ողջ ծանրությունն իրենց ուսերին կրել են գրիչները»¹⁶⁶: Նրանցից շատերը գրչություն արվեստը յուրացրել և գրչագրական գործունեություն սկսել են զբաղվել դեռևս պատանեկան տարիքից: «Տէ՛ր Յիսուս, – գրում է Հակոբ գրիչն իր հիշատակարանում, – օգնեա՛յ մեղաւոր գրչիս՝ տիրացու Յակոբիս, որ եմ ԲԺ.ան ամենի», դարձյալ նույն գրչից. «Որ ընթեռնուք, անմեղաղի՛ր լերուք սխալանաց մերոց, զի ասրն (իմա՛ կարն) մեր այս է, զի դեռեւս ԺԲ.ամեայ գոլով...» (ընդգծումները մերն են – Խ. Հ.)¹⁶⁷: Հակոբ գրիչը, փաստորեն, ընդամենը 12 տարեկան էր ընդօրինակման գործի մեկնարկին: Նրանից մեկ տարով կրտսեր է Սահակ գրիչը, որ ձեռագիր է ընդօրինակել 11 տարեկանը չլրացած. «Անմեղաղի՛ր լերուք յաղագս սղալութեան եւ անզարդութեան գրոյս: Բայց չէ գարմանք. քանզի մանուկ տիօք գրեցի, այսինքն՝ ԺԱ. (11) ամաց էի, Դ. (4) ամիս պակաս» [Հիշ. Ժէ, Ա, 793]: Որոշ գրիչներ էլ թողություն են Հայցում իրենց սխալների համար, որոնց առկայությունը բացատրում են իրենց անփորձությունները կամ առաջին ընդօրինակումով: «Եւ խոչորութեան գրիս մի՛ մեղադրէք, զի առաջին է գիրս, եւ չէի հմուտ», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 646]: Հովհաննես գրիչն էլ հիշատակարանում նշում է, որ ինքն անարհեստ է, դեռ նոր-նոր է գրչություն սովորում և արտագրել է

¹⁶⁶ Ա. Գ. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, էջ 5:

¹⁶⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Գ., կազմեց՝ Օ. Եգանեան, խմբագրությունամբ՝ Փ. Անթարեանի, Յ. Քեօւէեանի, Ա. Ղազարոսեանի, տ. Ծահէ քիյ Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեփիկեանը, «Մագաղաթ» հրատ., Երևան, 2007, էջ 950-951:

ուսուցչի պարտադրանքով՝ «ի վարժումն»։ Սխալների համար նա այսպես է արդարանում. «Ես չկամեցայ գրել, բայց վարդապետն հարկեաց» [Հիշ. ԺԵ, Գ, 497]:

Բազմաթիվ հիշատակարաններում էլ գտնում ենք արդեն տարեց գրիչների արձագանքներն առ այն, որ նրանք ծերացել են, ձեռքերը դողում են, պակասել է աչքերի լույսը և այլն։ Աւետարանի ընդօրինակման ավարտին Մարտիրոս քահանան գրում է. «Եւ խոշորութեան գրոցս անմեղադի՛ր լերուք, զի ծեր եմ» [Հիշ. ԺԴ, Ա, 154]: 1207 թ. Կիլիկիայի ձիրակա անապատում ավարտելով Ավետարանի ընդօրինակումը՝ Կարապետ գրիչն իր հիշատակարանում այսպիսի նշում է արել. «Եւ գրեցաւ սա ձեռամբ Կարապետի մեղապարտի եւ խոշորագիծ գրչի, ի ծերութեան եւ ի տկարութեան ժամանակի՝ խաւարեալ աշաւք» [Հիշ. ԺԳ, 60]: Աչքի խավարող լույսի մասին է նաև Հովհաննես գրչի տրտունջը 1310 թ. հիշատակարանում. «Զմեղաւորս Յոհաննէս, որ պակասեալս եմ ի լուսոյ աշացս, եւ երկաւք անձին գրեցի զսա, յիչեցէ՛ք ի մեղաց թողութիւնս» [Հիշ. ԺԴ, Ա, 182]: Բայց ինչպես երևում է, գրիչը չի հուսահատվել և չի դադարեցրել ձեռագրերի ընդօրինակումը։ 1317 թ.՝ վերոնշյալ հիշատակարանից 7 տարի անց, կրկին առիթ ունենք տեսնելու Հովհաննես գրչին, որն այս անգամ դիմել է արդեն ակնոցի օգնությանը և ուրախությամբ է գրում այդ մասին. «Եւ յաչաց լուսոյ նուազել էի ըստ մարմնոյ, որպէս եւ հոգւոյ, եւ գտի հայթայթել աչքապակի¹⁶⁸, որ աւգնական եղեւ բնական վատելոյն, զոր հիացման արժանի է գտողացն, որ են Ֆրանգ, եւ այնիւ աւարտեցի զգիրս» [Հիշ. ԺԴ, Ա, 339]: 1729 թ. գրված ՄՄ Հ^{մբ} 9762 Հմայիլի գրիչ Վարդան Արծկեցին էլ նշել է, որ գրչության ժամանակ 82 տարեկան է և ծերության պատճառով թույլ տված հնարավոր

¹⁶⁸ Ըստ հրատարակչի՝ սա մեզանում ակնոցի հիշատակության հնագույն վկայությունն է։

սխալների համար ներողամտութունն է հայցել. «Անմեղադիր լերուք, հա՛յրք եւ եղբա՛յրք, ծերացեր եմ, աչս վատատէս է»¹⁶⁹:

Հայկական ձեռագրական ավանդույթում գրիչները, որպես կանոն, անվանապես նշվում են հիշատակարաններում: Այդ են փաստում նաև մեր հաշվումները. օրինակ՝ 832 հիշատակարանային միավոր պարունակող ԺԳ. դարի ժողովածուի 707 թվակիր հիշատակարաններից 613-ում ընդօրինակող կամ հեղինակ գրիչներն անվանապես նշված են¹⁷⁰: Մեր հաշվումները ցույց են տալիս, որ հաջորդող դարերի հիշատակարաններում այս պատկերը նկատելի փոփոխություններ չի կրում¹⁷¹: Հետևապես՝ կարելի է նաև նշել, որ հայկական հիշատակարանների պարագայում գրչանվան բացակայությունը հազվադեպ է: Ուշագրավ է,

¹⁶⁹ Գ. Ղազարյան, *Հայ մանրանկարչական ժառանգության նոր էջեր*, «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական հիմնադրոյի նստաշրջան (2-3 դեկտեմբերի, 2010)», Նստաշրջանի նյութեր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 154:

¹⁷⁰ Նկատենք, որ մնացյալ 94 միավոր հիշատակարանները հիմնականում գրել են ծաղկողներ, ստացողներ, կազմողներ, նորոգողներ և նվիրատուներ, և միայն մի փոքր մասի հիշատակագիրներն են անհայտ:

¹⁷¹ Վիճակագրական մանրամասն աղյուսակների ներկայացումը դուրս է մեր նպատակից: Ընդհանուր առմամբ՝ կարող ենք ասել, որ գրչանվան հիշատակման հաճախականությունը հայկական ձեռագրական ավանդույթում բավական բարձր է և ոչ միայն գուտ գրչանվան: Օրինակ՝ հայերեն թվակիր հնագույն ձեռագրում հիշված են ոչ միայն գրիչ Սահակ Վանանդացին, այլև նրա հայրն ու այլ անձինք: Իհարկե, սա եզակի երևույթ չէ. ձեռագրական մյուս ավանդույթներում ևս գրիչները հիմնականում նշում են իրենց և այլոց անուններ, օրինակ՝ երբայերեն հիշատակարանների պարագայում գրիչները հաճախ ոչ միայն իրենց անուններն են գրում, այլև մականունները, հայրանունները, երբեմն էլ դիմում են ակրոստիքոսի, ինչպես հայագրի գրիչները, տե՛ս **M. Beit-Arié**, *Colophons in Hebrew Manuscripts*, pp. 499-500: Ատրական ձեռագրերում ևս գրչանունները հաճախադեպ են, տե՛ս **Murre-Van Den Berg H.**, “*I the Weak Scribe*”. *Scribes in the Church of the East in Ottoman Period*, “*Journal of Eastern Christian Studies*”, 58 (1-2), 2006, pp. 15-16: Մյուս կողմից՝ լատիներեն հնագույն ձեռագրերի (մինչև Թ. դար) կորպուսի (Codices Latini Antiquiores - CLA) քննությունը ցույց է տվել, որ գրիչներն այստեղ ավելի հաճախ նախընտրել են չնշել իրենց անունները. տե՛ս **J. J. John**, *The Named (and Namable) Scribes in Codices Latini Antiquiores*, “*Scribi e colofoni*”, pp. 107-121.

որ բազմաթիվ գրիչներ ներկայանում են նաև իրենց մականուններով: Ըստ որում՝ այդ մականունների մի զգալի մասն ունի տեղանվանացույց նշանակություն՝ Ստեփանոս Վահկացի, Վարդան Կիլիկեցի, Միքայել Թոխաթեցի, Մեսրոպ Խիզանցի և այլն, որն իր հերթին լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում գրչների մասին և նույնանուն գրիչների պարագայում կարևոր կռվան է դառնում նրանց տարբերակելու հարցում: Գրիչներն իրենց անունները հայտնում են նաև ծածկագրման կամ անունը հոդող տառերով կարճ կամ ընդարձակ բանաստեղծություններ գրելու միջոցով (ծայրակապ՝ ակրոստիքոս): Ահա, օրինակ, 1439 թ. Սիմեոն գրիչն իր հիշատակարանում դիմում է փոխարինագիր ծածկագրին. «Կրկին աղաչեմ, յիշեսձիք ի մաքրափայլ յաղալթս ձեր Յ. Բ. Մ. Ի. Խ. Կ. Ի. Ո. Ե. Ռ. Է. Ի. Ռ. Է. Կ. Ե. Բ. (որոշ ճշտումներով ընթերցվում է «զՍիմէոն կրաւնաւոր»,– վերծանումը՝ Լ. Խաչիկյանի), որ շատ աշխատեցա եւ գրեցի զայս անունս»: Գրիչը հիշատակարանն ավարտում է հետևյալ տողով. «Թէ դպիր էս, կարդա՛, թէ չէ, վզի՛տ տուր ու հագա՛յ» [Հիշ. ԺԵ, Ա, 496]: Իհարկե, այս վերջին արտահայտությունը կարելի է գտնել այլ հիշատակարաններում ևս [Հմմտ. Հիշ. ԺԳ, 558]:

Ժէ. դարի պատմագիր Զաքարիա Քանաքեռցին իր ընդօրինակած ձեռագրերից մեկի հիշատակարանում գրել է այսպիսի չափածո մի բանաստեղծություն, որի տողերի սկզբնատառերով ընթերցվում է՝ «Զաքարիայ գծողս է»:

«Զայս աստէն թողից,
 Այլ ոչ գրրեցից,
 Քան թէ գրրեցից,
 Աստ դադարեցից:
 Բամք հայոց թուից,
 Ի երկրինգ հարրից,
 Այլ եւ երկխնսհից
 Յերկրորդ երեքից (1657):
 Գըծող այս տառիս,
 Մըրոզ գըծակիս,
 Օղոզ թըղթակիս,
 Ղօղեալս ի յաբից,

Մորսորեալ վաղխից:
Է ինձ ողորմիս»¹⁷²:

1603 թ. ընդօրինակված Հայսմավուրքի հիշատակարանում գրիչ Ղազարը հորինել է վեց քառատողից բաղկացած մի բանաստեղծություն՝ յուրաքանչյուր քառատողի առաջին տողի առաջին տառերի միությունը հյուսելով իր անունը՝ «Ղազարի» [Հիշ. Ժէ, Ա, 123]:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում գրչանվանը կից շատ հաճախ նշվում է նաև վերջինիս սոցիալական կարգավիճակը: Այդպիսով հնարավորություն է ընձեռվում պարզելու նաև՝ ովքեր էին նրանք՝ աշխարհականներ¹⁷³, թե՞ հոգևորականներ: Երբեմն, սակայն, խիստ դժվար է լինում նման ճշտում անելը, իսկ առանձին դեպքերում էլ եզակի հիշատակումը կարևոր նշանակություն է ձեռք բերում: Միջնադարի նշանավոր ճարտարապետ, գրիչ և մանրանկարիչ Մոմիկից մեզ հայտնի ձեռագրերից միայն մեկում է հիշատակված իր սարկավազ լինելու փաստը. «եւ անարիս ի սարկաւազս եւ անարհեստս ի գրիչս Մոմիկ...» [Հիշ. ԺԳ, 679], և ըստ Կ. Մաթևոսյանի՝ դրանից էլ պետք է եզրակացնել, որ Մոմիկը քահանայական ձեռնագրություն չի արժանացել¹⁷³:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները խիստ հազվադեպ հաղորդում են նաև կին գրիչների մասին: Հայկական ձեռագրարվեստում, ի տարբերություն Արևմտյանի, կին գրիչների ներկայացվածությունն աստիճանը շատ ցածր է, եթե չասենք՝ աննշան: Դա բացատրվում է առաջին հերթին այն հանգամանքով, որ մեզանում տարածված չեն եղել կանանց մենաստաններ:

¹⁷² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անունն Մատենադարանի, հ. Ժ., էջ 335: Գրչանունը ծածկագրելու կամ ծայրակապով ներկայացնելու երևույթը նկատվում է նաև ասորական, եբրայական, դպտական, հունական և ձեռագրական այլ մշակույթներում ևս, տե՛ս օրինակ **M. Perani**, *I colofoni dei manoscritti ebraici: tipologia, formule e caratteri specifici*, p. 355, **S. P. Brock**, *The Art of the Scribe*, p. 260.

¹⁷³ **Կ. Մաթևոսյան**, *Մոմիկ*, Երևան, «Լեզալ Պյուն» հրատ., 2010, էջ 20:

ըը¹⁷⁴, ինչպես Արևմտյան երկրներում, ուր մեծ ու փոքր կանացի վանական մենաստաններում կանայք նույնպես ակտիվորեն զբաղվել են գրչությամբ¹⁷⁵: Ըստ էության՝ մեզանում հատուկ են կին գրիչների մասին վկայությունները: Ահա օրինակ՝ 1456 թ. Ջուզայում Գրիգոր Տաթևացու Քարոզգիրք է ընդօրինակել Մարիամ գրիչը. «Ի թիւ Հայոց ԶԵ. (1456) գրեցաւ ի Զուղայ Քարոզգիրքս Գրիգորի Տաթեւացւոյ...: Այլեւ ես՝ մեղօք մածեալ եւ մոլորեալ ոգի Մարիամ սիրող բանի, յերեսս անկեալ աղաչեմ զհանդիպողսդ, զի եւ մեզ խնդրեցէք զթողութիւն ի յահեղ ատեան Քրիստոսի» [Հիշ. ԺԵ, Բ, 64]: «Արդ, գրեցաւ աստուածայունն սուրբ Աւետարանս ձեռամբ կուսայիրաւն աղախնուս Վարդխաթունիս», – կարգում ենք 1651 թ. Շոշում (Սպահան) գրչագրված ձեռագրի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Գ, 465]: «Աստուած ողորմի ասէ՛ք մեզ՝ Ղազար եւ Մարգարիտ գրչիս», – կարգում ենք 1640 թ. մի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Բ, 826]: Նույն Մարգարիտ գրիչը հիշված է 1648 թ. մեկ այլ գրչագրում [Հիշ. ԺԵ, Գ, 304]: Հ. Քյուրտյանի բնորոշմամբ՝ Մարգարիտին «մեր հագվադեպ կին գրիչ-ծաղկողներուն լավագույններեն կարելի է նկատել»¹⁷⁶:

¹⁷⁴ Տե՛ս Հ. Վ. Հացունի, *Կուսաստանք Հայաստանի մէջ*, «Բագմավէպ», 1923 (1), էջ 12-17, 1923 (2), էջ 43-47, 1923 (3), էջ 72-78: Տե՛ս նաև Հ. Մկրտչյան, *Հայկական ձեռագրերի հիշատակարանները կանանց մենաստանների և կուսակրոն կանանց վերաբերյալ*, «Էջմիածին», 2012 (12), էջ 102-110, 2013 (2), էջ 89-101:

¹⁷⁵ **A. Modesti**, *Nun Artists, Needlecraft and Material Culture in the Early Modern Florentine Convent*, “Memorie Domenicane”, nuova Serie, 46 (2016). “Artiste nel Chiostro. Produzione artistica nei monastero femminili in età moderna”, a cura di **Sh. Barker** con la collaborazione di **L. Cinelli**, Firenze, 2015, Neribini, pp. 53-71 (with 6 fig.-s, pp. 281-285). Տե՛ս նաև այս ժողովածուի մյուս հոդվածները: Թեմային են նվիրված նաև հետևյալ մենագրությունները՝ **M. Carpinello**, *Il monachesimo femminile*, Milano 2002, **A. I. Beach**, *Women as Scribes: Book Production and Monastic Reform in Twelfth-Century Bavaria* (Cambridge Studies in Paleography and Codicology), Cambridge University Press, 2004.

¹⁷⁶ **Հ. Քյուրտյան**, *Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածոյի ի Ուիչիդա*, Գանգաս, ԱՄՆ, «ԲՄ», 10 (1971), էջ 422:

Իմիջիայլոց նկատենք, որ թեև կին գրիչները մասին վկայությունները խիստ սակավ են, այնուամենայնիվ, հիշատակարանային առատ տվյալները թույլ են տալիս առանձնահատուկ կերպով ընդգծել կանանց դերը հայկական ձեռագրակերտման և ձեռագրապահպանման գործում: Բազմաթիվ կանայք հիշատակվում են որպես գնորդ-ստացողներ կամ նվիրատուներ [Հիշ. ԺԵ, Ա, 367, 402, 494], օրինակ շնորհողներ [Հիշ. ԺԳ, 609, ԺԵ, Ա, 547], գրչին օգնողներ կամ սնունդ բերողներ [Հիշ. Ե-ԺԲ, 181, ԺԳ, 914, ԺԵ, Ա, 535], նորոգել կամ կազմել տվողներ [Հիշ. ԺԵ, Ա, 39] և այլն: Արաբկիրի գրչօջախի ԺԷ. դարի արդյունաշատ գրիչներից Սաչատուր քահանան 1645 թ. ընդօրինակած Շարակնոցի հիշատակարանում խնդրում է հիշել նաև իր կնոջը, որն օգնել է իրեն գրչության ընթացքում՝ թուղթ կոկել, թանաք պատարաստել և այլն. «Այլ եւ յիշեսջիք կողակիցն իմ՝ Թանսուխն, որ զթուխթս կոկեց, եւ թանաք եփեց, եւ այլ բազում բանիւք ձեռնատրութեամբ ակգնեաց ինձ, Աստուած վարձահատուց լինի. ամէն, եւ եղիցի, եղիցի. ամէն» [Հիշ. ԺԷ, Գ, 172-173]:

Համոզված ենք, որ այս ուղղությամբ առաջիկա ուսումնասիրությունները կարող են ամբողջական պատկերացում տալ ձեռագրաստեղծման գործընթացում կնոջ դերի մասին

Դժվար չէ նկատել, որ հայ գրիչների մեծագույն մասը, ամեն դեպքում, հոգևորական տարբեր աստիճանի գործիչներ են՝ դպիրներից, սարկավագներից մինչև եպիսկոպոսներ, արքեպիսկոպոսներ: Եվ սա բնական է, քանի որ դարեր շարունակ կրթությունն ու գիտությունը կենտրոնացած են եղել հոգևոր մեծ և փոքր կենտրոններում, որոնց կից գործել են նաև գրչատները, ուր ուսուցանվել է գրչության արվեստը: Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում բազմաթիվ են այս մասին հիշատակումները: Հատկանշական է, որ քրիստոնյա Արևմուտքում էլ առնվազն մինչև ԺԱ-ԺԲ. դարերը ձեռագրաստեղծման գործընթացը հսկվում էր կաթոլիկ եկեղեցու կողմից, գրիչներն էլ սովորաբար տարբեր եկեղեցիների, վանական կենտրոնների սպասավորներ էին, և միայն ԺԲ. դարից սկսած՝ հիմնականում քաղաքային և համալսարանական կյանքի ամրապնդումով պայմանավորված՝ ձեռագրի ստեղծումն աստիճանաբար դադարում է եկեղեցական

մենաշնորհ լինելուց: Բավական է նշել, որ ԺԱ. դարում Իտալիայի հարավում ընդօրինակված ձեռագրերի միայն 3%-ն է աշխարհիկ բովանդակություն ունեցել¹⁷⁷, և գրեթե բոլոր մատյաններն էլ ստեղծված են եղել եկեղեցական կարիքների համար, մինչդեռ ԺԲ. դարում արդեն այդ նույն միջավայրում նկատվում են ձեռագիր գրքի առքուվաճառքի առաջին շուկաները¹⁷⁸, որոնցում երևան են գալիս նաև անհատ և արհեստավարժ (պրոֆեսիոնալ) գրիչները¹⁷⁹:

Մեզանում էլ, իհարկե, աշխարհիկ անձինք ձեռագրեր են ընդօրինակել, սակայն նրանց թիվը դարերի հոլովույթում զգալիորեն զիջել է կրոնական միջավայրի գործիչների թվին: Ճիշտ է, ԺԶ-ԺԷ. դարերում հատկապես քաղաքային միջավայրում, այդ թվում՝ Հայաստանից դուրս (Կ. Պոլիս, Ղրիմ, Նոր Զուղա և այլուր) գրված հիշատակարանների ուսումնասիրությունը երևան է հանում անհատ գրիչների ակտիվության աճ, սակայն առայժմ դժվար է որոշակի վիճակագրություն ներկայացնել: Բանն այն է, որ անգամ այս պարագայում արհեստավոր գրիչներից շատերն իրենց ձեռագրերն ընդօրինակում կամ իրացնում էին դարձյալ այս կամ այն եկեղեցու հովանու ներքո: «Ի Սուրբ Ստեփաննոսի դուռն եմ գրեր, վասն զի շինեաց մօտ առ եկեղեցին խուց եւ գրատուն վասն պատճառի գրոցս, եւ անդ նստեալ կատարեցի», – նշում է Սարգիս գրիչը 1614 թ. Նոր Զուղայում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում [Հիշ. Ա, 541]: ԺԷ. դա-

¹⁷⁷ A. Guillou, *Production and Profits in the Byzantine Province of Italy (Tenth to Eleventh Centuries): An Expanding Society*, “Dumbarton Oaks Papers”, 1974 (28), p. 101.

¹⁷⁸ *Il mercato del libro manoscritto nel medioevo italiano*, a cura di C. Tristano e F. Cenni, Roma, Jouvence, 2005, p. 9.

¹⁷⁹ Անհատ և արհեստավոր գրիչների առումով հետաքրքիր է, օրինակ, իրանական ձեռագրական մշակույթը: Ըստ արևելագետ Օլեգ Ալիմուշկինի՝ իրանական ձեռագրավեստում դեռևս ԺԱ. դարից՝ արքունի գրիչներին զուգահեռ հայտնի են եղել բազմաթիվ անկախ գրիչներ, որոնք տիրապետել են գրչարվեստին և որոշակի վճարի դիմաց ընդօրինակումներ են կատարել, տե՛ս Օ. Փ. Աкимушкин, *Персидская рукописная книга*, “Рукописная книга в культуре народов Востока” (очерки), книга первая, Москва, «Наука», 1987, стр. 371.

րի առաջին կեսի պոլսեցի բազմարդյուն գրիչ Միքայել Թոխաթեցու¹⁸⁰ հիշատակարաններից մեկում էլ կարդում ենք. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի մայրաքաղաքն Ստամպոլ, ի դուռն Ատրանու Սուրբ Նիկողայոսին» [Հիշ. Ժէ, Ա, 350]:

Ըստ էութեան՝ միայն մասնավոր և ամբողջական ուսումնասիրութիւնը կարող է վերհանել հայ գրչարվեստի ներկայացուցիչներին վերաբերող այսպիսի մանրամասներ, որոնցով, բարեբախտաբար, հարուստ են հայերեն ձեռագրերի հիշատակարանները: Գրիչների անվանապես ներկայանալը հիշատակարաններում հնարավորութիւն է տալիս ոչ միայն կազմել հայ գրչութեան մշակների ամբողջական շտեմարան¹⁸¹, այլև նպաստում է

¹⁸⁰ Գրչի մասին տե՛ս **Խ. Հարութունյան**, *Միքայել անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, էջ 13-94:

¹⁸¹ Առայժմ նման շտեմարան մեզանում կազմված չէ. սահմանափակ թվաքանակով (ընդամենը՝ 83 անուն) այդպիսի մի ժողովածու-հանրագիտարանի նմուշ է Ն. Պողարյանի կազմած հայ գրիչների շարքը, տե՛ս **Ն. արքեպ. Ծովական [Պողարեան]**, *Հայ գրիչներ (Թ.-ԺԷ. դար)*, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1992: Նույն սկզբունքով ավելի վաղ Պողարյանը կազմել է նաև հայ մանրանկարիչների մի ցանկ (ընդամենը՝ 105 անուն), որոնց մեջ քիչ չեն նաև գրիչ-ծաղկողները, տե՛ս **Ն. արքեպ. Ծովական [Պողարեան]**, *Հայ նկարողներ (ԺԱ.-ԺԷ. դար)*, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1989: Այս առիթով հիշատակենք նաև Ա. Գևորգյանի կազմած հայ մանրանկարիչների մատենագիտական երկու կարևոր ցանկերը, որոնք նույնպես զգալիորեն նպաստում են գրիչների կամ ծաղկողների նույնականացմանը, տե՛ս **Ա. Գևորգեան**, *Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն, IX-XIX դդ.*, Գահիրէ, 1998 և **Ա. Գևորգեան**, *Անանուն հայ մանրանկարիչներ. մատենագիտություն IX-XVII դդ.*, Գահիրէ, 2005: Համոզված ենք, որ հայկական ձեռագրագիտության առաջիկա կարևորագույն անելիքներից է լինելու հայ գրչության մշակների շտեմարանների կազմումը: Այս դիտանկյունից մեզ համար հետաքրքիր կարող է լինել հունարեն ձեռագրեր ընդօրինակած գրիչների «կորպուսը», որ կազմել են Մարի Վոգելն ու Վիկտոր Գարդիաուզենը, տե՛ս *Die griechischen Schreiber des Mittelalters und der Renaissance, bearbeitet von M. Vogel und V. Gardthausen*, (XXXIII. Beiheft zum Zentralblatt für Bibliothekswesen) Leipzig, Otto Harrassowitz, 1909. Գրիչների այս շտեմարանին հաջորդած այլ հրատարակությունների համար տե՛ս նաև **S. Bernardinello**, *Copisti di codici greci dal X al XVI secolo*, “Miscellanea, 3. Studi in onore di Elpidio Mioni”, Università di Padova, Istituto di studi bizantini e neogreci, Liviana editrice S.p.A-Padova, 1982, pp. 1-11.

ձեռագրագիտական բազմաթիվ հարցերի ճշտմանը: Այդպիսով Հնարավոր է լինում քննել նաև առանձին գրիչների ձեռագրական գործունեությունը, վերակազմել նրանց կենսագրական տվյալները և այլն: Կարելի է վստահաբար ասել, որ հայերեն ձեռագրի հիշատակարանը որևէ գրչի կենսագրություն, նրա գործունեության մասին տեղեկություններ քաղելու հիմնական և անգերազանցելի աղբյուրն է: Ըստ այսմ՝ ձեռագրի հիշատակարանում առանցքային նշանակություն ունի այն բաղադրիչը, ուր գրիչը ներկայանում է, նշում է իր սոցիալական դիրքը, ընտանիքի անդամներին, ուսուցիչներին և այլ կարևոր տեղեկություններ¹⁸²:

Նկատենք, որ հայերեն հիշատակարաններում գրչանվան արձանագրումը սովորաբար ուղեկցվում է անձը խոնարհեցնող, անպատվաբեր տարատեսակ բառերով և արտահայտություններով, որոնք շատ հաճախ բանաձևային, կաղապարային բնույթ ունեն և կրկնվում են ձեռագրից ձեռագիր: Ահա գրչի անվանն ուղեկցող այդպիսի մի քանի տարածված կաղապարներ հայերեն հիշատակարաններից՝

¹⁸² Հիշատակարաններում անվանապես ներկայանալու գրիչների շարժառիթները կարող են տարբեր լինել՝ հիշման արժանանալու պարզ ակնկալիքից մինչև հեղինակություն և ճանաչում ձեռք բերելը: Այս վերջինը առավելապես բնորոշ է արհեստավարժ (մասնագիտացված) գրիչներին, որոնք ձեռագրեր են ընդօրինակել վաճառքի նպատակով: Հայկական միջավայրի համար նման ուսումնասիրություններ առայժմ չկան, և դժվար է ամենայն մանրամասնությամբ պատկերացնել առքուվաճառքի շուկաների գործունեությունն ու առանձնահատկությունները: Այս հարցում նույն մակարդակի վրա են նաև արևելյան մյուս ձեռագրական ավանդույթները. այստեղ էլ գրավաճառության մասին պատկերացումներն աղոտ են, մինչդեռ Արևմուտքում նկատելի աշխուժություն է գրանցվել. գրավաճառության ոլորտում առավելապես աչքի են ընկել իտալական և ֆրանսիական ձեռագրաստեղծ օջախներն ու տեղացի գրիչները: Նրանցից ոմանք իրենց անունն ամրագրել են ճանաչվելու և հեղինակություն ձեռք բերելու նպատակով, տե՛ս **A. Delorez**, *Pourquoi les copistes signaient-ils leurs manuscrits?*, “Scribi e colofoni”, pp. 48-49: Տե՛ս նաև **E. Ornato**, *Libri e colofoni: qualche considerazione*, “Gazette du livre médiéval”, 42, 2003 (1), p. 25.

- ա. «ես յոգնամեղս եւ փցունս ի գրչաց, նուաստ քահանա» [Հիշ. ԺԳ, 685],
- բ. «ես մեղաւոր եւ անարժան ծառայս» [Հիշ. ԺԳ, 687],
- գ. «վերջացեալս յամենայն բարեաց սուտանուն... տրուպ սպասաւոր բանի» [Հիշ. ԺԳ, 724],
- դ. «ձեռամբ մեղապարտի, անարուեստի, ախմարի եւ փցուն գրչի» [Հիշ. ԺԳ, 738],
- ե. «առաջինս մեղաւորաց եւ վերջինս ի կարգս կրանաւորաց» [Հիշ. ԺԳ, 817],
- զ. «ես՝ անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ...» [Հիշ. ԺԳ, 845],
- է. «ես՝ նուաստ յամենայնի եւ յետին ծառայ ծառայից Քրիստոսի... մեղապարտ եւ մեղսասէր եւ անիմաստ գրիչ» [Հիշ. ԺԴ, Ա, 31]:

Որոշ գրիչներ չեն բավարարվել այսպիսի արտահայտութիւններով և ավելի են ծավալվել: «Յերեսս անկեալ աղաչեմ մեղաւոր հողս, եղկելիս եւ թշուառականս եւ շտեմարանս ամենայն չարեաց՝ Ստեփանոս յիշել ի Տէր եւ սրտի մտաւք մեղաց թողութիւն խնդրել ի Քրիստոսէ», – կարդում ենք 1318 թ. Դրագարկում ընդօրինակված Ճառքնտրի հիշատակարանում [Հիշ. ԺԴ, Ա, 366]: 1391 թ. Վանում գրչագրված ձեռագրի հիշատակարանում գրիչ Թուման այսպես է հաղորդում իր անունը. «Եւ արգ ես՝ անպտուղս ի բարեաց, մեղաւորս յարդարոց, անկատարս ի կատարելոց, մեղանչականս յանմեղաց, անկարգս ի կարգաւորաց, անյիշելիս ի գրչաց, անարհեստս ի յարուեստաւորաց, տգէտս ի գիտնականաց, անբանս ի բանականաց, բազմամեղս Թումամ» [Հիշ. ԺԴ, 587]: Բացառական հոլովով արտահայտված այս գերադրական կառույցներով Առաքել գրիչն իրեն համարում է թվարկվածներից ամենավերջինը և հետինը: 1422 թ. Առաքել գրիչն իր մասին այսպես է գրում.

«Արդ ես՝ տարտամեալս մեղօք և զառացեալս աղղղութեամբ, մտօք յիմարեալ և հոգով ցնորեալ և մարմնով անսրբութեամբ, անվարժ իմաստութեամբ և անպիտանս եկեղեցւոյ, պիղնձ հնչողական և ցնծղայս ղօղանջական, ժանկո-

տեալս պատրանօք և նսենացեալս ի գործ խաւարին, անարգս ի մէջ պատուաւորաց և անհմուտս ի կարգս բանասիրաց՝ Առաքել պիտականուն վարդապետ...» [Հիշ. ԺԵ, Ա, 294]:

Պրջական այս հիշատակարանին գերազանցում են Կարապետ քահանայի՝ ապաշխարութիւն հիշեցնող ինքնախարազանիչ տողերը՝ գրված Երուսաղեմում 1332 թ. իր իսկ ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում.

«Եւ յորժամ լսէք մեղաւոր կամ ծանրամեղ, մի՛ կարծէք թէ վասն խոնարհութեան է եւ միայն դուզնաքեայ բան, այլ գիտացի՛ք, որ ստոյգ մեղուցեալ եմ եւ զլուխ մեղաւորաց: Զի ո՞ր պոռնիկ, ո՞ր աւագակ, ո՞ր մաքսաւոր, ո՞ր անառակ, ո՞ր գող, ո՞ր անգաւոր, ո՞ր յափշտակող, ո՞ր չարագործ եւ կամ այլ մեղաց գործաւ լինել կարէ, որպէս եսս եմ, զի չյողի չար, զոր ոչ գործեցի, եւ զայն ոչ յակամայ կամ ի հարկէ, այլ յստաջին եւ ի յաւժար կամաց խորհել եւ ասպա գործել, եւ զայն ոչ Ժ. (10) անգամ կամ Ռ. (1000), այլ անյագ ի հոյն, եւ որպէս բնութեանս կիրք՝ իբր զքաղց եւ զծարաւ եւ զքուն: Եւ քանզի ոչ կարեմ յայտնի զանուն մեղացն գրել, զի մի գայթազողութիւն լիցի, այլ իմաստնոցոյ այս բաւական է, զոր խոստովանաբար եդի առաջի...»¹⁸³:

Ճիշտ է նկատել Ա. Աբրահամյանը, երբ գրել է, որ անգամ չատ բարձր մակարդակով կատարված ընդօրինակումների պարագայում գրիչները չեն դադարել իրենց նվաստացնող բառերով կոչել¹⁸⁴, որը, մեր կարծիքով, բոլորովին պատահական չէ¹⁸⁵:

¹⁸³ Մայր ցուցակ ձեռագրաց Մլրոց Յակոբեանց, հ. Բ., կազմեց Ն. եպս. Պողոս-րեան, Երուսաղեմ, տպ. Սր. Յակոբեանց, 1967, էջ 137:

¹⁸⁴ Ա. Գ. Աբրահամյան, <այոց գիր և գրչություն, էջ 303:

¹⁸⁵ Մեր պրպտումները ցույց են տալիս, որ անպատվաբեր, ինքնախարագանող բառեր և արտահայտություններ գործածել են ձեռագրական այլ ավանդույթներ (վրացական, դպտական, ասորական, լատինական, հունական և այլն) ներկայացնող գրիչները ևս, ըստ որում՝ առավել ընդգծված է քրիստոնեական միջավայրի գրիչների բառապաշարը: Այս տեսանկյունից հետաքրքիր է այն դիտարկումը, որ թեև իսլամական արաբական հիշա-

Ձեռագրերի հիշատակարաններում այդպիսի արտահայտությունների հիմքում պետք է տեսնել քրիստոնեական այն մտածողությունը, ըստ որի՝ կիսառավորվի և ըստ արժանվույն կվարձատրվի միայն նա, ով իր անձը կխոնարհեցնի, և ճիշտ հակառակը: Մատթեոսի Ավետարանում կարդում ենք Քրիստոսի հետևյալ խոսքը. «Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի՛, և որ խոնարհեսցուցանէ զանձն՝ բարձրասցի» (Մատթ., ԻԳ. 12): Գրչագրական այս սովորությունը բացատրության համատեքստում պետք է հիշատակենք նաև «Բագոււմք եղիցիս առաջիւնք յետիւնք, և յետիւնք առաջիւնք» (Մատթ., ԺԹ. 30) կամ «Եւ ահա յետիւնք՝ որ եղիցիս առաջիւնք, և իցեն առաջիւնք՝ որ լիմիցիս յետիւնք» (Ղուկ., ԺԳ. 30) տողերը, որոնք գործուն ազդեցություն են ունեցել միջնադարյան ընկալման վրա և ուղղակիորեն առնչվում են քննվող նյութին: Բավական է ասել, որ բազմաթիվ գրիչներ, նույնիսկ ազնվական ծագման կամ հոգևոր բարձր աստիճան ունեցող, իրենց կոչում են «յետին», «վերջին», «նուսաստ», «անարժան», «անվարժ», «փցուն» և էլի նման բառերով, որոնցով, փաստորեն, նրանք ընդգծում են իրենց աննշանությունը, անկարևորությունը, անգամ չնչինությունը ոչ թե գրչակից ընկերների, հոգևոր եղբայրների կամ ապագա ընթերցողների առջև, այլ ամենակարող Աստծու, որ ստեղծողն է ամենայնի¹⁸⁶: Հիշատակարաններում այս գաղափարն առավել ցայտուն է դրսևորված. «Եւ արդ, ես՝ յետինս ի կարգաւորաց եւ առաջինս մեղաւորաց» [Հիշ. ԺԴ, Ա, 443], «Ես՝ յետինս բանասիրաց եւ տրուպս կարգաւորաց» [Հիշ. ԺԵ, Բ, 8], «Եւ արդ, ես՝ յե-

տակարաններում նույնպես նկատվում են գրչանվանը կից գրվող սեփական անձը նվաստացնող, անպիտանությունն ընդգծող արտահայտություններ, սակայն դրանց տարածվածությունը զիջում է քրիստոնեական արարական ձեռագրում առկա համանման արտահայտություններին, տե՛ս **A. D’Ottone**, *Il colofone dei manoscritti arabo-islamici: alcune note*, “Colofoni armeni a confronto”, p. 308: Հոդվածում վկայակոչված որոշ օրինակներ իրենց զուգահեռներն ունեն նաև հայկական հիշատակարաններում:

¹⁸⁶ **H. Petrosyan**, *The Book of Life in the Armenian Culture: The Ideology and the Iconography*, “Museums and Written Commucation: Tradition and Innovation”, edited by **N. Winterbotham** and **A. Avagyan**, Cambridge Scholars Publishing, 2018, p. 218.

տինս յարդարոց եւ առաջինս ի մեղաւորաց» [Հիշ. ԺԵ, Բ, 23], «Իսկ զմնացորդ սորա աւարտեցի ես՝ անարժանս եւ վերջին սուտանուն գրչակ» [Հիշ. ԺԴ, Ա, 275] և այլն:

Ձեռագրի ընդօրինակումը գրիչներից շատերը մեկնաբանում են ոչ թե համարձակութեան կամ պարծանքի դրսևորում, այլ խոնարհութեան և սիրո արգասիք, որպես վաղուց առկա փափագ կամ տենչանք: Ահա թե ինչ է գրում Հովհաննես անունով գրիչը 1310 թ. ընդօրինակած մատյանի առիթով. «Եւ այս իղձ, որ ի վաղնջուց, որպէս ասացի, խորովէր զիս սքանչելի տոչորմամբ, մոռանալ եւ անտես ետ առնել ինձ զչար վարս հոգւոյ եւ զկուրութիւնս ըստ մարմնոյ... սակայն համարձակեցայ ի գրել» [Հիշ. ԺԴ, Ա, 181]: Մեկ այլ գրիչ նշում է. «Ես՝ բազմամեղս, ոչ վասն ընչից գրեցի զսա եւ ոչ զի արուեստաւոր էի ի գիտութիւն, այլ վասն փափագանաց սրտի գրեցի զսուրբ Աւետարանս» [Հիշ. ԺԴ, Ա, 201]:

Հատկանշական է, որ սեփական անձը խոնարհեցնելու նպատակով գրիչները հաճախ գործածել են նաև -ակ, -իկ, -ուկ նվագափաղաքչական մասնիկներով բաղադրված բառեր՝ գրելեակ, գրկակ, գրչողիկ, գրչիկ, դպրիկ, ծաղկաւղակ, հողիկ, ձեռիկ և այլն: Այս համատեքստում պետք է դիտել և այն, որ անգամ գեղեցկագիր գրիչները փնտրում են սեփական գիրը՝ այն կոչելով խոշորագիծ, խոշբոտտ, ձաբոտոց, խզբոց և այլն. «Աղաչեմ յիշել ի Տէր եւ զեղկելի գրչողիկս Յոհանէս» [Հիշ. ԺԳ, 289], «...նաեւ զանարժան հողիկս՝ զՅովանէս անպիտան գրիչ, որ զսակաւ գիրս ցանցառ գրով ձաբոտեալ գրեցի եւ կազմեցի» [Հիշ. ԺԴ, 525], «Ձստացող սորա զվարդապետն Վարդան յիշեցէ՛ք ի սրբամատոյց յաղօթս ձեր, ընդ նմին զբազմայվէր ոգի զՊետրոս զփծուն գրչակս» [Հիշ. ԺԵ, Բ, 49], «Եւ յիշեցէ՛ք ի սուրբ աղաւթս ձեր ի բարի մասին՝ զթարմատար եւ զկարգընկեց զՄարկոս գրիչս, եւ սխալանաց եւ խոշբոտտ գրիս մի՛ մեղադրէք» [Հիշ. ԺԵ, Ա, 19]:

Վատ գրով ընդօրինակելու պատճառներից են մուլթը, ցուրտը, սովը, տագնապը, ծերութիւնը, ձեռքի դողը, աչքի տկարութիւնը և իհարկեւ, գրչագրական գործիքների ու նյութերի ոչ պատշաճ վիճակը, մինչև անգամ աղմուկը: Հայկական հիշատակարանները լի են այդպիսի նշումներով: Վկայակոչում ենք մի

քանի օրինակ միայն: 1264 թ. գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Եւ ես գիտեմ, որ այս չէ թագաւորական իրք, այլ ոսկեգիր պիտեւ, եւ ճարտար գրչի, եւ ես շատ պատճառ ունէի, որ խափանէր զիս զայս ձեռնարկութենէս: Տկարութիւն եւ մուծն խրճիթս, եւ հողմ Պարխարու (յեռնազանգաված Սև ծովից հարավ - Խ. Հ.) փոշեխառն փչելով ընդ պատուհանս, եւ պաղ աւդոյս» [Հիշ. ԺԳ, 326]: 1289 թ. հիշատակարանի գրիչը տրտնջում է գլխացավից և ատամնացավից, որոնք պատճառ են դարձել գրի խափանման. «Աւանդ դառն ցաւիս, որ դիպա, եւ խափանեցաւ գիրս, վասն զի ատամս ցաւեցաւ զաւուրս եւթն, նաեւ գլուխս, այլ Տէր կարողացոյց» [Հիշ. ԺԳ, 634]: Հովհաննես գրչին էլ աղմուկն է խանգարել. «Վանջ, աղմուկ ելաւ, խալտեցաւ (փչացավ - Խ. Հ.)» [Հիշ. ԺԳ, 222]: Կրկին աղմուկից է տրտնջում մեկ այլ գրիչ. «Ձմեղաւոր Յոհաննէս, որ բազում տառապանաւք ի մէջ շատ եւ անհարմար աղմկի գրեցի զսա» [Հիշ. ԺԴ, Ա, 153]: Մեկ ուրիշ հիշատակարանում գրիչը բողոքում է ոչ միայն աղմուկից, այլև օդի սառնության պատճառով թանաքի խտանալուց, որոնք խոչընդոտել են գրչությանը. «Մաճնոյր հանապազ մելանն ի յաւդոյն, ընդ որ յոյժ վշտանայի, եւս եւ աղմուկ գրուցաց յոյով լինէր մերձն իմ, յորմէ սխալէի» [Հիշ. ԺԴ, Ա, 22]: «Այլ, ո՛վ եղբայր, մի՛ մեղադրէր, - գրում է Տիրացու գրիչը, - ճշմարտիւ ասեմ, զի եղանակս ձմեռն էր, դեղս՝ սառոյց, եւ տունս՝ ցուրտ, եւ ես՝ պանդուխտ» [Հիշ. ԺԳ, 346], «Աւանխ դառնութեան աւուրցս եւ վանջ կենաց մերոց, որ ամեն օր Ժ. (10) անգամ կու մեռանիմ յաճէ սպասման եւ դողալով կու գրեմ», - գրում է Հովհաննես Մանկասարենց բազմարդյուն գրիչը¹⁸⁷ [Հիշ. ԺԵ, Բ, 41]:

Հաճախ գրիչները մատյանի սկզբի թերթերին թողել են մեկտողանոց հիշատակագրություններ՝ հայցելով Սուրբ Երրորդության աջակցությունը՝ ձեռնարկած գործը ավարտին հասցնելու նպատակով: «Աւգնեա՛, Տէ՛ր Յիսուս, տկար մատինս եւ յաջո-

¹⁸⁷ Գրչի, նրա ձեռագրական ժառանգության մասին առավել մանրամասն տե՛ս Ե. արքեպ. Ծովակա՛ն [Պողարեան], Հայ գրիչներ (Թ.-ԺԷ. դար), էջ 185-191, Ա. Մաթևոսյան, Մեծփախկանքի գրչության կենտրոնը (ԺԲ--ԺԵ դդ.), էջ 104-116:

դեպ' գգործ անյիշելոյս մեղաւորի. ամէն», – կարգում ենք 1447 թ. Մարգարե գրչի ընդօրինակած Ավետարանի 29բ էջին [Հիշ. ԺԵ, Ա, 614]: ՄՄ Հ՞ր 6282 ձեռագրի գրիչ Մարգարան մատյանի սկզբում ստորին լուսանցքում, թողել է հետևյալ գրությունը. «Աւգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, եւ Սուրբ Հոգին ի յաւարտ գրոյս ժամանեցուցէ» (նկ. 19):

Եվ պատահական չէ, որ գլխավոր հիշատակարաններում գրիչներն ընդգծում են այն, որ ձեռագիրն ընդօրինակել են Սուրբ Երրորդության ներշնչումով, նրա օժանդակութեամբ, ողորմութեամբ և կամքով: Այս պատճառով նախագասության ստորոգյալը նրանք շատ հաճախ արտահայտում են ոչ թե ներգործած, այլ կրավորած և խոնարհմամբ և երրորդ դեմքով, այսպես՝ գրեցի, գծագրեցի, աւարտեցի և նման բայածևերի փոխարեն, որոնք ուղղակիորեն ընդգծում և կարևորում են գրչի աշխատանքը, ավելի շատ տարածված են գրեցաւ, գծագրեցաւ, յանկ ելաւ, աւարտեցաւ, գրաւ եղիւ բայական կառուցյցները, որոնց սովորաբար հաջորդում է ձեռամբ + գրչի անուն կաղապարը. «Աստանաւր յանկ ելեալ աւարտեցաւ լուսայեղձ եւ փրկագործ սուրբ Աւետարանս... ձեռամբ Յոհաննեսի յոգնամեղի» [Հիշ. ԺԳ, 289], «Գրեցաւ սուրբ եւ աստուածային տառք բարձրաբան սուրբ աւետարանչացն ձեռամբ անարժան եւ յետնորդ քահանայի, որ Սերոբէ անուն կոչի» [Հիշ. ԺԴ, Ա, 177], «Եղեւ զրաւ գրչութեանս այսմ աստուածաշունչ սուրբ Աւետարանի... ձեռամբ Գրիգոր անարժան արեղայի՝ Յովհաննէս վերածայնելոյ» [Հիշ. ԺԵ, Գ, 66] և այլն:

Մյուս կողմից՝ բայը ներգործած և առաջին դեմքով կիրառելիս գրիչները դարձյալ վկայակոչում են Սուրբ Երրորդությունը, նրա շնորհն ու ողորմությունը: Արձեշի Արջրոյ վանքում 1317 թ. գրչագրված Ավետարանի հիշատակարանը Հայրապետ գրիչն այսպես է սկսում. «Գոհութիւն եւ փառք ամենասուրբ Երրորդութեանն, որ ինձ՝ յոգնամեղիս, պարգեւատրեաց բազում ողորմութեամբ իւրով հասանել ի յետին գիր սրբոյ Աւետարանիս» [Հիշ. ԺԴ, Ա, 428]: Մեկ այլ հիշատակարանում գրված է. «Շնորհիւ Տեառն սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցի» [Հիշ. ԺԳ, 890], մեկ ուրիշում՝ «Ողորմութեամբն

Աստուծոյ սկսայ ի յամսեանն դեկտեմբեր ժԵ. (15) եւ շնորհաւք Սուրբ Հոգւոյն կատարեցի ի մարտ Լ. (30)» [Հիշ. ԺԴ, Ա, 468], և կրկին. «Ես՝ մեղաւորս Յոհաննէս սուտանուն քահանայ, որ գրեցի զԱւետարանս առանց ուրուք աւգնականութեան, բայց յԱստուծոյ» [ԺԴ, Ա, 344]: 1309 թ. Խաչատուր գրիչն իր հիշատակարանում նշում է, որ իր ձեռքով Սուրբ Երրորդությունն է ավարտել մատյանի ընդօրինակումը. «Փանք ամենասուրբ Երրորդության Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբո, որ աւարտեաց զհօգիարուի տառս ձեռամբ յոգնամեղ եւ բցուն գրչի՝ Խաչատրոյ» [Հիշ. ԺԴ, Ա, 166, ընդգծումները մերն են – Խ. Հ.]: Ահա ևս մեկը Տիրացու գրչից. «Փառք ամենատեառն, որ հասոյց ի վերջ, ի կէտ վերջին» [Հիշ. ԺԳ, 346]: Մաղաքիա գրիչն էլ չափածո տողերով է արձագանքել.

«Ես ցանկացող վաղուց հետ էի,
Բայց մարմնովս ես տկար էի,
Զտկարութիւնս ես ի բաց եղի,
Օնորհաւք Հոգոյն Տեառն Յիսուսի,
Որ զաւրացուցանող է յամենայնի,
Զիս զօրացոյց ի մին րոպէի,
Որ յօժարեցայ յայսմ ներգործի,
Որ սկսա գրել գիրքս մատենի» [Հիշ. ԺԵ, Գ, 204]:

Դժվարին այն պայմանները՝ սպառնալիքներով, կոտորածներով, կողոպուտներով լի, որոնց ընթացքում ձեռագրեր են ընդօրինակել գրիչները, բազմապատկում են վերջիններին նկատմամբ մեր պատկառանքն ու հիացմունքը: Արդարև, կարողում ես դաժան օրերի, սովի, բնական աղետների մանրամասն նկարագրությունները, տեղեկանում գրչության համար անբարենպաստ միջավայրի մասին և ապշում, թե որքան համբերություն, ուժ և հավատ են ներդրել գրիչներն ընդօրինակման ընթացքում: «Երբեմն ի ցրտոս եւ ի ձմեռային խասութենէս տառապէի, երբեմն ի թաթարի գալոյ ու գնալոյ, ու ի տեղացս աւերութենէս մեք փախստական լինեաք ու մխիթարութիւն ոչ ուստեք, ու ես հայնց կամէի, որ ամէն գիր ոսկի էր լեալ, ապա մեր կարողութիւն այս չափ էր», – գրում է Թադէոս գրիչը 1303 թ. [Հիշ. ԺԴ, Ա, 41-42]:

Այսքանից հետո ակնհայտ է, որ մատյանի ընդօրինակումն ավարտին հասցնելը գրչի համար ցնծությունն և հոգու բերկրանք էր. բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, երբեմն տեղից տեղ անցնելով ու գրկանքների գնով է դա նրան հաջողվել, որոնց մասին նա արձանագրում է իր հիշատակարանում: Եվ պատահական չէ, որ հայերեն հիշատակարաններում ընդօրինակման ավարտը երբեմն համեմատվում է երկարատև ճամփորդությունից կամ պանդխտությունից տուն դարձողի, ալեկոծ ծովում նավելու և նավահանգիստ հասնելու հետ, որոնց զուգահեռները գտնում ենք ձեռագրական այլ մշակութայիններում ևս (տե՛ս § 6-ում): Գրիգոր գրիչն, ավարտելով մատյանի ընդօրինակումը, իր աշխատանքը հետևյալ կերպ է նկարագրել. «Զաւր աւրինակ նաւ խռովեալ փութա ի նաւահանգիստ, նոյնպէս եւ գրիչն ի վերջին գիծ» [Հիշ. ԺԳ, 808]: Մեկ այլ գրչի հիշատակարանում կարդում ենք. «Որպէս օտարն, որ տեսանէ օտարութենէ իւր գաւառն, նոյնպէս գրողն փափաքի, յորժամ գրոց տեսանէ վերջ եւ վճարին կատարէ» [Հիշ. ԺԳ, 421]:

Այսպես ահա, ծանր և դժվարին աշխատանքը ժամանակին ու որակով կատարելը և ըստ այդմ՝ ձեռագրի պատվիրատուին գոհացնելը կարևոր նշանակություն ունեն: Եվ պատահական չէ, որ երբեմն լավ գրչի փնտրտուքը կարող էր ժամանակ և միջոցներ պահանջել: Պատվիրատու-ստացողներից ոմանք նշել են իրենց հիշատակարաններում գրիչ գտնելու դժվարությունների մասին ևս: Սարգիս անունով պատվիրատուն հաղորդում է, որ բավական չարչարվել է այդ հարցում. «Ըղձացեալ այս մատենի, եւ անձնատատան աշխատութեամբ եւ քրտնաջան ջանիւք եւ բազում տառապանօք դժուար ի գիւտ գրչաց, ետու գծագրել գաս» [Հիշ. ԺԳ, 496]: Ահա ևս մեկը՝

«Եւ հաւանդեցայ քահանայի միոյ գրչի,– գրում է Վարդան անունով ստացողը 1311 թ. Կիպրոսում,– եւ ետու գրել Աւետարան, եւ ոչ հաւանդեցայ վասն անվարժ գրելոյն, եւ միտոյն թանձրութեան եւ ծաղկին անպատեհութեան:… Եւ այլ մագաղաթ ճարկեցի բարեպաշտ արանցն ընչիւք: Եւ դիմեալ

եկի յերկիրս՝ յառաջին բնակչութիւնն իմ... խորհուրդ առեալ եկի ի սուրբ ուխտն Գերմաղբէր, յորում բնակեալ էր քահանայ ոմն Թորոս անուն Հոռնկլացի, հմուտ գրչութեամբ: Եւ յոյժ աղաչեցի զնա յանձն առնուլ եւ գրել զՆոր կտակարանքս... եւ նա յանձն էառ» [Հիշ. ԺԴ, Ա, 196]:

Վարդան պատվիրատուի այս չարչարանքն ի վերջո հաջողութեամբ է պսակվել, և Թորոս գրիչը հանձն է առել ընդօրինակել բաղձալի մատյանը:

Բազմաթիվ հիշատակարաններ վկայում են, որ իր գործի վարպետ կամ հաճախ «քաջ քարտուղար» մականունը ստացած գրիչները լրջագույն ջանքեր են ներդրել, քրտինք թափել գրչութեան ընթացքում և ըմբռնել իրենց աշխատանքի կարևորութիւնը: Բնագրին հարազատ, սխալագերծ և օրինակելի մատյան գրչագրելը նրանց համար եղել է առաջնայինը: Ոմանք այդ նպատակի համար իրենց ձեռքի տակ եղած մատյանը համեմատել են մեկից ավելի ձեռագրերի հետ: Քաղվածաբար մեջբերում ենք բաբերդցի Ավագ գրչի այն արժեքավոր տեղեկութիւնը, որը հաստատում է ընդօրինակած ձեռագրի հանդեպ ունեցած իր քննական մոտեցումը.

«Յիշեսջիք զարժանատրն ամենայն բարեաց... զտէր Սահակ... զի շնորհեաց մեզ արիմակ ընտիր: Յիշեսջիք եւ զսրբասէր քահանայ զՍամուէլն..., որ ետ կրկին այլ արիմակ, որ ստոյգեցաք, եւ զԿարապետ քահանայն, որ միւս արիմակ այլ շնորհեաց, որ կոչի Մուրդանցի, քանզի յերկուց եւ յերից վկայից հաստատի ամենայն բան: Ջի յորժամ յաւարտումն հասաւ, եղաք զերիս ընդիր եւ անուանի Աւետարանքս եւ ստոյգեցաք, որ միմ շառաւեղաւք էին գրած» [Հիշ. ԺԴ, Ա, 185-186]:

Մյուս կողմից՝ հիշատակարանային տեղեկութիւնները վկայում են, որ եղել են նաև անբարեխիղճ և իրենց գործին իսկապես անհմուտ կամ անպատասխանատու գրիչներ, որոնք տրտմեցրել են պատվիրատուներին կամ համարվեստ ընկերներին:

րին: Այդ մասին է 1198 թ. Դավիթ գրչի հիշատակարանը, ուր վերջինս նշում է, որ ինքը ժամանակ չի ունեցել մատյանն արտագրելու և գործը վստահել է այլոց, որի հետևանքով սխալաշատ մի բնագիր է ստացվել. «...գի անպարապ եղեալ իմոյս անձին ի ժամանել եւ դրոշմել զսա, այլ եւ այլում տխմարաց ետու գծել եւ ապաշաւ ունիմ (զղջում է, ափսոսում – Խ. Հ.), թեպէտ եւ ուղղեցի յետոյ», – նշում է գրիչը [Հիշ. Ե-ԺԲ, 296]:

Գրիչների մասին կարելի է երկար խոսել. հարյուրավոր և հազարավոր հիշատակարաններ հաղորդում են ուշագրավ տեղեկութուններ մի կողմից նրանց կենցաղի, մարդկային ապրումների, հարաբերութունների ու բնավորութունների, իսկ մյուս կողմից՝ ձեռագրաստեղծման տեղանշան աշխատանքի վերաբերյալ: Առանձին դեպքերում գրավոր այս հուշարձանները հնարավորութուն են ընձեռում կազմելու հայ մատենագրության այդ անխոնջ մշակների կենսագրականներն իրենց ընտանիքի անդամներով, հարազատներով և ուսուցիչներով: Ակնհայտ է նաև, որ, չնայած դժվարին ու հաճախ ամիսներ տևող չարքաշ աշխատանքին, նրանք սրտաբաց են և կամեցող, չեն արգելում իրենց գրչագրած ձեռագրերն ուրիշներին տրամադրել՝ ուսանելու, ընդօրինակելու կամ կարգալու նպատակով: Դեռ ավելին, նշում են՝ «Գիրք փակեալ կուտք են»¹⁸⁸: Վարդան եպիսկոպոսն իր չափածո ընդարձակ հիշատակարանում ահա այսպիսի մաղթանք է հղում ընթերցողներին.

«Ծընահատր լինայ ձեզ՝ ընթերցողի,
Եւ բարով վայելէք ի ձերում սիջի,
Դուք բազում ժամանակ ապրիք ի լերկրի
Եւ սիրով ընթեռնուք ի մէջ աշխարհի»¹⁸⁹:

¹⁸⁸ Թորոս աղբար, մասն. Բ, էջ 245:

¹⁸⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի սնունսն Մատենադարանի, Խ. Թ., էջ 48:

5.6. ԾԱՂԿՈՂԻ ԱՆՎԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

«Աղայեան գիսնդիպեալքդ այսմ աստուածաբան տառիս յիշել զանիմաստ նկարողս՝ Մոմիկ, եւ սխալանաց աննեղատիր լինելք»
Մոմիկ, 1302 թ. [Հիշ. ԺԳ, Ա, 24]

Ծաղկված կամ մանրանկարված ձեռագրերի հիշատակարաններում սովորաբար առանձին նշվում է նաև նկարազարդողի անունը, եթե, իհարկե, գրիչը և ծաղկողը տարբեր անձինք են: Որպես կանոն՝ նրանք հիշատակվում են ծաղկող, նկարող, նկարագրող, ծաղկազարդող, պատկերագրիչ, նկարիչ, մեղանավոր և նման բառերով. «Եւ զիս՝ զանարժան եւ զնուստ եւ զվերջացեալ մեղաւք սարկաւա<ը>կս եւ պատկերագրիչս զՍարգիս... յիշեսցուք» [Հիշ. ԺԳ, 18], «Զսուտանուն ծաղկողս եւ զանարժան քահանայս զՅովանէս յիշեսցէ՛ք» [Հիշ. ԺԵ, Ա, 23], «ԶՄարտիրոս նկարիչ փցուն խորանացս յիշեսցէ՛ք ազաչեմ» [Հիշ. ԺԴ, Ա, 50], «ԶՄինաս նկարողս ի Տէր յիշեսցէ՛ք» [Հիշ. ԺԴ, Ա, 51], «Զնկարագրող զԹորոս յիշեա՛ ի Տէր Յիսուս» [Հիշ. ԺԴ, Ա, 321] և այլն:

1195 թ. Սաղմոսավանքի մերձակայքում գրչագրված ձեռագրի հիշատակարանում մեկ անգամ վկայված է նաև դեղիչ բառը «ծաղկող, նկարող» իմաստով¹⁹⁰. «ԶԽաչիկ պատուական քահանայս յիշեսցէ՛ք ի Տէր, որ առիթ եղեւ դեղելոյս, եւ գԳրիգոր՝ դեղիչ սորա» [Հիշ. Ե-ԺԲ, 283]:

Կարելի է վստահորեն նշել, որ գրչից հետո ձեռագրակերտման գործընթացի առանցքային մյուս դեմքը ծաղկողն է:

¹⁹⁰ Այս մասին տե՛ս Խ. Հարությունյան, *Դեղ արմատով քաղաղրված անձնանունները վիմագրերում և ձեռագրերի հիշատակարաններում*, «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2017 թ., նոյեմբերի 28-30)», «Արմավ» հրատ., Երևան, 2018, էջ 116:

Ծաղկողի առանձին հիշատակարանը սովորաբար սեղմ է, համառոտ, իսկ երբեմն էլ կարելի է տեսնել մանրանկարի կողքին, ստորին լուսանցքում կամ հենց դրա մեջ՝ կարճ հիշատակագրության տեսքով: «Տէր Աստուած, ողորմեա՛ Գրիգորի ծաղկողի. ամէն, ամէն», – կարդում ենք 1232 թ. ընդօրինակված Թարգմանչաց Ավետարանի նկարազարդված էջերից մեկում [Հիշ. ԺԳ, 181]: Մեկ ուրիշ հիշատակարանում ծաղկողը գրել է. «Ընդ նմին զԹափուրս ի բարեաց, զանպիտանս եւ զախմարս զՅովանիսիկս աղաչեմ յիշել ի Քրիստոս... եւ ծաղկիս անմեղադիր լինել, զի կար մեր այս էր» [Հիշ. ԺԳ, 219]: 1687 թ. Մկրտում Զուղայեցու ընդօրինակած ձեռագիրը նկարազարդել է Բարդամի որդի Միքայելը: Այդ մասին ծաղկողը նշել է Հակոբոս առաքյալի մանրանկարի ձախ լուսանցքում թողած իր հիշատակագրության մեջ. «Ձքաղուացքող պատկերացս զՄիքայել՝ որդի Բարդամ գրչի, յիշեցէ՛ք»¹⁹¹ (նկ. 20):

Երբեմն ծաղկողներն ընդարձակում են իրենց հիշատակարանները՝ նրանցում նշելով նաև իրենց հարազատների անունները, ինչպես օրինակ՝ Աստվածատուր ծաղկողը. «Աղաչեմ զձեզ յիշել աղաւթիւք զիս՝ զանարժան արեղայ Աստուածատուր, որ ծաղկեցի գսուրբ Աւետարանս, եւ զհանգուցեալ հայրն իմ՝ զԱտոմ, եւ զմայրն իմ՝ զՇաքար, եւ զեղբարսն իմ՝ զԹումարէկ եւ զՅոհաննէս, եւ զհանգուցեալ զքոյրն իմ՝ զՇահրման, եւ զհանիկն իմ՝ զԳօհար» [Հիշ. ԺԵ, Ա, 203]:

Հարկ է նկատել, որ ծաղկել բառի իմաստն ընդգրկուն է. այն կարող է ենթադրել ձեռագրի պարզ, համեստ զարդարումից (հիմնականում՝ լուսանցազարդերի և զարդագրերի տեսքով) մինչև գունառատ մանրանկարների հորինում: Ուստի՝ առանձին դեպքերում մատյանը նկարազարդողները նախընտրում են հատակեցնել իրենց կատարած աշխատանքը: Ահա ժէ. դարի արդյունաշատ գրիչներից Միքայել Թոխաթեցին իր գրչագրած մատյաններից մեկի բուսական լուսանցազարդի տակ դրոշմել է հետևյալ մակագրությունը. «Ծաղիկս Միքայելին է»¹⁹² (նկ. 21):

¹⁹¹ Խ. Հարությունյան, Միքայել անվանք ԺԷ. դարի երկու գրիչ, էջ 175-179:

¹⁹² Նշվ. աշխ., էջ 57:



Նկ. 21, Վիեննա,
Մխիթարյան
միաբանություն,
չ^մ 685, 15ա.
ծաղկողի նշումը

Նշանավոր մանրանկարիչ Թորոս Տարոնացին իր նկարազարդած ձեռագրերից մեկում այսպես է շեշտում. «Եւս եւ զանարժան Թորոս ի Տարօնոյ, [ի] քաղաքէ Մշոյ, եւ զծնողսն իւր յիշեցէ՛ք ի Տէր Յիսուս Քրիստոս, որ բազում աշխատեցաւ ի խորան, ի ծաղիկ, ի գլխագիր» [Հիշ. ԺԴ, Ա, 458]¹⁹³: Ներսէս անունով մեկ այլ հիշատակագիր ևս նշում է, որ ինքը գրել, ծաղկել և գլխագրել է ձեռագիրը. «...գի յետոյ շատ աշխատութիւն ընկալ վերստին գրել եւ ծաղկել եւ գլխագրել վասն Աստուծոյ սիրոյն, որպէս ունիք տեսանել» [Հիշ. ԺԴ, Ա, 83]: Բազմաշնորհ Սարգիս Պիծակն իր հիշատակարանում արձանագրել է հետեյալը. «Զի յոյժ աշխատեցայ ի յուկելն եւ ի ծաղկելն, ի համաբարբառն, ի յաւետարանչեռն եւ ի խորնին, նայել ի գլխագրելն, գի յոյժ բազում է» [Հիշ. ԺԴ, Ա, 504, ընդգծումները մերն են – Ն. Հ.]:

Հայտնի է, որ բազմաթիվ գրիչներ միևնույն ժամանակ ծաղկել են իրենց կամ այլ գրիչների ընդօրինակած մատյանները՝ առաջինի դեպքում հանդես գալով գրչի և ծաղկողի, իսկ երկրորդում՝ միայն ծաղկողի դերում: Հայերեն ձեռագրերի հիշատակա-

¹⁹³ Ըստ ամենայնի՝ նույն Թորոսն է նաև տվյալ ձեռագրի գրիչը, թեև ստացողի հիշատակարանում նշված չէ, և միայն սեղմ հիշատակագրություններն են այդ մասին հուշում. «Չապիկար գրիչ Թորոս յիշեա՛ր ի Տէր Յիսուս Քրիստոս»: ԺԴ. դարի հիշատակարանների առաջին հրատարակության մէջ այս հատվածը բացակայում է [Հիշ. ԺԴ, 283], այն լրացվել է նոր հրատարակությամբ, որի հիման վրա ձեռագրի ընդօրինակությունը ևս Թորոս Տարոնացուն է վերագրվել: Այդ մասին տեղեկացնում է հատորի հրատարակիչը [Հիշ. ԺԴ, Ա, 458]:

րանները լի են միաժամանակ գրիչ և ծաղկողների մասին նշումներով: Բավական է նշել, որ Ն. Պողարյանի կազմած և արդեն հիշատակված «Հայ նկարողներ» արժեքավոր աշխատություն¹⁹⁴ մեջ նշված անուններից շատերը (Հովհաննես Սանդղկավանցի, Գրիգոր Մլիճեցի, Թորոս Ռոսլին, Մոմիկ, Սարգիս Պիծակ, Հովհաննես Խիզանցի, ավելի նոր շրջանում՝ Ժէ-ԺԸ. դարերում՝ Մեսրոպ Խիզանցի, Միքայել Բարդամի կամ Սեբաստացի, Խաչատուր Սպահանցի և շատ ուրիշներ) զբաղվել են նաև գրչությամբ: Որոշ դեպքերում էլ գրիչները պարզապես հարկ չեն համարել արձանագրել միևնույն ձեռագրի նաև ծաղկողը լինելու հանգամանքը, Ա. Մաթևոսյանի ղիտարկմամբ՝ «բնականորեն այդ համարելով գրչի գործի մի մասը»¹⁹⁵:

Գրիչների նման ծաղկողները ևս իրենց սեղմ հիշատակարաններում հայցում են մեղքերի թողություն, ներողություն են խնդրում սխալ կամ տգեղ նկարազարդման համար: Ծաղկողի անվանը ևս շատ հաճախ ուղեկցում են ինքնախարազանող, սեփական անձը նվաստացնող բառեր՝ սուտանուն, փցուն, ապիկար, անարժան և այլն: Սարգիս Պիծակի հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Մ՛հ զմեղաւոր հողս եւ անարժան սուտանուն քահանայ՝ զՍարգիս... որ ծաղկով եւ ոսկով զարդարեցի զսայ, աղաչեմ յիշել ի Տէր» [Հիշ. ԺԴ, Ա, 430]: Նշանավոր ճարտարապետ Մոմիկն իրեն անվանում է «անիմաստ նկարող» և սխալների համար ներողամտություն է հայցում [Հիշ. ԺԴ, Ա, 24]:

Հատկանշական է նաև, որ այս գործի վարպետները՝ գրիչ թե ծաղկող, կոչվել են հռետոր կամ քաջ յարուեստս¹⁹⁶, իսկ կիլիկյան նշանավոր մանրանկարիչ Թորոս Ռոսլինը հիշված է անգամ

¹⁹⁴ Տե՛ս ծնթ. 181:

¹⁹⁵ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, էջ 61: Կ. Մաթևոսյան, Հայ մանրանկարիչների յիշատակարանները (Ժ-ԺԵ դդ.), «Սիոն», 1997 (7-12), էջ 313:

¹⁹⁶ Արտաշես Մաթևոսյանն այսպես է գրում. «Ի միջի այլոց այսպիսի դեպքերում «հռետոր» բառը ոչ թե նարտարախոս, ճառախոս է նշանակում, այլ նարտարագիծ, գրչության նշանավոր վարպետ», տե՛ս Ա. Մաթևոսյան, Ե՛րբ և որտե՛ղ է գրվել Մշո Տոնական-Ճատրնոսիրը, էջ 156:

«փրկիստփայ» ձևով [Հիշ. ԺԳ, 758]: Որպես կանոն՝ այդ պատվանուններին վարպետներն արժանանում էին իրենց աշակերտների, պատվիրատուների կամ հետագա գրիչ-ծաղկողների կողմից: Գրիչը գրիչն այդպես է կոչում իրենից առաջ մատյանի օրինակումը սկսած, բայց մահվան պատճառով այն կիսատ թողած գրիչ-ծաղկողին, որի աշխատանքն ինքն է ավարտին հասցրել. «Եւ որովհետեւ հոետոր էր ի յարուեստս, որ եւ յառաջին գլուխդ տեսանի: Շինել էր զԴ. (4) խորանան, Դ. (4) աւետարանչաւքն եւ փոխեալ ի Քրիստոս, որ եւ նմա ողորմեսցի» [Հիշ. ԺԴ, Ա, 194]: Մարգարե գրիչն իր ուսուցիչ Մարտիրոս Խիզանցուն անվանում է «քաջ նկարող եւ պարծանք Հայաստանեայց աշխարհին»¹⁹⁷: Գրիչ և ծաղկող Սարգիս քահանան խնդրում է հիշել Ավետարանը ծաղկելու գործում իրեն օգնած տեր Խաչատուրին, որին վարպետ է կոչում՝ գրելով. «տէր Խաչատուր վարպետին, որ մէկ ամիս աւգնական եղեւ ի ծաղկել Աւետարանիս» [Հիշ. ԺԷ, Ա, 148]: Վարպետի և ուսուցչի դերը մշտապես շեշտվում է հիշատակարաններում, իսկ երբեմն էլ ծաղկողները կամ գրիչները խոստովանում են, որ ուսուցիչ չեն ունեցել և ստիպված ինքնուրույն են սովորել: ԺԴ. դարի մի հիշատակարանում ծաղկողը նշում է, որ առանց վարպետի է ծաղկել սովորել, ինքնուս է, ուստի՝ թողություն է հայցում սխալների համար. «Եւ անմեղադիր լերուք խոշորութեան եւ անարհեստութեան ծաղկիս, զի անվարպետ էի, այլ զայս չափս ի շնորհացն Աստուծոյ արարի» [Հիշ. ԺԴ, 650]: Ստեփանոս գրիչն էլ այսպես է բանաձևում. «Առանց վարպետի արուեստն ի գլուխ ոչ ելանէ» [Հիշ. ԺԷ, Ա, 518]:

Հմուտ և բարեխիղճ ծաղկող գտնելը հաճախ դժվարություններ է հարուցել, որոնց մասին տեղեկանում ենք հիմնականում պատվիրատու-ստացողների հիշատակարաններից: Ինչպես երևում է այդ նույն աղբյուրներից՝ անպարտաճանաչ աշխատողները և հաճախ մեծ գին պահանջողները քիչ չեն եղել նաև ծաղկողների շրջանում, ճիշտ այնպես, ինչպես որ այդ տեսանք

¹⁹⁷ A. Sirinian, *Un Innario armeno (Տարակոց') dell'anno 1580 al Pontificio collegio armeno di Roma*, "Rivista di Storia della Miniatura" 13 (2009), p. 193.

գրիչները պարագայում: Այս դիտանկյունից բավարարվենք մեզ հանդիպած ամենահետաքրքիր մի օրինակի հիշատակումով, որն առնչվում է պոլսեցի նշանավոր ծաղկող և մանրանկարիչ, տասնյակ ձեռագրեր նկարազարդած Մարկոս Պատկերահանին¹⁹⁸: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի ձեռագրական հավաքածուի Հ^մ 2561 Աստվածաշունչ մատյանի պատվիրատու Մարտիրոս վարդապետ Ղրիմեցին իր ընդարձակ և հետաքրքիր հիշատակարանում նշում է, որ ձեռագրի ընդօրինակումը տևել է 16 տարի: Այն մեկնարկել է 1654 թ. և ավարտվել միայն 1670 թ.: Պատճառը գրիչների երիցս փոփոխությունն է եղել և ծաղկողը: Սակայն եթե գրչափոխությունն այս դեպքում պայմանավորված էր առաջին (Մելիտոն) և երկրորդ (Եղիա) գրիչների մահով, որոնց հաջորդել էր Ազարիա գրիչը՝ «ճարտար յարուեստն եւ ոչ ի վարս», ապա ծաղկող Մարկոսի նկատմամբ Մարտիրոս վարդապետը չի թաքցնում իր ակնհայտ դժգոհությունը.

«Իսկ անարող սորիմ, զարմանալի եւ անհաս արհեստաւորն Մարկոս, որ էր նոյն քաղաքէն Կոստանդնուպօլսոյ, բայց յոյժ ստասաց եւ խաբուսիկ, եւ իբրեւ անյագ տգրուկ եկեր զամենայն զկեսան իմ... զի կարի ձանձրացոյց զիս վերոյ գրեալ անյագն Մարկոս՝ անցեալ զչափ ու զհամար որ քանութեանն ծախուց, թողում ասել զվշտակրութիւնս վեշտասան ամաց ժամանակի. որոց ամենեցուն թողցէ Տէր զսղալանս, զոր ինչ մեղան ի սմա յագահելով յինչս իմ՝ գրիչքն եւ ծաղկողն»¹⁹⁹:

Արժանին պետք է մատուցել նաև Մարտիրոս վարդապետին, քանի որ չնայած մատյանի գրչության և ծաղկման տասնվե-

¹⁹⁸ **T. Greenwood**, *An Unpublished Seventeenth-Century Armenian Psalter, a Constantinopolitan Scriptorium and Markos Patkerahan*, “Revue des études Arméniennes”, 29, 2003-2004, pp. 323-382. Տե՛ս նաև **Ծ. Ս. Համբարյան**, *Մարկոս Պատկերահանը և Մատենադարանի N 1502 Հայրմատյանի պատկերազարդումները*, «ԼԷՄ համահայկական հանդես», 2018 (1), էջ 149-165:

¹⁹⁹ *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց*, հ. ԺԱ., կազմեց **Ն. արքեպ. Պողարեան**, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1991, էջ 373: Ծնորհակալ ենք արվեստարան Ծուշան Համբարյանին սույն օրինակի վրա մեր ուշադրությունը հրավիրելու համար:

ցամյա ողբսականին՝ նա բարձր է գնահատել Մարկոս Պատկերահանի արվեստը՝ անվանելով նրան «գարմանալի եւ անհասարհեստաւոր»:

Գրավոր այս աղբյուրների վկայությամբ՝ առանձին ծաղկողների համբավը կարող էր տարածվել նրանց բնակավայրերից դուրս, և վերջիններս աշակերտներ, առավել ևս մատյաններ ծաղկելու պատվերներ կարող էին ընդունել տարբեր վայրերից: Հետաքրքիր է, որ վերջինի պարագայում երբեմն զգալի հեռավորութունն անգամ չի կաշկանդել պատվիրատուներին: Եզակի չեն այս մասին արձանագրումները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: Ստորև նշվող օրինակը դրանցից մեկն է միայն: Ժէ. դարի հայտնի գրիչ և ծաղկող, ձեռագրաստեղծման ակտիվ գործունեությամբ Սեբաստիայում և Եվդոկիայում աչքի ընկած Միքայելը, որին առանձին անդրադառնալու առիթ ենք ունեցել²⁰⁰, 1700 թ. ծաղկել է մեկ այլ հայտնի գրիչ Գրիգոր Երևանցու ընդօրինակած Հայսմավուրքը, որը ծաղկման նպատակով էջմիածնից Եվդոկիա էր առաքվել Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Ա. Եղեսացու (1691-1705 թթ.) պատվերով: Ինչպես տեղեկացնում է Միքայելը, մատյանն ուղեկցում էին վերակացուներ, որոնք ծաղկումից հետո այն պետք է տանեին Երուսաղեմ²⁰¹:

Առանձնանշելի է, որ գրչարվեստի հայ մշակները շատ հաճախ չեն սահմանափակվել միայն գրչությամբ և ծաղկումով: Նրանցից շատերը հիշատակվում են նաև իբրև ձեռագիր կապողներ կամ կազմողներ: Ձեռագրի կազմումն, իհարկե, առանձին արհեստ էր, և հայերեն հիշատակարաններում կազմողների մասին նույնպես կան համապատասխան նշումներ²⁰², սակայն

²⁰⁰ **Խ. Հարությունյան**, *Միքայել անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, էջ 96-227: Տե՛ս նաև **Խ. Յարությունեան**, *Մինաս Ամդեցու մի եզակի դիմանկարի մասին*, «Սիոն», 2017 (1), էջ 54-60:

²⁰¹ **Խ. Հարությունյան**, *Միքայել անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, էջ 209-217:

²⁰² Օրինակ՝ ԺԳ. և ԺԴ. դարերի մի շարք հիշատակարաններում գրանցված բազմաթիվ կազմողների շարքում առանձնանում են *Առաքել Հնազանդենց* և *Հակոբ Մեծպարոնենց* կազմարարները, որոնց անունները հաճախ են պատահում տարբեր գրչագրերում: Ահա մի քանի հիշատակումների նմուշներ՝ *Առաքել Հնազանդենց* [Հիշ. ԺԳ, 297, 301, 316, 487 և այլն], *Հա-*

ինչպես այդ նույն գրավոր հուշարձաններն են փաստում, ոմանք միաժամանակ տիրապետել են ձեռագրաստեղծման մի շարք արհեստների: ԺԴ. դարի վասպուրականյան դպրոցի հայտնի գրիչ և ծաղկող Հովսիանն իրեն հիշատակում է նաև որպես կազմող. «Գրեցաւ սուրբ Աւետարանս... ձեռամբ յոգնամեղ եւ անարժան գրչի՝ Յովսիան նուաստի եւ նկարողի եւ կազմողի» [Հիշ. ԺԴ, Ա, 145]: Սուքիաս անունով ծաղկողն էլ գրում է. «Զսակաւ աշխատողս սորայ, որ ի ծաղիկ եւ ի գլխագիր եւ ի կազմել աշխատեցայ, զՍուքիաս աղաչեմ յիշել ի Տէր» [Հիշ. ԺԳ, 539]: 1428 թ. Կաֆայում Շարակնոցի ընդօրինակողն այսպես է հիշատակագրել. «Նաեւ... անարժան գրիչս, ծաղկողս եւ կազմողս՝ զՔրիստոսատուր» [Հիշ. ԺԵ, Ա, 313]: Նույն գրչի մեկ այլ հիշատակարանում էլ կարդում ենք. «Նա եւ եթէ արժանի համարիք զանարժան գծաւղս, զծաղկաւղս եւ զկապաւղս՝ զՔրիստոսատուր...» [Հիշ. ԺԵ, Ա, 245, ընդգծումները մերն են – Խ. Հ.]:

5.7. ՊԱՏՎԻՐԱՏՈՒ-ՍՏԱՅՈՂԻ ԱՆՎԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

*«Արդ, յայս բարեաց տեսակացս եւ ի հոգևոր
գործոցս է եւ գիրք ստանալն»
Ախարոն ստացող, 1296 թ. [Հիշ. ԺԳ, 783]*

Անձնական գործածության նպատակով գրիչների ընդօրինակած մատյաններից բացի՝ հիմնականում հենց պատվիրատու-ստացողների մեկենասությամբ, հորդորով, «ի խնդրոյ» և «հրամանաւ» է ընդօրինակվել և ծաղկվել մեզ հասած տասնյակ հազարավոր ձեռագիր մատյանների մեծագույն մասը: Բազմաթիվ հիշատակարաններից տեղեկանում ենք, որ ստացողները շատ

կոթ Մեծպարոնենց [Հիշ. ԺԴ, Ա, 133, 164, 165, 224 և այլն]: ԺԵ. և հետագա դարերում նույնպես կան այքի ընկնող կազմարարներ: Նրանցից ոմանք ունեին նաև իրենց վարպետանշանները: Վստահ ենք, որ հայ կազմարարության առանձին օջախների ուսումնասիրության շնորհիվ առաջիկայում նոր անուններ են բացահայտվելու:

հաճախ եղել են նաև գրչին օգնողը, քաջալերողը, վստահու-
թյուն ներշնչողը, «բանիւ» մխիթարողն ու գումարով սատարո-
ղը, ըստ այսմ՝ վերջիններիս իրավամբ կարելի է անվանել գրչու-
թյան հովանավորներ՝ բառի ողջ ընդգրկմամբ: «Գրեցաւ սա
հրամանաւ եւ ծախիւ խոճա Յովսէփին, յիշատակ հոգոյ իւրոյ եւ
ծնողացն իւրոց»,– գրում է Պողոս գրիչն իր հիշատակարանում
[Հիշ. ԺԵ, Բ, 438], «Գրեցաւ սա ձեռամբ մեղսաներկ եւ եռա-
թշուառ անձին՝ Մուրատի, ի խնդրոյ սրբասէր եւ հեղահոգի քա-
հանային՝ տէր Աստուածատուրի»,– կարգում ենք մեկ այլ հիշա-
տակարանում [Հիշ. ԺԷ, Գ, 82]: Հովհաննես քահանայի հիշա-
տակարանից էլ տեղեկանում ենք, որ Ավետարանի պատվիրա-
տու Թամամխաթունը գումարով աջակցել է նաև ձեռագրի թղթի
գնմանը, կապելուն և ծաղկելուն. «Աւարտեցաւ ի յամսեանն ի
Մահեկի ԻԳ. (23), յաւուր երկուշաբթի, ի միջաւրէի, հրամանաւ
եւ ձեռնառուեալմբ Թամամխաթունին, որ աւգնական եղեւ ի գինս
թղթոյն ու ի կապելն ու ի ծաղկելն» [Հիշ. ԺԴ, Ա, 236, ընդ-
գծումները մերն են – Խ. Հ.]:

Այսպիսով՝ աներկբա կարող ենք ասել, որ նաև պատվիրա-
տուների ջանքերի, ճաշակի (նկատի ունենք ձեռագրի չափը,
տառաձևերը, ծաղկումը, կազմումը) և ներդրած միջոցների ար-
գասիքն են մատյանները: Բավական է հիշատակել Աստվածա-
տուր Բաբերդցուն, որը ոչ մի միջոց չի խնայել Մշո նշանավոր
Տոնականը պատվիրելու հարցում: Մշո Առաքելոց վանքում
գրված հիշատակարանի վկայութեամբ պատրոն Աստվածատուրը
գրիչ է փնտրել իր փափագը կյանքի կոչելու համար և գտել է
Վարդան անունով քահանային. «Եւ ապա խնդիր արարեալ յոգ-
նախմաստ գրչի եւ գտեալ քահանայ մի ի գաւառէն Կարնայ,
որումն Վարդան կոչեցեալ» [Հիշ. ԺԳ, 44]: ԺԴ. դարի մի հիշա-
տակարանից էլ տեղեկանում ենք, որ ընդօրինակման ընթաց-
քում ստացողի պահանջով գրիչը փոխել է տառերի չափը, սկսել
է ավելի մեծ բոլորգրով ընդօրինակել. «Գրոյս տէրոջն հրամա-
նաւ մեծցուցի գգիրս» [Հիշ. ԺԴ, Ա, 309]:

Ստացողների անունների արձանագրումը հիշատակարաննե-
րում, ըստ էութեան, առանցքային տեղ և նշանակութուն ունի,

և գրիչների ջերմ ու պերճախոս տողերը՝ հասցեագրված վերջիններիս, արժևորում են նրանց դերը մատյանի ստեղծման գործում. «Գրեցաւ... ձեռամբ իմով Բասլի սարկաւազի՝ նորակերտ եւ դեռաբոյս, ոչ համարեալ ի գրչութեան, ի խնդրոյ եւ հրամանաւ քրիստոսասէր եւ ամենիմաստ, ամենագով եւ ամենաւրհնեալ, եւ ամենաբարի եւ բարեպաշտ իշխանի եւ իշխողի մերոյ եւ պարծանաց պարոնի Միխայլի», – գրում է Բասիլ գրիչը 1201 թ. իր հիշատակարանում [Հիշ. ԺԳ, 24]: Մեկ այլ հիշատակարանում էլ կարդում ենք. «Արդ, գրեցաւ Մեկնիչ պատարագիս... ի թուին ՉԾԵ. (1306), ի խնդրոյ վարդին վարդապետաց եւ ճգնաւորի ի վեր քան զկար մարմնոյ տանելով ի յանձին ուրախ զխաչն Քրիստոսի, որպէս ծաղիկ շուշանաց հովտաց, որոյ անունն Յոհաննէս յորջորջի եւ ընկերակիցք իւր» [Հիշ. ԺԴ, Ա, 109]: Ներսես գրիչն էլ այսպէս է հիշատակում ստացողին. «Ի խնդրոյ սրբասնունդ եւ արի եւ երջանիկ, հանճարեղի եւ ամենայն իմաստասիրութեամբ զարգարեալ շնորհալից քահանայի Տէրտէրի» [Հիշ. ԺԴ, Ա, 459]:

Հայերեն ձեռագրերի հիշատակարանները հարուստ են ստացողների, նրանց արյունակցական և հոգևոր ընտանիքների մասին հիշատակումներով, որոնց շնորհիվ հիմնականում հնարավոր է պարզել, թե ովքեր էին ստացողները, ինչպիսին էր նրանց ընտանեկան կազմը և հատկապէս, հասարակական ինչ շերտեր էին ներկայացնում նրանք: Աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ ձեռագրերի պատվիրատուների թվում էին հասարակության ամենատարբեր խավերի և զբաղմունքի տեր անձինք՝ հողագործներ, արհեստավորներ, վաճառականներ, զինվորներ, կրոնավորներ, աշխարհիկ և հոգևոր առաջնորդներ: Ահա օրինակ՝ 1046 թ. ընդօրինակված մատյանը ստացել է Պետրոս Ա. Գետադարձ կաթողիկոսը (1019-1058 թթ). «Ես՝ տէր Պետրոս, շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթողիկոս... ստացա զստացուածս ի նշանաւոր եւ ճշգրիտ գաղափարէ» [Հիշ. Ե-ԺԲ, 93]: 1204 թ. գրչագրված ձեռագրի ստացողն է Զաւրավար ոսկեգործը. «Յիշեա՛ ողորմութեամբ քո զստացող մատենիս զԶաւրավար պատուական ոսկեգործն» [Հիշ. ԺԳ, 41]: 1319 թ. Ժամագրքի պատ-

վիրատունն է Հայոց Օշին թագավորը (1308-1320 թթ.). «Զստացող երգոյս գԱւշին արքայ յիշեցէ՛ք» [Հիշ. ԺԴ, Ա, 383]: Մեկ այլ գրչագիր գնել և գերությունից ազատել է Խնդուբէկ դերձակը. «Եւ արդ, ես՝ Խնդուբէկ դերձակս, ի յՈստան քաղաքի գնեցի ի քրդու, զի էր գերի բերած» [Հիշ. ԺԴ, Ա, 381]: 1323 թ. Ճաշոց է գնել Տուրքիկ վաճառականը. «Յիշեսջիք ի սուրբ եւ ի մաքուր յաղաւթս ձեր զհաւատարիմ ծառայն Աստուծոյ՝ զՏուրքիկ զի մաստուն վաճառականն» [Հիշ. ԺԴ, Ա, 460]: 1451 թ. էլ Գանձարան է ստացել Սուքիաս քահանան. «Յիշեցէ՛ք ի Քրիստոս զստացող սուրբ գրոցս զՍուքիաս քահանայն» [Հիշ. ԺԵ, Բ, 8]:

Անհատներից բացի՝ առանձին դեպքերում ձեռագրի պատվիրատու-ստացողի կամ զնորդի դերում հանդես են գալիս մի խումբ մարդիկ կամ մի ողջ ընտանիք, որոնք միասնաբար են հիշատակվում. «Եւ ես էտիլչէհս եւ Գ. (3) որդիքս իմ՝ Խուտագատն, Ալահգատն եւ Շահպարոն, միաբանեցաք մեծաւ յուսով եւ փափագանաւք եւ յաւժարութեամբ սրտի գրել տվաք զայս սուրբ գիրքս» [Հիշ. ԺԵ, Գ, 169]: ԺԷ. դարի հիշատակարաններից մեկում էլ մի խումբ մարդիկ նշում են, որ միասնաբար գնել են ձեռագիրը և նվիրել Մկրտիչ քահանային [Հիշ. ԺԷ, Ա, 352]: Իսկ երբեմն էլ մի ամբողջ գյուղ կարող է ստացող հիշատակվել²⁰³:

Ձեռագիր գնելը, պատվիրելը և ստանալը դիտվել է հիշատակման արժանի բարի և հոգևոր գործ: 1296 թ. մի հիշատակարանում մատյանի ստացող Ահարոնն այսպես է մեկնում.

«Արդ, յայս բարեաց տեսակացս եւ ի հոգեւոր գործոցս է եւ գիրք ստանալն: Զի թէ ոք արուեստի գրչութեանն հմուտ իցէ, ինքն աշխատի եւ գրէ, եւ թէ ոչ, նա այլոց տալ գրել, եւ կամ գրած գնէ, զի որք ընթեռնոյն, յիշեմ աղաթիւք առաջի Աստուծոյ եւ ստացողի գրոցն մեղաց թողութիւն խնդրեմ» [Հիշ. ԺԳ, 783]:

²⁰³ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, էջ 74:

Ձեռագրի փրկագնման առիթով շատ հետաքրքիր հիշատակարան է թողել Համազասպ երեցը: Վերջինս թվարկում է աստվածահաճո որոշ գործեր, ապա դրանց շարքին դասում նաև ձեռագրերի ազատումն ու փրկագնումը, ուստի և՛ շնորհակալական խոսք է ուղղում Ավետարանը գերությունից ազատած և այն իր տեղը վերադարձրած խոջա Մուրատին: Մեջբերում ենք նրա հիշատակարանից մի հատված.

«Բազմադիմի են շնորհք մարդասիրին Աստուծոյ առ ազգս մարդկան, որով յաւժարական մարդիք ի խնամս բարեգործութեան, յաղակս փրկութեան հոգոց իւրեանց, զի ոմանք շինեն եկեղեցի՝ տուն Աստուծոյ, եւ ոմանք կանգնեն խաչս՝ յանուն խաչելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է բարեխաւս առաջի ահեղ ատենին Քրիստոսի, եւ ոմանք կարողանան գրել գիրս առաքելոց եւ ի մարգարէից, մայ եւ զտէրունական հրամանքն, որ է Աւետարան, զի ոմանք գերի ազատեն յանուն ազատողի Քրիստոսի, որ ազատեաց զԱդամ ի ձեռաց սատանայի: Վասն որոյ եւ յաւժարեցաւ բարեխաւս եւ բարեզաւակ խաւջա Մուրատս եւ ազատեաց ըզուորք Աւետարանս ի գերութենէ եւ վերստին առաքեաց ի տեղի իւր»²⁰⁴:

Գնված, փրկագնված, պատվիրված, միով բանիվ՝ ստացած մատյանի շնորհիվ պատվիրատուն ակնկալել է մեղքերի թողություն և հոգու փրկություն: Եվ եթե գրչի կամ ծաղկողի պարագայում ավարտին հասցված ձեռագիրը նրանց աշխատանքի վերջնադրույունքն է, նրանց վաստակը, ապա ստացողի պարագայում այդ վաստակն այն գումարն է կամ գումարի մի մասը, որը նա վճարում է մատյանի ձեռքբերման համար: Շատ կարևոր է, որ ձեռագրի համար վճարված գումարը լինի սեփական քրտինքով և արդար ճանապարհով վաստակած, որով բարի և հոգևոր

²⁰⁴ **Մ. վրդ. Մաքսուտեան**, *Նկարագրություն և յիշատակարանը ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ազուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց*, «Արարատ», 1911 (3), էջ 218:

այդ գործն արդարև արժանի կլինի հիշատակման և կենաց մատ-
յանում գրանցման: Ա. Մաթևոսյանի վկայակոչած մի ուշագրավ
հիշատակարանում նշվում է, որ ձեռագիրը գնվել է՝ դրա համար
վճարվելով անգամ հացի համար նախատեսված գումարը²⁰⁵:

Կորնթացիներին ուղղված Պողոս առաքյալի առաջին թղթում
կարդում ենք. «Վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեսուն»
(Կորնթ. Ա., ԺԵ. 58): Աստվածաշնչյան այս տողերն, անկասկած,
քաջահայտ են եղել նաև ստացողներին, և սրանով են պայմա-
նավորված բանաձևային արժեք ստացած ի հալլալ ընչից կամ
յարդար վաստակոց և նմանատիպ արտահայտությունները,
որոնք սովորաբար անպակաս են ստացողների կամ նրանց փո-
խարեն գրիչների շարագրած հիշատակարաններից, ինչպես՝
«Ստացայ զսուրբ Աւետարանս զայս ի հալլալ ընչից իմոց» [Հիշ.
ԺԳ, 685], «Եւ ես ետու գրել զսա յարդար վաստակոց իմոց»
[Հիշ. ԺԴ, Ա, 463], «Յիշեսջիք... զհեզահոգին՝ զմիայնակեացն
Եւատ, որ ստացաւ զսա ի հալլալ արդեանց վաստակի քրտանց
իւրոց» [Հիշ. ԺԵ, Ա, 135], «Եւ գնեցի զսա ի հալլալ վաստակոց
իմոց, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ հօրեղբօրն իմում՝ տէր
Զաքէոսի» [Հիշ. ԺԵ, Ա, 256], «Ստացաւ զսա փափագանաւք եւ
ի հալլալ եւ ի քրտնաշան վաստակոց իւրոց» [Հիշ. ԺԵ, Ա, 533,
ընդգծումները մերն են – Խ. Հ.]:

Ահա այս կաղապարային բառակապակցության մի քանի
տարբերակ ևս, որոնք հաճախադեպ են հայերեն ձեռագրերի հի-
շատակարաններում և մաս են կազմում ձեռագրի ստացմանը
կամ գնմանը վերաբերող հատվածի՝

- ա. «ի հալլալ արդեանց» [Հիշ. ԺԳ, 475, ԺԴ, 328, ԺԵ, Ա,
47],
- բ. «ի հալլալ եւ արդար գոյից» [Հիշ. ԺԵ, Ա, 25],
- գ. «ի հալլալ վաստակոց» [Հիշ. ԺԳ, 691, ԺԵ, Ա, 40, 44],
- դ. «յարդար վաստակոց» [Հիշ. ԺԳ, 61],

²⁰⁵ Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան
հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, էջ 75:

- ե. «ի հալալ եւ յարդար վաստակոց» [Հիշ. ԺԳ, 735, ԺԴ, 408, ԺԵ, Ա, 97, 294],
- զ. «ի հալալ ընչից» [Հիշ. ԺԳ, 357, ԺԴ, 349, ԺԵ, Ա, 48, 50, 303],
- է. «յարդար ընչից» [Հիշ. ԺԴ, Ա, 16],
- ը. «ի հալալ եւ յարդար ընչից» [Հիշ. ԺԵ, Ա, 125]²⁰⁶:

Որպես կանոն՝ ստացողները խնդրում են հիշել իրենց, իրենց արյունակից և հոգևոր ընտանիքների անդամներին: Հիշատակման արժանի առնելու այս թախանձանքը զգալի տարբերություն չունի գրչի նույնաբովանդակ կաղապարից: Առանձնանշելի է միայն մեկ հանգամանք. եթե ստացողն անձամբ է մատուցում թողնում հիշատակարան, ապա նա նույնպես իրեն համարում է անարժան, մեղքերի մեջ թաթախված, ստոր, ինչպես որ տեսնում ենք գրիչների հիշատակարաններում: Մինչդեռ եթե ստացողի մասին նշում կամ նրա անունից հիշատակարան է շարադրում գրիչը, ապա ճիշտ հակառակն է՝ ստացողը ներկայանում է որպես արժանավոր, պատվական, սրբասեր, բարեպաշտ, հավատացյալ անձնավորություն:

Ահա մի օրինակ. 1460 թ. Ստեփանոս ստացողը հյուսել է սեփական անձը խոնարհեցնող չափածո հանգավոր մի ամբողջ բանաստեղծություն, որից մեջբերում ենք մի հատված միայն.

«Որ զձեռն ունիս միակեցի
 Եւ ի գործոցն եմ խիստ հետի,
 Զսրբութիւնն ես ատեցի,
 Զաղտեղութիւնն սիրեցի,
 Ի յաղօթից ես ծոյլ կացի,
 Եւ քնով մեղացն դանդաղեցի,
 Զպահքն եւ զաղաւթն ես ատեցի» [Հիշ. ԺԵ, Բ, 136]:

²⁰⁶ Տե՛ս նաև **A. Sirinian**, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, pp. 77, 82.

Իսկ ահա ստորև նշվող հիշատակարաններում գրիչներն են ստացողների մասին գրում.

«Արդ, գրեցաւ ձեռամբ մեղապարտ եւ անարժան եւ մականուն կրանաւորի, ի խնդրո սրբասէր եւ պատուական քահանայի Աբրահամս» [Հիշ. ԺԳ, 609]: «Ստացաւ զաա բարեպաշտ եւ աստուածասէր Տիկնաց տիկին» [Հիշ. ԺԳ, 662]: «Յիշեսջիք ի Քրիստոս զբարէմիտ եւ զբարէգործ, քրտնաջան, աշխատասէր հողագործն, զիմաստուն եւ զհանձարեղ քրիստոնէին՝ զպարոն Յոհանէսն, որ ստացաւ զսուրբ Աւետարանս ի հալալ արդէանց իւրոց» [Հիշ. ԺԵ, Ա, 588]:

Ժամանակի ընթացքում մատյանները ձեռքից ձեռք են անցել, ստացողից ստացող, գնվել ու փրկագնվել են, և այդ ամենի մասին շատ հաճախ տեղեկացնում են հենց հիշատակարանները: Այստեղից էլ առանձին հետաքրքրութուն ունի այն հարցը, թե ինչ եղանակներով էին ձեռք բերվում մատյանները գրչության պահին կամ դրանից հետո, մանավանդ որ ստացողները սովորաբար նշել են ձեռքբերման ուղիների մասին: Գրչության ժամանակի և հետագա ստացողների վկայութունների համաձայն՝ ստորև փորձել ենք միախմբել մատյաններ ձեռք բերելու, ստանալու մեզ հանդիպած հիմնական եղանակները՝

ա. ստացողն անձամբ է գրչին պատվիրել ձեռագրի ընդօրինակումը և ստացել,

բ. ստացողը պարզապես հանդիպել և վերցրել կամ վաճառողից է գնել մատյանը գրչութունից հետո՝ առանց գրչին ճանաչելու,

գ. ստացողը մատյանը գնել է միջնորդի օգնությամբ կամ հորդորով,

դ. ստացողը փրկագնել է առևանգված կամ ինչպես հիշատակարաններն են նշում՝ «գերի տարված» մատյանը,

ե. ստացողն այն ժառանգել կամ նվեր է ստացել:

Հայերեն հիշատակարաններում առավել հաճախ են գրիչներին մատյաններ պատվիրելու մասին վկայութունները: Սա ենթադրում է պատվիրատու-գրիչ ուղիղ (կամ միջնորդավորված)

Հարաբերութիւն, երբ գրիչն անձամբ ճանաչում է պատվիրատուին, նրա մասին նշում իր հիշատակարանում՝ որպէս կանոն պերճախոս ոճով: Մյուս կողմից՝ ստացողների հիշատակարաններում էլ նշվում են գրիչների անունները: «Ես՝ Թամար, ըստացա գտուրբ Աւետարանս ի Բարսեղ իրիցուն, որ իւր ձեռամբն [գրեա՞ց] եւ ինձ վաճառեց: Եւ ես գնեցի սա», – կարդում ենք 1301 թ. մի հիշատակարանում [Հիշ. ԺԴ, Ա, 16]: 1307 թ. Մխիթար գրիչն այսպէս է հիշատակագրել իր ընդօրինակած և վաճառած մատյանի մասին. «Ես՝ Մխիթար պիտականուն վարդապետ, գրեցի գտուրբ Աւետարանս իմով ձեռամբ եւ վաճառեցի գսայ ընդ աշխատանաց իմոց՝ Ստեփան քահանայի» [Հիշ. ԺԴ, Ա, 124]:

Շատ հաճախ գրիչները հիշատակարաններ են գրել նաև ստացողների անունից առաջին դեմքով. այդ դեպքում անգնն աչքով անգամ կարելի է նկատել, որ նույնն է ինչպէս գրչի, այնպէս էլ ստացողի հիշատակարանների գիրը: Նկատելի է, որ այդպէս վարվել են նաև քարգործ վարպետները խաչքարեր կերտելիս²⁰⁷:

Պատվիրատուի ցանկությամբ ծաղկված ձեռագրերում հաճախ տեղ են գտել նաև իրենց դիմանկարները, որոնք սովորաբար պատկերված են ծնրադիր և աղերսադեմ՝ պատվիրված մատյանը ձեռքներին, երբեմն էլ հայացքը հառած մանրանկարներում պատկերված սրբերին, ինչպէս նկատել ենք արդեն մանրանկարների շուրջ գրվող հիշատակագրութիւնների առիթով: Անվանի արվեստաբան Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով ևս՝ տարբերույթ հիշատակագրութիւններով ուղեկցվող նման դիմանկարներն ավելի հաճախ հանդիպում են Վերջին դատաստանը խորհրդանշող տեսարանին կից²⁰⁸ կամ տարբեր սրբերի հետ,

²⁰⁷ Հ. Լ. Պետրոսյան, *Խաչքար. ծագումը, գործառնությունը, պատկերագրությունը, իմաստաբանությունը*, Երևան, «Փրինթինֆո», 2008, էջ 241:


²⁰⁸ *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art* (with 108 plates), by S. Der Nersessian, Washington, 1963, p. 86. Ուշագրավ է նույն ձեռագրացուցակում տեղ գտած պատկեր 318-ը (տե՛ս Plate 87), որում կանգնած Քրիստոսի ոտքերի առջև ծնկած պատկերված է տվյալ մատյանի ստացող Մարկո-

որով մանրանկարներում պատկերված անձինք հոգու փրկութեան ակնկալիքով բարեխոսութիւն են հայցում իրենց համար (նկ. 13, 16, 22): Ըստ որում՝ եթե գրիչը գովասանքի բառերով է արժանին մատուցում ստացողին, ապա ծաղկողն էլ պակաս ջանք չի ներդնում պատվիրատուի դիմանկարը կերտելիս: Առանձին դեպքերում այդ դիմանկարները ձեռք են բերում նաև պատմական արժեք: Գլաձորի վանքի նշանավոր րաբունապետ Եսայի Նչեցու դիմանկարների առիթով այս մասին արժեքավոր դիտարկումներ է արել կրկին Ս. Տեր-Ներսեսյանը²⁰⁹:

Որոշ դեպքերում ստացողները նշել են, որ մատյանն իրենք գտել են կամ այն իրենց պատահել է, և այդ ճանապարհով են իրենք ձեռք բերել մատյանը: Երբեմն շեշտվում է նաև, որ մատյանի հետ հանդիպումը պատահամբ է եղել (սովորաբար գործածվում են «պատահեցայ» կամ «հանդիպեցայ» բայաձևերը): Ահա այդպիսի մի քանի վկայութիւն. 1041 թ. գրված հիշատակարանում շատ պատկերավոր է նկարագրված մատյանի՝ բանտարկութիւն հիշեցնող մեկուսացվածութիւնը. «Գտի ես՝ Սարգիս վարդապետ, զգիրքս զայս յարքունական տան գանձուն (արքունական գանձարանում – իՍ. Հ.)՝ անգեալ ի յանկեան միում. անայցելու թափառեալ թաւալէր յաճիւն յատակին, եւ գրեաթե լայր լռելեան..., զոր ապա առեալ իմ՝ ընդ իս տարա՝ հանեալ ի բանդէն» [Հիշ. Ե-ԺԲ, 87]:

սը, որն արտաբերում է հետևյալ խոսքը. «Տառապեալ ծառայիս քո Մարկոսի ողորմեա՛, մարդասեր փրկի՛չ իմ Քրիստոս»: Մարկոսի թիկունքում շեշտված է նրա ով լինելը. «Է ստացող մատենիս»:

²⁰⁹ **S. Der Nersessian**, *Les portraits d'Esayi Nc'ec'i, supérieur de Glajor*, "Armenian Studies (Études Arméniennes) in Memoriam Haïg Berbérian", ed. **D. Kouymjian**, Lisbon, Galouste Gulbenkian Foundation, 1986, pp. 229-241. Հոդվածի հայերեն թարգմանությունը տես *Միրաբիի Տեր-Ներսեսյան. Գլաձորի յարունապետ Եսայի Նչեցու դիմանկարները*, Փրանսերենից թարգմանությունը՝ **Խ. Հարությունյանի**, «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», 4 (2016), էջ 281-289:



Նկ. 22, ՄՄ Հ^մ 5784, 112բ. ձեռագրի հետագայի ստացող Սարգիս Բահանան իր աշակերտ Վարդան Բահանայի հետ՝ պատկերված Մարկոս ավետարանչի ոտների տակ

Սեբաստիայի Ստեփանոս եպիսկոպոսն էլ նշում է, որ Կիլիկիա այցի ժամանակ Օշին թագավորի առաջարկով մտել է արքունի մատենադարան («մտա յարկեղս տանն, ուր հաւաքեալ կային սուրբ կտակարանքն»), որտեղ իրեն պատահել է գրչագրված և մասնակի ծաղկված մի Ավետարան («ոչ յաւարտ հասուցեալ, զի ի Տեառն տնաւրինականացն բաժին մի նկարեալ էին եւ զկէսն նշանագծեալ եւ գյուղիս թողեալ զտեղի»), և ինքն այն խնդությամբ վերցրել է ու ծաղկել տվել Սարգիս Պիծակին [Հիշ. ԺԴ, Ա, 407]:

Մատթեոս անունով մեկն էլ հանդիպել է վնասված ձեռագրերի, վերցրել և կազմել է դրանք 1318 թ. «Պատահեցայ /// գրոցս, որ Ընթերցուածք կոչի, եւ Գ. (3) այլ գիրք ժամոյ ճառից, որ էր քակտեալ, ժողովեցի ի կազմն պնդութեան» [Հիշ. ԺԴ, Ա, 369]:

Բացառիկ հետաքրքրություն ունի ՄՄ Հ^մ 8772 Ավետարանի 1371 թ. հիշատակարանը, որում հետագայի ստացող Սիմեոնը տեղեկացնում է, որ Ավետարանը առևանգվել է, սակայն գերեվարողի գրկից ճանապարհին ընկել է գետը և 4 տարի այնտեղ մնացել, ապա երազի մեջ հայտնվել է Ավետարանի գտնվելու վայրը, և ինքը մի քանի ուղեկիցներով գնացել, գտել և վերցրել է «Կարմիր» Ավետարանը, որն իր վկայություններով բազում հրաշքներ և բժշկություններ է գործել [Հիշ. ԺԴ, 499]:

Հայերեն հիշատակարանները լի են նաև ձեռագրերի վաճառքի և գնման մասին տեղեկություններով: «Ի թվին Հայոց իննհարիւրին եւ սեպտեմբեր ամսոյ ի Ի. (20) գնեցի զսուրբ Աւետարանս ի բարեխաւս առ Քրիստոս վասն ինձ»,— կարդում ենք հետագայի ստացող Թովմայի հիշատակարանում [Հիշ. ԺԵ, Բ, 12]: Ձեռագրերի առքուվաճառքի, նրանց իրացման մասին մանրամասն կիսուսնք իր տեղում, իսկ այստեղ նշենք, որ տարբեր դժվարություններ հաղթահարելուց և հարմար գնով ձեռագիր ձեռքբերելուց հետո ստացողներն անթաքույց հրճվանքով են նշել այդ մասին՝ չմոռանալով կրկին ամրագրել, որ գումարը «ի հալալ ընչից» է վճարվել:

Ստացողների հիշատակարաններից տեղեկանում ենք նաև, թե որքան երկար են իրենք փնտրել փափագած մատյանը և ինչ-

պիսի դժվարութիւնները միջով անցել, մինչև որ գտել և գնել են այն: 1413 թ. Կոստանդին եպիսկոպոս Վահկացին իր փրկագնած Ավետարանի հիշատակարանում նշում է, որ ինքը շատ երկար է փնտրել նման մի մատյան.

«Եւ ես՝ տէր Կոստրնդիան, որ ի բազում ժամանակաց ի վեր փափաքէի այսպէս վայելուչ, ձեւաք աղէկ, մագաղաթ պայծառ... սուրբ Աւետարանի եւ ի բազում քաղաք եւ ի գեղ, ի վանօ եւ յանապատ, խնդիր էի եւ ի հարցումն եւ ոչ կարէի գտանել զփափաքելիս իմ: Այլ ապաւինելով յԱստուած՝ ար ըստ արեւ խնդրէի ի յԱստուծոյ, զի տացէ զխնդրուածս սրտի իմոյ»²¹⁰:

Մատյանները ձեռք են բերվել նաև փրկագնման ճանապարհով: Բագմաթիվ են անօրենների և այլահավատների կողմից ձեռագրերի առևանգման և վերավաճառքի դեպքերի մասին վկայութիւնները հիշատակարաններում: Գրավոր այս աղբյուրներից տեղեկանում ենք, որ աստվածավախ և գրասեր հայորդիները, տեսնելով առևանգված կամ իրենց իսկ խոսքով՝ «գերեվարված» մատյանները, փրկագնել են դրանք՝ վճարելով շատ հաճախ բավական բարձր գին: Հիշատակարաններից մեկում կարդում ենք.

«Ի թիմ 21Ե. (1286) գերի վարեցաւ սուրբ Աւետարանս եւ բերաւ ի քաղաքիս Մուշ, եւ էր ի ձեռն այլագգեաց, եւ յոյժ հալհոյէիմ եւ կամեցան ծախել յաւտար աշխարհ: Իսկ բարեպաշտ եւ երկիւղած եւ բարի ծնաւոյաց զաւակքն՝ եղբարքն հարազատք, Հուսէն, որ մղդսի էր, եւ Մուսէն, տեսեալ զայսպիսի մարգարիտս ի ձեռս այլագգեաց, վառեցան ի սէր հոգեւոր... եւ գնեաց զայս անգիմ մարգարիտս ԲԾ. (200) սպիտակ» [Հիշ. ԺԳ, 595]:

Նշենք ևս մի քանի օրինակ՝ «Նաեւ գէրեալ էր սուրբ Աւետարանս յայլասեռիցն անաւրենաց, եւ բերաւ ծախեցաւ, նա

²¹⁰ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ., էջ 19:

(նկատի ունի գնորդին – Խ. Հ.) ազատեաց յանաւրեանցն» [Հիշ. ԺԴ, Ա, 85], «Դարձեալ յիշեցէ՛ք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր՝ զՎանայ քաղաքի ըռէս Կարապետն..., որ ազատեաց զսուրբ Աւետարանս ի ձեռաց անօրինաց» [Հիշ. ԺԴ, Ա, 121], «Գիտութիւն լիցի ձեզ, սուրբ հայրք, յեղբայրք, որժամ գերեցաւ սուրբ Աւետարանս, գնաց հասաւ ի Գանջայ, Աստուծոյ ողորմածութեամբ եւ յետս դարձուցեալ գնեցայք սուրբ Աւետարանս» [Հիշ. ԺԴ, Ա, 303], «Եւ արդ, ես՝ Խնդուբէկ դերձակս, ի յՈստան քաղաքի գնեցի ի քրդու, զի էր գերի բերած սուրբ Աւետարանս» [Հիշ. ԺԴ, Ա, 381]: Ուշագրավ է սուլյն հիշատակարանի հետագա լրացում-շարադրանքը. ձեռագիրը փրկագնած Խնդուբէկը հայտնում է, որ Ավետարանի տերը եկել և գտել է այն, ու ինքն էլ կամովին վերադարձրել է. «Բայց յետոյ տէրն եկ եւ գտաւ առ իս, եւ իմ յաւժար սրտիւ ի տէրն տուի զսուրբ Աւետարանս»:

Բագմամթիվ հիշատակարաններ տեղեկություններ են հաղորդում մատյաններ նվիրելու, կտակելու և ժառանգելու մասին ևս: 1066 թ. ընդօրինակված Սեբաստիայի նշանավոր Ավետարանի գրիչ Գրիգոր Ակոռեցին, օրինակ, իր հիշատակարանում տեղեկացնում է, որ իր մահից հետո ձեռագիրը կտակում է եղբոր որդուն. «Գրեցի զսուրբ Աւետարանս իմով ձեռօք ի վայելումն մանկանց՝ յիշատակ ինձ, փոխանակ արդեանց եւ ժառանգութեան, եւ ետու զսա զկնի փոխելոյ իմոյ որդւոյ եղբաւր իմոյ՝ Յոհաննիսի» [Հիշ. Ե-ԺԲ, 105]:

Մկրտիչ Նաղաշի հիշատակարաններից մեկում էլ կարդում ենք, որ ինքն Աստվածաշունչ է նվեր ստացել Հովհաննես վարդապետից. «Յառաջ քան զվախճանն իւր երեք ամով՝ պարգեւեաց մեզ զսուրբ գիրքս յիշատակ սուրբ հոգւոյն իւրոյ: Եւ եկաց մնաց առ իս սուրբ գիրքս»: Մի քանի տարի անց Նաղաշը մատյանը վաճառել է Հովսեփ անունով մի կրոնավորի և ստացված գումարով հոգացել եկեղեցու որոշ ծախսեր [Հիշ. ԺԵ, Ա, 632]:

ԺԵ. դարի հիշատակարաններից մեկում էլ արձանագրված է Ավետարանի՝ սերնդեսերունդ անցնելու համառոտ ընթացքը.

«Արդ, Աւետարանս ի Տէրուն իրիցուն անգաւ ի յորդիմ իւր՝
ի Դասապետն, ի Դասապետէն անգաւ ի յաղբաւրորդիմ՝ ի

Մխիթար Էրեցս, ի Մխիթար իրիցուն անգաւ յորդիքն իւր՝ Առաքողոյք ծաղկանցն Յոհանիսիսն եւ Յակոբիսն եւ Յովանիսիսն, գոր Տէր Աստուած վաւելել տացէ Աոցա ընդ երկայն ատուս» [Հիշ. ԺԵ, Գ, 512]:

Ձեռագիրը պատվիրելուց, գնելուց կամ փրկագնելուց հետո շատ հաճախ նվիրաբերվել է տարբեր եկեղեցիների ու վանքերի՝ որպես հիշատակ նվիրատուի և նրա մերձավորների. «Իսկ սա՛ ընտրեալ կրաւնաւորս Մխիթար, ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց... եւ ետ զսա նուէր ի նոյն աստուածաբնակ ի Սուրբ Խաչս Աղթամարայ», – կարդում ենք 1307 թ. հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԴ, Ա, 118]:

Մեկ այլ ստացող հիշատակագրել է.

«Յովանէս քահանայ եւ հոգեւոր եղբայր մեր ըստացանք գանձս աստուածային յիշատակ մեզ եւ ծնաւդաց մերոց եւ եղբարց եւ զաւակաց եւ ամենայն արեան մերձաւորաց մերոց, եւ յաւժարութեամբ սրտից մերոց տուաք ընծայ սուրբ առաքելոցս՝ Սուրբ Պաւղոսոյ եւ Սուրբ Պետրոսոյ, որ եմ ի մայրաքաղաքիս, որ կոչի Վան» [Հիշ. ԺԴ, Ա, 142]:

Ավելորդ չենք համարում մի քանի խոսք ասել նաև ձեռագրերի պատվիրման, գնման նպատակների մասին, որոնք գրեթե միշտ նշվում են պատվիրատուների կամ նրանց անունից գրված խոսքում: 1430 թ. Շատրպեկ անունով մի պարոն ձեռագիր է ազատել գերությունից և նվիրաբերել Սուրբ Կիրակոս եկեղեցուն, իսկ ձեռագրի հիշատակարանում արձանագրվել են փրկագնման շարժառիթները.

«Արդ, վասն Դ. (4) պատճառի գնեաց զսա. մի՛ զի զպակասութիւն տաճարին լըցուցէ, եւ երկու՛ զի ծնաւդաց իւրոց յիշատակ լիցի, եւ Գ.՝ զի զաւակաց իւրոց յերկար կեանք խնդրեսցի, եւ Դ.՝ զի աստուածային կամքըն քաղցրացի իւրեան և կենակցին իւրո» [Հիշ. ԺԵ, Ա, 399]:

Ահա այսպես մեկը մատյան է պատվիրել իր հանգուցյալ որդու հիշատակին, մյուսը՝ ծնողների, իսկ ոմանք էլ՝ որևէ եկեղեցուն նվիրաբերելու համար: Հաճախադեպ են նաև պատարագներ ստանալու նպատակով Ավետարանների ընդօրինակման, պատվիրման և եկեղեցիներին նվիրման դեպքերի մասին արձանագրումները²¹¹: Ահա օրինակ՝ 1301 թ. Թորոս գրիչն ինքն է ընդօրինակել մի Ավետարան և նվիրել իր հայրենի գավառի եկեղեցուն՝ ակնկալելով իր համար մատուցվելիք պատարագ. «Եւ ամենայն մի աւր մի յայտ արասցեն կամ զտաւն իջման Սուրբ Հոգւոյն կամ զԱյլակերպութեան, եւ մատուցեն զպատարագն եւ ինձ հայցեսցեն մեղաց թողութիւն» [Հիշ. ԺԴ, Ա, 12]: Ուշագրավ է, որ Տարոնի Ղազարի վանք տեղափոխված Թորոս գրչի այս մատյանում տեղի մեկ այլ գրիչ նշել է, որ Պայծառակերպության տոնին համընկնող յուրաքանչյուր պատարագին նրանք կհիշեն Թորոս գրչին. «գինչ ի Պայծառակերպութեան տաւնին պատարագ հանդիպի, զնա յիշատակեսցին անխաբան» [Հիշ. ԺԴ, Ա, 13]: Պատվիրման նպատակների մասին են խոսում նաև նշյալ օրինակները: «Եւ զմայրն իւրեանց՝ զփոխեալն առ Քրիստոս՝ զԱլիծ, յորոյ յիշատակ Աւետարանս գրեցաւ», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԴ, 203]: Մեկքիսեթ անունով երեցն էլ իր որդու համար Մաշտոց է ընդօրինակել տվել. «Եւ ես մեղսաներկ եւ փծուն մահտասի Մեկքիսեթ երեց փափաք սիրով զձագրել ետու յիշտակ հոգոյ իմոյ ի վայելումն որդոյ իմոյ» [Հիշ. ԺԵ, Ա, 59]: ԺԳ. դարում Համայ անունով ստացողը գրում է. «Ո՛չ դուստր ունէի եւ ո՛չ որդի, յիշեցի զիմ մահին աւրն եւ զահեղ դատաստանն Քրիստոսի եւ արարի ինձ յիշտակ արձան եւ զնեցի ի հալալ արդենց իմոց զսուրբ եւ զհոգելից եւ զաստուածային տառս՝ զսուրբ Աւետարանս...» [Հիշ. ԺԳ, 904]:

²¹¹ Հ. Հակոբյան, Պատարագ պատվիրելու առանձնահատկությունները՝ ըստ բանասիրական, ազգագրական և մատենագիտական աղբյուրների, «ԲՄ» 22 (2015), էջ 222-226:

Թամար անունով մի կին էլ, որ ժառանգ չուներ, 1301 թ. իր մասին հիշատակ թողնելու նպատակով Ավետարան է պատվիրել՝ գրել տալով հետևյալը.

«Թամար մեղուցեալ աղախին Քրիստոսի, ամուլ գուրով ի մարմնական ծննդոյս եւ հաճապագայի ի վտանկի կալով, թէ ոչ գոյ ինձ յիշատակ, որ յետ իմոյ վախճանի յիշէ զիս... յիշատակ ինձ ստացալ զիմ կեանարարն եւ զիւր սուրբ Աւետարանս» [Հիշ. ԺԴ, Ա, 15-16]:

Վահրամ և Վասիլ անունով եղբայրներն էլ ձեռագիր են ստացել Սուրբ Ստեփանոս Ուլնեցու վկայարանին նվիրաբերելու նպատակով. «Որ ստացան զսա յընչից իւրեանց եւ ետուն նուէր ի վկայարանի Սրբոյն Ստեփանոսի Ուլնեցւոյ» [Հիշ. ԺԴ, Ա, 195]:

Մատնանշված օրինակները ցույց են տալիս, որ ձեռագիր պատվիրելու կամ գնելու նպատակներն իրապես բազմազան են, սակայն բոլորն էլ, ըստ էութեան, հանգում են մեկին. այս կերպ գնորդներն ու պատվիրատուները ցանկանում են, որ իրենց և իրենց հարազատների անունները հիշատակելի լինեն: 1236 թ. Ավետարանի ստացող Բռնաւորն այն նվիրել է Խծկոնքի ուխտին՝ խնդրելով հարմար պատարագի ընթացքում իրեն հիշել. «Զպատարագին պատեհն դո՛ւք հոգացէք»: Հասցեատերը նույն ուխտի միաբաններն են և նրանց հաջորդները: Տեղի Աբաս եպիսկոպոսը և մյուս հոգևորականները գրավոր խոստանում են Բռնաւորին. «զՅղիական երկու շաբաթ աւրն զմին պատարագն անխաբան յամենայն ամի Բռնաւորին առնեն, ով եւ լինի հայր» [Հիշ. ԺԳ, 195]:

Որոշ հիշատակարաններում պատվիրատուները նշել են, որ իրենք մատչանը ձեռք են բերել նաև ուսման և առհասարակ անձնական գործածութեան նպատակով: ՄՄ Հ^ր 2329 ձեռագրի պատվիրատու-ստացողը հիշատակագրել է այսպես.

«Նուաստ եւ անարժամ սպասաւորս բանի Ահարոն, մականուն Գրիգոր կոչեցեալ, ստացա զգիրքս զայս, որ է Քե-

րական եւ Արուեստ գրադարձի եւ Համառատ կանոնք՝ երկու դիտաւորութեամբ. մի՛ զի ընթերցեալ աւգտեցայց ի սմանէ, վասն որոյ ի խոշորագիծ ետու գրել ի ծերութեան ժամանակի, եւ երկրորդ՝ զի յիշելոյ պատճառ լիցի մեզ ի մարմնաւոր կեանացս» [Հիշ. ԺԳ, 664]:

Ստացողի հիշատակարանի այս հատվածից պարզ է դառնում նաև, որ վերջինի ցանկությամբ գրիչը խոշոր տառերով է ընդօրինակել ձեռագիրը: Դա, իհարկե, եզակի երևույթ չէ. որպես կանոն՝ հենց ստացողի նյութական միջոցներին և ցանկությանն են համապատասխանեցվում մատյանները: «Գրոցս տերովն հրամանաւն մեծցուցի զգիրս», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 803]:

Պատվիրատու-ստացողների մասին մեր խոսքն ամփոփելով՝ պետք է արձանագրենք, որ շատ հաճախ նրանք հանդես են եկել ոչ միայն իբրև գրչության պատվիրատու և հովանավոր, այլ նաև, ինչպես նկատեցինք վերոբերյալ օրինակներում, իբրև մատյաններ փրկագնողներ, գերությունից ազատողներ, որոնց շնորհակալ գործի արդյունքում կորստից փրկվել, պահպանվել և մեզ են հասել հազարավոր ձեռագիր մատյաններ:

5.8. ԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒՄԸ

*«Գիրք փակեալ կոտք են»
Անհայտ գրիչ²¹²*

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում տարածված երևույթ է գաղափար օրինակի հիշատակումը և նրա արժևորումը, քանի որ այդպես միաժամանակ արժևորվում էր նաև նորակերտ մատյանը. որքան ամբողջական, ճշգրիտ և դյուրընթեռնելի լիներ գաղափար օրինակը, նույնքան բարձրորակ կլիներ նաև դրանից ընդօրինակված գրչագիրը: Ուստի և՛ բոլորովին պատա-

²¹² Թորոս ստրաբ, հ. Բ., էջ 245:

հական չէ, որ գրիչները ժամանակ ու միջոցներ էին ծախսում իրենց խոսքերով՝ «ստոյգ եւ ընտիր» օրինակ հայթայթելու համար, և իրենց հիշատակարաններում, որպէս ընդօրինակված մատյանի որակի երաշխիք, նշում էին հենց այդ փաստը՝ «աւրինակեցաւ ի լաւ եւ յընտիր աւրինակէ», «գծագրեցաւ ի ստոյգ եւ յանխափան աւրինակէ» և նման արտահայտութիւններով: Ահա մի քանի օրինակ գրչական հիշատակարաններից. «Բազում աշխատանաւք գրեցի, ծաղկեցի եւ կազմեցի անարժան ձեռաւք իմովք ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ» [Հիշ. ԺԵ, Ա, 463]: «Շնորհիւ Աստուծոյ եւ ողորմութեան նորին գծեցաւ Տաւնացոյցս ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ», – նշում է Գրիգոր գրիչը [Հիշ. ԺԵ, Բ, 9]: Ղազար գրիչը 1201 թ. ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում ընդգծում է նաև «ընտիր» օրինակի կետադրութիւնը. «Եւ գրեցաւ սա յընտիր եւ յստոյգ աւրինակէ՝ ամենայն արհեստիւ լի եւ պատարուն, բան եւ տնհատ, հրաման եւ ստորատ, միջնակտուր եւ վերնակետ» [Հիշ. ԺԳ, 19], իսկ Ստեփանոս գրիչն էլ նշում է, որ թեև իր գրութիւնը խոշոր է (իմա՛ տգեղ – Խ. Հ.), բայց ավելի կարևոր է, որ այն ճշգրիտ է և ուղիղ օրինակից գաղափարված. «Այլ թէպէտեւ խոշորագիծ է, սակայն ի ճշգրիտ եւ յուղակի աւրինակէ գրեցաւ» [Հիշ. ԺԴ, Ա, 275]: Ահա ևս մեկը նույնպիսի շեշտադրումով. «Աղաչեմ չլինիլ մեղադիր, զի բազում աշխատեցաք ի սմա, եւ զխոշորութիւն գրիս ուղորդութիւն բանին ծածկէ» [Հիշ. ԺԴ, Ա, 262]:

Գաղափար օրինակի առկայութիւնը, այն էլ «լաւ եւ ստոյգ» նշումով, վստահութիւն էր ներշնչում ոչ միայն պատվիրատու-ստացողին, այլև հետագա այն գրիչներին, որոնց համար նորաստեղծ ձեռագիրը կարող էր ծառայել որպէս «լաւ կամ ընտիր աւրինակ»՝ այլ ձեռագրեր կերտելու համար: Ստեփանոս անունով գրիչը նշում է, որ Սաղմոսարան ընդօրինակելու նպատակով բավական չարչարվել է մինչև լավ օրինակ գտնելը, և «տխմարամիտ» է անվանում այն գրիչներին, որոնք առանց օրինակի և ուղղելու մատյաններ են գրչագրել՝ աղավաղելով բնագրերը. «քանզի սաստիկ աղաւաղեալ թիւրեցցաւ բանք Սաղմոսիդ ի ձեռն տխմարամիտ գրչաց եւ անփութութեամբ ուսում-

նասիրաց... գրեն առանց ավրինակի եւ ոչ ուղղեն,— ապա շարունակում է խոսքը,— Իսկ ես՝ վատթարս եւ անպտուղս ի բարեաց, բազում ամս տոչորեալ այրէի վասն ուղղաբան Սաղմոսարանի» [Հիշ. ԺԴ, Ա, 5]:

Առանձին գրիչներ, ինչպես վկայում են նրանց հիշատակարանները, չեն բավարարվել մեկ օրինակի առկայությամբ և սեփական ընդօրինակությունն ավելի վստահելի ու անսխալ դարձնելու նպատակով գործածել են երկու և ավելի գրչագրեր կամ արդեն իսկ ընդօրինակված մատյանը ստուգել են նույնաբովանդակ մեկից ավելի ձեռագրերով: Բաբերդցի Ավագ գրիչը հայտնում է, որ իր ընդօրինակած Ավետարանը ստուգել է երեք այլ Ավետարաններով՝ հիշատակարանում անվանապես շնորհակալություն հայտնելով օրինակ շնորհողներին.

«Յիշեսցի՛ք եւ զարբասէր քաճանայ զՍամուէլն եւ զաւակսն իւր, որ ետ կրկին այլ արինակ, որ ստոյգեցաք, եւ զԿարապետ քաճանայն, որ միւս արինակ այլ շնորհեաց, որ կոչի Մուրղանեցի, քանզի յերկուց եւ յերից վկայից հաստատի ամենայն բան: Զի յորժամ յաւարտումս հասաւ, եղաք զերիս ընդիւր եւ անուանի Աւետարանքս եւ ստոյգեցայք, որ մին շատաւեղաւք էին գրած... զի բազում աշխատանս կրեցի մինչ ի ձեռն բերի զարինակերս եւ ստոյգեցի» [Հիշ. ԺԴ, Ա, 185-186]:

Ակների վանքում 1319 թ. ընդօրինակված Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի ուղղումները գրիչ Վարդանն իրականացրել է հինգ ձեռագրերի համեմատությամբ: Կարդում ենք նրա հիշատակարանում. «Բայց ավրինակաց անփոյթ չարարի, թէպէտ եւ ի բազմաց վկայեալ էին ավրինակքս, այլ երից եւ ի չորից է, զի եւ ի հնգից ավրինակաց, որչափ կարացի, ուղղեցի» [Հիշ. ԺԴ, Ա, 384]:

Գաղափար օրինակ հայթայթելը միշտ չէ, որ հաջողվել է գրիչներին, իսկ որոշ դեպքերում էլ օրինակ շնորհողները շտապեցրել և խանգարել են գրչագրման ընթացքին: Սակավ պատա-

Հում են նաև գաղափար օրինակ չտրամադրելու մասին հիշատակումներ: Սա հնարավորություն է տալիս լրացնելու մեր պատկերացումները գրչի միջավայրի և ձեռագրաստեղծման գործընթացի դժվարությունների մասին առհասարակ: Ահա մի այդպիսի հետաքրքիր նմուշ ընդօրինակող գրչից.

«Եղբայր ոմն Կաթարոս²¹³, որոյ անուն Խոյլենց Յովանէս անանաչի, որոյ իւրն էր արիմակ՝ մեծ գիրք, ոչ տայր ի գաղափար, կարծեմ վասն անխանձու, և յորժամ վանքս եւ հայրն ետ, ան գչարեալ գայր յափշտակել, իսկ ես ողորքանաք խնդրէի» [Հիշ. ԺԳ, 914]:

Նույն գրիչը դժգոհում է նաև, որ իրեն շտապեցնում են. «Կարի շտապով գրեցի, զի զաւրինակն խլէին զՅովանիսի Խոյլինց» կամ «Այ վայ, ի քիթս ածին աւրինակիս տէրքս» [Հիշ. ԺԳ, 913-914]: Ահա ևս մեկը. «Աղաչեմ մի՛ մեղադրէք, զի թէ եւ գոյր կարողութիւն մի փոքր այլ լաւ գրել, սակայն ոչ կարացի, զի կարի ստիպով յորդորք էի վասն օրինակին» [Հիշ. ԺԳ, 698]: Ահարոն անունով մի գրիչ էլ հասցրել է լրացնել միայն ձեռագրի պակասող էջերը՝ տագնապով գրելով հետևյալը. «Աղաչեմ զընթերցողստ անմեղադիր լինել... ես ո՛չ տեղի ունէի պատշաճաւոր գրելոյ, եւ ո՛չ գործիք, այլ վասն աւրինակին փութաի ի գրելն, թէ գուցէ գնանք աստի եւ յայլ տեղ աւրինակ չհանդիպի» [Հիշ. ԺԳ, 673]:

Չնայած այսպիսի նշումների առկայությունը՝ պետք է արձանագրել, որ, ընդհանուր առմամբ, օրինակ շնորհելը բավական տարածված է եղել. հարյուրավոր հիշատակարաններում անվանապես և գրչական երախտագիտություններում հիշվում են օրինակ

²¹³ Բառը փոխառություն է հունարենից (καθάρως), նշանակում է «մաքուր, մաքրակենցաղ, ազնիվ»: Վաղ քրիստոնեության շրջանում այսպես էին իրենց կոչում Նովատյան կամ Նավատյան աղանդավորները, տե՛ս Նոր բառգիրք հայկազենան լեզուի, հ. Ա, էջ 1031: Վստահ չենք, որ հիշատակագիրն այստեղ նկատի ունի տվյալ աղանդի հետևորդ իմաստը. միգուցե այն գործածված է բառի բառարանային նշանակությամբ:

չնորհողները, որոնք, անկասկած, գրչության գործին սատարողների շարքին են դասվում: Մյուս կողմից՝ պետք է նկատել, որ հենց գրիչներն են պատվիրում իրենց մատյանները չթաքցնել, չպահել և տրամադրել ընթերցողներին ու գաղափար առնողներին: Առանձին դեպքերում կարելի է անգամ հասցեատերը լինել գիրքը ուսումնականին չտրամադրելու և նրա առաջ փակելու դեմ գրված անեծքների, ինչպես օրինակ, նշվում է 1296 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում. «Որ փակէ (իմա՛ մատյանը – Խ. Հ.) եւ չտա, փակեալ լիցի նմա կենացն մուտ. ամէն» [Հիշ. ԺԳ, 781]: Դրագարկցի Վարդան գրիչը 1203 թ. ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում ձեռագրի պահպանմանն ու տեղաշարժին առնչվող մանրամասն ցուցումներ է տալիս, այդ թվում՝ հետևյալը. «Բայց եթէ աւրինակ ոք խնդրեսցէ, մի՛ արգելուք, զի յընտիր եւ յանհաս աւրինակէ է գրած» [Հիշ. ԺԳ, 37]:

Օրինակի բացակայությունը կամ նրա սխալ լինելը պատճառ էր դառնում բազմաթիվ վրիպակների, որոնք տրամեցնում և մեծ վիշտ էին պատճառում գրիչներին: «Անմեղադիր՝ լինիք սխալանաց, զի ոչ կայր աւրինակ եւ յոյժ վշտացայ վասն աւրինակի, որ ոչ գոյր», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, Ա, 71]: Մխիթար գրիչն էլ պատվիրատուից ներողություն է խնդրում սխալների համար, քանի որ իր մոտ եղած օրինակը սխալաշատ էր. «զի աւրինակն կարի սխալ էր, եւ ես՝ ախմար» [Հիշ. ԺԳ, 910]: Ահա թե ինչու այդքան կարևոր էր անսխալ և լավ մատյանների առկայությունը:

Հատկանշական է, որ առանձին մատյանների պարագայում գրիչների շրջանում եղել են որոշ ընդօրինակություններ, որոնք մեծ հեղինակություն են վայելել, և եթե նորակերտ ձեռագրի գրչության համար գործածվել է այդպիսի մի գաղափար օրինակ, ապա դա ևս ինչ-որ առումով որակի գրավական է դիտվել և վստահություն ներշնչել թե՛ գրչին, թե՛ պատվիրատուին և թե՛ հետագայում մատյանից օգտվողներին ու նրանից ընդօրինակողներին. այդ են վկայում գրիչների մեծաքանակ նշումները: Մյուս կողմից՝ հիշատակարանային այդպիսի գրանցումներն

օգնում են մեզ Հասկանալ, թե, ասենք, ժամանակին որ ձեռագրերն են համարվել ամենահայտնին, բարձրորակը և լավագույնը: Ստորև հարկ ենք համարում ի մասնավորի նշել միջնադարյան Հայկական որոշ մատյանների համար տարածված գաղափար օրինակների և նրանց հեղինակների մասին:

Միջնադարյան Հայ Հոգևոր երգարվեստի Հայտնի անուններից է ԺԲ. կամ ԺԳ. դարի ստեցի երաժիշտ Գրիգոր Խուլը, որը մեծ ներդրում է ունեցել հատկապես Հայկական Շարակնոցի կարգավորման գործում²¹⁴: Նրա մասին տեղեկությունները սուղ են, ստույգ հայտնի չեն նաև նրա ծննդյան և մահվան տարեթվերը: Հայր Ղ. Ալիշանը նշում է, որ վերջինս ականջներին մոտ էր դնում՝ «առ ի չլսել զբանս աշխարհականս, վասն այն կոչեցաւ Խուլ»²¹⁵: Վենետիկի Մխիթարյան Հայր Սահակ Ճեմճեմյանի ենթադրությունը համաձայն՝ Գրիգոր Խուլը եղել է Շնորհալուծն ժամանակակից կամ նախորդել է նրան և սրբագրել նախաշնորհալիական Շարակնոցի խազերը²¹⁶: Պակասում են նաև տեղեկությունները նրա բուն գործունեության և արդի Շարակնոցի հետ նրա առնչության վերաբերյալ, սակայն հիշատակարանային բազմաթիվ վկայություններից երևում է, որ ԺԳ. դարակեսից

²¹⁴ Գրիգոր Խուլի մասին տե՛ս Մխուան. *համագրություն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ*, հասարեալ ի Հ. Ղ. վ. մ. Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 105-106: Տե՛ս նաև Ն. արքեպս. Ծովական [Պողարեան], *Հայկական Շարակնոցին խմբագրությունները*, «Վանատուր. բանասիրական յօդուածներու ժողովածոյ», տպ. Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1993, էջ 247-249: Մ. Նավոյան, *Գրիգոր Խուլ*, «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան», Երևան, 2002, էջ 235-236:

²¹⁵ Հ. Ղ. վ. մ. Ալիշան, *Մխուան*, էջ 517: Ուշագրավ է նույն տեղում Ալիշանի հիշատակած մի ավանդագրույցը, որը կապվում է նշանավոր գրիչ և ծաղկող Սարգիս Պիժակի մականվան հետ: Այդ առիթով Ալիշանը նշում է, որ Սարգիսը հավանաբար Գրիգոր Խուլի որդին է. «Թուի Սարգիսս այս նոյն ինքն ծանօթն մեր ճարտար Պիժակն և որդի վերոյիշեալ Խուլ Գրիգորի քահանայի»:

²¹⁶ Հ. Ս. Ծեմճեմեան, *Չեռագիր Շարակնոցները եւ անոնց կանոնները*, «Բագմավէպ», 1969 (8-10), էջ 195:

սկսած²¹⁷ Շարակնոց ընդօրինակած գրիչներն իրենց ձեռագրի ամբողջականութունը և ստույգութունը շեշտելու համար նշել են, որ մատյանը հենց Գրիգոր Խլկցու կամ Խլուկի օրինակից է գրչագրված²¹⁸: Հետաքրքիր է նկատել, որ Խլուկի կամ Խլկցու օրինակի հիման վրա ստեղծված մատյաններն ավելի շուտ համընկնում են հետշնորհալիական կամ արզի Շարակնոցի, քան նախաշնորհալիական համարվող Վենետիկի Հ^մ 529/97²¹⁹ և ՄՄ Հ^մ 10965²²⁰ Շարակնոցների հետ: Ն. Պողարյանի կարծիքով «խլիկյան խմբագրությունը» որոշ փոփոխություններով ընկած է տպագիր Շարակնոցի հիմքում²²¹: Ակնհայտ է, որ հարցը կարոտ է նոր ուսումնասիրությունների, որոնց մեծապես նպաստելու են նաև ձեռագրերի հիշատակարաններում առկա նշումները: 1311 թ. Ստում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում կարդում ենք.

²¹⁷ Նյութին առնչվող գրականության մեջ, որպես Խլկցու օրինակից գրչագրված Շարակնոցի հնագույն օրինակ, սովորաբար նշվում է 1269 թ. գրված ներկայիս Վիեննայի Մխիթարյան մատենադարանի Հ^մ 145 Շարակնոցը, տե՛ս Հ. Ս. Ծեմճեմեան, *նշվ. աշխ.*, էջ 195, Մ. Նավոյան, *նշվ. աշխ.*, էջ 236: Մեր որոնումների արդյունքում ի հայտ եկավ 14 տարով ավելի վաղ՝ 1255 թ. ընդօրինակված մեկ այլ Շարակնոց, որում կրկին նշված է Խլկցի օրինակից գաղափարված լինելու փաստը [Հիշ. ԺԳ, 283]: Ձեռագիրը ժամանակին պահվել է Մշո Մատին – Պետրոս առաքյալի վանքում, տե՛ս Ս. Ա. Մուրատեան, Ն. Պ. Մարտիրոսեան, *Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից*, խմբագրեց Ա. Գալայ-ճեան, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 97, Հ^մ 2:

²¹⁸ Տե՛ս նաև A. Sirinian, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, p. 74.

²¹⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յօրինեց Հ. Ս. վրդ. Ծեմճեմեան, հ. Դ, Վենետիկ-Ս. Ղազար, 1993, էջ 342-348:

²²⁰ Ձեռագրի մասին տե՛ս Ներսէս Ծնորհալու կամ նրան վերագրուող շարականները, առաջաբանը եւ համեմատական բնագիրը՝ Խ. Յարութիւնեանի, Մատենագիրք հայոց, հ. ԻԱ., ԺԲ. դ., Ներսէս Ծնորհալի, Գիրք Ա., Երեւան, 2018, էջ 973:

²²¹ Ն. արքեպ. Ծովական [Պողարեան], *Հայկական Շարակնոցին խմբագրութիւնները*, էջ 249:

«Գրեցաւ Եղանակատր տառս ի թփաբերութեանս Հայոց 2ՀԳ. (1311), ի մայրաքաղաքս ի Սիս, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս, ձեռամբ մեղաւոր եւ անարժան քահանայի Սարգսի, ի լաւ եւ յընտիր արիմակէ, որ կոչի Խլուկ» [Հիշ. ԺԳ, Ա, 506-507]:

Ահա մի քանի օրինակ ևս՝ «Արդ, եղեւ ավարտումն տառիս, որ կոչի Շարակնոց ի լաւ եւ յընտիր օրինակէ, որ է Խլկցի» [Հիշ. ԺԳ, 283], «Արդ, գրեցաւ գիրքս... ի լաւ եւ յընտիր ավրինակէ Խլկցի» [Հիշ. ԺԵ, Ա, 349], «Արդ, գրեցաւ Շարակնոցս ի լաւ եւ ի ստոյգ, յընտիր ավրինակէ, որ է Խլկցի» [Հիշ. ԺԵ, Ա, 630] և այլն²²²:

Ձեռագիր Հիշատակարանների համաձայն՝ Ավետարանների ընդօրինակման համար լավ և ստույգ օրինակներ են համարվել Գրիգոր Մուրղանեցու և Ստեփանոս Գույմեթերիցանցի (եբբեմն՝ Գուլյներիցանց) գրչագրերը, որոնք բազմիցս Հիշատակվում են քննվող գրավոր հուշարձաններում: Մուրղանեցուն վերաբերող տեղեկութունները բավական սուղ են և դարձյալ գալիս են Հիշատակարաններից: 1230 թ. Գրիգոր գրիչը նրան անվանում է «ճարտարագիծ գրիչ և անյաղթ գիտնական», իսկ նրա ընդօրինակած Ավետարանը՝ «անգիւտ մարգարիտ եւ ամենալաւ ավրինակ»: Կարգում ենք գրչի Հիշատակարանում:

«Զի ի վաղուց ժամու ցանկացեալ էի այսմ անգիտ մարգարտիս եւ ամենալաւ արիմակիս, որ կոչի Գրիգոր Մուրղանեցու՝ ճարտարագիծ գրչի եւ անյաղթ գիտնականի» [Հիշ. ԺԳ, 163]:

Նշանավոր Կողմա գրիչն իր Ավետարանի (ՄՄ Հ^մ 7734) ընդօրինակութան համար ևս ընտրել է Մուրղանեցու «փառաւոր» օրինակը՝ այդ մասին արձանագրելով իր Հիշատակարանում. «Շնորհիւ Տեառն սկսա եւ ողորմութեամբ նորին կատարեցի

²²² Խլկցու հիշատակմամբ այլ օրինակներ տե՛ս նաև **A. Sirinian**, *Un Innario armeno (Տարակոց) dell'anno 1580 al Pontificio collegio armeno di Roma*, pp. 202-203 (ծնթ. 16 և 17):

գկեանսաբեր սուրբ Աւետարանս ի փառաւոր արիմակէ, որոյ Մուրդանեցի կոչիցի» [Հիշ. ԺԳ, 116, ընդգծումը մերն է – Խ. Հ.]:

Ն. Պողարյանը Մշո Առաքելոց վանքի ձեռագրացուցակից²²³ վկայակոչում է մի ուշագրավ հիշատակարան, ըստ որի՝ Մուրդանեցու Ավետարանը գրչագրված է եղել Գագիկ թագավորի գանձատանը պահվող մեկ այլ ձեռագրից. «Գրեցաւ աստուածախաւս մատեանս, քրիստոսաձիր կտակ սրբոյ Աւետարանիս, յընտիր եւ ի լաւ ակրինակէ, որ կոչի Գրիգորի Մուրդանեցույ՝ գրչի ճարտարի, որոյ առեալ էր զաւրինակն ի գանձատնէն Գագկայ թագաւորին Հայոց»։ Ենթադրելով, որ խոսքը Կարսի Գագիկ թագավորի (1029-1064 թթ.) մասին է, իսկ նշված գաղափար օրինակը նույն թագավորի համար 1029-1064 թթ. միջև օրինակված և ներկայումս Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի Հ^Կ 2556 Ավետարանն²²⁴ է, Պողարյանը Մուրդանեցուն համարում է ԺԱ. դարակեսի գործիչ²²⁵։ Գրիգոր Մուրդանեցու և նրա Ավետարանի մասին վաղագույն վկայութիւնները 1144 թվականից է²²⁶, վկայութիւններ կան նաև ԺԳ-ԺԴ. դդ. Ավետարանների հիշատակարաններում²²⁷, մինչդեռ արդեն ԺԵ. և հետագա դարերում Մուրդանեցու օրինակի մասին հիշատակութիւններ գրեթէ չեն հանդիպում։

²²³ Ս. Ա. Մուրատեան, Ն. Պ. Մարտիրոսեան, *Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի և շրջակայից*, էջ 1, Հ^Կ 1:

²²⁴ Ավետարանի նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Խ. Ը., կազմեց Ն. արքեպ. Պողարեան, Երուսաղեմ, տպ. Սր. Յակոբեանց, 1977, էջ 245-248:

²²⁵ Ն. արքեպ. Ծովական [Պողարեան], *Հայ գրիչներ (Թ.-ԺԷ. դար)*, էջ 19-20: Մուրդանեցու և նրա օրինակի մասին տե՛ս նաև Թ. Измайлова, *Мурганский образец в армянской миниатюрной живописи*, “Труды Государственного Эрмитажа”, т. V, Культура и искусство Востока, Изд.-во Гос. Эрмитажа, 1961, ст. 76-97.

²²⁶ Ն. արքեպ. Ծովական [Պողարեան], *Հայ գրիչներ (Թ.-ԺԷ. դար)*, էջ 10-11:

²²⁷ Ահա մի քանի վկայություն ևս՝ Հիշ. ԺԳ, 399, Հիշ. ԺԴ, Ա, 185, Հիշ. ԺԴ, 333:

Որպես լավ և ընտիր գաղափար օրինակի գրիչ՝ Ավետարանների հիշատակարաններում նշվող մյուս անունը Ստեփանոս Գույներերիցանցն է, որ երբեմն հանդիպում է նաև Գույներիցանց կրճատ ձևով²²⁸: Ի տարբերություն Գրիգոր Մուրղանեցու՝ Ստեփանոս գրչի մասին տեղեկությունները սակավ չեն: Նրա գործունեության մասին հանգամանալի կերպով շարադրել է Ն. Պողարյանը՝ ներկայացնելով նաև նրա ձեռագրական վաստակը²²⁹: Ավետարան ընդօրինակող գրիչները նրան արժևորել և բարձր են գնահատել, անվանել են «լի եւ պատարուն յարհեստ գրչութեան», իսկ նրա գրչագրած ձեռագրերը եղել են «ստոյգ եւ ընտիր»: Ստեփանոս Երկայն գրչի 1321 թ. հիշատակարանում կարգում ենք.

«Արդ, թեպէտ եւ անարճեստ էի գրչութեանս, փառաքի եւ անյարմար, այլ հանդիպեալ լաւ եւ ընտիր արիմակի, որ գրած էր Ստեփանոս Գոյներերիցանց, այն որ լի էր եւ պատարուն յարճեստ գրչութեան եւ ընդ բնասու հոշակեալ, նաեւ բանի կատարեալ եւ հոգով լցեալ, որպէս ահա յայտնի է իմաստանց եւ ստոյգ դիտողաց, զի լի եւ կատարեալ էր արուեստիս, ի բանս, ի բանս, ի լծորդս, եւ ի բացասու, եւ ի տրոհմունս առոգանութեանց» [Հիշ. ԺԴ, 169]:

Ավելորդ չէ նշել, որ ինքը՝ Ստեփանոս Երկայնը ևս աչքի է ընկնում գրչագրական բեղմնավոր գործունեության²³⁰, սակայն համեստորեն անարհեստ է անվանում իրեն և գովերգում Գույներիցանցին ու նրա օրինակը: Գրեթե նույնն է կրկնում նաև Ավագ գրիչը շուրջ երեք տասնամյակ անց կրկնօրինակած Ավետարանի հիշատակարանում [Հիշ. ԺԴ, 437]:

²²⁸ Ստեփանոսի գրչին պատկանող երկու հիշատակարաններում ինքն իր մականունը գրում է *Գոյներիցանց* ձևով՝ Հիշ. ԺԴ, Ա, 127, 190:

²²⁹ Ն. արքեպս. Ծովական [Պողարեան], *Հայ գրիչներ (Թ.-ՄԷ. դար)*, էջ 93-111:

²³⁰ Ն. արքեպս. Ծովական [Պողարեան], *Ստեփանոս Երկայն (1295-1327)*, «Սիոն», 1967 (5-6), էջ 247-249:

1325 թ. ընդօրինակված Մանրուսմունքի հիշատակարանի համաձայն՝ գաղափար «լաւ եւ ստոյգ» օրինակը Գրիգոր Չորուկի գրածն է.

«Բայց գրեցաւ սա ի լաւ եւ ի ստոյգ արիմակաց երկուց...,
գոր գրեալ էր Գրիգոր Չորուկ» [Հիշ. ԺԳ, Ա, 501]:

Ըստ ամենայնի՝ դարձյալ Չորուկի անունն է նշված 1309 թ. Մանրուսմունքի հիշատակարանի վնասված հատվածում. «Գրեցաւ տետրակս յաւրինակէ Գրիգորի, որ մականունն [Չորուկ^օ կոչի]» [Հիշ. ԺԳ, Ա, 168]:

Գրիգոր Չորուկի մասին տեղեկությունները խիստ սուղ են: Պահպանվել և մեզ է հասել 1299 թ. Կիլիկիայի նշանավոր Սկևռայի վանքում ընդօրինակված մի ձաշոց, որի առաջին գրիչը եղել է Գրիգոր Չորուկը: Այդ մասին է վկայում ինքնագիր հիշատակարանը. «Եւ բազմամեզ գրիչս Գրիգոր Չորուկ աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, եւ Աստուած զձեզ» [Հիշ. ԺԳ, 848]: Նույն ձեռագրի ստացող՝ Սկևռայի առաջնորդ Կոստանդին եպիսկոպոսի հիշատակարանի համաձայն՝ Չորուկը եղել է ձաշոցի առաջին գրիչը, որը հասցրել է ընդօրինակել միայն մի մասը, ապա վախճանվել, իսկ նրա գործը շարունակել են այլ գրիչներ՝ մատյանի ընդօրինակումն ավարտին հասցնելով 1299 թ.: Կոստանդին եպիսկոպոսի հիշատակարանում կարդում ենք. «Ստացայ գսուրբ գիրս գայս, սկզբնարկեալ ի ձեռն սնընդակցի եղբաւր Գրիգորի ումեմն գեղեցիկ գրչի, որ եւ ընդ աւարտելն գառաջին եւ զերկրորդ զԳործս առաքելոցն Աւետարանաւ Յովհաննոս, անդէն իսկ եւ ըստ մարմնոյ կեանս լքեալ, մահուամբ չոքաւ առ Աստուած, որոյ ողորմեսցի Քրիստոս» [Հիշ. ԺԳ, 850]:

Դատելով ստացողի այս տեղեկությունից՝ կարելի է եզրակացնել, որ Գրիգոր Չորուկը ԺԳ. դարի գործիչ է և Սկևռայի նշանավոր դպրոցի ներկայացուցիչ, որը վախճանվել է նույն դարի վերջին՝ 1298 կամ 1299 թթ.:

*ԺԵ. դարի կաֆացի արդյունաշատ գրիչ Քրիստոսատուրի*²³¹
ընդօրինակած Մանրուսմունքի համար «ընտիր օրինակ» է եղել Առաքելի կոչվող մատյանը.

«Արդ, այսմ եղանակաւոր տառիս ցանկացող եղեալ եռափափագ սիրով Աւետիք կուսակրան արեղայն զսա ետ ինձ գրել՝ Քրիստոսատուր անարժան գրչի, յիշատակ հոգւոյ իւրոյ, ի լաւ եւ լընտիր օրինակէ, որ կոչի Առաքելի» [Հիշ. ԺԵ, Ա, 390]:

*Մանրուսմունք մատյանի առիթով հիշատակարաններում նշվում է նաև Կարապետցի և Կոստանդեայ օրինակների մասին*²³²:

Մի շարք հիշատակարաններում Սաղմոսարանի ընդօրինակման համար լավագույն գաղափար օրինակ է համարվում ԺԳ. դարի եկեղեցական հայտնի գործիչ Հովհաննես Գառնեցու կազմած օրինակը (հիմքում ընկած է ԺԱ. դարավերջի և ԺԲ. դարի առաջին երեսնամյակի եկեղեցական նշանավոր գործիչ, գիտնական Հովհաննես Սարկավագի կազմած օրինակը).

«Գրեցաւ... ձեռամբ անպիտան ծառայի Աստուծոյ՝ Լեւոնի, ի լաւ եւ լընտիր արիմակէ Գառնե<ր>ցոյ» [Հիշ. ԺԴ, Ա, 154], «Արդ, գրեցաւ Երգարանս Դաւթի ի լաւ եւ ընտիր յարիմակէ սուրբ հարմ Յովհաննէս Գառնեցոյ» [Հիշ. ԺԵ, Բ, 112], «Արդ, գրեցաւ Երգս Դաւթի ի ըստոյգ եւ լընտիր արիմակէ սուրբ հարմ Յովհաննէս Գառնեցոյն» [Հիշ. ԺԷ, Բ, 268]:

Գառնեցու մասին որոշ տեղեկութիւններ է հաղորդում նույն դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցին: Նա մասնավորապէս

²³¹ Քրիստոսատուր գրիչը հիշատակվում է ԺԵ. դարի մի շարք ձեռագրերում, նրա մասին որոշ տեղեկություններ է հաղորդում նաև Լ. Խաչիկյանը [Հիշ. ԺԵ, Ա, 798-799]:

²³² Տե՛ս **Յ. Ստեփաննան**, *Հայ միջնադարեան երաժշտութեան տեսութեանն առնչուող յիշատակութիւնները Ե.-ԺԵ. դդ. ձեռագրերի յիշատակարաններում*, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԻԶ., Պէյրուս, 2006, էջ 32:

գրոււմ է Գառնեցու հրաշագործութիւնները մասին՝ նշելով, որ թեև ինքն անձնապես չի ճանաչել նրան՝ «մեք մարմնով զնա ոչ տեսաք վասն հեռաւորութեան», սակայն նրա մասին շատերն են բազմաթիւ բաներ պատմել²³³: Հովհաննես Գառնեցի, որ առավելապես հայտնի է իր «Աղոթամատուց»-ով²³⁴, ԺԳ. դ. սրբագրել է նաև Սաղմոսարանը և որոշ կարգավորումներ արել: Այդ մասին վկայում են ոչ միայն հետագա գրիչները՝ ընտիր և լավ օրինակ համարելով նրա աշխատանքը, այլև ինքը՝ Գառնեցի: ԺԵ. դարով թվագրվող մի ձեռագրու՞մ արտագրվել և մեզ է հասել Գառնեցու հիշատակարանը, որում մատենագիրը նշում է Սաղմոսարանի սրբագրման զրգապատճառների մասին: Ըստ նրա՝ ոմանք սխալներով և անհասկանալի ձևով են սաղմոս ասել, ոմանք վիճել են սաղմոսներ երգելիս: Գառնեցի գրում է. «Ամենայն ազգք գրով երգեն զՍաղմոսս, եւ հայք, ի բերան առեալ, ասեն վայրապար՝ քահանայք եւ ռամիկք, մանկունք եւ կողեռք, եւ հաւատաւոր կանայք» [Հիշ. ԺԳ, 260]: Այս ամենը ստիպում է Գառնեցուն գնալ Հաղբատ, որտեղ գտնոււմ է թարգմանիչների գրած մագաղաթյա Սաղմոսարան՝ գաղափարված Հովհաննես Սարկավագի ձեռքով: Սրանից էլ Գառնեցի պատճենում է իր օրինակը և հիշատակարանում վստահեցնում. «ընկա՛լ զայս գաղափար իբր բազում երկամբք ստուգեալ» [ն.տ.]:

Հետաքրքիր է, որ 1301 թ. Ստեփանոս անունով մի գրիչ նշում է, որ ինքը ընդօրինակման նպատակով փնտրում է Հովհաննես Գառնեցու համար գաղափար օրինակ ծառայած Հովհաննես Սարկավագի Սաղմոսարանը: Ըստ Ստեփանոս գրիչի՝ Գառնեցու օրինակը տխմար գրիչներն աղավաղել էին արդեն, ուստի՝ ինքը ստիպված մեկնել է Հաղբատ. «Եւ ապա գնացի ի

²³³ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությանը Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 349:

²³⁴ Հովհաննես Գառնեցի, Աղոթամատուց, ձեռագրերի համեմատությունը և բնագիրը՝ Լ. Պետրոսյանի, առաջաբանը և խմբագրումը՝ Գ. Տեր-Վարդանյանի, թարգմանությունը՝ Ա. Մաղոյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածնի, 2007:

Հոչակաւոր Սուրբ ուխտն Հաղբատ, եւ... ի շնորհաց Հոգւոյն մտեալ իմ ի գրատուն, Հանդիպեցայ նորին սուրբ վարդապետին (Իմա՛ Սարկավագի – Խ. Հ.) սուրբ ձեռամբն գրեալ Սաղմոսարանին»:

Լավ օրինակի փնտրտուքը, անսխալ մատյան ունենալու փափագն ու գրչի անկոտորում կամքը կարող են վերջինիս տանից հեռացնել ընդհուպ հազարավոր կիլոմետրեր: Այդ ևս խոչընդոտ չէր կարող լինել, ինչպէս կարելի է համոզվել հիշատակարանների տեղեկութիւններէ: Ահա մի այդպիսի վկայութիւն. 1308 թ. Հովհաննէս անունով գրիչը ճամփորդել է Կիպրոս՝ իր ուզած օրինակից արտագրելու համար.

«Ես՝ մեղաւորս Յովհաննէս, ի վաղ ժամանակաց մեծ փափաքանաք եւ սիրով այս սուրբ մարգարէիցս հրով տոչորէի, զի այսմ արիմակէս ստանայի զսա...: Եւ արիմակքն, որ սուրբ եւ երանեալ վարդապետին Գեորգեայ ձեռացն շարահիսեալք էին, կորեան յաշխարհէս, եւ մի միայն մնաց առ ընտրեալ ոմն քահանայ Ստեփանոս անուն, զոր առ Կիպրոս կղզին գնաց: ...Եւ ի Կիպրոս գնացի վասն զսոյն գրելոյ» [Հիշ. ԺԴ, Ա, 152]:

1310 թ. նույն գրչին տեսնում ենք արդեն Սկեւայում [Հիշ. ԺԴ, Ա, 180]:

Այսպիսով՝ ընտիր և ստույգ գաղափար օրինակի առկայութիւնը գրավական էր լավ ու անսխալ մատյան ընդօրինակելու համար: Գրիչներն իրենց հիշատակարաններում բազմիցս շեշտել են այդ փաստը. լավ օրինակի փնտրտուքի համար նրանք շատ հաճախ ջանք ու եռանդ չեն խնայել և ձեռք են բերել անհրաժեշտ մատյանները, շնորհակալութեամբ են հիշել նաև բոլոր նրանց, ովքեր սիրահոծար կերպով օրինակ են շնորհել. «Տէր Սարգսի, որ զաւրինակն երեւտ, շնորհեսցէ նմա Տէր Աստուած զանվախճան կեանսն. ամէն» [Հիշ. ԺԴ, Ա, 141]:

5.9. ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ՝ ՀԻՇԱՏԱԿԱԳԻՐՆԵՐԻ ԽՆԴՐԱՆՔ-ՀՈՐԴՈՐՆԵՐԸ

«Արդ, դուք, եղբայրք, յիշեցէ՛ք գմեզ յաղայօս,
եւ դուք յիշեալ եղիջիք ի մարդասիրէն
Քրիստոսէ. ամէն»,
Առաքել գրիչ, 1203 թ. [Հ/Ղ. ԺԳ, 36]

Բուն ձեռագրին, նրա ստեղծման հանգամանքներին, ինչպես նաև իրենց աշխատանքին առնչվող մանրամասներին, շատ հաճախ նաև ժամանակի պատմական իրադարձություններին ու հասարակական կյանքին վերաբերող տեղեկություններ հաղորդելուց հետո գրիչներն ապագա ընթերցողներին, մատյանը հետագայում ստացողներին կամ պարզապես այն տեսնողներին դիմում են տարաբնույթ խնդրանքներով, կոչերով կամ հորդորներով: Խնդրանք-հորդորների կարելի է հանդիպել նաև ծաղկողների, ժամանակի կամ հետագայի ստացողների հիշատակարաններում, մինչև անգամ ձեռագրի մի փոքրիկ անկյունում կամ լուսանցքում տարբեր անձանց թողած փոքրածավալ հիշատակագրություններում:

Ըստ բովանդակության՝ այդ խնդրանք-հորդորները մենք դասակարգում ենք երեք հիմնախմբերում, որոնք առանձնաբար ներկայացնում ենք ստորև²³⁵.

5.9.1. ՀԻՇՄԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՆԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔ

Հիշատակարանի սույն հատվածը, ըստ էության, գրավոր այս հուշարձանի հիմնաբաղադրիչն է, այն հիմնական շարժառիթը, որը մղել է ձեռագիրն ընդօրինակողին, ծաղկողին, ստացողին կամ ձեռագրի հետ առնչություն ունեցած անձանց գրելու հի-

²³⁵ Այստեղ նկատի չենք առնում սխալների կամ անփույթ վրիպակների համար գրիչների, ծաղկողների «անմեղադիր լինելու» խնդրանքները, որոնց մասին խոսել ենք վերջիններին նվիրված հատվածներում:

չատակարաններ: Դրանցում վերջիններս խնդրանքով դիմում են մատյանի ընթերցողներին՝ կրոնակից եղբայրներին և հավատացյալ ժողովրդին՝ նրանց «երկնաչու» և «երկնառաք», «սուրբ» և «մաքրափայլ» աղոթքներում հիշատակվելու ակնկալիքով, աղերսում են նրանց «մի բերան ողորմի» ասել և իրենց մեղքերի համար թողություն հայցել Սուրբ Երրորդությունից: Շատ հաճախ հիշատակագիրները նույն խնդրանքով դիմում են նաև տարբեր սրբերի՝ ակնկալելով նրանց բարեխոսությունն ու միջնորդությունը Քրիստոսի երկրորդ գալստյանը բացվելիք Ահեղ ատյանի պահին: Հիշելու և հիշատակված լինելու հանգամանքով էլ, ինչպես տեսանք, պայմանավորված է ձեռագրական այս միավորի հայերեն հիշատակարան անվանումը՝ «ընդունարան յիշատակաց» դիպուկ բացատրությամբ: Կարելի է վստահորեն նշել, որ առանց այս բաղադրիչի, իսկ ավելի ստույգ՝ առանց ընթերցողների աղոթքներում հիշվելու ակնկալիքի չի գրվել հայերեն և ոչ մի հիշատակարան՝ անկախ վերջինի ծավալից ու բովանդակությունից²³⁶:

²³⁶ Ձեռագրական այլ ավանդությունում ևս, բնականաբար, հաճախադեպ է հիշատակարանի այս բաղադրիչը: Ահա վրացի մի գրիչ խնդրում է հիշման արժանի անել իրեն, իր արյունակից և հոգևոր ընտանիքների անդամներին, տե՛ս **G. Shurgaia, G. Shurgaia, Colophon e archeologia del codice**, pp. 123, 139: Իրեն հիշողին աստվածային փրկությամբ է հուսադրում յստիներեն հիշատակարանի գրիչը, տե՛ս **M. Shiegg, Scribes' Voices: The Relevance and Types of Early Medieval Colophons**, p. 137. Երբայակա՞նում ևս հաճախադեպ է հիշատակման արժանանալու խնդրանքը, տե՛ս **M. Beit-Arié, Colophons in Hebrew Manuscripts: Source of Information on Book Production and Text Transmission**, p. 504, արաբական ձեռագրերում ևս՝ տե՛ս **A. D'Otonne, Il colofone nei manoscritti arabo-islamici: alcune note**, pp. 305-313. Տողատակը չձանրաբեռնելու նպատակով նշենք, որ այստեսակ խնդրանքներ առկա են ասորական, դպտական, եթովպական, սլավոնական և այլ ձեռագրական ավանդություններում: Այս հանգամանքը մեկ անգամ ևս ընդգծում է, որ հիշատակարանի նշյալ բաղադրիչն այն կորիզն է, որի շուրջ հյուսվում է բուն հիշատակարանը: Եթե նույնիսկ հիշատակարանում զեղչված է այս խնդրանքը, ապա որևէ անձնանվան գրանցում ինքնին ենթադրում է հիշվելու ակնկալիքը: Նույնը, անշուշտ, վերաբերում է և տարատեսակ արձանագրություններին, որոնք կրկին նույն նպատակով են գրվել կամ փորագրվել:

Մասնավոր տարբերություններով, մասնակի կրճատումներով կամ հավելումներով հանդերձ՝ «յիշման արժանի առնել»-ու խնդրանքի ամենից տարածված կաղապարը հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հետևյալն է (Ավետարանի նշումն այստեղ պայմանական է)։

«Աղաչեմք զձեզ, ո՛վ (այստեղ խոսքն ուղղվում է ապագա ընթերցողներին), որ(ք) աւգտիք ի սուրբ Աւետարանէս կարդալով կամ արիճակելով, յիշեսցի՛ք ի մաքրափայլ աղաւթս ձեր (այս մասում շարագրվում է գրչի կամ ստացողի անունը՝ համապատասխան բառակապակցություններով) եւ զմերձաւորսն ամեճայն» (նշվում են գրչի կամ ստացողի հարագատների անունները, երբեմն առանձնացվում են հոգևոր և արյունակից ընտանիքները, ինչպես նաև ննջեցյալներն ու ողջերը)։

Որպես կանոն՝ հիշատակարանի այս հատվածում գործածվում են «յիշել» բայի գրաբար բուն և հորդորական հրամայականների հոգնակի ձևերը՝ «յիշեցէ՛ք» կամ «յիշեսջի՛ք», հազվադեպ են նույն եղանակի եզակի՝ «յիշեա՛» (երբեմն՝ եա>ե/է հնչյունափոխությամբ պայմանավորված՝ «յիշէ») և «յիշեսջի՛ր» ձևերը։

Վկայակոչենք համապատասխան մի քանի օրինակ. «Զստացող սուրբ կտակիս՝ զՍտեփանոս յիշեցէ՛ք ի Տէր եւ զծնողս նորա» [Հիշ. ԺԳ, 14], «Արդ, դուք, եղբա՛րք, յիշեցէ՛ք զմեզ յաղաւթս, եւ դուք յիշեալ եղիջիք ի մարդասիրէն Քրիստոսէ. ամէն» [Հիշ. ԺԳ, 36], «Որք աւկտիք ի սմանէ կարդալով կամ աւրինակելով, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՀայրապետ կրանաւորն եւ զամենայն արեան մերձաւորսն իւր. ամէն» [Հիշ. ԺԴ, Ա, 159], «Զգրաւզ գրոցս՝ զնուաստ ոգի զԵրեմիա սուտանուն երէց եւ զծնաւդսն իմ յիշեսջիք աղաչեմ. եւ Աստուած զձեզ յիշէ իւր արքայութիւնն» [Հիշ. ԺԴ, Ա, 165], «Որք հանդիպիք սմայ տեսութեամբ կամ ընթերցմամբ կամ գաղափար առնլով, յիշեսջիք սրբայմատոյց յաղաւթս ձեր զմեղապարտ գծող սորա՝ զԵրեմիա» [Հիշ. ԺԴ, Ա, 165] և այլն։

Հաճախադեպ են նաև «յիշման արժանի առնել» բառակապակցությունների կիրառություններն այս բաղադրիչում: 1403 թ. մի հիշատակարանում կարդում ենք ստացողի խնդրանքը, որն իրեն ու իր հարազատներին հիշողներին խոստանում է աստվածային վարձատրություն ինչպես երկրային, այնպես էլ երկնային կյանքում. «Աղաչեմ եւ դարձեալ, կրկին աղաչեմ զձերոյ հեզութիւնդ, զի ի մաքրամատոյց աղաւթիւքդ ձերոյ անմոռաց յիշման արժանի առնէք զմեզ, եւ Աստուած զձեր միոյ յիշմանն հարապատիկ հատուցէ աստ եւ ի հանդերձեալս. ամէն» [Հիշ. ԺԵ, Ա, 33]:

Որոշ հիշատակագիրներ շարագրում են ավելի ընդարձակ տողեր, դրանցում նշում իրենց «անթիվ և անհամար» մեղքերը, ապա միայն թողություն հայցում: «Աղաչեմ ձեզ, ո՛վ մանկունք Նոր Սիոնի, յիշեցէ՛ք զՍտեփաննոս եւ զԾնողան իմ, եւ եղբայրս իմ, եւ զՍարգիս քահանայ, եւ Աստուած զձեզ յիշէ. ամէն, ամէն», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 686], մեկ ուրիշում կարդում ենք. «Աղաչեմ յոքնամեղ գրիչս Կիւրակոս, որ եւ անյիշելի անուն, յիշել զգեղկելիս եւ խնդրել թողութիւն բազմամեղիս եւ ծնաւդաց իմոց, եւ առատն ի պարգեւս առհասարակ յիշողացդ եւ յիշելոցս ողորմեսցի, եւ նմա փառք յաւիտեանս. ամէն» [Հիշ. ԺԳ, 235]: Աստվածատուր գրիչն էլ հիշման արժանանալու խնդրանքով հետևյալ կերպ է դիմում ընթերցողներին.

«Առաջի ձեր անգեալ գերեսս իմ ընդ երկիր քարշել բախմամբ կրծոցս, զձեռս առ ձեզ կարկառեալ, արտասուս կաթեցուցանելով առաջի ձեր սրբութեանդ, զի յիշման արժանի առնէք զիս եւ ծնաւդսն իմ եւ զեղբայրսն իմ, եւ զԴաւիթ կազմողս եւ զիրսն ամենայն յիշեցէ՛ք առ Աստուած» [Հիշ. ԺԳ, 727]:

Գրիգոր գրիչն էլ հետևյալ խնդրանքով է դիմում. «Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ տառի եւ աւգտիք ի սմանէ, յիշեա՛լի՛ք ի մեղսաքաւիչ աղաւթս ձեր զպատուական

դպիրն՝ Խաչուկ, եւ զծնողս իւր... , ընդ նմին եւ զեղկելի գրիչս՝ զԳրիգոր, եւ զծնաւղս իմ աղաչեմ յիշել ի Տէր» [Հիշ. ԺԴ, Ա, 131]:

1312 Թ. ավարտելով ձեռագրի ընդօրինակումը՝ աղթամարցի Դանիել գրիչը նարեկացիական ոգով և նրա «Մատյան»-ում գործածված բառերով ու արտահայտութիւններով հյուսուած է մի հետաքրքիր հիշատակարան՝ ինքնախարագանման երկարաշունչ տողերով և մեղքերի թողության աղերսով.

«Վասն զի ողորմածն Աստուած ողորմութեամբ եւ գթութեամբ հալեացի ի մեզ յահագին ատուրն դատաստանի եւ անտես արասցէ զբազմութիւն մեղաց մերոց զյիշելոցս ի սմա (Ակառի ունի հիշատակարանը – Խ. Հ.) եւ զամենայն քաւտացելոցս Քրիստոսի: Սոցին մման եւ առ ձեզ պաղատիմ, ո՛վ պատուական հարքն իմ եւ եղբարք՝ անքիծ արեանն Յիսուսի ստացուածք, զի եւ դուք ցաւակիցք լինիջիք վիրաւորեալ անդամոցս եւ աղաւթիք ձերովք ողջացուցիչք կարեւր խոցելոյս: Որք հանդերձեալ եք ժառանգել սուրբ գիրքս զայս, յետ մարմնոյս ի հող դառնալոյ եւ հոգւոյս առ Աստուած, որ ստեղծ գաս, արժանի՛ արարէք միով Տէր ողորմի: Զի եւ դուք ողորմութիւն գտջիք յարիմութեանն պահու, յորում ամենայն արհմութիւնք եւ գոհութիւնք եւ երկր[ր]պագութիւնք՝ Հար եւ Որդոյ եւ Սուրբ Հոգւոյն երից անձնաւորութեանն, անբաժանելոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն» [Հիշ. ԺԴ, Ա, 220]:

Հիշելու և հիշատակված լինելու այս բաղադրիչի և դրա համապատասխան արտահայտութիւններն ու բառերն մեջ հիշատակագիրները, հիբավի, մեծ հավատ են դրել, հուսացել, որ այլոց մի «Տէր ողորմի»-ով կամ պարզապես աղութքներում հիշվելու շնորհիվ կարժանանան երկնային պարգևների և աստվածային արդար դատի: Ուստի՝ քիչ չեն նաև այնպիսի հայերեն ձեռագրերը, որոնք պարունակում են միմիայն «յիշման արժանի առնել»-ու խնդրանքով բաղադրված մեկ կամ երկու նախադասութեամբ հիշատակարաններ, ասել է թե՛ գրված են միայն ըստ էութեան:

Այս հատվածում մեր խոսքն ամփոփենք Գրիգոր դպրի հիշատակարանից մի հատվածով.

«Յիշեցէ՛ք... աշխատողին, գրողին, սպասաւորին, եւ փողարկողին, եւ ստացողին, եւ գրել տուողին, եւ հաւցողին, եւ խնդրողին, եւ վարձ տուողին, եւ հաց տուողին, եւ ջուր բերողին, եւ աւգտակար եղելոյն: Յիշողն եւ ողորմի ասողն՝ Քրիստոս ողորմի իր միսանգամ գալստեանն. ամէն» [Հիշ. ԺԷ, Բ, 683]:

5.9.2. ՉԵՌԱԳՐԻ ՊԱՏՊԱՆՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՈՐԴՈՐ-ԽՆԴՐԱՆՔ

Հայերեն հիշատակարաններում գրիչների և ստացողների խնդրանքների մեջ զգալի տեղ են զբաղեցնում նաև ձեռագրերի պահպանմանն ուղղված խնդրանք-պատգամները, որոնցում հիշատակագիրները խնդրում և պատվիրում են խնամքով պահել ձեռագիրը, գրավ չդնել, չվաճառել և նախատեսված վայրից չհեռացնել այն: Աղթամարից մի գրիչ թախանձում է սրտացավություն ցուցաբերել մատյանի հանդեպ, «վայրաբար» չթերթել: Կարգում ենք նրա հիշատակարանում. «Աղաչեմ զսպասաւորքդ սուրբ եկեղեցւոյդ, սրտացաւաբար պահել զգիրքս եւ պատրաստութեամբ սպասաւորել սմա, ոչ վայրապար շրջընել զթոյլ նիւթս սորա, այլ խնամքով կարգալ զսա» [Հիշ. ԺԴ, Ա, 220]: Ահա մեկ ուրիշը. «Եւ մի ոք անաւաղ (անփուլթ – Խ. Հ.) շաւշափեսցէ զսա եւ կամ ի գետնի դնիցէ, այլ զգուշութեամբ սպասաւորեսցէ սմա երկու կամ երիւք դաստառակաւ, զի զգեցուցէ զնա զգեցուցանաւդն Ադամայ, որում փառք յաւիտեանս. ամէն» [Հիշ. ԺԴ, 497]: Հոգևոր ծնողի պես մատյանը խնամելու հորդոր է հնչեցնում Հովհաննես գրիչը. «Խնդրեմ... խնամ տանել իբր հոգևոց ծնողի...: Մի՛ մրոտել, մի՛ բացբերան եւ մերկ ընկենուլ, մի՛ գողանալ, մի՛ ունել խափան եւ կամ խնայել տալ աւրինակ» [Հիշ. ԺԴ, Ա, 229]: Լևոն Լազրցի գրիչն էլ պարզապես հրահանգ է հնչեցնում. «Եւ դու, եկեղեցպա՛ն, մի՛ ան-

փոյթ առնելու եւ թոյլ տալ ի ձեռս ախմարաց անսահման բռնել, եւ մի՛ բերանաբաց կալնուլ, զի ի փոշոյ ապականեսցի, եւ մի՛ մրճոտեալ ապականեսցի ի յաղտոյ եւ ի մոմէ կաթուածոյ» [Հիշ. ԺԴ, Ա, 306]: Ահա ևս մեկը Ժէ. դարից. «Լաւ պահեցէ՛ք զգիրքս ի մոմէ, ի կրակէ, ի ջրէ եւ ամենայն իրէ, որ գրողն, լաւ պահողն միապէս առնուն վարձքն ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն» [Հիշ. Ժէ, Ա, 500]:

Մատյանը խնամքով պահելու այս հորդորները շատ հաճախ իրենց շարունակությունն են ստանում մատյանի հետ ճիշտ վարվելու, այն կեղտոտ ձեռքերով և թքոտ մատներով չբռնելու կամ չչոշափելու խորհուրդների տեսքով, ինչպես տեսանք վերի օրինակներում: Ահա ևս մի քանիսը. «Քրիստոս Աստուած աւրհնէ զձեզ, քահանայք եւ ժողովորդք, որ լաթով պահէք եւ ճենճոտ ձեռաւք չբռնէք» [Հիշ. ԺԵ, Գ, 386], «Դարձեալ փառաւոր պատուով եւ ծածկուցով պահէ՛ գտուրք Աւետարանս» [Հիշ. ԺԵ, Բ, 420]: Ամիդում 1616 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում գրիչն ընդարձակ շարադրել է ձեռագրի խնամքին վերաբերող իր խոսքը և որպես սթափեցնող ու ազդու միջոց՝ ընտրել է նաև Ավետարանից համապատասխան մեջբերում.

«Եւ արդ, աղաչեմ զմանկունսն լուսածնեայք սուրբ ասագանան զորդիքդ նոր Սիովնի, որ ամենայն պատրաստութեամբ հոգ տանիք, եւ լաւ պահէք զսուրբ Աւետարանս՝ ի ջրոյ եւ ի հրոյ եւ ի տգիտաց ձեռս չտայք, որ ապականեն զլուսանցսն եւ զծաղիկսն կամ զպատկերսն եւ կամ թուփ եւ պատկեր կտրեն եւ կամ խաչ բեւեռելով՝ զթուղթսն ծակծկեն, այլ ամենայն կողմանց պատրաստութեամբ լա՛ւ պահեցէք, որ վարձս ի Քրիստոսէ առնուք, եւ թէ ոչ, նա դատապարտիք ի բանէ սուրբ Աւետարանիս, որ ասէ. «Ի բա՛ց կացէք յինէն ամենայն մշակոյ անիրատւեան» (Ղուկ., ԺԳ, 27)» [Հիշ. ԺԷ, Ա, 597]:

Կաֆացի հանրահայտ գրիչ-ծաղկող Նիկողայոս Մելանավորի 1655 թ. ընդօրինակած Աստվածաշունչ մատյանի հիշատակարաններից մեկում կարդում ենք.

«Դարձեալ աղաչեմ եւ խնդրեմ, պատահո՞ղք սուրբ Աստուածաշունչ կտակիս, ընթերցո՞ղք, եւ կամ գաղաբարո՞ղք եւ կամ հարեւանցի տեսո՞ղք, խնամով բռնէ՛ք իր եղեալ շորերովն, զի յո՞ժ աշխատութեամբ ենք գրեալ եւ քրտնաջան կազմեալ, եւ ի մի տուր եղեալ. եւ ծաղկեալ ոսկիատուփ արիմեալ եւ գունակ-գունակ գունով եւ արակ արակ նկարով նկարեալ, որպէս կու տեսանէք մի ըստ միոջէ գաշխատութիւն եւ զջանս մեր. աղաչեմ, աղաչեմ լսողացն մեր. Աստուած իրն լսէ. ամէն» [Հիշ. ԺԷ, Գ, 671]²³⁷:

Ձեռագրի նկատմամբ պատկառանքի, պատշաճ վերաբերմունքի մասին արտահայտութիւններ և կոչեր, մատյանի հանդեպ ընդգծված սրտացավութեան դրսևորումներ գտնում ենք ոչ միայն հայկական, այլև հունական, լատինական, ասորական, դպտական և ձեռագրական այլ ավանդույթներում ևս, որն, ընդհանուր առմամբ, խոսում է գրքի և առհասարակ գրավոր մշակույթի հանդեպ միջնադարում եղած վերաբերմունքի մասին: Լատին միջավայրում ընդօրինակված ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք գրչի հետևյալ տողերը. «Ով օրհնյալ ընթերցող, լվա՛քո ձեռքերը և գրքին այդպե՛ս հպվիր, թերթը դանդա՛ղ շրջիր, մատդ հեռո՛ւ պահիր գրադաշտից (բառացի՛ գրված մասից, գրութիւններից)»²³⁸: Լատիներեն մեկ այլ ձեռագրում հիշատակագիրն անիծում է ձեռագիրը բաց վիճակում թողնողին²³⁹ ճիշտ այնպես, ինչպես վերի օրինակում հայ հիշատակագիրն էր պատվիրում. «Եւ մի՛ բերանաբաց կալնուլ, զի ի փոշոյ ապականեսցի»:

Ղպտական ավանդույթում էլ տեսնում ենք ձեռագրի նկատմամբ ակնածանքի ու խնամքի ընդգծված դրսևորումներ, մաս-

²³⁷ Հիշատակարանի վրա մեր ուշադրությունը հրավիրելու համար շնորհակալ ենք գրքի խմբագիր Գևորգ Տեր-Վարդանյանին:

²³⁸ Լատիներենը՝ “*O beatissime lector, lava manus tuas et sic librum adprehende, leniter folia turna, longe a littera digito pone*”, տե՛ս **M. Shiegg, Scribes’ Voices: The Relevance and Types of Early Medieval Colophons**, p. 142.

²³⁹ Նույն տեղում:

նավորապես այստեղ էլ սովորույթ է եղել ձեռագիրը շորով (դաստառակ, շուշպա) բռնել կամ շորով փաթաթած պահել²⁴⁰, որն այնքան տարածված է եղել և շարունակում է մնալ հայոց մեջ, հիշենք թեկուզ հենց վերոհիշյալ գրչական պատվերը՝ «լաթով պահէ՛ք եւ ճենճոտ ձեռաւք չբռնէք» [Հիշ. ԺԵ, Գ, 386]:

Ասորական հիշատակարաններում ձեռագիրը փչացնողներին, անբարեխիղճ ընթերցողներին ուղղված են աստվածային պատժի սպառնալիքներ, որոնք, կարծես, զգաստության ինքնատիպ կոչեր են²⁴¹:

Այս տեսանկյունից խիստ ուշագրավ են հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք հարուստ են Աստծու դատաստանի սպառնալիքներով, անեծքների ու նզովքների տարատեսակ բանաձևերով՝ ուղղված ձեռագիրը վնասողներին, գողացողներին, գրավազրոյններին, նախատեսված վայրից այն հեռացնողներին: Ըստ էության՝ նման անեծքներն ու նզովքներն ունեցել են և ունեն ավելի շուտ պաշտպանիչ և ձեռագրի կորուստը կանխարգելող կարևոր նշանակություն. աստվածավախ մարդիկ սարսափել են աստվածային պատժից, Ահեղ դատաստանից ու անեծքներից, որոնց հասցեատերը կարող էին լինել, եթե հիշատակագրի կոչին ականջալուր չլինեին: Հայ բանագիտության նահապետներից Սարգիս Հարությունյանն առանձին և մանրամասն քննության է առել այս երևույթը հին գրավոր հուշարձաններում և դիպուկ նկատել, որ «հմայական չար ու բարի խոսքերը՝ անեծքներն ու օրհնանքները» հիշատակի պահպանության լավագույն միջոցներ էին, որոնք ժամանակի ընթացքում մշտապես

²⁴⁰ **А. И. Еланская**, *Коптская рукописная книга*, “Рукописная книга в культуре народов Востока” (очерки), книга первая, Москва, 1987, стр. 71-72.

²⁴¹ **S. P. Brock**, *The Art of the Scribe*, p. 259. Ձեռագրական այլ ավանդույթներում էլ դիտվում են նման երևույթներ՝ դպտակաւնում՝ **A. Soldati**, *Some Remarks about Coptic Colophons and Their Relationship with Manuscripts: Typology, Function and Structure*, p. 118, երրայակաւնում ևս՝ **M. Beit-Arié**, *Colophons in Hebrew Manuscripts: Source of Information on Book Production and Text Transmission*, p. 504 և այլն:

պահպանել են իրենց գորությունը²⁴²: Տիպական մի քանի օրինակով մասնավորեցնենք մեր ասածը:

1316 թ. Տարսոնի եպիսկոպոս Ստեփանոս Կրակցին Ավետարան է ստանում, որի հիշատակարանում գրչին արձանագրել է տալիս, որ մատյանն իր մահից հետո կտակում է Սուրբ Աստվածածին եկեղեցուն, և որևէ մեկն իրավունք չունի այն գողանալ կամ հեռացնել վանքից.

«Եւ ետ զսա զկնի մահումս իւրոյ ի ժառանգութիւն Մարն Աստուծոյ ի յԱւագ Մլիճին, եթէ կամի Աստուած ուր եւ հասանէ վախճան կենաց իւրոց, անդ առաքեսցի, զի իւր ժառանգատր Սուրբ Աստուածածինն է: Եւ որ զայս սուրբ Աւետարանս հանէ եւ կողոպտէ զՍուրբ Աստուածածինն յետ իւր մահումս, հանցէ Քրիստոս զնա յիւր արքայութենէն, եւ զմասն անոր ընդ անհաւատս եւ ընդ կեղծատրս դիցէ, քանզի սեղանակապուտ է: Եւ ժառանգատրն սորա Սուրբ Աստուածածինն աւտիս եւ դատախազ ի համագումար ատեանն առաջին արդար դատատրին Քրիստոսի» [Հիշ. ԺԴ, Ա, 306]:

Ահա մեկ ուրիշը ևս 1224 թ. մի հիշատակարանից. «Արդ, թէ ոք զայս Աւետարանս զայս եկեղեցւոյս հանէ ի մերոց կամ յաւտարաց, նզովս առցէ» [Հիշ. ԺԳ, 140]:

Տարածված են նաև ձեռագրերը գողացողներին, դրանց գրավադրողներին, այսինքն՝ ձեռագրի Ֆիզիկական գոյությանը սպառնացողներին հասցեագրված անեծքները: 1307 թ. ստացողի մի հիշատակարանում կարդում ենք հետևյալը.

«Եւս եւ թէ ոք յանդգնի գողանալ զսայ, կամ վաճառել, կամ գրաւել, կամ զինչ եւ է պատճառի հեռացուցանելոյ ի դրանէ Աստուածածնիս Աղթամարս, ինքն հեռացեալ եղիցի յողորմութենէն Քրիստոսի եւ մասն եւ բաժին զՅուդայիս եւ զխաչողացն առցէ, ո ոք եւ է՝ թէ՛ երէց, թէ՛ աշխարհական, թէ՛ այր, թէ՛ կին» [Հիշ. ԺԴ, Ա, 120]:

²⁴² **Ս. Հարությունյան, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանասիրության մեջ,** ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 101:

Հիշատակարաններում բազմաթիվ են ձեռագրերի գողուլթյան և փրկագնման վերաբերյալ տեղեկությունները, մինչդեռ գրավադրումը խիստ հազվադեպ է վկայված: Ահա այդպիսի մի եզակի օրինակ, որ գտնում ենք 1465 թ. մի հիշատակարանում՝ գրված անձամբ գրավադրողի կողմից. «Ի թվին Զ. եւ ԺԴ. (1465) ես՝ Յոհան արեղայս, առի Ժ. (10) կարմիր փող ի Սարգիս վարդապետէն ի փոխ, եւ զգիրս գրաւ դրի առ նա, մինչեւ զփողերն տանն եւ զգիրս առնունն: Տէր Յովանիսին վկայութեամբ գրեցաւ գիրս հոկտեմբեր է. (7)» [Հիշ. ԺԵ, Բ, 242, ընդգծումը մերն է – Խ. Հ.]: 1452 թ. մի հիշատակարանում էլ կարդում ենք, որ վերջին ստացողը գրավից ազատել և դնել է մի Ավետարան ու մի եմփորոն. «Գնեցի զսուրբ Աւետարանս եւ եմփորոն մի ի գրաւէն, եւ եդի ինձ յիշատակ ի սուրբ Յակոբ ի յերուսաղէմ» [Հիշ. ԺԵ, Բ, 28]:

Անեծքի հասցեատեր են նաև բոլոր նրանք, ովքեր ձեռագիրը կփչացնեն իրենց գրով և անհարկի հավելումներով: «Զեռքն այն չորանա եւ աչքն կուրանա, ով ոք որ ի սուրբ գրոցս պարապ տեղիքն գրիչ դնելով, այլ որիչ իրմէն ի դատ բան գրէ, յանդրգնաւդքն ընդ կապանաւք եղիցին», – կարդում ենք 1311 թ. հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԴ, Ա, 198]:

Մատյանը գրավադրողներին, գողացողներին, եկեղեցուց հանողներին ուղղված գրիչների անեծքներն աչքի են ընկնում իրենց կաղապարային բնույթով. արտահայտվում են հիմնականում Նիկիայի ժողովին մասնակից 318 հայրապետների նզովքի, կենաց մատյանից ջնջվելու, եղբայրասպան Կայենի կամ մատնիչ-դավաճան Հուդայի բախտին արժանանալու սպառնալիքներով. «Արդ, մի ոք իչխեսցէ հանել զսա ի դըրանէ սորին (նկատի ունի եկեղեցին – Խ. Հ.). եթէ յանդգնի, զպատիժն Կայենի առցէ եւ զմասն Ուդայի, եւ զՔրիստոս խաչահանողացն. ամէն: Եղիցի, եղիցի» [Հիշ. ԺԳ, 57], «Արդ, թէ իմոց կամ յաւտարաց կամ էլազգեց զէս գիրս խափանել ջանայ ու զէս եկեղեցիւս եւ ընդ հարկիւս [հ]անել ջանա, մեր ազգի ու տակի մեղաց տէր եղիցի, մասն եւ բաժին ընդունեսցի» [Հիշ. ԺԳ, 906]:

Ընդհանուր առմամբ, մեկ դեպք է նշվում, երբ հնարավոր էր ձեռագիրը տեղաշարժել իր բնական միջավայրից և չարժանանալ հիշատակագիրների նգովքին: Դա ձեռագրին սպառնացող վտանգի պահին մատյանը հեռացնելու և խաղաղ ժամանակ վերադարձնելու դեպքն է.

«Իսկ եթե ոք իշխանութիւն ի կիր արկցէ եւ հանցէ, Քրիստոս լինի անա դատախագ, եւ ելցէ ինքն իրաւնովքն ի կենաց գրէն: Իսկ եթե ոք վասն հեծելի եւ կամ վասն այլ իրիք խոսվութեան հանցէ, եւ յորժամ խաղաղի դարձուցէ ի տեղի իր, արհմի յԱստուծոյ» [Հիշ. ԺԴ, 169]:

Անշուշտ, ձեռագրի հանդեպ հոգատար վերաբերմունքը, նախատեսված վայրից այն հհեռացնելն ու խնամքով պահելը չի ենթադրել երբեք մատյանը փակի տակ պահել կամ արգելել կարդալու և օրինակելու նպատակով մատյանին մոտենալը: Արգելողներին ու մատյանը փակի տակ պահողներին շատ հաճախ ևս հասցեագրվել են անեծքներ, քանի որ փակված գրքերը «կուռք են»: Ահա օրինակ 1296 թ. Մովսէս գրիչն իր հիշատակարանում պատվիրում է ձեռագիրը երբեք չթաքցնել և չմերժել այն տեսնել կամ կարդալ ցանկացողներին: Հակառակը գործողներին անիծում է.

«Որ զգիրքս զԱստուածաշունչս եւ կամ զՄեկնիչերն եւ զնրբերն եւ ինչ վարդապետական գիրք կա, խնայէ դասասաց վարդապետի, փակեալ լիցի անա դուռն արքայութեանն Աստուծոյ, զի զգրեանքդ վասն դասի ենք դրել ի դուռն Սուրբ Լուսաւորչիդ: Որ փակէ եւ չտա, փակեալ լիցի անա կենացն մուտ. ամէն» [Հիշ. ԺԳ, 781]:

Հիշատակագիրները չեն մոռանում դրական խոսքեր և օրհնանքներ հասցեագրել նաև բոլոր նրանց, ովքեր հետևում են հիշատակարանի պատգամներին, խնամում և պահպանում են մատյանը, այն չեն վտանգում. «Կատարիչք հրամանի գրոցս աւրհնեալ եղիցին յԱստուծոյ. ամէն»,– կարդում ենք Խորանաչատի նշանավոր Ավետարանի հիշատակարանի ավարտին [Հիշ. ԺԳ, 140]:

Այսպիսով՝ հիշատակագիրներն իրենց խնդրանքներում շատ հաճախ առանձին տեղ են հատկացրել մատյանի պահպանմանը վերաբերող կոչերին, հորդորներին, նրանցից շատերը նույնիսկ անհրաժեշտ են համարել արձանագրել, թե ինչպես պետք է ձեռագրին դիպչել, ինչպես այն պահել և այլն: Հիշատակագիրների տողերում հաճախադեպ են նաև անեծքների ու օրհնանքների բանաձևերը, որոնք հիմնականում միտված են մատյանների



Նկ. 23. Շուշպաներով փաթաթված գրքերը

պահպանմանն ու կորստյան հնարավոր վտանգներից հեռու պահելուն: Հմայական բնույթի այդ խոսքերի հիմքում ժողովրդական հոգատար վերաբերմունքն ու պաշտամունքն են դեպի գիրը և գրավոր մշակույթը: Հատկանշական է, որ անեծքներն ու օրհնանքները ձեռագրապահպանման գործում նկատելի ազդեցություն են ունեցել ոչ միայն անցյալում, այլև շարունակում

են ունենալ մեր օրերում ևս: Դրա ցայտուն դրսևորումներից է բազմաթիվ հայ ընտանիքներում պահվող և «տան սուրբ» հանդիսացող մատյանների առկայությունը²⁴³, որոնց համար երբեմն առանձին և հատուկ անկյուններ կամ տարածքներ են հատկացվում տներում կամ դրանց մերձակայքում, իսկ բուն ձեռագրերը հիմնականում պահվում են շուշպաների մեջ փաթաթված կամ կտորից գործվածքների մեջ²⁴⁴: Նկատենք, որ այս պարագայում ականատես ենք լինում փոխադարձ պահպանություն մի ուրույն գործընթացի, երբ մի կողմից մատյանի սեփականատերն է այն պահպանում և պաշտպանում (այսօր էլ գրանցվում են գողությունների դեպքեր), իսկ մյուս կողմից իբրև տան և ընտանիքի պահպան՝ հանդես է գալիս մատյանը, որը, ըստ ազգագրական նյութերի, շատ հաճախ ունի նաև բուժիչ հատկություններ²⁴⁵:

²⁴³ Ընտանիքի անդամները համոզված են, որ եթե մատյանն իրենց տնից դուրս բերվի կամ վնասվի, ապա դժբախտությունը վրա կհասնի կամ կգործի ինչ-որ անեծք, ուստի՝ շատ հաճախ նախընտրում են թույլ չտալ անձանոթների այցելություններն ու մատյանների լուսանկարումը: Տե՛ս **H. Petrosyan**, *Writing and the Book*, “Armenia. Folk Arts, Culture and Identity”, ed. by L. Abrahamian and N. Sweezy, Indiana University Press, Bloomington and Indianapolis, 2001, p. 58.

²⁴⁴ «Տան սուրբ»-երի և նրանց առնչվող մանրամասների համար տե՛ս **Հ. Մարություն**, «Տան սուրբ» երևույթը. ակունքների հարցը և մերօրյա դրսևորումները, «Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը» [հոդվածների ժողովածու], Երևան, «Հայաստան» հրատ., 2001, էջ 337-346: Թեմայի առնչությամբ հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել նաև Բոլոնիայի համալսարանի երիտասարդ հետազոտող Ս. Ֆերիանին, տե՛ս **S. Ferriani**, *I libri detti «santi della casa» (tan surber): primi risultati di una ricerca antropologica nella Repubblica d'Armenia*, “Rassegna degli Armenisti Italiani”, vol. XVI (2015), pp. 25-32. 2018 թ. հունիսին Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում մեզ հաջողվել է գրանցել մի հետաքրքիր բանավոր գրույց՝ դաստառակի կամ շուշպայի մասին: Մեր գրուցակից 63-ամյա Արաբելյա Երեմյանը պատմեց, որ իր տեղեկություններով շուշպան պետք է գործի կամ կարի այրի կամ կույս կինը, ավելին՝ միայն այդ կանայք կարող են դիպչել շուշպային, լվանալ այն և այլն: Իր տանը պահվող տպագիր երկու գրքերի՝ 1852 թ. Աղոթագրքի և 1923 թ. Նոր Կտակարանի շուշպաները, իր հիշելով, գործել է իր ամուսնու այրիացած տատը և պատգամել խնամել դրանք գրքերի հետ միասին (նկ. 23):

²⁴⁵ **Հ. Մարություն**, *նշվ. աշխ.*, էջ 342:

Մերօրյա նման դեպքերը կրկին ընդգծում են մատյանի նկատմամբ մեր ժողովրդի՝ դարերի խորքից եկող առանձնահատուկ վերաբերմունքը, որը ժամանակի հետ ոչ միայն չի նվազել և չի վերացել, այլև փոխակերպվել է մի հետաքրքիր և սերնդեսերունդ փոխանցվող սովորույթի:

5.9.3. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ՉՓՉԱՅՆԵԼՈՒ

ԵՎ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՉԵՂԾԵԼՈՒ ԽՆԴՐԱՆՔ

Երբեմն առանձին, իսկ ավելի հաճախ ձեռագրի պահպանման խնդրանքներին միահյուսված՝ հիշատակագիրները խնդրում են չեղծել իրենց հիշատակարանները, չկտրել դրանք ձեռագրերից, չփոխել, չջնջել դրանցում արձանագրված իրենց կամ իրենց հարազատների, կրոնակից եղբայրների և այլոց անունները: Հիշատակարանում անունն ամրագրելն ուներ էական նշանակություն (մանրամասն տե՛ս § 10-ում), և շատերն այդտեղ անվանապես հիշատակվելու նպատակով պահպանում էին մատյանի ստեղծմանը զուգարով, նյութերով, տարաբնույթ աշխատանքներով, մինչև անգամ սննդով: Ուստի՝ հիշատակարանի եղծումը և հատկապես անունների ջնջումը մոռացնել կտար այդ մարդկանց հիշատակը, որի հետ և ամենակարևորը՝ նրանց գործը: Մատյանի հետագա սեփականատերերին կամ պարզապես ընթերցողներին ուղղված իրենց խնդրանքներում, ըստ այդմ, հիշատակագիրներն առանձին շեշտագրում են նշյալ գործոնը, թախանձում են չվնասել իրենց գիրը և հավելում, որ ձեռագրի ազատ էջերին կամ հատվածներին նույնպես կարելի է գրել հիշատակարաններ՝ արժանի մարդկանց անունների նոր գրանցումներով: Հովհաննես գրչի 1319 թ. հիշատակարանում կարդում ենք.

«Զմեղաւոր հողս Զոհանէս՝ գգրաւղ սուրբ տառիս, եւ զծնաւիսն իմ եւ զեղբարսն իմ՝ զՍմբատն եւ զՎասիլ, եւ զամենայն ազգատոհմս իմ յիշեցէ՛ք... եւ անուն մի՛ քերէք, զի չար սովորութիւն է, եւ թէ արժանի էք, գրեցէ՛ք եւ զձեր անունդ յայլում տեղտոջ» [Հիշ. ԺԴ, Ա, 394]:

*Ժէ. դարակեսին կաՖացի գրիչ Պարսամը, ընդօրինակելով Գր. Տաթևացու Քարոզգիրքը, ազատ թերթեր է թողել մատ-
յանում այն նպատակով, որ հետագա հիշատակագիրներն այդ-
տեղ գրեն և չեղծեն իր հիշատակարանը: Գրչի տողերում կար-
գում ենք.*

«Դարձեալ կրկին եւ երեքկին աղաչեմ զպատահողս մի՛
առնիցէք զչար սովորութիւն, որք քատանն զյիշատակա-
րանս գրոց, որպէս թէ զհրեանցն գրեսցեն: Արդ, ահա թողաք
զկնի սորա յուով թուրթ անգիր. եթէ կամիցիք, անդ գրեսցիք
զձեր, եւ զմերս յիշատակ թողջիք աստ» [Հիշ. ԺԷ, Գ, 20]:

*Այն, որ հիշատակարանների եղծման, կտրման կամ անուննե-
րի ջնջման մերժելի երևույթն իսկապես գոյություն է ունեցել,
կարելի է նկատել ոչ միայն մի շարք ձեռագրերում, այլև այդ
մասին ընթերցել գրիչների անկեղծ տողերում: Սկևռայի գրչօ-
ջախում 1310 թ. ընդօրինակված մատյանի գրիչն այսպես է
հիշատակագրել.*

«Գիտէ՛ք, եղբա՛րք, զի է սովորութիւն ոմանց, որ վերջին
ժառանգաւորք գրոցն զառաջնոյն զանունն կու ջնջեն եւ
զհրեանցն կու գրեն, եւ չար է սովորութիւնս այս. աղաչեմ
մի՛ գործել զչարդ զայդ մեծ, ապա թէ արժան է գրելոյ, գրես-
ցէ զիր անունն յայլում տեղուջ, եւ զառաջնոյն մի ջնջեսցէ
անուն կամ գիր. եւ որ ոք յայս յանդգնի եւ ջնջէ, ինքն ջնջի ի
կենաց գրոյն, ո ոք եւ իցէ, եթէ մեծ ոք եւ կամ փոքր» [Հիշ.
ԺԴ, Ա, 182]:

*Այս հիշատակարանն իր շարադրանքի ոճով և բովանդակու-
թյամբ աննկատ չի մնացել նաև գրչական միջավայրում և կրկ-
նօրինակվել է այլ գրիչների կողմից ևս²⁴⁶:*

²⁴⁶ Գրեթե նույնությամբ սույն հիշատակարանը գտնում ենք նաև ԺԷ. դարի պոլսեցի գրիչ Հակոբ Լեհացու ընդօրինակություններից մեկում, տե՛ս **Ն. Վարդանյան**, *ՄՄ 3919 ձեռագրի գրչության վարդի ու թվականի հարցի շուրջ*, «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, 2017 թ., նոյեմբերի 28-30)», Երևան, «Արմավ» հրատ., 2018, էջ 298:

Որքան էլ հաճախադեպ են հիշատակագիրների նման խնդրանքները, այնուամենայնիվ, միշտ չէ, որ դրանք իրենց ազդեցութիւնն են թողել. դժբախտաբար, ձեռագրերում, ինչպես նաև հետագայում հնատիպ գրքերում կարելի է տեսնել այդ վատ սովորութեան բազմաթիվ դրսևորումներ, երբ մատյանի հետագա սեփականատերը իր կամ իր հարազատների անուները հիշատակարանում դրոշմելու նպատակով ջնջել է վաղուց ի վեր այդ նույն տեղում արձանագրված անձնանունները: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ անուներին ջնջման և նորերը հավելելու համար տարածված էին քերման կամ թանաքով ջնջելու եղանակները, որոնց հաջորդում էր նոր անուներին գրանցումը: Վկայակոչենք մեկ օրինակ. 1653 թ. Կաֆայում նշանավոր գրիչ Նիկողայոս Մելանավորի կամ Ծաղկարարի²⁴⁷ ընդօրինակած ՄՄ Հ^մ 8177 Ավետարանը ստացել է մահտեսի Աստվածատուրը, որի մասին տեղեկանում ենք գրչի հիշատակարանից [Հիշ. Ժէ, Գ, 559-560]: Ավելի ուշ նույն ձեռագիրը հավանաբար հայտնվել է ոմն Ալեքսանի մոտ, վերջինս էլ որոշել է սև թանաքով ջնջել առաջին պատվիրատու-ստացող Աստվածատուրի անունը և լուսանցքում իրենը գրել²⁴⁸ (նկ. 24):

Երբեմն կարելի է նկատել նաև հիշատակարաններն ամբողջութամբ կամ նրանց մի մասը փոքրիկ թերթիկներով ծածկելու և այդ թերթիկների վրա նոր հիշատակարան գրելու դեպքեր, որոնք ավելի հաճախադեպ են Հայսմավուրքներում: Նշենք մեկ օրինակ. ԺԵ. դարով թվագրվող ՄՄ Հ^մ 7543 Հայսմավուրքը հարուստ է մեկ-երկու նախադասութեամբ մանր հիշատակարաններով: Դրանց մի մասը հետագայում ծածկվել է ուղղանկյուն փոքրիկ թերթիկներով, որոնց վրա կարելի է նկատել գրանցված նոր անուներ. այդպիսով ծածկված հատվածներում եղծվել են առաջին գիրն ու նրանում վկայված անուները (նկ. 25):

²⁴⁷ А. Геворкян, *Армянский миниатюрист XVII века Никогос Цахкарар*, «ԼՀԳ», 1970 (3), էջ 89-96:

²⁴⁸ Հիշատակարանի հրատարակության մեջ ծանոթագրված չէ այս փաստը. սույն օրինակի վրա մեր ուշադրությունը հրավիրելու համար շնորհակալ ենք մեր գործընկեր Օվսաննա Խաչատրյանին:

կրաւորքս փառաւո	որն և պճնապան
րելով զհանագոյսք	իւր զհայրն զիսն
էրրորդութիւն պիտ	եփրիանուն և զմա
ւայստեանս անկէ	յրն զմարիամն .
Շնորհայմ անձապա	և զհրդահիցն իւր
տում և քն աւանդ	զգոհար պիտ ան .
տառիս ցանկացող	և զ զաւակսն իւր .
եղեալ անձապեալ և	զիսն ան տարն .
պատուական մահ	և գրի գորն . և զիսն
ալէքսանն դասի աստուածոս	իսա զնն ջէց եալսն .
տորն եւ գրել զսք	և զաբմոյս զկէ
աւետարանս յիշա	դանիսն
տակ հոգւոյ իւրոյ .	
Շնորհ որք հանդի	
պիտ անս ընթեան	
լով կամեաղափար	Ըրանեմաւ փափա
առնելով յիշեալ էր	գանադ և սրտա
իմարտականք և իւր	ջան յաւ իւրութի
բանաստեղց յաղա	կրաջահ աւաւոյու
թաճ էր զպատուելի	տով և քնասեր բաղ
ալէքսանն մարտարածաւ	ճանապ էտորել զը

Նկ. 24, ՄՄ Հ^տ 8177, 312բ. Բիշտակարանից անվան ջնջման օրինակ

Ինքնին հասկանալի է, որ այսպիսի ջնջումների կամ եղծումների հիմնական նպատակը զուտ նոր անունների հավելումն է, քանի որ մատյանի նոր սեփականատերերը նույնպես ցանկանում են հիշատակվել՝ դիմելով անունների փոփոխման զանազան միջոցների:

Երբեմն, սակայն, հիշատակարանների կամ նրանցում վկայված անձնանունների եղծումների մեջ դիտվում է մեկ այլ ուշագրավ երևույթ, որը կարելի է բացատրել որպես հիշատակված անձի նկատմամբ բացասական վերաբերմունքի արտահայտություն: Այս պարագայում անուն ջնջողը փորձում է մոռացություն մատնել, կյանքի մատյանից անհետ ջնջել հիշատակարանում գրանցված անձի անունը: Ջնջողի կարծիքով՝ նշված անձը արժանի չէ հիշատակման: Նման դեպքերի ականատես ենք լինում հատկապես պատմական այնպիսի դեմքերի առնչությամբ, որոնք բացասական հետք են թողել ժամանակակիցների կամ պատմական հիշողության մեջ: Ասվածը դիտարկենք մի ցայտուն օրինակով.

1223 թ. Թագավորի վանքում (Կիլիկիա) գրչագրված մի ձեռագրի հիշատակարանում, որ տեսել և արտագրել է Գ. Հովսեփյանը, կարդում ենք.

«Արդ, եղև զրուս գրութեան սորա ի թուսկանիս Հայոց ՈՂԲ. (1223)... ընդ հովանեալ քաղաքիս Մամետսիոյ, ի թագաւորութեանն Հայոց մեծաց [թագաւորի անունն տեղը ջնջուած – Գ. Հ.] և ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա»²⁴⁹:

Հիշատակարանը լավ պահպանված է, չունի վնասված հատվածներ, դրանում գրանցված մյուս անուններն էլ անխաթար են: Այդ են փաստում հիշատակարանի՝ Գ. Հովսեփյանի արտագրությունը և լուսանկարը (նկ. 26)²⁵⁰: Այսպիսով՝ մի կողմից Գ. Հովսեփյանը, մյուս կողմից լուսանկարը ակնհայտ են դարձնում, որ հիշատակարանի այն հատվածը, որտեղ գրանցված է

²⁴⁹ Յիշատակարանը ձեռագրաց, էջ 825:

²⁵⁰ Լուսանկարը մեզ տրամադրել է Մաշտոցյան Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն պ. գ. դ., պրոֆ. Կարեն Մաթևոսյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում նրան:

եղել թագավորի անունը, ջնջված է: Պարզ է նաև, որ դա ոչ թե պատահական ջնջում է կամ թանաքի սովորական վնասվածք, այլ միտումնավոր քերված է անունը, ըստ որում՝ այն աստիճանի, որ դրա հետևանքով մագաղաթը տվյալ հատվածում ծակվելու աստիճան բարակած է:

Ձեռագրի գրչության տարեթիվը հուշում է, որ հիշատակված անձը կարող է լինել Անտիոքի գահաժառանգ և Հայոց Լևոն Բ. թագավորի (1198-1219) դուստր Զաբելի ամուսին Փիլիպոսը (Ֆիլիպ Անտիոքացի), որը Հայոց գահին էր բարձրացել 1222 թ.՝ երգվելով ընդունել հայկական բարքերն ու հարգել հայ եկեղեցուն և իշխաններին: Հիշատակարանի տվյալ հատվածի թանաքի հազիվ նշմարվող ուրվագծերով իսկապես հնարավոր է լինում ընթերցել Փիլիպոս անունը: Արդ, ինչ²⁵¹ էր արքայի անունը ջնջված: Բանն այն է, որ թագադրվելուց կարճ ժամանակ անց՝ Փիլիպոսը դրժել էր իր ուխտը և լրջագույն վտանգ ներկայացրել հայկական պետականությունն ու եկեղեցուն, որի պատճառով հայ իշխանները նրան ձերբակալել և նետել են Բարձրբերդի բանտը, ուր և վերջինս կնքել է իր մահկանացուն²⁵¹: Մեր համոզմամբ՝ Փիլիպոսի նկատմամբ եղած բացասական վերաբերմունքն ու նրա անարժանությունն են պատճառ դարձել, որ գրչությունից հետո ինչ-որ մեկը նրա անունը ջնջի մատյանի հիշատակարանից, ասել է թե՛ կենաց գրից: Անունը ջնջողի կարծիքով՝ Փիլիպոսն արժանի չի եղել հիշատակվելու:

²⁵¹ Լ. Տեր-Պետրոսյան, *Խոսչակիյուները և հայերը*, հ. Բ, պատմա-քաղաքագիտական հետազոտություն, Երևան, ՀՀ Առաջին Նախագահի արխիվ, «Փրինթինֆո» հրատ., 2007, էջ 249-251:

Տարդեկ , և ևրան է
 ցանգաւտիս կենացն
 եգերագրել , զի մի
 մոռացմամբ արտա
 ղեացին : սյսպիս
 ում սծային քան ճե ,
 և ատեոնաց կենաց
 սրբոյատեւոարանես
 ցանկացողեղեալ . և
 սշակերտեալ թույ
 մաս սպասատոր բա
 նհնան : ետգրելի
 փոքր նիւթ զմեծ և
 զանչասանելի խոր
 հորդ մարդեղ ու
 թեանն ի : զի լեցի
 հանարգազ կրեղցաս
 ի ճեոնն . և ետստի ն
 գործարանի եբրե
 զծրարս տաշիւի խո
 կարուլ ստլաւ ետուե
 և զի շերի ի պատիւ

և ի փառս ի այ մերոյ
 Սրբեղև զքառգր
 ու թեանտրա ի
 թոռականես հայոց
 է ո հբ ընդհո
 վանեաւ սբ տաճ ա
 թիս տիրաւեալն , յան
 սպատիս թագւո
 թեպմեք ընդ հով
 անեաւ քաղաք են
 մամեաւտիոյ : ի
 թագաւորութեանն
 հայոց մեծաց
 և ի հայրապե
 տութեանն տն կոս
 տանդեա :
 Սր գորքատեպ
 համ անէ արինա
 կաւ . կամ գաղա փա
 բաւ յիշեալիք է քս
 զվերասացեալ վար
 դաւլեանն զթովհաս

Նկ. 26, Անվան ջնշում հիշատակարանից

Մեր այս կարծիքը հաստատվում է այլ օրինակներով ևս, որոնցից մեկի մասին հարկ ենք համարում նշել առանձին:

Մայր Աթոռի միաբանական գերեզմանոցի տապանաքարերից մեկի բավական լավ պահպանված արձանագրության մեջ ղիտավորյալ եղծվել է հիշատակվածի անունը: Արձանագրությունը վերծանած վիմագրագետ Ա. Հարությունյանի վերականգնումով վնասված հատվածում ընթերցվում է «Դավիթ» անունը²⁵²: Արդ, ինչպե՞ս պետք է բացատրել այդ անվան ջնջումը:

Արձանագրության մեջ հիշատակված Դավիթը, որ նշված է «սրբազան վեհ» պատվանունով, հայոց կաթողիկոս Ղուկաս Ա. Կարնեցու (1780-1799 թթ.) մահվանը հաջորդած շրջանում կաթողիկոսական գահի համար սկիզբ առած պայքարի և երկպառակությունների անմիջական մասնակից Դավիթ Էնեգեթցին է: Հայ եկեղեցու պատմության այդ տհաճ շրջանը առավել հայտնի է որպես «Դավիթ-Դանիելյան» երկպառակության ժամանակահատված, երբ մի կողմից Դավիթ Էնեգեթցին, իսկ մյուս կողմից Դանիել Սուրմառեցին արտաքին ուժերի զբոսանքներով փորձում էին տիրել կաթողիկոսական գահին: Դավիթ Էնեգեթցուն պարսից միջամտությամբ հաջողվում է մի կարճ ժամանակով տիրել հայոց կաթողիկոսական գահին, որով էլ պայմանավորված է նշյալ արձանագրության մեջ կաթողիկոսներին տրվող «սրբազան վեհ» պատվանվան առկայությունը: Հարկ է նկատել, որ այդ երկպառակությունն առաջին հերթին ծանր հարված հասցրեց Հայ եկեղեցուն և նրա հեղինակությանը, իսկ Դավիթի կաթողիկոսանալը դժգոհություններին նոր ալիք բարձրացրեց, որն ի վերջո հանգեցրեց կաթողիկոսական գահից նրա հրաժարմանը²⁵³:

²⁵² Ա. Հարությունյան, *Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2016, էջ 206: Ծնորհակալություն ենք հայտնում հեղինակին մեր ուշադրությունն այս օրինակի վրա հրավիրելու համար:

²⁵³ «Դավիթ-Դանիելյան» այս անհամերաշխության շրջանի մասին մանրամասն տե՛ս Մ. արքեպ. Օրմանեան, *Ազգայապատմ.*, հ. Բ, վերահրատ.,

Այսպիսով՝ նախորդ օրինակի նման այստեղ կրկին գործ ունենք անվան միտումնավոր ջնջման դեպքի հետ, երբ ջնջողի կարծիքով՝ հիշատակվածի անունն արժանի չի եղել հիշատակման:

Հիշատակարանները միտումնավոր կերպով վնասելու, դրանք եղծելու դեպքերը կարող են վերաբերել նաև գրչուլթյան վայրին կամ ժամանակին: 1304 թ. ընդօրինակված ՄՄ Հ^ն 6253 Ավետարանի հիշատակարանում մեզ անհայտ պատճառով և դիտավորութայմբ քերված է տեղանունը՝ «կատարեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Սարգսի յոգնամեղի ի մայրաքաղաքս//»: Որպես Ավետարանի գրչուլթյան հնարավոր վայր՝ ենթադրաբար նշվել են Սիսլ²⁵⁴ և Երևանը²⁵⁵: Երկու վարկածների դեպքում էլ ուսումնասիրողների համար առաջին հուշող հանգամանքը եղել է «մայրաքաղաք» բառը, իսկ Երևանը սույն ձեռագրի հնարավոր գրչուլթյան վայր դիտարկելու օգտին խոսել են նաև հարակից սրբավայրերի հիշատակումները (Սուրբ Աստվածածին, Սուրբ Պողոս և Պետրոս): Բոլորովին վերջերս Մաշտոցյան Մատենադարանում կրկնագրեր կարդացող սարքի միջոցով հնարավոր է եղել պարզել, որ գրչուլթյան վայրը եղել է Հոռոմը: Հիշատակարանի այդ հատվածն ի սկզբանե ունեցել է «ի մայրաքաղաքս Հոռոմ» գրությունը [Հիշ. ԺԴ, Ա, 83]:

Վերոնշյալ օրինակը ցույց է տալիս, որ տեղանունները նույնպես գերծ չեն մնացել եղծումներից: Ընդամին նկատենք նաև, որ բնակավայրի հիշատակումը երբեմն կարող է բացահայտել հոգեբանական հետաքրքիր շերտեր, որոնք իրենց հերթին եղծման պատճառ կարող են դառնալ: Այս դիտանկյունից

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 3739-3894 (§ 2218-23. ընդմիջարկումներով):

²⁵⁴ Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Կ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Չեթունյան, Փ. Անթաթյան, ցանկերը և համեմատական տախտակները՝ Օ. Եգանյանի, խմբագրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, ՀԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 280:

²⁵⁵ Ա. Մաթևոսյան, Երևանի գրչության կենտրոնները, էջ 118:

ուչագրավ է ժէ. դարի գրիչ և տաղասաց Ստեփանոս Զուղայեցու 1608 թ. Սպահանում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանի այն հատվածը, որտեղ գրիչը արժանի չի համարում կրկին գրել այն քաղաքի անունը, ուր բռնի տեղափոխվել էր իր հայրենի Զուղայից. «Եւ արդ, աւարտեցաւ զսուրբ Աւետարանս ի մեծ թուականին ՌԾԷ. (1608), զոր չէ արժան կրկնել անուն տեղոյս այսորիկ»,— գրում է Ստեփանոսը [Հիշ. ժէ, Բ, 328]: Այս մեկ նախադասութիւնն ընդգծում է գրչի հայրենակորուստ հոգեվիճակը. նա դեռևս չի համակերպվել սիրելի քաղաքի ավերման և դատարկման հետ, այդ հոգեվիճակի արտացոլումն է «չէ արժան կրկնել անուն տեղոյս այսորիկ» հատվածը:

Հիշատակարանները եղծվել են նաև կտրվելով: Ըստ որում՝ կտրողն այդպիսով ոչ միայն խաթարել է մատյանի ամբողջականութիւնը, այլև այն զրկել իր պատմական վավերագրից: Երբեմն այդ պարսավելի արարքի մասին կարելի է գտնել նաև համապատասխան վկայութիւններ: Օրինակ՝ ժէ. դարի անանուն մի հիշատակագիր նշում է, որ իր բացակայութեան պայմաններում ոմն Կարապետ կարդալու խնդրանքով իր տանից վերցրել է մատյանը, ապա կտրել նրա հիշատակարանը.

«Ի թ՛վականութեան Հայոց ՆԽԶ. (=2ԽԶ՝ 1297), որ ոմն սարկաւագ Կարապետ անուամբ եկն էսո ի տանէ մերմէ կարդալոյ աղագաւ, եւ էս ոչ էի անդ. տարեալ կտրատէ գլիշատակարանն, իբր թէ ոչ գիտասցիմ: Բաւեսցի»²⁵⁶:

Ինչպես երևում է, անանուն հիշատակագիրն իր հիշողութեամբ փորձել է վերականգնել կտրված հիշատակարանում գրանցված մատյանի գրչութեան թվականը, և ստացվել է ՆԽԶ., որ հետագայում շտկվել է՝ դառնալով ՉԽԶ.²⁵⁷:

²⁵⁶ Մայր ցուցակի հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Է., յօրինէց Հ. Ս. վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, էջ 130:

²⁵⁷ Նշվ. աշխ., էջ 127:

Ուշագրավ է նաև կեղծ հիշատակարաններ գրելու փաստը. դրանք հիմնականում ծառայում են տվյալ մատյանի արժեքը բարձրացնելուն: Հիշենք ներկայումս Բոլոնիայի համալսարանում պահվող և ժէ. դարով թվագրվող հայերեն Ավետարանը²⁵⁸, որի ազատ մնացած հատվածներից մեկում առկա է բոլորովին այլ ձեռքով և թանաքով գրչուլթյան ժամանակին վերաբերող մեկ տողանոց հիշատակագրություն, համաձայն որի՝ մատյանի ընդօրինակման թվականը 1144 թ. է: Ձեռագիրը նկարագրած Գ. Ուլուհոյանը այս կեղծ թվականի առիթով նկատել է, որ, ըստ ամենայնի, նման գրությունն արվել է մատյանի արժեքը բարձրացնելու նպատակով²⁵⁹:

Ամփոփելով նշենք, որ հիշատակարանը եղծողներին, կտրողներին, անուններ ջնջողներին նույնպես հասցեագրվել են անեծքի և նզովքի բանաձևեր, որոնք հիմնականում նույնն են, ինչ ձեռագիրը գողացողներին, գրավադրողներին ուղղվածները, ինչպես՝ «Ով որ գլխատակարանն ջնջէ, գԱստուած գինքն ջնջէ ի դպրութենէն կենաց. ամէն» [Հիշ. ԺԳ, 138], «Թէ ոք գլխատակարանս կտրէ կամ անուն քերէ, ջնջեսցի եւ ինքն ի դպրութենէ կենացն յաւիտենից. ամէն» [Հիշ. ԺԳ, 615] և այլն: Ոմանք էլ անեծքի փոխարեն նախապատվությունը տվել են օրհնությանը: Գրիգոր գրչի հիշատակարանից տեղեկանում ենք այդպիսի մի հետաքրքիր օրինակի մասին, ուր ստացող Ավետիք վարդապետը չի ցանկացել անեծք գրել. «Ձի սոքա, որք աւգնեցին ի գին սորա (իմա՛ ձեռագրի – Խ. Հ.), ասացին, թէ անէ՛ծք գրեցէք, որ ի մեր ազգականացն ոք ձեռնամուխ լիցի, նա չկամեցաւ վարդապետն, թէ աւրհնութիւն լաւ է, քան գանեծք» [Հիշ, ԺԴ, Ա, 95]:

²⁵⁸ Ձեռագրի մասին տե՛ս **Kh. Harutyunyan**, *Il Vangelo della Biblioteca Universitaria di Bologna (ms. 3290), un capolavoro dell'arte armena*, հրատարակության է հանձնված Բոլոնիայում առաջիկայում հրատարակվելիք հետևյալ ժողովածուին՝ “Tracce armene nelle biblioteche italiane. Cartografia, manoscritti, libri a stampa”.

²⁵⁹ *Catalogo dei manoscritti armeni delle biblioteche d'Italia*, a cura di **G. Uluhogian**, Istituto Poligrafico e Zecca dello Stato, Roma, 2010, p. 47.

6. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

«Ո՛ր, գիր, որ մնաս,

Ո՛ր ձեռք, որ հողանաս»

Պետրոս ծաղկող, 1194 թ. [ՀՊՀ. Ե-ԺԲ, 280]:

Հայերեն ձեռագիր հիշատակարանների կառուցվածքի, ինչպես նաև նրանց առանձին բաղկացուցիչների ուսումնասիրությունը երևան է հանում մի շարք արտահայտություններ, բառակապակցություններ, մինչև անգամ ամբողջական նախադասություններ և պարբերություններ, որոնք հաճախ բառացի կամ մասնավոր տարբերություններով կրկնվում են հիշատակարաններում՝ անկախ նրանց գրչության վայրից ու ժամանակից: Որպես կանոն՝ այդ միավորները կայուն են, գրեթե անփոփոխ և հիմնականում կաղապարային բնույթ ունեն: Կաղապարային այդտեսակ բազմաթիվ միավորների հավաքումն ու դրանց քննությունը ուշադրով դիտարկումների առիթով տվեցին, որով պայմանավորված էլ անհրաժեշտ համարեցինք առանձին անդրադառնալ հայերեն հիշատակարաններում գործածվող կաղապարներին և նրանց որոշ առանձնահատկություններին: Այսպես, նյութի քննությունը ցույց է տալիս, որ կարելի է տարբերակել կաղապարների չորս պայմանական խումբ.

- ա. կառուցվածքային բնույթի համընդհանուր կաղապարներ,
- բ. գրչօջախների կնիքը կրող կաղապարներ,
- գ. հեղինակային կաղապարներ,
- դ. թափառող կաղապարներ:

Ա. Կառուցվածքային բնույթի համընդհանուր կաղապարներ

Կաղապարների այս խմբի մեջ են մտնում հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ամենից տարածված, ժամանակային ու տարածքային սահմաններ չունեցող և հիշատակարանների կառուցվածքային բաղադրիչներին առնչվող կայուն կապակցու-

թյունները: Հիշատակարանների բաղադրիչներին նվիրված գլխում նշեցինք, որ դրանցից յուրաքանչյուրը սովորաբար ունի դրսևորման իր ուրույն և դարերի ընթացքում կայունացած արտահայտչամիջոցները, որոնք ժամանակային և աշխարհագրական սահմանափակումներ չունեն: Օրինակ, եթե հիշատակագիրը նշում է ձեռագրի գրչուլթյան վայրը և այն եկեղեցին, որի հովանու ներքո ընդօրինակվել է մատյանը, ապա կիրառում է «ընդ հովանեալ» կառույցը, որը, որպես կանոն, անփոփոխ ձևով հանդիպում է բոլոր հիշատակարաններում: Գրչուլթյան թվականի մասին նշելիս հիշատակագիրները շատ հաճախ գործածում են «ի դառն եւ ի նեղ ժամանակի» քարացած կառույցը կամ համանման այլ տարբերակներ, թվականին կից նրանք սովորաբար հիշատակում են նաև ժամանակի հոգևոր առաջնորդին՝ գործածելով «ի հայրապետութեան տեառն + անուն» կառույցը, իսկ ահա մատյանը ընդօրինակողը սովորաբար հիշատակվում է «ձեռամբ + ինքնախարագանող բառ(եր) + անձնանուն» ձևով, ստացողի համար պարտադիր բաղադրիչ է «ստացաւ ի հալալ արդեանց» կամ «ստացաւ յարդար վաստակոց իւրոց» կապակցութիւններից մեկը և այլն: Այդպիսի ավելի քան հինգ տասնյակ կապակցութիւններ է առանձնացրել Ա. Շիրինյանը, որոնք, անշուշտ, հայերեն հիշատակարաններում ամենից տարածված և ընդհանուր կաղապարներից են, ինչպես՝ «Շնորհիւ Աստուծոյ սկսայ, եւ ողորմութեամբ նորին կատարեցաւ», «յերեսս անկեալ աղաչեմ», «վասն զի կար մեր այսչափ էր», «ի յիշատակ հոգևոյ իւրոյ եւ ծողաց իւրոց» և այլն²⁶⁰: Դրանց թվին կարելի է հավելել նաև «Արդ, եղև զրաւ գրչութեանս», «ըստ իմում կարի յանգ հանեալ կատարեցի», «որ ետ կարողութիւն տկարութեանս մերում հասանել ի վերջ սորա», «առաջինս մեղաւորաց եւ վերջինս ի կարգս կրաւնաւորաց», «Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք այսմ տառի», «անմեղադի՛ր լերուք վասն խոշորութիւն գրիս» և այլն:

²⁶⁰ A. Sirinian, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, pp. 76-85.

Բ. Գրչօջախների կնիքը կրող կաղապարներ

Երբեմն նկատվում են հիշատակարանային այնպիսի հատվածներ՝ ընդարձակ կամ սեղմ, որոնք, կարծես թե, ձեռագրատեղծման մի որոշակի օջախի «արտադրություն» են և իրենց գուգահեռներն են գտնում այդ գրչօջախի այլ ձեռագրերում ևս՝ անկախ գրիչների տարբերությունից: Ուստի՝ միանգամայն հիմնավորված կարելի է համարել այն ենթադրությունը, որ գրչության տարբեր կենտրոններում հորինվել, կազմվել և գոյություն են ունեցել հիշատակարանային համապատասխան կաղապարներ, պատրաստի արտահայտություններ, որոնք կիրառել են տվյալ գրչօջախի ներկայացուցիչներն իրենց հիշատակարաններում: Նպատակը ժանրի սկզբունքներից, կառուցվածքից չհեռանալն էր և ինչու էլ, նաև լեզվական հնարավոր սխալներից խուսափելը²⁶¹: Այլ խոսքով՝ գրիչները հետևել են հիշատակարան գրելու որոշակի կանոնների կամ ձևերի, որոնք սերտել են գրչօջախներում գրչություն արվեստ ուսանելու ընթացքում՝ հետագայում ևս իրենց մոտ ունենալով հիշատակարանների համապատասխան կառուցվածքային ձևեր: Ըստ էության՝ նաև այս հանգամանքով պետք է բացատրել ամբողջությունմբ կամ մասնակի նմանություն ունեցող հիշատակարանների առկայությունը միևնույն գրչօջախից սերող, բայց բոլորովին տարբեր գրիչների ընդօրինակած մատյաններում:

²⁶¹ Այս տեսանկյունից առավել հայտնի են այսպես կոչված թղթատաշնկեր կամ գրատաշքները, որոնց կաղապարային պատրաստի միավորները բավական տարածված են եղել հայկական ձեռագրական մշակույթում: Նամակագիրներին, օգտվելով այդտեսակ պատրաստի կառույցներից, ավելի ճոխ և գրագետ գրություններ են կազմել՝ հետևելով նաև նամակների պատշաճ կառուցվածքին, հասցեստորոջը համապատասխան ձևով դիմելառճին և այլն: Այստեսակ կոյթերի մասին մանրամասն տե՛ս **Օ. Խաչատրյան**, *Գրատաշքի՝ գրական տեսակի ժանրային առանձնահատկությունները*, Երիտասարդական 3-րդ գիտաժողովի գեկուցումներ, (Երևան, 2017 թ., նոյեմբերի 28-30), «Արմավ» հրատ., Երևան, 2018, էջ 306-315: Հանդիպում են նաև արձանագրությունների կաղապարներ (ՄՄ Հ՝^Պ 3461, 43ա), մանրանկարների կաղապար-ուղեցույցներ, տե՛ս **Ղ. Ալիշան**, *Պատկերաւոյց-գիրք*, «Բագմավէպ», 1869 (7), էջ 289-293, 1869 (8), էջ 348-352, 1869 (9), էջ 385-397, 1869 (10), էջ 446-450:

Մեր այս ենթադրությունը հաստատվում է բացառիկ հետաքրքրություն ունեցող հիշատակարանային կաղապար-ուղեցույցի ընդարձակ և ցայժմ եզակի մի նմուշով, որը ժամանակին հայտնաբերել է Ա. Մաթևոսյանը՝ հրատարակելով այն Ե-ԺԲ դարերի հիշատակարանների ժողովածուում [Հիշ. Ե-ԺԲ, ԺԸ.]։ Ստորև ներկայացնում ենք այն ամբողջությունը և համապատասխան ընդգծումներով։

«[Փ]ա՛ռք եզակի տէրութեանն եւ եռաճիւսակ դասանութեան, համագոյ, համապայծառ, համազաղափար, զուգակշիռ, վսեմագոյ, ինքնագոյ էութեանն եւ միութեանն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ անպայման յաւիտենիս, ամէն:

Արդ, յանգ ելեալ ասարտեցաւ հոգիարոյս մատեանս, որ կոչի Մանրուսումն, ի շրջագալութեան Հայոց տումարի (*այս չափ*), ի գաւառս [*այս անուն*], ի հայրապետութեան տեսուն (*այս անուն*), ի յերկնահանգէտ, եւ ի գերահոշակ, եւ ի հրեշտակաճեմ, եւ յաստուածաբանակ վանքս, որ կոչի (*այս անուն*), որ մնան է վերինն Երուսաղէմայ, ընդ հովանեաւ [*այս անուն*], ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս (*այս անուն*), որ է վարուքն մաքուր, բնութեամբ հեզ, լեզուան քաղցր, սրտին առատ, իմաստուն՝ որպէս Աբրահամ (*որչափ որ կամիս, ասա*), առ ոտս (*այս առաջնորդի*), ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ գրչի [*այս անուն*]:

Արդ, ստացաւ կրօնաւոր ոմն (*այս անուն*), որ է ժիր եւ արի ի գործս առաքինութեան, անապատաւուն՝ վարժեալ եւ սնեալ առ ոտս (*այս անուն*): Իբրեւ գլխատեր վառեալ ի մէջ եկեղեցոյ, եւ իբրեւ զանուշահոտ խունկ հաճոյացեալ Աստուծոյ, եւ իբրեւ զծիծեառն բանաւոր կանգնեալ ի մէ[ջ] տաճարի: Եւ որպէս զմ[ե]ղու կարօտեալ երկնային ցօղին, այսպէս եւ սա ցանկացաւ եղեւ այսմ գրոցս եւ ետ գրել զսա ի վայելումն անձին իորոյ, եւ ի յիշատակ ծնաւոյց իորոց:

Արդ, աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք սմա, ընդ մի՛ն եւ զիս զանարժան գծաւդս (*այս անուն*), որ կաման

Աստուծոյ սկսայ եւ աւգնականութեամբ Աորին կատարեցի, յիշեցէ՛ք Աստուած ողորմայի միով, զի կարող է Աստուած ի ձեռն ալոց՝ ալոց ողորմութիւն առնել, եւ ձեզ դիրին է ասելն, եւ մեզ կարի պիտանի, եւ ձեզ՝ յիշողացոյ, եւ մեզ՝ յուսացելոցս ողորմեացի Քրիստոս Աստուած»:

Եզակի այս օրինակը, որը տեղ է գտել 1476 թ. Երուսաղեմում գրչագրված ՄՄ Հ^մ 2335 Ժողովածուի 181բ երեսին, դասական հիշատակարանի կաղապար-նմուշ է՝ կառուցվածքային իր բոլոր հիմնական դրսևորումներով (նկ. 27): Բաց են թողնված միայն հատկանունները (տեղանուններ, անձնանուններ) և գրչության թվականը, որոնց փոխարեն ուղեցույցի հեղինակը թողել է «այս անուն» և «այս չափ» բառակապակցությունները, որոնք, ըստ հարկի, պետք է լրացներ արդեն գրիչը²⁶²: Տեսնում ենք նաև, որ այս օրինակը կազմվել է Մանրուսմունքի համար. «Արդ, յանգելեալ աւարտեցաւ հոգիաբուխ մատեանս, որ կոչի Մանրուսումն», սակայն ձեռագրի բովանդակութեամբ պայմանավորված՝ գրիչն այն ևս պետք է փոխեր: Աչքի են ընկնում ոչ միայն ուխտի առաջնորդի համար նախատեսված «որչափ որ կամիս, ասա» բառակապակցությունը, որով, փաստորեն, գրչին ազատություն էր տրվում շարադրելու իր սրտի խոսքը²⁶³, այլև ստացողին հատկացված ընդարձակ պարբերությունը, որը տարածված երևույթ է հայկական հիշատակարանագրության ավանդույթում:

²⁶² Տե՛ս **Kh. Harutyunyan**, *Gli antroponimi nei colofoni armeni: gruppi semantici e nuovi nomi*, “Colofoni armeni a confronto”, pp. 49-50.

²⁶³ Երբեմն հիշատակարաններում կարելի է նկատել գրիչների կողմից նույն նպատակով միտումնավոր բաց թողնված հատվածներ, որոնք ըստ հարկի կարող էին լրացնել մատյանը ստացողները: Օրինակ՝ 1345 թ. ընդօրինակված ՄՄ Հ^մ 731 Ժողովածուի գրիչ Ներսես երեցն իր հիշատակարանում ստացողի և նրա հոր անունները նշելուց հետո երեք տող բաց է թողել, ապա շարունակել հիշատակարանը, իսկ ստորին լուսանցքում գրել է. «Ձո կամիս յիշատակել, յիշեայ եւ գրեայ»: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի սնուսն Մատենադարանի, հ. Գ., էջ 521:

Հիշատակարանի այս բացառիկ ուղեցույց-օրինակը մեզ հայտնի առաջմ միակ օրինակն է, սակայն սա էլ բավական է անհրաժեշտ հետևություններ անելու համար. ինքնին պարզ է, որ եթե մեզ հաջողվի առանձնացնել և նույնականացնել նման-օրինակ կաղապարներ, ապա գրչօջախների պարզման ևս մեկ կարևոր գործիք կհայտնվի ձեռագրագետների ձեռքին:

Երկու օրինակով տեսնենք, թե ինչ կարող են տալ հիշատակարանների նման հատվածների վերհանումները:

ԺԵ. դարի առաջին և երկրորդ կեսերին Երուսաղեմում ընդ-օրինակված երկու Ավետարանների հիշատակարաններից քաղ-ված և ստորև բերվող հատվածների համեմատությունը ցույց է տալիս, որ երկու գրիչներն էլ հիշատակագրելիս իրենց աչքի առաջ են ունեցել հիշատակարանի միևնույն օրինակը: Բացառ-ված չէ նաև, որ գրիչներն ընդօրինակել են միևնույն ձեռագրից (բառային տարբերություններն ընդգծված են երկրորդ սյունա-կում):

ԱՎԵՏԱՐԱՆ
Երուսաղեմ, 1439 թ.,
գրիչ՝ Սարգիս արեղա

«Քանզի գրեցաւ սալ ի աստուա-
ծակոյի սուրբ քաղաքս յԵրուսա-
ղէմ, ընդ հովանեաւ ամենայն
սուրբ տնաւրինականացս Քրիս-
տոսի Աստուծոյ մերոյ, ձեռամբ
նրաստ ծառայի ծառայիցն Աս-
տուծոյ բազմամեղ հող եւ մոյս-
րիս, որ ամաչեմ կոչիլ ի բարձ-
րագոյն անուանէն արեղայ, զի ի
դատապարտութիւն է ինձ
անունս այս, այլ լոկ անուամբ
կոչիմ Սարգիս: Եւ ես՝ անպի-
տան եւ անարհեստ գծաւղս,

ԱՎԵՏԱՐԱՆ
Երուսաղեմ, 1462 թ.,
գրիչ՝ Հայրապետ եպիսկոպոս

«Քանզի գրեցաւ սա ի աստուա-
ծակոյի սուրբ քաղաքս յԵրուսա-
ղէմ, ընդ հովանեաւ ամենայն
սուրբ տնաւրինականացս Քրիս-
տոսի Աստուծոյ մերոյ, ձեռամբ
նրաստ ծառայի ծառայիցն Աս-
տուծոյ բազմամեղ եւ անպիտան
գրչի, որ ամաչեմ կոչիլ ի բարձ-
րագոյն անուանէն եպիսկոպոս,
զի ի դատապարտութիւն է ինձ
անունս այս, այլ լոկ անուամբ
կոչիմ Հայրապետ: Եւ ես անպի-
տան եւ անարհեստ գծողս,

սկիզբն արարի այսմ լուսափղծ
 Եւ կենսակիր աստուածաւանդ
 սուրբ կտակիս ի ստոյգ Եւ յըն-
 տիր արիմակէ: Եւ ըստ կարի
 իմում գծագրեցի զսա՝ ի լուսաւո-
 րութիւն մանկանց եկեղէցոյ Եւ
 առ ի յիշատակ հարկէտր Եւ հա-
 մեստ, ճգնագգեաց Եւ աղաթա-
 րար մահդասի երիցկանկան Ան-
 տոն իրիցոյ՝ Թորուանտայ անուն
 ապաշխարողին, որ կայր ի քա-
 ղաքս Երուսաղէմ» [Հիշ. ԺԵ, Գ,
 389-390]:

սկիզբն արարի այսմ լուսափղծ
 Եւ կենսակիր աստուածաւանդ
 սուրբ կտակիս ի ստոյգ Եւ յըն-
 տիր արիմակէ, ըստ կարի
 իմում գծագրեցի զսա՝ ի լուսա-
 ւորութիւն մանկանց եկեղէցոյ
 Եւ առ ի յիշատակ հար[կ]էտր Եւ
 համեստ Եւ աղաթարար մահ-
 դասի *Իկտիշ* ապաշխարողին,
 որ կայր ի քաղաքս Երուսաղէմ»
 [Հիշ. ԺԵ, Գ, 438]:

*Կիրիկյան նշանավոր երեք գրիչներին՝ Կոզմայի, Կիրակոսի
 (Կիւրակոս) և Թորոս Ռոսլինի հիշատակարաններում, ընդհա-
 նուր բնույթի որոշ արտահայտութիւններինց բացի, հանդիպում
 են չափածո հատվածներ, որոնք գրեթե նույնությամբ կրկնվում
 են: Երեք ձեռագրերն էլ Ավետարաններ են՝ ընդօրինակված
 Հռոմկլայում և տարբեր տարիներին: Քաղում ենք մի հատված
 այդ չափածոյից, որն ակնհայտ է դարձնում առնվազն հիշատա-
 կարանի հարցում մեկ ընդհանուր աղբյուրի առկայութիւնը
 (կետադրութիւնը համապատասխանեցրել ենք արդի սկզբունք-
 ներին).*

ԱՎԵՏԱՐԱՆ
 Հոռոմկլա, 1166 թ.,
 գրիչ՝ Կոզմա

ԱՎԵՏԱՐԱՆ
 Հոռոմկլա, 1248 թ.,
 գրիչ՝ Կյուրակոս

ԱՎԵՏԱՐԱՆ ՆԵՐ
 Հոռոմկլա, 1256 և
 1260 թթ., գրիչ՝
 Թորոս Ռոսլին

Ահա զքոյս առեալ
 քեզ տամ,
 Բարձեալ ի ձեռս
 առաջի գամ

Արդ, առեալ զքոյս
 քեզ տամ,
 Բարձեալ ի ձեռս
 առաջի կամ,

Ահա զքոյս առեալ
 քեզ տամ,
 Բարձեալ ի ձեռս
 առաջի գամ,

Զպս Գուէրս բարեխ- ճամ, Յի'ս հայեաց, Տէ'ր հաշտակամ [Հիշ. Ե-ԺԲ, 192]:	Ընկալ գնուէրս բա- րեխճամ Եւ յի'ս հայեա, Տէ'ր հաշտակամ (տպ. <i>հաշտ ակամք</i> ²⁶⁴) [Հիշ. ԺԳ, 241]:	Ա'ն զպս Գուէրս բա- րեխճամ Եւ յի'ս Գայեա, Տէ'ր հաշտակամ [Հիշ. ԺԳ, 286, 303]:
---	--	---

Տրամադրութեան տակ ունենալով նման հետաքրքիր դրսևորումներ՝ չի կարելի բացառել, որ հիշատակարանների այսպիսի կաղապարների, բառային և կառուցվածքային ակնհայտ ընդհանրություններ ունեցող հատվածների հավաքումն ու մշակումը կարող են նպաստել առնվազն գրչութեան վայրն անհայտ ձեռագրերի ճշտմանը կամ տարբեր գրչօջախներում ձևավորված հիշատակարանագրութեան ավանդույթների բացահայտմանը: Հետաքրքիր և միաժամանակ կարևոր այս աշխատանքը կարող է ուսումնասիրությունների նոր հուն բացել հայկական ձեռագրագիտութեան ասպարեզում: Անշուշտ, նման աշխատանքը նորույթ չէ արևմտյան ձեռագրերի ուսումնասիրութեան մեջ, և հայկական ձեռագրագիտությունը կարող է իր աչքի առջև ունենալ նաև այլ ավանդույթների փորձը: Այդպիսի մի արժեքավոր հետազոտություն նախաձեռնել և կյանքի է կոչել բելգիացի ձեռագրագետ Լյուսիեն Ռեյնոտն՝ կազմելով լատիներեն ձեռագիր հիշատակարաններում տարածված կաղապարների երկհատորյա մեծարժեք մի շտեմարան²⁶⁵: Երկհատորյակի հրատարակմանը նախորդած հոգիվածներից մեկում արդեն ձեռագրագետը հավաստում է, որ հավաքված նյութի դասակարգումն ու մեթոդական մշակումը ցույց են տվել, որ նմանություն ունեցող

²⁶⁴ Մանրամասն տե՛ս **Խ. Հարությունյան**, *Հայ բառարանագրությունը՝ ԺԸ դարի երկրորդ կեսից սկսյալ, և հայերեն ձեռագրերի հիշատակարանները. նորաստեղծ բառեր Ժ-ԺԲ դարերի հիշատակարաններից*, «ԼԷՄ համահայկական հանդես», 2017 (4), էջ 166:

²⁶⁵ **L. Reynhout**, *Formules latines de colophons*, 2 vols. (Bibliologia. Elementa ad librorum studia pertinentia, 25A-B), Turnhout, Brepols, 2006.

կաղապարները կարող են ժամանակային և տեղորոշիչ առանձնահատկություններ հանդես բերել²⁶⁶:

Ռեյնոլդսի այս կարևոր աշխատանքն իր արձագանքը գտավ նաև ձեռագրական այլ ավանդույթների ուսումնասիրությունը զբաղվողների շրջանում: Բնականաբար, հայերեն ձեռագրերի հիշատակարանները ևս այս տեսանկյունից քննելու անհրաժեշտություն առաջացավ: Սույն խնդրին է նվիրված բելգիացի հետազոտող Էմմանուել Վան Էլվերդինգեի թեկնածուական ատենախոսությունը, որը վերջինս պաշտպանեց 2017 թ. Լուվենի Կաթոլիկ համալսարանում՝ բելգիացի հայագետ, նույն համալսարանի պրոֆեսոր Բեռնար Կուլիի ղեկավարությամբ: Հոսով ենք՝ առաջիկայում ուսումնասիրողները հնարավորություն կունենան ծանոթանալու Վան Էլվերդինգեի հետազոտության մեթոդաբանությունն ու արդյունքներին, որոնք բավական խոստումնալից են թվում²⁶⁷:

Գ. Հեղինակային կաղապարներ

Հատկանշական է, որ առանձին, ավելի արհեստավարժ գրիչներ, որոնք նաև ձեռագրաստեղծման բեղուն գործունեություն էին ծավալում, հաճախ կազմում էին հիշատակարանի սեփական կաղապարները, որոնք անձնանունների, երբեմն էլ բառային աննշան փոփոխություններով գետեղում էին իրենց ընդօրինակած մատյաններում: Առանձին դեպքերում, երբ ընդօրինակման ավարտին մատյանը դեռևս գնորդ չէր ունենում, գրիչները շարադրում էին իրենց հիշատակարանները՝ բաց թողնելով ստացո-

²⁶⁶ Մեթոդների և նախնական արդյունքների մասին տե՛ս **L. Reinhout**, *Codicologie quantitative et paradigmes scientifiques. Une typologie des formules latines des colophons de manuscrits occidentaux*, “Gazette du livre medieval”, 2001 (39), pp. 1-9. Տե՛ս նաև **L. Reinhout**, *Formules latines de colophons*, vol. 1, pp. 44-54.

²⁶⁷ Վան Էլվերդինգեի ատենախոսության որոշ դրույթներ և մեթոդաբանական հարցեր ներկայացված են նրա հետևյալ հոդվածում՝ **E. Van Elverdinghe**, *Recurrent Pattern Modelling in a Corpus of Armenian Manuscript Colophons*, “Journal of Data Mining and Digital Humanities”, Special Issue, 2017, pp. 1-7.

դի անվան տեղը²⁶⁸ և գրչուլթյանն առնչվող տեղեկուլթյունները, մասնավորապես գրչուլթյան թվականը: Նույն պատճառով հանգիպում են նաև անհիշատակարան մատյաններ: Ընդհանուր առմամբ, նշելի է, որ բազմարդյուն գրիչներն ունեցել են իրենց ուրույն և մշակված կաղապարները:

Ահա արճեչցի գրիչ Սիմեոն քահանայի 1305 թ. ընդօրինակած երկու Ավետարանների հիշատակարաններից երկու քաղվածք, որոնք հաստատում են մեր ասածը (բառային տարբերուլթյուններն ընդգծված են երկրորդ սյունակում)։

ԱՎԵՏԱՐԱՆ

Արճեչ, 1305 թ., գրիչ՝ Սիմեոն
քահանա, ստացող՝
իշխան Ծնոֆոր

«Փա՛ռք անպարագիծ Էիմ, այնմ,
որ ո՛չ եմ հետագատ, եւ ո՛չ զհնչ
պիտիմ, եւ ո՛չ քանակն համբար-
ձելոյն յամեանս մտաց սլաց-
ման, գոյութիւն անգնիմ գոյիմ,
որ է Բան, կնիք եւ սահման Էիմ,

ԱՎԵՏԱՐԱՆ

Արճեչ, 1305 թ., գրիչ՝ Սիմեոն
քահանա, ստացող՝ տեր Սիմոն

«Փա՛ռք անպարագիծ Էիմ, այնմ,
որ ո՛չ եմ հետագատ, եւ ո՛չ զհնչ
պիտիմ, եւ ո՛չ քանակն համբար-
ձելոյն յամեանս մտաց սլաց-
ման, գոյութիւն անգնիմ գոյիմ,
որ է Բան, կնիք եւ սահման Էիմ,

²⁶⁸ Ձեռագրերում երբեմն կարելի է նկատել անունների բացթողման հետաքրքիր այլ դրսևորումներ ևս: Օրինակ՝ Դրիմի գրչօջախի ԺԴ. դ. նշանավոր գրիչ Նատերի 1347 թ. ընդօրինակած Ճառքնտրում առկա են ավելի քան յոթ տասնյակ մանր հիշատակարաններ՝ հիմնականում միաձև և նույն բովանդակությամբ: Դրանց մի մասում գրչության ժամանակ անունների տեղը բաց է թողնվել՝ հետագայում լրացնելու նպատակով: Որոշ դեպքերում այդպես էլ արվել է. այլ ձեռքով մի շարք անուններ են մուծվել բաց թողնված տեղերում [Հիշ. ԺԴ, 359-367]: Նկատելի է, որ անվանապես հավելված այդ անձինք հիմնականում արհեստավորներ են, երբեմն՝ միայն արհեստակից, սակայն իրար հետ որևէ առնչություն չունեն: Ավելին, նրանցից որևէ մեկը, կարծես թե, աղերս չունի նաև բուն գրչագրի կամ նրա սեփականատիրոջ հետ: Ուստի՝ հակված ենք կարծելու, որ այս դեպքում բաց թողնված հատվածներում անունները հավելվել են գումարի դիմաց: Նման դրսևորումներ կարելի է գտնել այլ հիշատակարաններում ևս, սակայն ցարդ դրանք առանձին հավաքված և ուսումնասիրված չեն:

փառատրություն անպարհիմանալի սեռին, որ է Հոգի համագոյ էին և փառակից Բանին...:

Արդ, այսմ գաղափարության երջանիկ ոմն և աստուածային ձրիքն բարգաւաճեալ, որոյ անուն իշխան Թոֆոր յորջորջի՝ աստուածաւեր և բարեպաշտ, սա ախորժական կամաւ և մեծաւ տեճմամբ ելեալ ի խնդիր աստուածեան հրամանաց...» [Հիշ. ԺԴ, Ա, 90]:

փառատրություն անպարհիմանալի սեռին, որ է Հոգի համագոյ էին և փառակից Բանին...:

Արդ, այսմ գաղափարության երջանիկ ոմն և աստուածային ձրիքն բարգաւաճեալ, *աստուածապատիւ տէր Սիմոն*, ախորժական կամաւ և մեծաւ տեճմամբ *ստացաւ զսա...*» [Հիշ. ԺԴ, Ա, 88-89]:

*ԺԵ. դարի աղթամարցի արդյունաշատ գրիչ և ծաղկող Թումա Մինասեցի*²⁶⁹ *Հիշատակարանների ուշադիր քննությունը ևս վերհանում է տարբեր բաղադրիչների մասնակի կամ ամբողջական կրկնություններ: Մի կողմ թողնելով փառատրական հատվածների ակնհայտ նմանությունները՝ ներկայացնենք ստացողներին վերաբերող հատվածների շարադրանքը երեք տարբեր հիշատակարաններից*²⁷⁰.

ԱՎԵՏԱՐԱՆ
ՄՄ 5514 (296բ),
Աղթամար, 1420 թ.

ԱՎԵՏԱՐԱՆ
ՄՄ 5542 (237բ-8ա),
Աղթամար, 1425 թ.

ԱՎԵՏԱՐԱՆ
ՄՄ 6324 (296աբ),
Աղթամար, 1428 թ.

«Երջանիկ ոմն և աստուածային ձրիքն բարգաւաճեալ պա-

«Արդ, այսմ աստուածողէն և երկնապարգեւ գանձիս և լուսա-

«Արդ, այսմ մատենին և երկնապարգեւ գանձիս, և լուսափայլ և

²⁶⁹ Գրչի ձեռագրաստեղծ գործունեության մասին մանրամասն տե՛ս **Լ. Թումանյան**, *Գրիչ և մանրանկարիչ Թումա Մինասեցի*, «Էջմիածին», 2011 (9), էջ 123-129:

²⁷⁰ Հիշատակարանները կրճատումներով են տեղ գտել ԺԵ. դարի հիշատակարանների ժողովածուում, ուստի՝ նշյալ հատվածները քաղել ենք բուն ձեռագրերից:

տուական եւ սրբաւէր կրանատրն վարդան, <եւ> ելեալ ի խնդիր այսմ աստուածեղէն եւ երկնասպարգէս գանձիս, եւ լուսափայլ, եւ մաքուր մարգարտիս, եւ յոյժ ջերմեռանդ հաւատով եւ եռափափազ յուսով եւ սիրով ետ գրծագրել զսուրբ Աւետարանս զայս ի հալալ արդեանց իւրոց յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնունդաց իւրոց...»:

փայլ եւ մաքուր մարգարտիս ցանկացաւ եղեալ երջանիկ ոմն պատուական եւ աստուածային ձրիքն բարգաւաճեալ *Խաթուն* անուն, որ |238ա| ստացաւ սուրբ Աւետարանս զայս մեծաւ փափագմամբ ի մխիթարութիւն հոգոյ իւրոյ...»:

մաքուր մարգարտիս ցանկացաւ եղեալ երջանիկ ոմն եւ աստուածային ձրիքն բարգաւաճեալ պատուական եւ սրբաւէր կրանատրն *Աբրահամ*, ստացաւ զսուրբ Աւետարանս զայս ջերմեռանդ հաւատով եւ յոյժ փափագմամբ ի պալծառութիւն սուրբ եկեղեցոյ ...|296բ| ստացաւ զսա յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնունդաց իւրոց...»:

Մասնավոր տարբերություններ յ առկայությունն այս օրինակներում, կարծում ենք, չի խոչընդոտում նկատելու ստացողի հատվածի համար թումա գրչի կիրառած կաղապարը, որը կրկնվել է հիշատակարանից հիշատակարան:

Լվովում ԺԷ. դարի առաջին կեսին ձեռագրաստեղծմամբ աչքի ընկած Գրիգոր արեղան 1611 թ. ընդօրինակած իր երկու գրչագրերում թողել է միատիպ նախադասություններ՝ որոշ տեղափոխություններով: Քաղում ենք գրչի ներկայանալու հատվածը.

ՄՄ 1763, ԺՈՂՈՎԱԾՈՅ

ՄՄ 2094, ԺՈՂՈՎԱԾՈՅ

«Որ ետ կարողութիւն վշտացեալ եւ հոգով տառապեալ անձին իմոյ՝ լոկ անուամբ Գրիգոր արեղայիս, որդոյ Օգսէնի Իլով քա-

«Որ ետ կարողութիւն վշտացեալ եւ հոգով տառապեալ անձին իմոյ, որդոյ Աւգսէնի Իլով քաղաքացի, որ ներողութեամբ Աս-

դաքացի, որ ներողութեամբ Աստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցի, եւ զփափաք սրտի իմոյ կատարեցի զայս իմաստասիրական գիրքս...»²⁷¹:

ստուծոյ սկսայ եւ ողորմութեամբ նորին աւարտեցի, եւ զփափաք սրտի իմոյ կատարեցի զայս իմաստասիրական գիրքս...»²⁷²:

Բազմաթիւ գրիչներ, այդ թվում՝ նրանք, որոնց համար ձեռագրերի ընդօրինակումը մասնագիտութիւնն էր և ապրուստի միջոց, ունեին հիշատակարանների իրենց կազմած և անփոփոխ կաղապարները: Դա մի կողմից նպաստում էր ժամանակի խնայողութեանը (որպէս կանոն՝ այդ գրիչները տարվա ընթացքում ընդօրինակում էին մի քանի մատյան), իսկ մյուս կողմից՝ ապահովագրում գրչական սխալներից, այդ թվում՝ լեզվական: Փէ. դարի առաջին կեսին բազմաթիւ ձեռագրեր ընդօրինակած Միքայել Թոխաթեցի գրիչն, օրինակ, ուներ հիշատակարանի իր կաղապարը, որը շատ հաճախ աննշան փոփոխութիւններով թողնում էր իր ընդօրինակած տասնյակ մատյաններում»²⁷³:

Այսպիսով՝ քննութիւնը ցույց է տալիս, որ հմուտ և արդյունաշատ բազմաթիւ գրիչներ կազմել և ձեռքի տակ են ունեցել հիշատակարանի իրենց պատրաստի կաղապարները, որոնք գրչութիւնից հետո որոշ ձևափոխութիւններով զետեղել են ձեռագրերում: Չի բացառվում, որ առաջիկա ուսումնասիրութիւնները կարող են բացահայտել նաև որոշակի առնչութիւններ այդտեսակ կաղապարների և առանձին գրչօճախներում գործառնող կաղապարների միջև:

²⁷¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., էջ 1117:

²⁷² Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ., էջ 1478:

²⁷³ Խ. Հարությունյան, Միքայել անվանը Փէ. դարի երկու գրիչ, էջ 37-38:

Դ. Թափառող կաղապարներ

Այսպես ենք կոչում հիշատակարանային այն կաղապարները, որոնք առանձին տարբերություններով, բայց թեմատիկ ընդհանրություններով անցնում են հիշատակարանից հիշատակարան, ունեն ավելի շատ խոհափրիխոփայական բնույթ և կիրառվում են բացառապես գրչական խոսքում՝ ինչ-որ առումով հարստացնելով և ավելի պատկերավոր դարձնելով այն: Բուն գրչությանը, նրա մասնակիցներին, ստացողներին ու նրանց հարազատներին այդ կաղապարներն առնչություն չունեն, չունեն նաև հեղինակային պատկանելություն, թեև շատ հաճախ գրիչները դրանք ձևափոխում են և միահյուսում իրենց շարադրանքին: Այդ կաղապարները սովորաբար վերաբերում են ընդօրինակման ավարտին հասնելու բերկրանքին, ձեռքի կամ մատների անցողականություն ու գրի հավերժությունը և այլն: Օրինակ՝ գրչագրման խրթին աշխատանքը պատկերավոր կերպով ներկայացնելու համար գրիչներն այն շատ հաճախ համեմատել են ալեհույզ ծովում կռիվ տվող և նավահանգիստ հասնող ծովագնացների կամ պանդխտությունից տուն դարձողների բերկրանքի հետ: Ղրիմում 1316 թ. գրչագրված Հայսմավուրքի հիշատակարանում կարդում ենք գրիչ Սիմեոնի տողերը. «Զոր աւրինակ ուրախութիւն է նա՛վարի հասանել ի նաւահանգստի իւրում, այսպէս եւ գրչի, յորժամ հասան է ի յետին գիծն, այնպէս եւ աստ» [Հիշ. ԺԴ, Ա, 313]: «Որպէս դիւրագոյն է նաւավարին հասանել յեզր ծովոյն, նոյնպէս եւ գծողի գրոց՝ հասանել յեզր գրոց», – կարդում ենք 1334 թ. Թավրիզում Սարգիս գրչի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում²⁷⁴: Ահա ևս մեկը Գրիգոր Արևելցի գրչից. «Զաւր աւրինակ նաւ խռովեալ փութա ի նաւահանգիստ, նոյնպէս եւ գրիչն՝ ի վերջին գիծն» [Հիշ. ԺԳ, 808]: Հռոմիլայեցի գրիչ Մարգարեկը 1292 թ. իր ուշագրավ հիշատակարանում բավական ընդարձակ մի հատված հատկացրել է հենց այս բովանդակությունը շարադրանքին.

²⁷⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի սնուսն Մատենադարանի, հ. Ա., էջ 315:

«Որպէս փափաքեն ճանապարհորդք յաթեւան ժամանել եւ ցանկան մտաւարք ի մտախանգիստն անկանել, մանաւանդ յորժամ դիպեսցի մտուն անկանել ի մէջ ալէկոծութեան ծփմանց ջուրց ծովուն եւ թէ լիցի գերծանել մտուն ի ցամաք, անկանի մտաւարն երեսս առաջի Աստուծոյ եւ մեծապէս գոհանայ զԱստուծոյ, որ ապրեցոյց զինքն եւ զորս ի մաւիմ, հանդերձ մաշման եւ եհան յանդորր: Այսպէս եղև եւ ինձ մեղուցելոյս ի գրել սուրբ մատենինս, զի ձեռն ի գործ արկի գրել ի ապահով աւուրս, եւ յորժամ մխեցայ ի գիրս, յարեան ի վերայ մեր պատերազմունք եւ խոտվութիւնքն ամեցայն ուստեք» [Հիշ. ԺԳ, 687]:

Ուշագրաւ է, որ խռովահուլզ ալիքների միջով նավելու և նավահանգիստ հասնելու բերկրանքի հետ գրչուլթյան ավարտի համեմատումը հայ մատենագրութեան մեջ ավանդված է դեռևս Ե. դարից: Մասնավորապես, նման ընդարձակ բովանդակութեամբ է սկսում Ագաթանգեղոսն իր «Պատմութեան» առաջաբանը.

«Իդձք բաղձացեալք ցանկալեացն զկամս մաւելոցն ի մաւախանգիստն հասուցանել՝ խնդութիւն է խաղաղութեամբ. վասն զի ի մէջ ընդոստուցեալ ալեացն որ ընդդէմ դառնան, մրրկածիմ աղոյվքն ի մարտ պատրաստին... Սոյն արիմակ եւ մեք ոչ յանդգնութեամբ տղայաբար բարոյք ինչ ի ներքս անկանել անմտաբար հոսեցաք, այլ ակամայ ընթացեալ ըստ հրամանացն ի բոնութեանէ հարկապահանջ իշխանացն՝ դիմեալ մաւեցաք ի մատենայած ծովոս պատմութեան»²⁷⁵:

Թափառող կաղապարներից ամենից տարածվածը, որը հայերեն հիշատակարաններում աչքի է ընկնում բազմաթիվ տարբերակներով, վերաբերում է գրի հավիտենականութեանը և երկրային կյանքի անցողականութեանը: Որպես վերջինի այլաբանական խորհրդանիշ՝ այդ բանաձևում ներկայանում է գրչի ձեռքը

²⁷⁵ Ագաթանգեղոս, *Պատմութիւն հայոց*, Մատենագիրք հայոց, հ. Բ., Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1302-1306:

(երբեմն էլ՝ մատները), որը կանցնի-կգնա կամ հող կդառնա, մինչդեռ դրանով գրվածը հավերժ պետք է ապրի: Սովորաբար այդ միավորները հանդիպում են չափածո տարբերակով.

Հայրապետ գրիչ,
1317 թ., Արճեշ

Հովհաննես գրիչ,
1443 թ., Բաղեշ

Ամիրաս Եզնկացի
գրիչ, 1656 թ.,
Տրապիզոն

«Գիրս մնա,
Ձեռս գնա,
Դատիմ հոգովս,
Որ մեղաք կայ:
Աւա՛ղ, աւա՛ղ, Ռ.
(1000) աւա՛ղ» [Հիշ.
ԺԳ, Ա, 328]

«Ո՛վ, գիրս մնայ,
Ձեռս հող եւ փոշի
դառնայ,
Այլ ողորմութիւն
Տեսուն մնայ,
Որ յետոյ նորոգէ զհո-
ղացեալ բնութիւնս
Աղամայ»
[Հիշ. ԺԵ, Ա, 547]

«Ձեռքս երթա եւ գիրս
մնայ,
Եւ մարմինս ի հող
դառնայ,
Եւ ալ մեղաւոր եղայ,
Դժոխսց դռան մաւ-
տեցա»
[Հիշ. ԺԷ, Գ, 733]:

Քիչ չեն նաև նույն կաղապարի ավելի ընդարձակ տարբերակները, որոնք ներկայանում են ութմի և հանգի պահպանումով: Ստորև բերվող օրինակները ցույց են տալիս, որ դրանք տարածված են եղել նաև ԺԷ. դարում:

Սարգիս արեղա,
1607 թ., Շոշ

Զաքարիա Վանեցի,
1611 թ., Քաղաք

Հակոբ քահանա,
1620 թ., Կամեմից

«Ձեռքս գնա, տեղն
երեսայ,
Մարմինս փտեալ
փոշի դառնայ,
Յիշատակ առ ձեզ
մնա. ամէն:
Տեսի բերան մի յի-
շեա,

«Ձեռքս գնա, տեղն
երեսայ,
Մարմինս փտեալ ի
հող դառնայ,
Գիրս յիշատակ առ
ձեզ մնայ:
Ամէն տեսի բերանմ
յիշեա,

«Ձեռքս փրտի եւ հող
դառնայ,
Մոխիր փոշի գազա-
խանայ,
Գիրս յիշատակ առ
ձեզ մնա.
Թեպէտ խոշոր է գիր
սորայ,

Այլ դիրքները ով
գիտեմա,
Թեպետ խոշոր է
գիրս սորա,
Յերբ ընթեռնուք աւգ-
տի սմա,
Յիշել ի Տէր զգծող
սորա»
[Հիշ. ԺԷ, Ա, 271]:

Թեպետ խոշոր է գիր
սորայ,
Այլ դիրքները ով
գիտեմայ,
Յերբ բանաք ընթեռ-
նուք զսայ,
Յիշեա ի Տէր զըծող
սորայ,
Զաքարայ անպիտա-
միս մի բերան ողորմի
ասայ,
Եւ Աստուած զքեզ յի-
շեայ. ամէն»
[Հիշ. ԺԷ, Ա, 413]:

Այլ դիրքները ով
գիտեմայ,
Երբ սովորի եւ հըմ-
տանայ:
Որք ընթեռնուք ւ օգ-
տիք ի սմայ,
Յիշէ՛ք առ Տէր զգծող
սորայ» [Հիշ. ԺԷ, Ա,
732]:

Այս կաղապարի հնագույն վկայութիւններէից մեկը գտնուած ենք դեռեւս ԺԱ. դարում: 1099 թ. Ահարովն գրչի հիշատակարանում կարդում ենք. «[Գիր]ս մնայ եւ ձեռքս [գնայ, ա]ւաղ զեղկե[լոյս] յաւուրն յետնումն» [Հիշ. Ե-ԺԲ, 120, վերականգնումները - Ա. Մ.]: 1194 թ. Պետրոս ծաղկողն էլ գրում է.

«Ո՛ր, գիր, որ մնաս,
Ո՛ր ձեռք, որ հողանաս» [Հիշ. Ե-ԺԲ, 280]:

1211 թ. Սեբաստիայում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում կարդում ենք Հայրապետ գրչի հետեյալ նույնական երկտողը.

«Ո՛ր գիր, որ մնաս,
Է ձեռն, որ հողանաս» [Հիշ. ԺԳ, 76]:

Եթե կաղապարների նախորդ տեսակները հիմնականում բնորոշ են միայն հայկական հիշատակարանին և բխում են վերջինի կառուցվածքային ու բովանդակային առանձնահատկութիւններից, ինչպես նաև պայմանավորված են ժանրային ձևավորված ավանդույթով, ապա ուշագրավ է, որ թափառող կաղապարները վկայված են ձեռագրական այլ մշակույթներում ևս՝ ընդամին

արդարացնելով նաև մեր տված «Թափառող» ձևակերպումը: Հայերեն հիշատակարաններում նման կաղապարների առկայութ-
 թյան վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Ա. Շի-
 րինյանը՝ համեմատություն անցկացնելով հիմնականում հայկա-
 կան և բյուզանդական ձեռագիր հիշատակարանների համապա-
 տասխան կաղապարների միջև²⁷⁶: Որոշումները ցույց են տալիս,
 որ ձեռքի անցողականության, գրի հավերժության և արհես-
 տի նավավարների ու պանդխտությունից տուն դարձողների
 բերկրանքի հետ գրչական աշխատանքի ավարտի համեմատումը
 տարբեր դարաշրջաններում տարածված է եղել նաև ասորա-
 կան²⁷⁷, ղպտական²⁷⁸, լատինական²⁷⁹, հունական²⁸⁰ և ձեռագրա-
 կան այլ ավանդույթներում ևս²⁸¹:

²⁷⁶ **A. Sirinian**, *On the Historical and Literary Value of the Colophons in Armenian Manuscripts*, pp. 89-95.

²⁷⁷ **S. P. Brock**, *The Art of the Scribe*, pp. 260-261.

²⁷⁸ **А. И. Еланская**, *Коптская рукописная книга*, стр. 20.

²⁷⁹ **L. Reynhout**, *Formules latines de colophons*. Առաջին հատորում քննության են առնված մի շարք կաղապարներ, դրանց տարբերակներ, տրվում է նաև համապատասխան վիճակագրություն: Երկրորդ հատորում շեշտը դրված է այդ կաղապարների վկայությունների, համապատասխան ցանկերի և աղյուսակների վրա: Տե՛ս նաև հաջորդ ծնթ.:

²⁸⁰ **G. Garitte**, *Sur une formule des colophons de manuscrits grecs (ή μὲν χεῖρ ἢ γράψασα)*, “Collectanea Vaticana in honorem Anselmi M. Card. Albareda a Bibliotheca Apostolica edita”, vol. 1 (*Studi e Testi*, 219), Città del Vaticano, 1962, pp. 359-390: Տե՛ս նաև հաջորդ ծնթ.:

²⁸¹ Ձեռագրական տարբեր ավանդույթներում ձեռքին և մատներին առնչվող կաղապարային բանաձևերի որոշ համեմատություններ տե՛ս **S. Bernardinello**, *Oriente e Occidente nella mano del copista. Vita, morte, un bene per l’eternità*, “All’incrocio dei saperi: la mano”. Atti del Convegno di Studi (Padova, 29-30 settembre 2000), a cura di **A. Olivieri – M. Rinaldi – M. R. Bonatti**, Padova, 2004, pp. 33-47. Նավահանգիստ հասնելու վերաբերյալ գրչական նշումների համեմատության համար կարևոր է հետևյալ հոդվածը՝ **S. P. Brock**, *The Scribe Reaches Harbour*, “Bosphorus. Essay in Honour of Cyril Mango”, **S. Efthymiadis, C. Rapp & D. Tsougarakis** (eds.), *Byzantinische Forschungen*, 1995 (21), Amsterdam, pp. 195-202. Այս մասին որոշ մանրամասներ կարելի է գտնել նաև այստեղ՝ **L. Reynhout**, *Formules latines de colophons*, vol. 1, pp. 85-94.

Տարբեր լեզուներով, այդ թվում՝ հայերենով գրված հիշատակարաններում միևնույն կաղապարի բազմաթիվ տարբերակների առկայությունը փաստում է, որ գրիչները, թեև քաջածանոթ են եղել դրանց, սակայն մեխանիկորեն չեն կրկնել. ինչպես երևում է, նրանցից շատերը ջանացել են փոփոխել և որոշ ինքնուրույն տարրեր մտցնել այդ կաղապարներում՝ արդյունքում ծնունդ տալով նորանոր տարբերակների:

Ամփոփելով նշենք, որ թեև մենք այստեղ փորձեցինք դասակարգել և տարբերակել հայերեն ձեռագրերի հիշատակարաններում կիրառվող կաղապարները, սակայն համոզված ենք, որ այս միավորները կարոտ են հավաքման և առավել մանրամասն ուսումնասիրություն: Ինչպես նշել ենք արդեն, չի բացառվում, որ առանձին կաղապարներ կարող են նպաստել գրչօջախների, գրիչների կամ գրչական միջավայրի ճշտմանը և ծառայել հայկական ձեռագրագիտության տարաբնույթ հարցերի լուծմանը:

**7. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՁԵՌԱԳՐԱՍՏԵՂԾՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԵՎ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ**

*«Ով գիրք տեսանէ գրած, կարծէ՛ դիւրաւ եկեալ
յառաջ, ոչ այդպէս. գոզցես մահու չափ»
Սովսես գրիչ, 1296 թ. [Հիշ. ԺԳ, 779]*

Մատյանը՝ իբրև պատրաստի գրավոր հուշարձան, բազմա-
չերտ գիտելիքների և մի շարք հմտությունների մեկտեղման
արքասիք է, որի ետևում շատ հաճախ կանգնած են տարբեր
մասնագիտությունների և հասարակական տարբեր դիրքի տե-
րանձինք: Նրանցից յուրաքանչյուրի անհատական ներդրումով և
կազմակերպված միասնական աշխատանքի արդյունքում է ըն-
թերցողի ձեռքն անցնում ընդօրինակված, սրբագրված, ծաղկ-
ված, կապված և կազմված ձեռագիրը:

Բարեբախտաբար, հայերեն ձեռագրերի հիշատակարանները,
չնայած կառուցվածքային ընդհանրությունների և կաղապարա-
յին միավորների առկայությանը, աչքի են ընկնում բովանդա-
կային խիստ բազմազանությամբ. գրիչներից շատերն ընդօրի-
նակումն ավարտելուց հետո չեն բավարարվել գրչության ժա-
մանակին, վայրին կամ պատվիրատուին առնչվող տեղեկու-
թյունների գրանցմամբ և իրենց հիշատակարաններում, ի թիվս
այլ արժեքավոր տեղեկությունների, հաճախ արձանագրել են
նաև ձեռագրաստեղծմանը վերաբերող արժեքավոր մանրամաս-
ներ: Ըստ էության՝ գրավոր ոչ մի աղբյուր չի հաղորդում
գրչության ընթացքին վերաբերող այնպիսի տեղեկություններ,
ինչպիսիք հնարավոր է քաղել ձեռագիր հիշատակարաններից:
Դրանցում կարելի է գտնել մատյանի ստեղծման պատմությանը,
ընդօրինակման ընթացքին և հանգամանքներին առնչվող

գրանցումներ, որոնք մեծ արժեք ունեն միջնադարյան հայկական գրչօջախների, գրադարանների, գրչուլթյան ընթացքի ու գործիքների, նյութերի, ներկերի, գրատեսակների, կազմարարուլթյան և ձեռագրական այլ միավորների ուսումնասիրուլթյան համար:

Ձեռագրակերտմանն առնչվող տարաբնուլթ տեղեկուլթյունների, տարբեր հասկացուլթյունների կամ գործիքների անվանումների հավաքագրումն ու ուսումնասիրուլթյունը, անկասկած, իրենց նպաստն են բերելու հայ ձեռագրագիտուլթյան ասպարեզում նոր հետազոտուլթյունների սկզբնավորմանը, այդ թվում՝ բառարանների կազմուլթյանը: Ուշագրավ է, որ եթե մի կողմից ձեռագրերի հիշատակարանները հաղորդում են մատյանի ստեղծման ընթացքում կիրառվող որոշ գործիքների անվանումներ, ապա մյուս կողմից ձեռագրերի մանրանկարներում շատ հաճախ կարելի է նկատել այդ նույն գործիքների պատկերները: Այդպիսի մի օրինակ է 1338 թ. Երզնկայում գրչագրված Ավետարանը, որի ծաղկող Հովհաննես եպիսկոպոսը Մատթեոս ավետարանչի մանրանկարում պատկերել է գրչուլթյան մի շարք գործիքներ՝ իրենց անվանումներով: Օրինակ՝ տախտակը, որի վրա դրված է գրչուլթյան նյութ մագաղաթը կամ թուղթը, ունի «չեքերոն» մակագրուլթյունը: Ավետարանչի դիմաց վերից վար նկարված գործիքներն ունեն հետևյալ մակագրուլթյունները. «քանոն», «թղթ[ի] կոկիչ», «կաղմար», «գրիչ», «մկրատ», «ձեւիչ», «ղանակ», «սնտուկ», «խուփն»: Մանրանկարի տակ կարդում ենք նկարչի հիշատակագրուլթյունը. «Ձնկարաւղ պատկերիս զՅովաննէս անվամբ[ը] եպիսկոպոս եւ ոչ գործաւք յիշեսջիք ի Քրիստոս» (նկ. 28):

Ծավալուն և բազմաշերտ այս նյութը դասակարգման և առանձին հետազոտուլթյունների կարիք ունի. այստեղ մենք ամփոփ կներկայացնենք մի քանի տիպական օրինակ, որոնք որոշակի պատկերացում են տալիս ձեռագրակերտմանն առնչվող հիշատակարանային տեղեկուլթյունների վերաբերյալ:



Նկ. 28, ՄՄ, Հ^մ 7643, 2բ. ձեռագրաստեղծման ընթացքում կիրառվող գործիքներն իրենց անվանումներով

Ընդօրինակման տևողությունը: Շատ հաճախ գրիչներն իրենց հիշատակարաններում ամսաթվերով արձանագրել են ձեռագրի ընդօրինակման սկիզբը և ավարտը: Սա հնարավորություն է տալիս ուսումնասիրողներին հետևելու գրչության ժամանակային ընթացքին, հաշվել մեկ օրում գրչի ընդօրինակած թերթերի միջին քանակը, իսկ ստացված արդյունքները համադրել այլ ձեռագրերի առիթով արված նույնաբնույթ հաշվումների հետ և կատարել որոշ վերլուծություններ: Հայերեն ձեռագրերի պարագայում նման ընդհանրացված հաշվումներն առայժմ բացակայում են, մյուս կողմից առանձին գրիչների ձեռագրական ժառանգությունները քննող հետազոտողները պարբերաբար անդրադարձել են այս կամ այն գրչի ընդօրինակման միջինացված արագությունը մեկ օրվա կտրվածքով, և կարելի է ասել, որ որոշ տարբերություններով միջին չափի ձեռագրի համար այդ թվերը հիմնականում տատանվում են օրական 3-4 թերթերի միջև²⁸²: Անկասկած, առաջիկա հետազոտություններն այս ուղղությամբ կարող են ավելի հստակություն մտցնել:

Հայերեն հիշատակարաններում գրանցված այս բնույթի նշումների վերաբերյալ ընդհանուր պատկերացում տալու համար անհրաժեշտ ենք համարում նշել մի քանի օրինակ.

1261 թ. Ակներում ընդօրինակված և Ե. դարի մատենագիր Ագաթանգեղոսի «Պատմություն»-ը պարունակող (3ա-325ա) ՄՄ Հ^մ 1481 ձեռագիրն ունի 369 թերթ, մեծությունը միջինից մի փոքր ավելի է՝ 29×21, գրությունը երկայուն է, գիրը՝ բոլոր-

²⁸² Լատիներեն ձեռագրերի ընդօրինակման տևողության վերաբերյալ վիճակագրական որոշ հաշվարկներ է ներկայացրել Ժ.Պ. Գումբերտը: Նրա հաշվարկները հիմնված են շուրջ 800 հիշատակարանների հաղորդած տվյալների վրա: Ըստ Գումբերտի հաշվարկների՝ լատիներեն միջին չափի ձեռագրի պարագայում գրիչները հիմնականում ընդօրինակել են օրական 2-3 թերթ, տե՛ս **G. P. Gumbert, *The speed of Scribes*, “Scribi e colofoni”, pp. 65, 68.**

գիր, տողերի քանակը՝ 22: Գրիչն է Դավիթ Բջնեցին²⁸³: Ձեռագրի 325ա երեսին կարդում ենք գրչի հիշատակարաններից մեկը. «Ողորմութեամբն Աստուծոյ սկսայ ի յամսեանն դէկտեմբեր ժե. (15) եւ շնորհաւք Սուրբ Հոգոյն կատարեցի ի մարտ Լ. (30), որ հասուցեր զմեզ ի գիծ վերջի այսմ նամակի»²⁸⁴: Փաստորեն, 105 օրերի ընթացքում (դեկտեմբերի 15-ից մինչև մարտի 30)²⁸⁵ Դավիթ Բջնեցին օրական ընդօրինակել է միջինում 3 թերթ կամ շուրջ 130 տող:

Կրկին ժ.Գ. դարից է մեր հաջորդ օրինակը: Ըստ հիշատակարանային տեղեկություններից՝ երեք տարի է տևել նշանավոր Մշո Տոնական-ձառընտրի ընդօրինակումը (1200-1202 թթ.), որն իրագործել է Վարդան գրիչը Աստվածատուր պատրոնի մեկենասությամբ: Ա. Մաթևոսյանը ժամանակին ցույց է տվել, որ ձառընտիրը գրվել է Երզնկայի Ավագ վանքում, և այն, ըստ ամենայնի, չի ունեցել գրչի գլխավոր հիշատակարան՝ չնայած մի շարք հիշատակագրությունների առկայությունը: Գրչությունից հետո մատյանն առևանգվել է, ապա փրկագնվել և պահվել է Մշո Առաքելոց վանքում (այստեղից էլ՝ ձառընտրի անվանումը), ուր և գրվել է մատյանի ընդարձակ հիշատակարանը՝ Թեոդորոս վարժպետի ձեռքով²⁸⁶: Հիշատակարանում կարդում ենք.

«Եւ ապա խնդիր արարեալ յոգնախմաստ գրչի եւ գտեալ քահանայ մի ի գաւառէն Կարնայ, որումն Վարդան կոչեցեալ, հմուտ եւ վարժ ամենայն արհեստի գրչութեան, եւ նա

²⁸³ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ., կազմեցին՝ Ա. Քէօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսեան, խմբագրութեամբ՝ Փ. Անթարեանի, Յ. Քեօսեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Ծահէ քիյ. Հայրապետեանի, ցանկերը կազմեց՝ Վ. Դեմիրկեանը, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երևան, 2008, էջ 1379:

²⁸⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ., էջ 1380: Հմմտ. Հիշ. ԺԳ, 307 և ԺԵ, Ա, 468:

²⁸⁵ Փետրվարը 28 օրով հաշվելու դեպքում:

²⁸⁶ Ա. Մաթևոսյան, Ե՛րբ և որտե՛ղ է գրվել Մշո Տօնակսն-Ձառընտիրը, էջ 158:

յանձին կալեալ եւ ազնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ եւ ապա զկնի երից ամաց եհաս յաւարտ բանին» [Հիշ. ԺԳ, 44]:

Մատյանը նախապէս բաղկացած է եղել 661 մեծաղբի թերթերից²⁸⁷՝ գրված եռասյուն գրութեամբ և երկաթագրով: Այս հանգամանքը մեզ թույլ է տալիս մոտավոր կերպով հաշվել մատյանի ընդօրինակման օրերի միջին քանակը, ըստ որի՝ Վարդան գրիչը հսկայական այդ աշխատանքն իրականացրել է յուրաքանչյուր օր կեսից մինչև մեկ ամբողջական թերթ ընդօրինակելով:

Ժէ. դարի արդյունաշատ երկու գրիչների ձեռագրական ժառանգութեանը նվիրված մեր ուսումնասիրութեան մեջ հաշվել ենք վերջիններիս ընդօրինակած թերթերի միջին քանակն ըստ օրերի: Սակավախոս հիշատակարաններով աչքի ընկնող Միքայել Թոխաթեցին, ըստ մեր հաշվումների, օրական ընդօրինակել է 3,5-4 թերթ²⁸⁸, գրեթե նույնքան թերթ է օրինակել նաև Բարդամ գրչի որդի Միքայելը²⁸⁹: Ըստ որում՝ երկու գրիչների պարագայում էլ գործ ունենք հիմնականում միջին կամ միջինից մի փոքր ավելի մեծութուն ունեցող ձեռագրերի հետ:

Նկատենք, սակայն, որ այսպիսի հաշվումներն ավելի շուտ տեխնիկական բնույթ ունեն և երբեմն կարող են չարտացոլել գրչութեան իրական ընթացքը: Բազմաթիվ հիշատակարաններից տեղեկանում ենք, որ գրչութունը հաճախ ընդմիջվել է անբարենպաստ պայմանների, ավազակային հարձակումների և այլ պատճառներով²⁹⁰, իսկ գրիչներն էլ, մահվան ահը սրտներում,

²⁸⁷ Նշվ. աշխ., էջ 139:

²⁸⁸ **Խ. Հարությունյան**, *Միքայել անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, էջ 28:

²⁸⁹ Նշվ. աշխ., էջ 127, 146, 156: Բարդամի որդի Միքայելը սովորություն է ունեցել նաև մինչև ձեռագրի ավարտը տարբեր թերթերին արձանագրել ամսաթիվը, որը գրչության ժամանակային ընթացքին հետևելու լրացուցիչ հնարավորություն է տալիս:

²⁹⁰ Ընդօրինակման տևողությունը, անշուշտ, կապվում է նաև գրչի վարպետության և այլ գործունեների հետ: Փորձառու գրիչները կարող էին բավական արագ ավարտին հասցնել մատյանի գրչագրումն այդ գործի նորելուկ-

տեղից տեղ են փոխադրվել և ձեռագիր օրինակել միայն պատեհ առիթներին: Ահա թե ինչ է գրում Գրիգոր Մոկացի գրիչն իր 1601 թ. հիշատակարանում.

«Ո՛ր, ո՛ր հազար բերան մեղաւոր գծողիս, թէ քանի երեւում շուրջ գանք եւ փախիճք ի յայլագգեսց ձեռնէն. այս երեք ամ է, որ ի գիրքս եմ սկսեր, եւ ոչ թողում, որ յաւարտ ելանէ. յամէն տարի երկու եւ երեք ամսով փախեր եմ, եւ ոչ բաներ: Միճէն յե՞րբ փախիմ, տէ՛ր Աստուած, դու ճա՛ր արա, եղուկ եմ: Վա՛յ իճձ մոկացի գծողիս, ո՞ւր երթամ կամ ո՞ւր թաքիմ» [Հիշ. ԺԷ, Ա, 27]:

Հակոբ գրիչն էլ այսպես է հիշատակագրել իր դեգերումները մասին.

«Եւ ես ծանրաբեռն մարմնով, զթուրթ եւ զօրինակ, զգրիչ եւ զթանաք ի յուս իմ բարձեալ, ի հետ գնալի, կարդալի եւ որչափ ժամանէի, զսուրբ մատեանս գրէի բազում նեղութեամբ եւ չարչարանօք, զի ուր սկսա, անդ ոչ էտո զկատարումն» [Հիշ. ԺԴ, 560]:

Երկու տարի է տեւել Հայսմավուրքի ընդօրինակման ընթացքը բաղեչցի գրիչ Հովհաննեսի համար, որի առիթով նա գրում է. «Բազում աշխատութեամբ գրեցի զսա ի բազում տեղիս ի դառն եւ ի չար ժամանակիս, որ Բ. (2) տարի գրեցի զսայ ի խուցս սուրբ Կիրակոսիս եւ ի սուրբ Գէորգա ժամատունն» [Հիշ. ԺԵ, Ա, 547]:

Այսպիսով՝ ինչպես ցույց են տալիս հիշատակարանները գրչուլթյան տևողությունը, որը հիմնականում արտահայտվում էր գրչուլթյան սկիզբն ու ավարտն ազդարարող նշումներով,

ների համեմատությամբ, սակայն անվանի և վարպետ գրիչների համար ավելի կարևոր էր աշխատանքի որակը, որն անբաժան էր սեփական անունից: Փրանսիացի ձեռագրագետ Ժակ Լեմերն այս առթիվ նշում է, որ վարպետ գրիչները կարող էին բավարարվել օրական երկուսից երեք թերթի ընդօրինակումով, մինչդեռ սիրողական մակարդակի գրիչները կարող էին գրել օրական 9-10 թերթ՝ լի տարաբնույթ վրիպակներով և սխալներով, տե՛ս *Introduction à la codicologie*, par **J. Lemaire**, Louvain-La-Neuve, 1989, p. 158.

պայմանավորված էր մի կողմից գրչի փորձառությամբ, մյուս կողմից՝ տարբեր հանգամանքներով՝ բարենպաստ պայմաններով, ընդօրինակվող մատյանի թերթաքանակով, ձեռագրի մեծությամբ և այլն:

Ընդօրինակմանն ու սրբագրմանն առնչվող մանրամասներ: Հայերեն ձեռագրերի մի շարք հիշատակարաններում գրիչները հաճախ ուղղակի կամ անուղղակի կերպով արձանագրել են նաև այն եղանակը, որով իրականացրել են մատյանի ընդօրինակումը: Շատերն ընդօրինակելիս իրենց առջև ունեցել են գաղափար օրինակը, ոմանք էլ, ինչպես երբեմն նշվում է, ընդօրինակել են թելադրուժյան եղանակով²⁹¹: Ըստ որում՝ եթե առաջինի պարագայում աշխատել է մեկ գրիչ, ապա թելադրուժյունը միաժամանակ մեկից ավելի գրիչների հնարավորություն է տվել ընդօրինակել և բազմացնել թելադրվող մատյանը: Որքանո՞վ է, սակայն, գրչության այս եղանակը տարածված եղել մեզանում. ավելորդ չենք համարում այս մասին անել մի համառոտ դիտարկում՝ առաջիկային թողնելով հարցի մանրամասն քննությունը:

Գրավոր այս հուշարձաններին ծանոթ ուսումնասիրողները չեն կարող չնկատել այն հետաքրքիր հանգամանքը, որ գրչությանն առնչվող բազմաբնույթ տեղեկություններով, ձեռագրաստեղծմանը մասնակցող անձանց թվարկումներով հարուստ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում թելադրողի կամ թելադրուժյան մասին նշումներ չկան: Դժվար է պատկերացնել, որ մինչև անգամ շոգը, ցուրտը, ճանճերին կամ հաց բերողին, ջուր տվողին, անգամ աղմկողին հիշատակող գրիչները չարձանագրեին թելադրողին, չբողոքեին նրա արագ կամ ցածր ձայնով թելադրելուց կամ որ ավելի սպասելի է, չնչին անվանապես և ընթերցողներին չխնդրեին հիշել իրենց աղոթքներում նաև թելադրողին: Մյուս կողմից սխալների թողուժյան համար գրչական

²⁹¹ Ա. Խ. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության (X-XV դարեր)*, Հայպետուսմանկիրատ, Երևան, 1958, էջ 402: Պ. Լևոնյան, *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Հայպետհրատ, Երևան, 1958, էջ 15:

խնդրանքների բանաձևերում ևս թելադրողների մասին հիշատակումներ չենք գտնում, ասել է թե, սխալագրությունների կամ վրիպակների մեջ թելադրողները, ըստ գրիչների, «մեղքի» իրենց բաժինը չեն ունեցել, որը, արդարև, դժվար պատկերացնելի է:

Մեր ձեռքի տակ եղած վկայություններն առայժմ բավարար չեն վերջնական եզրահանգումների համար, սակայն կարելի է ասել, որ հայկական գրչօջախներում այդ մեթոդն առնվազն տարածված չի եղել, համենայն դեպս այդ մասին հիշատակումները հաճախադեպ չեն, եթե չասենք՝ բացակայում են: Եզակի է 1227 թ. Ավագ վանքում ստեղծված ՄՄ Հ^մ 6196 ձառընտրում պահպանված 1092 թ. հիշատակարանային փոքրիկ վկայությունը, որում տեղ գտած «բանիւ շարագրելոյ եւ գրչիւ գրելոյ» բառակապակցությունը, մեր կարծիքով, վերաբերում է թելագրելով գրելուն: Ահա հիշատակարանն ամբողջությամբ.

«Թարգմանեցան պատմութիւնք սրբոց վկայիցն ի յունարեւն գրոց ի հայ բարբար, ի մայրաքաղաքին Հայոց, որ կոչի Մելետեանի, ի թուակամիս Հայոց հինգ հարիւր եւ քառասուն եւ մէկ (1092), ընդ որս եւ Քրիստոս բարեխաւսութեամբ տացէ վարձս բարեաց թարգմանչի եւ գրչի եւ ամենայն աշխատելոցս ի սմա՝ բանիւ շարագրելոյ եւ գրչիւ գրելոյ, այն որ միշտ արհմեալ է յաիտեանս յաիտեանից. ամեն» [Հիշ. Ե-ԺԲ, 116, ընդգծումը մերն է – Խ. Հ.]:

Ի հավելումն նկատենք, որ եթե մեզանում թելադրությամբ ձեռագրերի բազմացմանը վերաբերող վկայությունները սակավ են, ապա արեւմտյան ձեռագրական ավանդութիւնում այդ մասին կան բազմաթիւ հիշատակումներ, և որպէս կանոն՝ քննվող եղանակը բավական տարածված է եղել հատկապէս խոշոր վանքերում ու մենաստաններում (այդ թվում՝ կանանց)²⁹²:

Ձեռագրաստեղծման ընթացքին վերաբերող հիշատակարանային նշումներում քիչ չեն նաև գրչության զուտ տեխնիկա-

²⁹² J. Lemaire, *նշվ. աշխ.*, էջ 158:

կան կողմի նկարագրությունները: 1304 թ. վասպուրականցի գրիչ Զաքարիան նշում է, որ միաժամանակ մի քանի մատյան է օրինակել, և բացատրում է իր աշխատանքի ընթացքը.

«Եւ կայր մեզ այլ գիրս գրելոյ Հաղտետրակս (Խաղտետր կամ Մանրուսմունք – Լ. Խաչիկյան) եւ Ծարակնոցս երկուս. առնէի զտետրակ Հաղիմ եւ գրէի երես մի եւ դնէի առ ի ցամաքիլ, ապայ՝ զԾարակնոցի զտետրակսն, եւ ապայ յետոյ զԱւետարանի տետրս» [Հիշ. ԺԴ, Ա, 71]:

Հովհաննես անունով գրիչն էլ հայտնում է, որ թանաքամանի մեջ մեկ անգամ թաթախելով՝ 900-ից ավելի տառ է գրել. «Յայս տետրակս Զ. (900) գիր ի Ա. (1) անգամ թաթախելոյն գրեցի եւ այլ՝ Ի. (20), Լ. (30) աւելի, վարդապետքս վկայ» [Հիշ. ԺԵ, Ա, 455]: Նույն ձեռագրում մեկ այլ գրիչ նշել է, որ ինքն էլ 700 տառ է գրել և կարող էր ավելին, եթե թանաքը չհոսեր. «Բայց մի թաթախելոյն էձ. (700) գիր գրեցի, բայց կաթաւ թանաքն, թէ չէ այլ կու գրէի» [Հիշ. ԺԵ, Ա, 456]: Արվեստաբան Ա. Գևորգյանի համոզմամբ՝ այդքան տառ գրելու հնարավորություն էին ընձեռում մի շարք մանրանկարներում հանդիպող գնդիկավոր գրիչները, որոնք գրող ծայրի մոտ ունեին գնդաձև դատարկ հատված, և թաթախելիս այդտեղ էր հավաքվում թանձր թանաքը, ապա դանդաղորեն հոսում սրածայր գրչի նեղ անցքից²⁹³:

Գրչության ընթացքը պահանջում էր, որ բնագիրը նախ անջատ թերթերին ընդօրինակվեր, ապա միայն կարվեր և ամրացվեր, հակառակ պարագայում աշխատանքը շատ էր բարդանում: Այդ է արձանագրում Գեորգ Լամբրոնացի գրիչն իր հիշատակարանում՝ գրելով. «Կարի դժար է ի կապած գիրք գրիչ բանեցնել, վասն այն, որ ձեռքն կու սղա առանց շիքորոնի (մի տեսակ տախտակ, որն ընդօրինակման ժամանակ գրվում էր ձեռագրի տակ –

²⁹³ Ա. Գևորգյան, Գրենսկյան գործիք՝ գնդիկավոր գրչի մասին, «ԲՄ», 5 (1960), էջ 313-315:

և. Հ.²⁹⁴, տե՛ս նկ. 28)» [Հիշ. ԺԳ, 355]: 1319 թ. Կոստանդին գրիչը նշում է, որ ձեռագրի պակաս էջերը լրացնելու նպատակով քանդել է ձեռագիրը, հարստացրել անհրաժեշտ թերթերով, ապա նորոգել է և կազմել տվել. «Առեալ ի ձեռն եւ զհինն, որ ոչ էր ուղիղ, քակելով ի բաց ընկեցաք եւ զթերին լնլով աճեցուցաք եւ նորոգեցաք... Եւ յետ սմին ետ կազմել» [Հիշ. ԺԴ, Ա, 389]:

Հերապետ անունով գրիչն իր գաղափար օրինակն անվանում է «հնոց ճշմարիտ քննական թարգմանութիւն», ուստի՝ պատվիրում է որևէ գիր չհավելել կամ չպակասեցնել իր գրչագրած մատյանից գաղափարելիս, այլ հետևել «ստուգիւ» գծագրած իր մատյանին [Հիշ. ԺԵ, Բ, 160]: Այստեղ նման օրինակի վկայակոչումը պայմանավորված է գրիչների այն խոսքերով, որոնց համաձայն՝ իրենք հարազատ են մնացել գաղափար օրինակին, երբեմն վերարտադրել են անգամ իրենց չհասկացած բառը կամ հատվածը: Ահա գրիչներից մեկը նշում է, որ ինքը վարժապետի մոտ չի սովորել, և հարազատորեն հետևել է միայն գաղափար օրինակին. «Զի տըւչութեամբ Հոգևոյն Սրբոյ է եւ ոչ ի վարժապետէ, զի բնաւ ուսեալ իմ չիք, եւ վասն բառին, շաղկապին եւ գրադարձին մի՛ արհամարհէք զիս եղկելիս, զի մաքրակենցաղ եւ սրբասուն քահանայքն գրէին զօրինակն, եւ ես ի նոյն շաւիղ ընթանայի»²⁹⁵: Դանիել կրոնավորն էլ ներողություն է խնդրում իր արտագրած, բայց իրեն անհասկանալի բառի համար. «Անմեղադրութիւն խնդրեմ, զի յաւրինակն այնց էր գրած» [Հիշ. ԺԴ, Ա, 38]:

Հովհաննես գրիչը 1331 թ. ընդօրինակած Ավետարանի սկզբնամասում ուղղորդող հրահանգ է գրել հետագայում մատյանից ընդօրինակել ցանկացող գրիչներին.

²⁹⁴ Տե՛ս նաև **Ա. Գևորգյան**, *Ինչպես էին նկարագրողվում ձեռագրերը*, «ԲԵՀ», 1991 (2), էջ 66-67:

²⁹⁵ **Գ. Ղազարյան**, *Ալմի Կանք գրուի 1787 թվականի հայ հոռոմների Ավետարանը*, «ԲՄ», 24 (2017), էջ 230:

«Ո՛վ եղբայր, եթէ արիմակես, դու զմե՛ծ գիրն մե՛ծ գրէ, եւ զմանր՝ մանր, եւ թէ կարդաս, զմե՛ծն կարդաս ու զմա՛նր թող, զի մի այլ եւ այլ լիցի գրեալն եւ արիմակն: Վասն զի ախմար գրաւոյն գրեցին զմե՛ծն եւ զմանրն ի կարգն, գիտացին՝ խալատ է գրած, եւ գրեցին ի շարն, եւ գրեալքն այլայլեցաւ. ստուգէ ի յայլ գրոց զսխալն եւ ի շարն գրէ, եւ զայլն հաչնց մանր գրէ, զի մի զանազանեացին»²⁹⁶:

Որքան էլ գրիչները փորձել են հարազատ մնալ գաղափար օրինակ(ներ)ին, այնուամենայնիվ, տարաբնույթ սխալներից, անգամ պարզ վրիպակներից նրանք ևս ապահովագրված չեն եղել. տարբեր առիթներով հայագիտության մեջ ցույց են տրված գրչական սպրդումների հետևանքով առաջ եկած տարբնթերցումները, որոնց քննությունն ու հիշատակումը դուրս է մեր ներկա ուսումնասիրության շրջանակներից: Գրիչներն իրենք էլ շարունակ ներողություն են հայցում ընթերցողներից իրենց ընդօրինակած ձեռագրերում առկա վրիպակների համար, որոնց մի մասն էլ, ինչպես տեսանք, կարող էին գալ դեռևս գաղափար օրինակից. «Դարձեալ անմեղադիր լերուք սխալանացն, զի զոր ինչ ի յօրինակն գտաք, զայն գրեցաք», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. Ժէ, Բ, 90]: Շատերը նշում են, որ աչք են կուրացրել, մեջք են կորացրել կամ իրենց վիզն են վնասել, մինչև ավարտին են հասցրել աշխատանքը: Սխալների համար գրիչների ներողություն խնդրելու երևույթը հատուկ է ձեռագրական տարբեր ավանդութիւնների, ըստ որում՝ նաև այնպիսի, որոնցում գրիչներն աչքի չեն ընկնում ընդարձակ կամ բովանդակալից հիշատակարաններով: Ահա հնդկական հիշատակարանից մի պատուիր, որում գրիչը խնդրում է իրեն չմեղադրել սխալների համար՝ արդարանալով, որ պատճառը գաղափար օրինակն է. «Ինչ տեսել եմ գրքում, այն էլ կրկնօրինակել եմ: Ճիշտ է, թե սխալ, ես մեղավոր չեմ: Թող չկոտորվի իմ մեջքը, վիզը, թող բռունցքի հարվածներ չլինեն դեմքիս Ֆիզիկական այն մեծ ջանքերի համար, որոնք ներդրել եմ այս գիրքն ընդօրինա-

²⁹⁶ ՄՄ Հ^{մր} 4217, 10ա:

կելիս» (Թարգմ. ռուսերենից մերն է)²⁹⁷: Իսկ ոմանք էլ ընթերցողներին խնդրում են չմեղադրել իրենց սխալների համար, այլ ուղղել դրանք, ինչպես որ կարգում ենք լատիներեն մի հիշատակարանում²⁹⁸: Գրեթե նույն խնդրանքով ընթերցողներին է դիմում նաև վրացի մի գրիչ՝ փորձելով իր սխալները բացատրել գիշերային ժամին կատարած ընդօրինակությամբ²⁹⁹:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններն առատ են սխալների համար ներողության և դրանք ուղղելու խնդրանքներով: Այստեղ գրչական սխալների թողությունն հայցող բանաձևը հիմնականում արտահայտվում է «անմեղադի՛ր լեր» կամ «անմեղադի՛ր լերուք» հարադրական կառույցներով, որոնք շատ հաճախ շարունակություն են ստանում «գի կար մեր այս էք» արդարացնող և մեղմացուցիչ սեղմ նախադասությամբ: Նշենք մի քանի օրինակ.


«Արդ, աղաչեմք զամենիսեան, ոյք հանդիպիք այսմ տանի, խոշորութեան գրոյս եւ սխալանացն, որ ի սմա լինի, անմեղադիր լինել եւ եղբայրաբար ուղղել եւ վարձս բարեաց ընդունել ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ» [Հիշ. ԺԴ, Ա, 68]: «Աղաչեմ զԺառանգաւորս՝ անեցէ՛ք ի սխալմանս ի սա եւ սիրով ուղղեցէ՛ք» [Հիշ. ԺԴ, Ա, 153]: «Եւ խոշորութեան եւ սխալանաց գրիս անմեղադի՛ր լերուք, զի այդ էր կարն մեր» [Հիշ. ԺԵ, Ա, 23]: «Եւ արդ, անմեղադի՛ր լերուք, ո՛վ եղբայրք, խոշորութեան եւ սխալանացս, զի կայր մեր այս է» [Հիշ. ԺԷ, Բ, 18]:

1310 թ. Հոհաննես գրիչը խնդրում է. «Եւ սխալանացս ներեցէ՛ք եւ սիրով խոնարհեալ ուղղեցէ՛ք, զի որչափ էր ի մեզ կար՝ ջանացաք, եւ թե գտանի սխալ, մեք ոչ իմացաք, բայց գիտնոցն կրկին մաղթեմ ուղղել» [Հիշ. ԺԴ, Ա, 181]:

²⁹⁷ **М. И. Воробьева-Десятовская**, *Рукописная книга в культуре Индии*, “Рукописная книга в культуре народов Востока” (очерки), книга вторая, изд. «Наука», Москва, 1988, стр. 57.

²⁹⁸ **M. Shiegg**, *Scribes’ Voices: The Relevance and Types of Early Medieval Colophons*, p. 142.

²⁹⁹ **G. Shurgaiia**, *Colophon e archeologia del codice*, p. 117.



Նկ. 29, ՄՄ Հ^մ 6288, 61ա. սրբագրիչ Մխիթար Քորայեցու հիշատակագրությունը ստորին լուսանցում

Գրչական սխալները կարելի է տարբեր պատճառներով բացատրել. իրենք՝ գրիչներն էլ շատ հաճախ գրել են այդ պատճառների մասին. ոմանք գիշերվա մթուժթյունն են հիշատակել, ոմանք՝ ճանճերի առատությունը, մյուսները՝ աղմուկը կամ իրենց մտացրիվ լինելը: 1623 թ. Վարդան գրչի հիշատակարանում կարդում ենք. «...խոշորութեան կամ սխալանացն անմեղազի՛ր լերուք, զի կար մեր այս էր, քանզի խելքս եւ միտքս ցնորել էր» [Հիշ. ԺԷ, Բ, 114]: Ա. Մաթևոսյանն այստեսակ սխալները դասում է հոգեբանական սխալների շարքին, որոնց հիմքում գրչի անուշադրությունն է կամ նրա կենտրոնացմանը խանգարող զանազան գործոնները: Դրանք անվանի ձեռագրագետը տարբերում է բուն լեզվական սխալներից³⁰⁰, որոնք պայմանավորված են գրիչների չիմացությամբ, թերուսմամբ կամ զուտ լեզվական այլ երևույթներով:

Պետք է արձանագրել և այն փաստը, որ մատյաններն ընդօրինակվելուց հետո միանգամից չեն անցել պատվիրատու-ստացողի կամ ընթերցողի ձեռքը, մինչ այդ դրանք սովորաբար սրբագրվել են: Իբրև սրբագրիչ կամ ուղղող (հիշատակարաններում երբեմն՝ ուղղիչ, ըզող, ըզորդող) կարող էր հանդես գալ ինչպես նույն մատյանն ընդօրինակած գրիչը, այնպես էլ մի «օտար աչք»: Հայկական ձեռագրարվեստում սրբագրիչի մասին տեղեկություններ ունենք արդեն ԺԳ. դարասկզբից: Հնագույն վկայությունը գալիս է 1211 թ. ընդօրինակված նշանավոր Հաղբատի Ավետարանից³⁰¹, որի սրբագրիչը կամ ուղղողը ներկայանում է այսպես. «ԶՄխիթար Քոյրայրեցի (իմա՛ Քոբայրեցի – Խ. Հ.) յիշեա՛ ի Քրիստոս, աղաչեմ, գուղղիչ» [Հիշ. ԺԳ, 68]: Ավե-

³⁰⁰ Մատեան գիտութեան եւ հաստոյ Դալիթ քահանայի. հայերէն թղթեայ հնագոյն ձեռագիր 981, նմանատպոյթիւն, ուսումնասիրութիւն, վերծանութիւն, ծանոթագրութիւններ, ցանկեր, աշխատասիրութեամբ Ա. Մաթևոսյանի, «Նաիրի» հրատ., Երևան, 1997, էջ 43:

³⁰¹ Հաղբատի Ավետարանը. Անիի մանրանկարչոյթյան մի եզակի նմուշ, հեղինակ-կազմող՝ Կ. Մաթևոսյան, մասնակից՝ Գ. Էլիագյան, մատենաշարի խմբագիր՝ Հ. Թամրազյան, «Նաիրի» հրատ., Երևան, 2012, էջ 7:

տարանի մի շարք էջերին կարելի է նկատել Քոբայրեցու ուղղումները: Այս հիշատակարանը միաժամանակ ուշագրավ է նաև նրանով, որ այստեղ ավանդված է ուղղիչ բառի նոր՝ «սրբագրող, սխալները ուղղող» իմաստի, միաժամանակ նաև՝ եզրի (տերմինի) հնագույն վկայությունը (նկ. 29)³⁰²:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում առատ են սրբագրմանն ու այն կատարողին առնչվող տեղեկությունները: «Յիշեսջիք եւ գքւերորդին մեր՝ գՆերսէս քահանայ, նաեւ զԹորոս քահանայ եւ զՅովհաննէս, որ ի յուղղելն աշխատեցան», – կարդում ենք Վարդան գրչի հիշատակարանում [Հիշ. ԺԴ, Ա, 482]: «Նաեւ զաշխատասէր եւ զառատամիտ վարդապետն Յոհաննէս զծնեալ որդեակն իմ ի Քրիստոս, ի ձեռն որոյ սրբագրութիւն տառիս եղեւ, յիշեցէ՛ք բարի կամօք», – գրված է մեկ այլ հիշատակարանում [Հիշ. ԺԴ, Ա, 55-56]:

Գրանցված վկայություններն այս դեպքում էլ որոշակի հստակություն են մտցնում սրբագրական աշխատանքի ընթացքի վերաբերյալ: Ըստ հիշատակարանային տեղեկությունների՝ կարելի է ասել, որ ձեռագրերը սրբագրվել են հիմնականում մինչև պրակների (տետրերի) կարումն ու միմյանց միացումը: Այդպես, բնականաբար, ավելի հեշտ էր փոխարինել սխալաչատ էջերը: Առանձին դեպքերում, սակայն, գրիչ-սրբագրիչները վկայում են, որ իրենք ստիպված են եղել ուղղումներ անել արդեն իսկ կապած և կազմած ձեռագրերում: Ահա թե ինչ է գրում մի սրբագրիչ.

³⁰² ՆՃԲ-ին հայտնի է ուրղիչ բառը «առաջնորդ, կառավար, ղեկավար, վարիչ» իմաստներով, տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 548: Այս իմաստները հաստատվում են նաև Մ. Ջախջախյանի կազմած հայերեն-իտալերեն բառարանով, տե՛ս Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, յօրինեալ ի **հ. Մանուէլ վարդապետէ Ջախջախեան**, ի տպարանի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1837, էջ 1141, ինչպես նաև Առձեռն բառարանով, տե՛ս **Գր. Ճէլալեան**, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1865, վերահրատ. Անթիլիաս, 1988, էջ 660:

«Ի թուականութեանս Հայոց ի ՈՀԶ. (1227) ծախաք եւ ըն-
չիք նուստ սպասաւորի բանի Վարդանա գրեցաւ ցանգալի
կտակս, իսկ ՈՀԷ. (1228) կազմեցաւ, եւ զի ոչ էր կարդացած
եւ ուղղած, ի ՈՀԸ. (1229) կարդացի եւ ոչ կարացի ուղղել,
վասն զի շատ էր սղալն՝ ատելի եւ պակաս, զոր ոչ կարացի
զատելին հանել եւ կամ զպակասն գրել, վասն զի նորակազմ
էր գիրքս եւ սաստիկ պինդ» [Հիշ. ԺԳ, 160]:

*Պետք է նկատել, որ կապած և կազմած ձեռագրերի պարագա-
յում սրբագրական միջամտութիւնների, ուղղումների նպատա-
կով հայերեն ձեռագրերում գործածվել են մի շարք նշաններ և
եղանակներ, որոնք, մեր կարծիքով, կարող են հետաքրքիր լինել
արդի հայ ձեռագրագիտութեան համար*³⁰³:

*Նյութեր, թանաքներ, գործիքներ: Հայերեն հիշատակարան-
ներում ուրույն հետաքրքրութիւն ունեն այն վկայութիւնները,
որոնք վերաբերում են գրչութեան նյութերին, թանաքներին
և գործիքներին: ԺԲ. դարով թվագրվող ձեռագրի հիշատակա-
րաններից մեկում գրիչը խնդրում է հիշել կաշեգործ Կիրակոսին,
«որ գհորթվենիս շնորհեց գրոցս» [Հիշ. Ե-ԺԲ, 316]: Հիշատակա-
րանից տեղեկանում ենք, որ Կիրակոսը հորթի կաշի է ընծայել
գրչութեան համար: Մյուս կողմից տարբեր դարաշրջանների հի-
շատակարաններում տեղեկութիւններ են պահպանվել մագա-
ղաթի սղութեան վերաբերյալ: 1624 թ. Ղազար վարդապետը
գրում է. «Այստեղիքս դիժար էր եւ մագաղաթ չէր գտնվիր»
[Հիշ. ԺԷ, Բ, 162]:*

*Ավելի հաճախ նկատվում են մագաղաթի կամ թղթի վատ
որակին, թանաքի թանձրութեանը, լավ եփած չլինելուն վերաբե-
րող նշումներ, որոնք գրիչների դժգոհութիւնների պատճառ են
դարձել: Հետևյալ հիշատակարանում գրիչը նշում է, որ վատ
մագաղաթի պատճառով բազում գրիչներ է կոտրել. «ԶԱստուա-*

³⁰³ Ձեռագրերի նկարագրության ընթացքում նկատելի, հավաքելի և դասակար-
գելի ենք սխալների ուղղման նպատակով հայերեն ձեռագրերում գործած-
ված տարաբնույթ եղանակներ և նշաններ, որոնք առաջիկայում առանձին
ներկայացնելու նպատակ ունենք:

ծատուր երէցս յիշեա՛, եւ դուք յիշեալ լիցիք ի Քրիստոսէ. ամէն: Ո՛վ եղբայր, անմեղադիր լերուք, որ նեղացուցեր զիս մագաղաթն. ամէն երեսին զալէմ մի կոտորեցի»³⁰⁴: Գրիգոր երեցին վշտացրել է այն հանգամանքը, որը թղթի ողորկութիւնն ապահովելու համար մարմար չի ունեցել. «Մառմառ չունէի, անմեղադիր լերուք», – գրում է նա³⁰⁵: Վարդան գրիչն իր գրի անպատշաճութիւնը պայմանավորում է թղթի հնուությամբ և հում թանաքով. «Թանաքս հում է ու թուխտս հին. անմեղադիր լերուք» [Հիշ. ԺԵ, Բ, Ա, 235]: Ոմանք էլ դժգոհել են թղթի հաստութիւնից. «Բայց գիրքս տկիկ (իմա՛ նվազ³⁰⁶) երեկ, այս է պատճառն, զի ժամանակս ձմեռն էր եւ անճարակ էաք Դմըշխ թխթի, Թաւրիզի թուղթս հաստ էր եւ դիրքն փոքր» [Հիշ. ԺԵ, Ա, 655]: Ըստ հիշատակագրի՝ «Դմըշխ»-ի (իմա՛ Դամասկոս – Խ. Հ.) թուղթն ավելի որակով էր, սակայն այն իր տրամադրութեան տակ չունենալով՝ օգտագործել է Թաւրիզի հաստ թուղթը: Միշտ չէ, սակայն, որ միայն թղթի որակից է կախված եղել լավ արդյունքը. թուղթը պետք է կոկվեր և նշայվեր, այսինքն՝ օսլայով պատվեր՝ սլացիկ ու ողորկ մակերես ունենալու համար: Ահա թե ինչ է գրում Հովհաննես գրիչն իր հիշատակարանում.

«Այս թուղթս ու մէկ այլն աննշայ է, զինչ օգուտ է գրելն: Չոր ոմանք անգիտաբար ասեն, թէ թանաքն է վատ, ո՛չ, այլ թուղթն» [Հիշ. ԺԵ, Բ, 114]:

Մատյանի գիրն ամրացնելու նպատակով էլ Թորոս գրիչը պատվիրում է այն ջնարակով պատել (օսլայել), ապա արևի տակ չորանալու դնել: Թորոս գրիչն իր հերթին ներկանյութի մասին

³⁰⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Խ. Ա., յօրինեց Հ. Բ. վ. Սարգիսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1914, էջ 260:

³⁰⁵ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենասիրկիչ վանքի, Խ. Ա., կազմեց Ս. Տէր-Աւետիսեան, Մխիթարեան տպ., Վիեննա, 1970, էջ 144:

³⁰⁶ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, երկրորդ բարեփոխված հրատարակություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 761:

է խորհուրդ տալիս. «Դեղ, որ զգրոցն եզերքն պնդէ, ջրգեղ (ի-մա՛ ջնարակ³⁰⁷) անցո՛յ ի վերայ ու յարեւն դիր, որ խիստ չորա-նայ» [Հիշ. ԺԳ, 813]:

Թանաքի և ներկերի, ինչպես նաև նրանց պատրաստողների մասին հիշատակումները ևս սակավ չեն: 1053 թ. գրիչ Հովհան-նես Սանդղկավանեցին, իբրև երախտագիտություն, Աստծու ողորմությունն է հայցում ոչ միայն մագաղաթ «գործողի», այլև ոսկեգեղ պատրաստողի համար. «Աստուած ողորմեա Յովաննէսի Սողկին, որ զոսկեղեղն կազմեաց» [Հիշ. Ե-ԺԲ, 98]: Ազարիա գրիչը շնորհակալությամբ հիշատակում է մահտեսի Սարգսին, որ «Թխթի կոկելն եւ թանաքի եփել նայ էլ աւգտեց» [Հիշ. ԺԵ, Գ, 269]: Կարապետ գրիչն էլ խնդրում է հիշել Թուամ Կաֆա-ցուն, որը «զկարմիր եւ զսեւ թանաքն ի յամենայն ժամս պատ-րաստեաց» [Հիշ. ԺԵ, Ա, 319]: Միքայել անունով արծկեցի գրի-չը հիշատակում է ջաղացպան Աղուպին, «որ զթանաքի գղթորն կու տէր» [Հիշ. ԺԵ, Բ, 140]: Այն, որ գլխորը լայնորեն գործած-վել է թանաքի պատրաստության մեջ, վկայում են թանաքի պատրաստման մեզ հասած բաղադրատոմսերը: Ահա մի օրինակ՝ «Առ գղթոր Ա. (1) չափ, տորուն (ներկատու բույս³⁰⁸) Գ. (3) չափ, եռացոյ ջրով, որ թանձրանա, սակաւ կի՛ր ձգէ ի ներս եւ սաղմո՛վ գրէ»³⁰⁹:

Ձանց ենք առնում ամենայն մանրամասնությամբ շարադրել բոլոր այն հիշատակարանային վկայությունները, որոնք առընչվում են մագաղաթի մշակմանը կամ «շինել»-ուն³¹⁰, թղթի

³⁰⁷ Նշվ. աշխ., էջ 673:

³⁰⁸ Նշվ. աշխ., էջ 764-765:

³⁰⁹ Դոց. Ա. Խ. Հարությունյան, *Ներկերի և թանաքների գործածությունը հին հայկական ձեռագրերում*, Երևան, 1941, էջ 39³⁴: Գլխորի կիրառությունը նշվում է նույն աշխատության այլ բաղադրատոմսերում ևս, տե՛ս էջ 49⁶⁶, 55⁷², 57⁷⁴ և այլն:

³¹⁰ Այսպես է բացատրում մագաղաթի մշակումը Կարապետ Բերկրեցու աշա-կերտ Հովսեփ կրոնավորն իր հիշատակարանում. «Այլ եւ սղսէն յիշել ի Տէր զհոգևոր հայրն եւ զկրկին զճնադն իմ յինաստս գտէր Կարապետ Բերկրեցին, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ զարուեստք՝ զշինել մա-գաղատիս եւ զգրել տրին, այլ եւ զնկարելն, որ եւ ընդ հովանեաւ տրաւ ծաղկե-

կոկմանը, ձեռագրի նորոգմանը, նրա կապելուեն, կազմելուեն կամ կոստողելուեն, ինչպես նաև այդ գործի վարպետներին՝ կոկողին, նորոգողին, կազմողին և մյուսներին, սակայն պետք է արձանագրել, որ այստեսակ հիշատակությունները մեծարժեք են հատկապես ձեռագրակերտման ընթացքի և նրա հետ կապված բազմաբնույթ դժվարությունների վերաբերյալ պատկերի ամբողջացման դիտանկյունից:

Հայտնի է, որ հիշատակարանները պահպանել և մեզ են ավանդել նաև ձեռագրակերտման ընթացքում կիրառվող գործիքների ու պարագաների մասին արժեքավոր տեղեկություններ³¹¹. մասնավորապես, հանդիպում են ձևիչի, կոկիչի, դանակի, գրչատաշի, մկրատի, քանոնի, կարկինի, կաղամարի, գրիչի կամ զալամի և այլ գործիքների մասին հիշատակումներ: Ահա օրինակ՝ 1474 թ. մի հիշատակարանում գրիչը նշել է, որ կաղամարը, այսինքն՝ թանաքամանը, ձեռքից ընկել է, որի հետևանքով էլ թերթերին հայտնվել են թանաքի հետքեր. «Ձեռս թուլացաւ եւ կաղամարն վեր ընկաւ, թողուլի՛ն արարէք, ո՛վ եղբարք իմ սիրելիք» [Հիշ. ԺԵ, Բ, 360]: 1609 թ. ձեռագիրը նորոգող և կազմող Միքայել արեղան գրում է. «Յաւժար կամօքս վերստին կապեցի եւ կազմեցի զաստուածաշունչ սուրբ գիրքս, որ կոչի Այսմաւուրք, եւ բազում աշխատանս կրեցի ի ոսլայելն եւ ի շարելն, զի մամլուք չունէի, որ այլ լաւ լինէր» [Հիշ. ԺԵ, Ա, 353]: Պրակների կարումից և մատյանի կազմությունից հետո Միքայելը ցանկացել է այն մամլել, սակայն չի ունեցել ձեռքի «մամլուք»: Արվեստաբան Ա. Գևորգյանը ԺՁ. դ. թվագրվող ձեռագրից վկայակոչում է «խրճին»-ի՝ վրձնի գործածության մի հետաքրքիր

ցի գաս ոսկով եւ բազմեղանգ գունով», տե՛ս Վասպուրական-Վանի վանքերը, Ա. մաս., գրեց Գևորգ Գ. Գ. Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1940, էջ 373: Մագաղաթի մշակումն ու գրչության համար այն պիտանի դարձնելը բավական աշխատատար գործ էր, տե՛ս Դոց. Ա. Խ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 77⁹⁹:

³¹¹ Այս մասին տե՛ս Ա. Արրահամյան, Հայոց գիր և գրչություն, էջ 280-290, Ա. Մաթևոսյան, Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր, էջ 64-72 և այլն:

Հիշատակություն, որում մասնավորապես կարդում ենք. «Եւ զխրճիսն գրիչու ոչ իբրև զգրիչ հասարակ ըմբռնեսցէս երբիւք մատամբ թեքեալ, այլ երկու մատամբ ըմբռնեալ՝ բուժիւ եւ ցուցացական: Թէ ի գործածելդ զծաղկիս եւ թէ ի ներկելդ զծաղիկս, ուղղակի կալ զգրիչդ»³¹²:

Գրչության գործիքների հիշատակումով աչքի է ընկնում 1654 թ. Հակոբ գրչի հորինած չափածո հիշատակարանը, որից որոշ կրճատումներով քաղում ենք մի հատված.

«Եւ արդ ասեմ անօթ գրիս,
Նախ եւ յառաջ կաղամարիս,
Որ ի յինքն ունի սեւ թանաքիս,
Նա կու գրէ որչափ կամիս:
Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու ժամէժամ է՞ր կու հանգչիս.
Մատունս իմ ոսկոր է եւ միս,
Մինչ գրեց՝ զայրացաւ հոգիս:
Երրորդ՝ ասեմ գրչատաշիս,
Որ կու հանէ սխալ գրիս...:
Չորրորդ՝ ասեմ սատաֆներիս...:
Հինգերորդ՝ ասեմ քանոնիս,
Որ ճշմարտութեան օրինակիս:
Վեցերորդ՝ ճարտավարիս,
Որ կու քաշէ պարիսպ գրիս:
Եւթներորդ՝ ասեմ տողշարիս,
Որ չեմ աշխատիր չափել տետրիս...»³¹³:

Ձեռագրաստեղծմանն առնչվող հիշատակարանային մանրամասների վերաբերյալ մեր ամփոփ անդրադարձն ավարտենք 1653 թ. հորինված մեկ այլ տաղ-հիշատակարանից քաղված

³¹² Ա. Գևորգյան, *Ինչպես էին նկարագրողվում ձեռագրերը*, էջ 65:

³¹³ Յուզակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի, «Էջմիածին», 1950 (7-8), էջ 86: Հիշատակարանի մասին տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայոց գիր և գրչություն*, էջ 286-288:

Հատվածով, որտեղ տեսնում ենք հեղինակի արձագանքն ու տրտունջը գրչուծության դժվարուժյունների վերաբերյալ.

«ՌԾԲ. (1653) թվականին,
Գանգատ ունիմ ճրագի սրին,
Այլ եւ յետոյ այս խամ թղթին,
Որ չի երթար ճետ իմ սրտին:
Սէֆիլ (իմա՛ ողորմելի³¹⁴) Յոհան ու փանաքին,
Երբ չէք թողուր ճետ իմ կամին,
Աչուերս է բաց լուսոյ պակաս,
Գրիչն չերթար ճետ շար տողին:
Որն է կաղ եւ որն է կոր,
Թանաք տըղզի ի մէջ թղթին,
Ծառայ եղի՛ր սուրբ Պետրոսին,
Արագաբաս սուրբ Միմասին» [Հիշ. ԺԷ, Գ, 556]:

Զեռագրերի առքուվաճառքի մասին տեղեկություններ: Հայերեն հիշատակարանները հարուստ են ձեռագրերի վաճառքին և գնմանն առնչվող տեղեկուժյուններով: Ըստ որում՝ մատյանների ստեղծմանը, նրանց առքուվաճառքին կարող էին մասնակցել նաև միջնորդներ կամ պարզապես գրավաճառներ: Օրինակ՝ 1611 թ. հիշատակագիրը ներկայանում է որպես «գրքածախ». «Արդ, ոք որ հանդիպիք այսմ գրքիս կարգալով կամ օրինակելով, միով Հայր մեղայիւ յիշեսցի զվանեցի տէր Յովասափի որդի գրքածախ Աստուածատուրին» [Հիշ. ԺԷ, Ա, 453]: Երուսաղեմ ուխտի մեկնող էմիրն անունով մեկն էլ նշում է, որ Հայրեղում իրեն է հանդիպել գեյթուների ոմն Վարդան, որից էլ ինքը ձեռագիր է գնել.

«Եւ տեսի գայս Յիսուս Որդի մատեանս ի ձեռն զԷնթոնցի տէր Վարդանին, որ ի մարմնատր պակասութեան վաճառեաց: Եւ ես ըստացա զսա ի գնոց Զ. (6) արծաթոյ, յիշատակ ինձ եւ իմոցն անջեցելոց» [Հիշ. ԺԷ, Ա, 243]:

³¹⁴ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, էջ 698:

1356 թ. Կարապետ երեցն իր ձեռագիրն օտարել է Վրթանես Հայրապետին և հարկ համարել հատուկ կերպով նշել այդ փաստը՝ արձանագրելով նաև այն, որ որևէ մեկն այլևս իրավունք չունի այդ ձեռագրի նկատմամբ. «Ես Կարապետ երէցս, ունէի գտուրբ գիրքս առ իս յիմ ընչից շինեալ, եւ Վրթանէս Հարպետն ընչիւք խնդրեաց, եւ ետուռ նմա» [Հիշ. ԺԴ, 421]: Ահա ևս մեկ օրինակ՝

«Ես՝ Լիպիկ՝ որդի Ասկանտարայ, իմ կամաւ եւ իմ յաւժարութեամբ ծախեցի գտուրբ Աւետարանս Աւագտիրիմ եւ առի զգիմն ի լման անպակաս...: Ծախեցաւ գիրքս եւ գրեցաւ սակաւ գիրս ի թվիմ ՊԾԱ. (1402)» [Հիշ. ԺԵ, Ա, 27-28]:

Երբեմն կարելի է նկատել անգամ վերավաճառքի դեպքեր, երբ նախկինում մատյանը գնած անձնավորութիւնը նոր ստացողի է վաճառում իր մատյանը: Ահա դրանցից մեկը: ԺԴ. դարավերջով թվագրվող հիշատակարաններից մեկում ձեռագրի սեփականատեր Մկրտիչ Անեցին իր գնած ձեռագիրը 250 դահեկանով վաճառում է Երեմիա արեղային և այդ մասին արձանագրում իր հիշատակարանում.

«Իմ արտի յաւժարութեամբ զիմ հալալ արդեամբ գնած Աւետարանս ծախեցի Երեմիայ արեղիմ եւ իր եղբարն՝ Սարգսիմ, ոչ ի հարկէ կամ ի բռնութենէ, այլ իմ արտի յաւժարութեամբ... Հասաւ գիմն լի եւ անթերի ԲԾԾ. (250) դահեկան, որ անէ կէսն ԾԻԵ. (125) դահեկան»³¹⁵:

Առանձին հետաքրքրութիւն ունեն ձեռագրերի գների մասին տեղեկութիւնները, որոնք առատորեն արձանագրված են այդ նույն մատյանների հիշատակարաններում: Դրանց հավաքումը և համեմատումը կարող է ինչ-որ առումով պատկերացում տալ տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր վայրերում հայերեն ձեռագրերի գների մասին: 1609 թ. Մարտիրոս

³¹⁵ Կ. Ա. Մաթևոսյան, XIV դարի հիշատակարանները Անի քաղաքի եւ անեցիների մասին, «ՊԲՀ», 1985 (3), էջ 110:

երեցը Տիվրիկում Շարակնոց է գնել և վճարել 190 ղուռուչ. «...վասն զի զՇարակնոս գիրս ճՂ (190) ղուռիչ առի ի Տիվրիկ» [Հիշ. Ժէ, Ա, 354]: Ոմն Ծատուր Ավետարան է գնել 4000 դահեկանով. «...վասն այս պատգամաց ետու ԴՌ (4000) դահեկան եւ ըստացայ սուրբ Աւետարանս ի Թվականիս ՌԿ (1611)» [Հիշ. Ժէ, Ա, 415]: Խոջա Զիրաք անունով մեկն էլ 1626 թ. Ճաշոց և Աստվածաշունչ է գնել՝ երկուսի համար վճարելով 1050 ղուռուչ. «...ըստացա զայս աստուածախօս սուրբ գիրքս եւ պատուական Աստուածաշունչ մի, ՌԾ. (1050) գնեցի եւ ետու սուրբ Երուսաղէմայ՝ ի դուռն Բրիստոսի լուսաբուխ սուրբ գերեզմանին» [Հիշ. Ժէ, Բ, 204]: Աստվածատուր անունով մի վարդապետ հայտնում է, որ ինքը Կ.Պոլսում ցանկացել է Աստվածաշունչ գնել և հանդիպել է երեք քահանայի, որոնք իրեն առաջարկել են մի Աստվածաշունչ, սակայն մատյանն այնքան թանկ է եղել, որ նրա գնման գումարը հնարավոր է եղել հանգանակել բազմաթիվ նվիրատուների շնորհիվ: «Ի վեց եկեղեցւոյ ժողովրդեան տօքն կիսագինն վճարեցաւ, եւ մնացեալ գինն եկեալ ի Հայաստանեայց մէջն աստի եւ անտի քրիստոնէից տօքն վճարեցաք», – կարդում ենք Աստվածատուրի հիշատակարանում³¹⁶:

Մյուս կողմից ուշագրավ է, որ երբեմն էլ ձեռագրի դիմաց վճարվել է ոչ թե դրամական միավոր (արծաթ, ոսկի, ղուռուչ, դահեկան և այլն), այլ կենցաղային որևէ իր, նույնիսկ՝ հոգևորականի փիլոն.

«Ո՛վ սուրբ ընթերցողք, Յովհաննէս կրօնատրն զիր փիլոնն ինձ երես յիշատակ, որ ժամաւք եւ պատարագաւք զինքն յիշատակեաք, – գրում է հիշատակագիրը և շարունակում, – զգիրքս բերին ի ծախ, եւ այլ ոչինչ չունէի, գՅովաննէս կրօնատրի փիլոնն տուի գրոցս ի զինն» [Հիշ. ԺԳ, 493]:

1488 թ. ընդօրինակված Ավետարանը գնելու համար տեր Հերապետը վճարել է և՛ դրամ, և՛ ընտանի կենդանի: «Եւ ետու զին

³¹⁶ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 2., կազմեց Ե. Եպս. Պողաբեան, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1972, էջ 447:

սուրբ Աւետարանիս ճԺ. (110) զուռուչ եւ մէկ ձի, յառի յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ի թվիս Հայոց Զ. եւ ԼԷ.-ին (1488)», – տեղեկացնում է ստացողը [Հիշ. ԺԵ, Գ, 122]:

Շատ հաճախ վաճառքի նպատակով մատյաններ են գրչագրվել նաև պատվիրատուի բացակայութեան պայմաններում, այսինքն՝ միշտ չէ, որ ընդօրինակման ավարտին գնորդ է գտնվել: Այս դեպքում գրիչները երբեմն գրել են իրենց հիշատակարանը՝ բաց թողնելով ստացողին վերաբերող հատվածը կամ անունը, որոնք պետք է լրացվեին մատյանը ձեռքբերելուց հետո: 1303 թ. ընդօրինակված ՄՄ Հ^մ 10670 Ավետարանի գրիչ Կարապետն իր սեղմ հիշատակարանում բաց է թողել ստացողի անունը (նկ. 30).

«Ձստացող սուրբ Աւետարանիս [անվան տեղը բաց է թողնված] յիշեսչիք եւ գնեղասպարս գծողս՝ ԳԿարապետ եւ գծնողսն իմ, եւ Աստուած յիշողացդ ողորմեսցի. ամէն» [Հիշ. ԺԴ, Ա, 54]:

Քիչ չէ նաև այնպիսի գրչագրերի թիվը, որոնցում նույն պատճառով ընդհանրապես հիշատակարաններ չեն գրվել³¹⁷: Մեր կարծիքով, այդպիսի ձեռագրի մի օրինակ կարող է համարվել ներկայումս Բոլոնիայի համալսարանական գրադարանի ԺԷ. դարով թվագրվող հայերեն Ավետարանը, որը, չնայած իր ամբողջականութեանը, գեղեցիկ և հարուստ ծաղկմանն ու գրչութունից ազատ մնացած հատվածների առկայութեանը, չունի ոչ մի հիշատակարան³¹⁸:

³¹⁷ Այս մասին տե՛ս նաև Բ. Առաքեյան, *Քաղաքների և արհեստների Հայաստանում IX-XIII դարերում*, հ. 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1958, էջ 313:

³¹⁸ **Kh. Harutyunyan**, *Il Vangelo della Biblioteca Universitaria di Bologna (ms. 3290), un capolavoro dell'arte armena*, տե՛ս ծնթ. 258: Հետագայում ձեռագիրը Հռոմի Բենեդիկտոս ԺԴ. պապին (1740-1758) է նվիրել Արքաիսկոպոս Արծիվյանը. այս մասին տե՛ս **F. Macler**, *Notices de manuscrits arméniens vus dans quelques bibliothèques de l'Europe centrale*, “Journal asiatique”, 1913 (sept.-oct.), pp. 247-254. *Catalogo dei manoscritti armeni delle biblioteche d'Italia*, a cura di **G. Uluhogian**, Istituto poligrafico e zecca dello stato, Roma, 2010, p. 47:

Խոր ապր չնեաց զնոսս
 մեկնեցաւ ինոցանէ
 և վերանաչք յերկինս
 Եւ նոցա երկրպագե
 ալ նմա դարձնուցէմ
 Եւ որսիսու թք մեծաւ .
 Եւ էին չանապագի
 սաճարին . գովէին
 և առիչնէին
 զմեծ :

Չստացող սքաւեապանես
 յոքեմեր և զվերապարտ գե
 ող զկարապետ և զմտոյճն իմ և մեծ
 ժողովացող որոմեցի ամեր

Էս անարժ անս յարաբեցի
 Ժամիրոյ զղի յարու թոքոս
 իմն զեմ զսոսեցողոց որ .
 յեղէ զիս յաւաչի անմիչ .
 Գաւիս այ և զսոսեցողոց
 Եւ զիս յաւաչի որոց յի
 և յիս զիս յի

Նկ. 30, ՄՄ Հ^մ 10670, 180բ. գրիչ Կարապետի
 հիշատակարանով բաց է բողնված ստացողի անունը

Հիշատակարաններում երբեմն հանդիպում են նաև ձեռագրի վաճառքին նպաստած անձինք կամ միջնորդներ («միջնորդ յայսմ գրոց» [Հիշ. ԺԴ, Ա, 221]), որոնց մասին առաջին հիշատակումները գտնում ենք դեռևս ԺԳ. դարում³¹⁹: Միջնորդության փաստն արտահայտվում է հիմնականում միջնորդ լինել, միջնորդ կանգնել, առիթ լինել, յորդորել, պատճառ գրելոյ լինել և նման բառակապակցություններով: 1456 թ. Գրիգոր եպիսկոպոսը մատյան է գնել և նրա մեջ արձանագրել գնման որոշ մանրամասներ՝ նշելով նաև միջնորդ Ղազար նվիրակին.

«Զվերջին ըստացոյ Քարոզգրոցս՝ ըգԳրիգոր եպիսկոպոս, որ գնեցի զայս Քարոզգիրքս ի տէր Աւագիրիցու դստերէն՝ ի յԱննայ-Խաթունէն, ի Ծ. (100) դրամ՝ Ղազար նվիրակին միջնորդութեամբն» [Հիշ. ԺԵ, Բ, 78]:

Նկատելի է, որ հիշատակարաններում սովորաբար միջնորդներին իրենց շնորհակալությունն են հայտնում ինչպես գրիչները, այնպես էլ մատյանի գնորդ-ստացողները. «Աղաչեմ յիշել ի Տէր զՎարդան, որ առիթ եղև սմայ, եւ զստացող սորա զՍտեփաննոս քահանա», – նշել է գրիչը [Հիշ. ԺԳ, 539]: «Այլեւ յիշեցէ՛ք զտէր Աստուածատուր քահանայն զՏիւրիկցին, որ ըստացաւ զսա ի հալալ արդեանցն... եւ զՅովհաննէսն եւ զԻւր կինն՝ Ճոհարն, որ պատճառ եղան», – կարդում ենք մեկ այլ հիշատակարանում [Հիշ. ԺԷ, Ա, 747]:

Ահա դարձյալ միջնորդության մի վկայություն չափածո հիշատակարանում՝

«ԶԱւետարանս կապեցին
Եւ նորոգոյն զարդարեցին
Եպիսկոպոս Աղբակեցին,
Որ Կարապետ անուն ասին:
Սա միջնորդեալ այս վաճառին,

³¹⁹ Կ. Մաթևոսյան, Գրչի և ստացողի միջնորդը (վաճառքի համար նախատեսված գիրքը միջնադարյան Հայաստանում), «ՊԲՀ», 1994 (4), էջ 121-131:

ԶԱւետարանս ետու հիւսիս,
Որ Կիրակոս վերայձայնիս,
Որ ըստացող եղէս սըմին:
Հալալ լընչիցըն, գոր ունէր,
Ետ ի գին Աւետարանիս»³²⁰:

Այսպիսով, հայերեն ձեռագրերի հիշատակարանները առաջնային աղբյուր են հայկական միջավայրում գրավաճառությանն առնչվող տեղեկությունների հավաքման և քննության տեսանկյունից: Գրավոր այս հուշարձանների վկայությունները հուշում են, որ մատյանների առքուվաճառքը զգալիորեն աճել է հատկապես ԺԳ. դարից սկսած, սակայն դեռևս ուսումնասիրված չեն այն եղանակները, որոնցով միջնադարում հայոց մեջ իրացվում էին մատյանները: Առանձին հետաքրքրություն ունի գրիչ – գնորդ, գրիչ – միջնորդ – գնորդ, գրավաճառ – գնորդ հարաբերությունների պարզաբանումը, վերջիններիս հասարակական դիրքը (հոգևորական, թե աշխարհական), ինչպես նաև մատյանների գնային սանդղակների համեմատական վերլուծությունները՝ ըստ ժամանակի և տարածքի: Կարևոր է նաև գրքերի առքուվաճառքի նպատակների և շարժառիթների վերհանումը. ոմանք վաճառել կամ վերավաճառել են մատյանները եկամուտ ստանալու ակնկալիքով, ոմանք էլ հարկադրված են եղել վաճառել կամ փոխանակել իրենց մատյանները և այլն:

Մյուս կողմից ուշարժան է, որ ԺԷ. դարում վկայված գրավաճառ կամ գրվածախ եզրերը, փաստորեն, վկայում են, որ գրքի «շուկայում» կային արդեն մասնագիտացված անձինք, որոնց միջոցով ևս իրացվում էին մատյանները:

³²⁰ Մայր ցուցակի հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., էջ 1240-1241:

8. ԿԵՆՅԱՂԸ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

«Կորկոտ եւ թաւն, եւ փորս մեզ գուսան, որ է ծաղրակսն»

Մարկոս գրիչ, 1401 թ. [Հ/ը. ԺԵ, Ա, 19]

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ մեզանում չկան միջնադարյան ժողովրդական կենցաղն ավելի մանրամասն ներկայացնող գրավոր այլ աղբյուրներ, որոնք կգերազանցեին Հայերեն ձեռագրերի հիշատակարանների հաղորդած տվյալներն այս հարցում. գրավոր այս հուշարձանները եղել և մնում են Հայ կյանքի բազմաշերտ կողմերը բացահայտող անխմբագիր եզակի սկզբնաղբյուրներ, որոնք առատ նյութ են տրամադրում ուսումնասիրողներին: Դրանց հարուստ բովանդակություն մեջ խորամուխ լինելով՝ ուսումնասիրողները նախ և առաջ հնարավորություն են ստանում ներթափանցելու միջնադարյան Հայ կյանքի հետաքրքիր մանրամասների՝ ժողովրդական հավատալիքների, տոների (հիմնականում եկեղեցական), կերակուրների, մարդկանց զբաղմունքների, նրանց հարաբերությունների, առօրյա հոգսերի, ուրախությունների ու մտահոգությունների, վախերի ու հույսերի մեջ, որոնք սովորաբար տեղ չեն գտել պատմագիրների երկերում: Գաղտնիք չէ, որ դրանք առանցքային նշանակություն ունեն միջնադարյան կենցաղի քննության տեսանկյունից: Ավելորդ չենք համարում առանձնացնել այս ուղղությամբ հիշատակարանային հետաքրքիր և հաճախադեպ որոշ դրսևորումներ, որոնք կարող են խթանել առաջիկայում հետազոտական նոր աշխատանքների նախաձեռնումը³²¹:

³²¹ Նշենք միայն, որ կենցաղային դրսևորումները ներկայացվող թեմաներով չեն սահմանափակվում: Մեր ընտրությունն այստեղ պայմանավորված է դրանց առատությամբ: Դեռևս անավարտ մեր թեմատիկ քարտարանում (մեր հետաքրքրությունների շրջանակում կազմված), առանձնացված է մեկ տասնյակից ավելի հարցակարգ, որոնցից յուրաքանչյուրը կարող է առանձին ուսումնասիրության նյութ դառնալ:

Այսպես, մի շարք գրիչներ, իբրև երախտագիտության արտահայտություն, իրենց մեծ և փոքր հիշատակարաններում ջերմ խոսքերով հիշատակել են հաց բերող կամ կերակուր և ըմպելիք տրամադրող անձանց՝ երբեմն մասնավորեցնելով նաև ուտելիքների անվանումները: Այդ բնույթի գրառումները մի կողմից ընդհանուր պատկերացում են տալիս գրիչների համեստ պահանջմունքների և գուսպ կենցաղի, մյուս կողմից՝ ժամանակի կերակուրների և տարբեր բնակավայրերում, վանքերում դրանց գործածության մասին: 1201 թ. Երզնկայի Ավագ վանքում ընդօրինակված ձեռագրի հիշատակարաններից մեկում կարդում ենք գրիչ Հովհաննեսի գրառումը, որում վերջինս օրհնում է իրեն տաք բաղարջ բերած Մարտիրոս միայնակյացին. «Յայսմ վայրի եկն ծերունին միայնակեցն Մարտիրոս եւ եբեր մեզ տաք բաղարջ ի պատճառս սիրոյ, հատուցէ նմա Տէր» [Հիշ. ԺԳ, 17]: Նորատուտում 1491 թ. գրչագրված Ավետարանում Ստեփանոս գրիչը իր փոքրիկ չափածոյում հիշատակել է խավիժն ու նատանի անունով³²² մեկ այլ կերակուր.

«Այսար, որ յիշատակարանս գրէաք,
Մեք խիստ կանուխ խաւիժ կերաք,
Յետ այնոր Ըստանի կերաք» [Հիշ. ԺԵ, Գ, 171]:

1304 թ. Կարբիում ստացողներ Արղունն ու Աստվածատուր երեցը գրչին սեխ (խարպղակ) են տարել, որն արձանագրվել է հիշատակարանում. «Այսաւր եկն առ մեզ ստացող սորա Արղունն եւ Աստուածատուր երէց գկնի, եւ եբեր մեզ խարպղակ՝ նոր եւ քաղցր» [Հիշ. ԺԴ, Ա, 67]: Թագուհի անունով ստացողն էլ գաթա է տարել գրչին. «Տէր Աստուած թողու գմեղք Թագուհոյ, որ գաթայ եբեր» [Հիշ. ԺԴ, Ա, 348]: Հակոբ դպիրը շնորհակալություն է հայտնում Շաքարբեկին, որ իրենց ծիրան և խնձոր

³²² Թվում է՝ դարձյալ կերակուրի անվանում է, բայց իմաստը պարզ չէ. տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, էջ 567:

է բերել. «Քրիստոս Աստուած, զՇաքարբէկ մահդասու հոգին ի դասս սուրբ առաքելոցդ, որ այսօր մեզ լօ (իմա՛ լաւ – Խ. Հ.) ծիրան եւ խնձոր եբեր» [Հիշ. ԺԵ, Ա, 105]: Սարգիս քահանա գրիչը խնդրում է հիշել նաև իր հոգևոր եղբայրներ Գրիգոր, Սարգիս Խաչենցի քահանաներին և Հակոբ մենակյացին. «Քանզի սոքա բազում անկամ աշխատել են ի հետ մեր ու զպարիկն ու զկտորակն պատրաստել զմեզ» [Հիշ. ԺԴ, Ա, 84]: Սարգիս եպիսկոպոսն էլ հիշատակել է ջուր և մեղր բերողներին. «ԶՅովանէսն ու զՍարգիս յիշէք, որ մեզ ջուր են բերել, զՄարտիրոսն, որ մեզ մեղր է տուել» [Հիշ. ԺԵ, Ա, 364]: Հաղբատի նշանավոր Ավետարանի մանրանկարների մեջ առանձնանում է ձուկը ձեռքին պատկերված Շերանիկը՝ «Շերանիկ, քանի գաս, ձուկն բեր» մակագրությամբ [Հիշ. ԺԳ, 69]: 1251 թ. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմն ընդօրինակած գրիչը շնորհակալության առանձնահատուկ բառեր է ուղղում գրչության ընթացքում իրենց սննդով ապահովողներին.

«Եւ որ ի գրելս մեզ սպասատրեցիմ ռոճկաք կամ հացով, կամ փոշիցոր եփելով կամ գինով՝ Գրիգորն, իր կողակիցն՝ Մուսաթ խաթունն, Միանն մեծ մայրն, սպասատրք մեր, որ ի մեր կերակուրն եւ ըմբելիմ երախտիք ունին: Քրիստոս Աստուած հատուցէ իրեց ամէնին հաւասար, փոխարէն զիր արքայութիւն. ամէն, ամէն: Գրեցօ (իմա՛ գրեցաւ – Խ. Հ.) ի թուիս Հայոց Չ. (1251)» [Հիշ. ԺԳ, 262]:

Գրիչներն այլ առիթներով ևս հիշատակում են տարբեր կերակուրներ և ըմպելիքներ: Ահա օրինակ՝ պահքի օրերից մեկի հետ է համընկել մատյանի տվյալ հատվածի ընդօրինակումը, և գրիչ Հովսեփն այսպես է հիշատակագրել. «Աւրն պահք էր, եւ հացն ցամաք կորեկ, աղաչեմ՝ անմեղաղի՛ր լեր» [Հիշ. ԺԵ, Ա, 652]: Մխիթար գրիչն էլ իր չափածո տողերում նշում է, որ չունի անգամ չոր հաց և սպաս.

«Աւուրքըս ցուրտ ու պարզկա,
Չարտախա բարձր ու կրակ չկայ,
Դոճերս չոր ու սպաս չկայ» [Հիշ. ԺԳ, Ա, 256]

Մարկոս գրիչն էլ 1401 թ. իր հիշատակարանն ավարտել է ահա այսպիսի տողով. «Կորկոտ եւ թան, եւ փորս մեզ գուսան, որ է ծաղրական» [Հիշ. ԺԵ, Ա, 19]:

Երբեմն այսպիսի հիշատակումների շնորհիվ կարելի է նաև պարզել, թե որ դարաշրջանից է այս կամ ուտելիքի մասին գրավոր վկայությունը: Օրինակ՝ «մրգահյուսթով եփած լավաշանման չորացրած ուտելիք» նշանակող պատտեղ բառի մասին խոսելիս նշանավոր լեզվաբան Հր. Աճառյանը գրում է, որ այդ բառի հնագույն վկայությունը ԺԷ. դարից է՝ ավանդված Գր. Դարանաղցու «Ժամանակագրություն» մեջ³²³: Անվանի լեզվաբանը նկատի ունի Դարանաղցու երկի հետևյալ հատվածը. «...ուներով է ձեռին մէկ շարոց եւ երկու տերեւ պաստեղ»³²⁴: Ուշագրավ է, որ Դարանաղցուց շուրջ չորս դարով ավելի վաղ գրված հիշատակարաններից մեկը հաղորդում է պատտեղ բառի, միաժամանակ նաև ուտելիքի հնագույն գրավոր վկայությունը: 1227 թ. Ավագ վանքում (տեղորոշումն անհայտ) ընդօրինակված Ճառընտրի հիշատակարանում կարդում ենք. «Սուրբ Աստուծոյ, աւգնեա՛ Սոսթենէս քահանայի, որ զպաստեղս եբեր մեզ» [Հիշ. ԺԳ, 146]³²⁵:

³²³ Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 4, էջ 31:

³²⁴ Ժամանակագրություն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ, մէկ նմանատիպ պատկերով, յառաջաբանով եւ յաւելումներով հրատարակեց Մ. վրդ. Նշանեան, տպ. Առաքելական այթոռոյ Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1915, էջ 452:

³²⁵ Այս մասին տե՛ս մեր հոդվածում՝ Խ. Հարությունյան, *Նորահայտ բառեր և բառերի նոր վկայություններ ԺԴ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում*, «Լևոն Իսախկյան, հարյուրամյակ», Նյութեր ակադեմիկոս Լևոն Իսախկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.), խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2019, էջ 95:

Նման օրինակները հերթական անգամ ընդգծում են զրավոր այս հուշարձանների աղբյուրագիտական կարևոր արժեքը:

Մարդկային հարաբերությունները բարձր դասող և սրտաբաց, հյուրընկալ ու առատաձեռն մարդկանց մշտապես բարի խոսքերով հիշատակող գրիչները դառնությունաբե են արձանագրել նաև նախանձի, չարի, անտարբերության ու բամբասանքների մասին, անգամ նշել են մարդկանց, որոնք աշխատեցրել և չեն վարձատրել կամ սնունդ անգամ չեն տվել իրենց: Այսպես, օրինակ, Սամուել գրիչն իր երախտագիտությունն է հայտնել ստացող Կարապետ արեղային, որն իրեն կուշտ կերակրել է. «Յիչեցէ՛ք զստացող սորա՝ զԿարապէտ արեղայն, որ այսաւր մեզ պըսըլ է (իմա՛ կուշտ³²⁶) ուտեցոյց» [Հիշ. ԺԵ, Գ, 359], իսկ ահա Բաղեշում և այլուր երկու տարի Հայամավուրքի ընդօրինակութեամբ զբաղված Հովհաննես գրիչը 1443 թ. իր հիշատակարանում դժգոհում է մարդկային անտարբերությունից. «Բ. (2) տարի գրեցի զսայ ի խուցս Սուրբ Կիրակոսիս եւ ի Սուրբ Գէորգա ժամատունն, եւ ի մարդոյ ո՛չ մէկ խնձոր տեսի եւ ո՛չ մէկ խիար, վասն այն, զի սէրն բարձեր է ի հայոց ազգէս, մանաւանդ յիրիցականաց» [Հիշ. ԺԵ, Ա, 547]: Ուշագրավ է Գրիգոր Ախալցխեցի գրչի հիշատակարանը, որում վերջինս ընթերցողների ուշադրությունն է հրավիրում Հերմոնի վանքում իր ժամանակ տիրող իրավիճակի, ինչպես նաև իր նկատմամբ անբարյացակամ վերաբերմունքի վրա³²⁷.

«Նստեալ էի ու կորեի՝ սոված ու քաղցած ու գնի ոչ: Տնտեսին գնալն միմ գիրն Գ. (3) ար հաց չկերայ ու ես ուզեցի ոչ, միմ գիրն Բ. (2) ար անաւթի կացի ու ուզեցի, ան հաց տվին ոչ, ու միմ ար միմչեւ իրիկուն անաւթի կացի, միմ խիար ընկաւ, զէն կերայ ոչ ու մեռակ միմչ յիրիկուն գիր կու գրեի» [Հիշ. ԺԵ, Ա, 657-658]:

³²⁶ Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, էջ 654:

³²⁷ Հիշատակարանի մասին տե՛ս նաև Ա. Գ. Աբրահամյան, *Հայոց գիր և գրչություն*, էջ 306:

Այսպիսի գրառումները եզակի չեն հայերեն ձեռագրերի հիշատակարաններում և մեզ հնարավորություն են տալիս բացահայտելու գրիչների միջավայրը, նրանց հոգեվիճակն ու ապրումները: Նման գրառումների շնորհիվ տեղեկանում ենք հացի կամ ընդհանրապես հացահատիկային մշակաբույսերի թանկության («բերէր կապիճ հացն Մ. (200) դրամի» [Հիշ. ԺԵ, Ա, 8], «բազում սղութիւն եղեւ հացի, զի կապիճ ցորեան եղեւ ԺԲ. (12) շահի» [Հիշ. ԺԵ, Ա, 13], «եղեւ սղութիւն եւ պակասութիւն ամենայն իրաց. քանզի չափ ցորենն ի ԺԲ. (12) շահի, եւ կորեկն եւ գարին ի Ը. (8) շահի» [Հիշ. ԺԵ, Ա, 44]), դրա հետևանքով գրանցվող սովի և այլ պատուհասների մասին: 1292 թ. մի հիշատակարանում նշվում է, որ թշնամու հարձակումների պատճառով անխնամ են մնացել դաշտերը, չի հավաքվել հացահատիկը, որի հետևանքով հացի սղություն է առաջացել. «Եւ էին աւուրք հնձոյ ցորենոյ, թողեալ զվաստակս քրտանց եւ զպատճառս կենաց իւրեանց, ի ժողովելոյն ժամանակ, որ եւ սղութիւն եղեւ եւ նուազութիւն հացի» [Հիշ. ԺԳ, 702]: ԺԵ. դարասկզբին թուրք-պարսկական կռիվների հետևանքով Վանում ծայր առած համատարած սովի մանրամասն նկարագրություն է անում Կարապետ երեցն իր 1605 թ. հիշատակարանում՝ նշելով նաև հազարավոր զոհերի մասին. «մեռան ի սովու հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց» [Հիշ. ԺԵ, Ա, 194]: Նույն թվականին Մոկքում գրված հիշատակարանը տեղեկացնում է պարենային հիմնական ապրանքների գների մասին, որոնք խիստ բարձրացել էին³²⁸.

«Եւ է տղութիւն մեծ, զի խոնդքարի լիտրն ալեւրն եղեւ ի Ժ. (10) շահի, չամիչն՝ ի ԺԲ. (12), եզն՝ ի ԽԸ. (48) շահի, եւ բրինձն՝ Լ. (30) շահի, ըռուպն՝ ի Ի. (20) շահի, չափ ցորեն՝ ի

³²⁸ Սաստիկ այս սովի մասին բազմաթիվ տեղեկություններ են հայտնում ոչ միայն ժամանակի հիշատակարանները, այլև Ա. Դավրիժեցին, տե՛ս Առաքել Դավրիժեցի, *Գիրք պատմութեանց*, էջ 103-112: Դավրիժեցին տեղեկացնում է նաև սովի հետևանքով նույն շրջանում դիտվող մարդակերության դեպքերի մասին, տե՛ս *Աշխ.*, էջ 109:

ժԸ. (18) շաֆի, եւ կորեկ՝ ի ԺԳ. (13) շաֆի: Վա՛յ մեզ, որ Աե-
ւաստու երկիր շատք զտղայքն կերան, եւ ի մեր երկիրս եւ ծո-
վուս բոլորն ժ. (10) օր խոտով եւ բանջարով անցուցանէին,
եւ բազումք սովամահ եղեան» [Հիշ. ԺԷ, Ա, 180]:

*Գրավոր այս հուշարձանները հարուստ են նաև տարբեր ար-
հեստների տեր մարդկանց հիշատակումներով, որոնք սովորա-
բար ձեռագիր են պատվիրել կամ ինչ-որ ձևով նպաստել են ձե-
ռագրի գրչությանը, նորոգմանը և այլն: «Տէր Աստուած, ողոր-
մեա՛ Գրիգորի կտակագործի եւ ծնողաց նորա. ամէն», – կարդում
ենք Ավագ վանքում 1227 թ. ընդօրինակված Ճառընտրի հիշա-
տակարանում [Հիշ. ԺԳ, 147]: 1252 թ. հիշատակարաններից մե-
կում նշվում է Դավիթ դարբինը. «Քրիստո՛ս Աստուած, քո
սուրբ Աւետարանիդ բարեխաւսութեամբ ողորմեա՛ Յոհաննիսի
քահանայի եւ Դաւիթ դարբնի եւ Յուսկանն փիլիսոփայի» [Հիշ.
ԺԳ, 268], մեկ այլ տեղ հիշատակվում է Խնդուբեկ դերձակը
[Հիշ. ԺԳ, Ա, 381], մեկ ուրիշում՝ հացթուխներ Սարգիսը, Պաղ-
տասարը, Շավաղաթը [Հիշ. ԺԷ, Ա, 178] և այլն: Ոմանք իրենց
գբաղմունքներով հիշատակվում են նաև որպես համայնքի կամ
ուխտի անդամներ, որը մեծ արժեք ունի տվյալ միջավայրի
ուսումնասիրման համար: Օրինակ՝ կիլիկյան նշանավոր Թյուրք-
թի վանքում 1314 թ. ընդօրինակված ձեռագրի հիշատակարա-
նում Կոստանդին գրչի թվարկած անձնանունների կողքին ար-
ձանագրված տարաբնույթ գբաղմունքները, ըստ էության, մեզ
տեղեկութուն են հաղորդում վանական կյանքի և նրա տնտե-
սության կազմակերպման վերաբերյալ: Ահա այդ հիշատակարա-
նի մի հատված.*

«Արդ, աղաչեմ յիշել ի Տէր զառաջասացեալ հայր անա-
պատիս՝ զԳրիգոր վարդապետ, զՅովանէս փակակալ,...
նաեւ գործաւորք՝ զՎասիլ մտոնպան, զՅովանէս ածպան,
զԹորոս հացկտոր, զԱնտոն աղանմաղ, զԱստուածատոր,
զՄարտիրոս, զԹորոս, զԿոստանդին Սինաւոցիս եւ զՎասիլ,

զԿոստանդին Բիրատեսն, զՎասիլն, զՊատրոսն եւ զաւնոսիկ, որ ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցոյս եւ հանգուցեալ» [Հիշ. ԺԴ, Ա, 272]:

Առանձին դեպքերում նման հիշատակումները խիստ կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև հայկական գաղթօջախների և դրանցում հայ արհեստավորության զբաղմունքների մասին: Այս դիտանկյունից ուշագրավ են 1347 թ. սուրխաթցի նշանավոր գրիչ Նատերի ընդօրինակած ձառընտրի մեկ տասնյակից ավելի կարճառոտ հիշատակարանները, որոնցում անվանապես, երբեմն նաև իրենց ընտանիքների անդամների հետ հիշատակվում են տարբեր արհեստավորներ՝ Թադեոս, Գորգ ներկարարները, կոչկակար Պարոնշահը, Կարապետ, Սարգիս բազազները, Թորոս, Մարգարե, Ավետիք, Վարդերես ջուլհակները, Մելքիսեդ, Ուուումպեկ ոսկերիչները, դանակագործներ Սարգիսն ու Մկրտիչը, կտավագործներ Ամպետն ու Ավրանը, Մարգարե քթանագործը, Սաթի դերձակն ու Ստեփանոս հյուսնը, ինչպես նաև Սատոն ապրեփեցը, Հեթում դարբինը, սանդրագործ Պարոնշահը, գինեծախ Աղբարշահը և այգեպան Գրիգորեսը [Հիշ. ԺԴ, 359-367]: Արժեքավոր այս հիշատակարանը բավարար պատկերացում է տալիս Սուրխաթում և նրա մերձակայքում հաստատված հայ գաղթականների շրջանում գործող արհեստավորների վերաբերյալ, որոնք մեծ համբավ էին ձեռք բերել Ղրիմի ողջ տարածքում³²⁹:

Բազմաթիվ հիշատակարաններից կարելի է տեղեկություններ քաղել նաև գյուղատնտեսական աշխատանքների, մասնավորապես հողագործության և անասնապահության վերաբերյալ, որոնք կենցաղի կազմակերպման կարևոր ցուցիչներից են: Հի-

³²⁹ Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), եռահատորյակ, հ. 1, Սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի հայկական գաղութները, հատորը հրատ. պատրաստեց և խմբագրեց պ.գ.դ. պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Միքայելյանը, «Գիտություն» հրատ., Երևան, 2003, էջ 155-197:

չատակվում են նաև երկրագործներ, այգեգործներ, պարտիզպաններ և ուրիշներ: 1487 թ. հիշատակարանում կարգում ենք մահտեսի Շնոֆորի մասին. «...պարտեզպան է եւ խիստ աշխատող, եւ լաւ, բարի քրիստոնեայ է, ժամասէր եւ ազքատասէր եւ ամենայն բարութեամբ լի» [Հիշ. ԺԵ, Գ 96]:

Բնության տարերքների՝ երաշտների, բերքը վնասող կենդանիների, երկրաշարժերի, սաստիկ ցուրտ եղանակի մասին գրառումները նույնպես տեղ են գտել հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: «Գրեցաւ ի յերկիրս Մոկաց, ի քաղաքս Շատահ... ի թուականիս Հայոց ԶԽ. (1491) ամին, ի դառնացեալ ժամանակիս, որ սարսրեցաւ յերկիրս ի գարնանային ժամանակին», – կարգում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԵ, Գ, 178], ահա ևս մեկը. «ԹՎին ՌԿ.ին (1611) եղեւ շարժ ի կողմանս Համիթ քաղաքի» [Հիշ. ԺԷ, Ա, 457]: Հիշատակագիրներից մեկն էլ մորեխների պատուհասն է արձանագրել. «Յայսմ ամի մարախ բազում ի յաշխարհս եւ եկեր զամենայն բոյս դալարի» [Հիշ. ԺԵ, Գ, 353]: «Էկեր զամենայն խոտ եւ աչառեաց եւ սպառեաց զամենայն վաստակ սերմանեալ. նուազեն անասունք, լքեալ դատարկեցան երկրագործք ի վաստակելոյ», – հոսսահատ արձանագրել է Հովհաննես մոկացի գրիչը [Հիշ. ԺԵ, Գ, 354]:

Այս ամենից զատ՝ հիշատակարաններում արտահայտված են նաև ժողովրդական հավատալիքները, նախապաշարմունքները, որոնք դրսևորվում են ոչ միայն անեծքների, օրհնանքների միջոցով, որոնց մասին առանձին խոսվում է իր տեղում, այլև առանձին փոքրիկ պատմություններով: Մի կողմ թողնելով հիշատակագիրների վախճանաբանական սպասումները, մեղքերի հետևանքով զանազան աղետների գուշակումներն ու բացատրությունները՝ հարկ ենք համարում այստեղ առանձնացնել ձեռագրերին առնչվող խորհրդավոր այն պատմությունները, որոնք թեև հյուսվել են անցյալում, սակայն այսօր էլ չեն կորցրել իրենց ազդեցությունը և շարունակում են կենցաղավարել մեր օրերում ևս:

Վերջին տարիներին ձևավորված ավանդույթի համաձայն՝ Մաշտոցյան Մատենադարանի Ձեռագրագիտության բաժնի աշխատակիցների ուղեկցությամբ Մատենադարանից պարբերաբար Ավետարաններ են տարվում Երևանի և նրա մերձակայքի եկեղեցիներ (Երևանի Զորավոր Սուրբ Աստվածածին, Սուրբ Սարգիս, Էջմիածնի Սուրբ Շողակաթ, Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց և Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցիներ), որտեղ բազմաթիվ ուխտավորներ հնարավորություն են ստանում մոտիկից հաղորդակցվելու Սուրբ Գրքին և երկրպագելու այն: Որպես նշյալ բաժնի աշխատակից՝ քանիցս առիթ եմ ունեցել ուղեկցելու մատյանները և ականջալուր լինելու վերջիններին առնչվող ժողովրդական հետաքրքրի և տարաբնույթ գրույցների, որոնք երբեմն աչքի են ընկնում իրենց թեմատիկ ընդհանրություններով (Չուր, կրակ, թշնամիներ, երազ, հիվանդների բժշկում և այլն): Դրանց զգալի մասը բանավոր է, իսկ գրի առնվածներն էլ համեմատաբար ուշ շրջանից են, ուստի՝ հաճախ դժվար է ճշտել հրաշապատում այդ գրույցների խորքը, պարզել միջնադարյան հայկական կենցաղում դրանց առկայությունը կամ տարածվածությունը աստիճանը: Այստեղ կրկին օգնության ձեռք են մեկնում ձեռագրերի հիշատակարանները, որոնց հեղինակները երբեմն արձանագրել են նման պատմություններ: Մեզ հայտնի օրինակներից հնագույնը Ժ. Դարավերջից է: 1371 թ. այն գրել է Սիմեոն անունով մի հոգևորական³³⁰: Հիշատակարանում կարդում ենք.

«Թ՛ւակամիս Հայոց յԼ. Բարիւր եւ Ե. չորից (1371) գագգմ Պարսից եկեալ զԲերկրի գերեցուցիմ, զԲանդումամի թալանեցիմ, զսուրբ Կարսիի Աւետարան գերեցուցիմ, թըռուս ի գերողի գրկէմ եւ անկաւ ի գետմ, միմչեւ Դ. (4) տարի մարդ չիմացաւ, յետոյ յայտնեցաւ երագօք լոյսարարիմ իրոյ, եւ եկաւ լոյսարարմ, իմմ՝ մեղաւոր տէր Սիմէոնիս, ասաց: Եւ եւ ելեալ

³³⁰ Ծնորհակալ ենք լեհ հայագետ Կոնրադ Սիեկիերսկիին սույն հիշատակարանի վրա մեր ուշադրությունը հրավիրելու համար:

զմացի յովստն տէր Յուսկան որդին...: Մտանք յեկեղեցին, աղօթեցաք մինչեւ յառաւօտն, պատարագէն ելանք, միաբան զմացինք ի յեզր գետոյն, տեսաք նոր հրաշք, որ [ջո՞ւրն] ի մի կողմն քաշեցաւ, զմաց սուրբ Աւետարանն ի ծերպս վիմին երեւեցաւ, հանինք զուրբ Աւետարան, որչափ որ ի մէջ ժողովրդին հիւանդ եւ կոյր եւ դիւայհար կայր, զամէն բժշկեաց» [Հիշ. ԺԴ, 499]:

Սիմեոն հիշատակագիրն այնուհետեւ թվարկում է Ավետարանով բժշկման և դիվահալածության մի շարք դեպքեր, որոնք մեզ հայտնի են այլ ձեռագրերից ևս³³¹: Օրինակ՝ Մաշտոցյան Մատենադարանում այսօր պահվող Հ^{մբ} 4060 Ավետարանն անցյալում ժողովրդի մեջ հայտնի է եղել իր հրաշագործություններով և բժշկություններով, որի համար էլ ստացել է «Զորավոր» պատվանունը: Հատկանշական է այն փաստը, որ Ավետարանի «Զորավոր» անունն իր հերթին փոխանցվել է Երևանի Սուրբ Աստվածածին եկեղեցուն, որն այսօր առավել հայտնի է Զորավոր Սուրբ Աստվածածին կամ պարզապես Զորավոր եկեղեցի անուններով, քանի որ երկար ժամանակ այստեղ է պահվել «Զորավոր» Ավետարանը³³²:

Իր բժշկություններով է հայտնի նաև Մատենադարանի մեկ այլ՝ Շուրիչկանի նշանավոր Ավետարանը, որին նվիրված չափածո տողերում դարձյալ ընդգծվում են նրա բժշկող և դիվահալած հատկությունները.

«Երկնքիցն ցած եկած ես,
Լուսափայլով զարդարած ես.

³³¹ Ձեռագրերի երկրպագության, ժողովրդական ընկալումներում նրանց գործառույթների մասին առավել մանրամասն տե՛ս **S. Ferriani**, *I libri detti «santi della casa» (tan surber): primi risultati di una ricerca antropologica nella Repubblica d'Armenia*, “Rassegna degli Armenisti Italiani”, vol. XVI (2015), pp. 25-32.

³³² **Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան**, *Զորավոր Ավետարանը*, Երևան, «Նախապետ» հրատ., 2016, էջ 15-16:

Սատանէքին կը հալածես,
Շորիշկանանց Աւետարան»³³³:

Տեր Սիմեոնի վերոնշյալ հիշատակարանում ուշադրութիւն են գրավում նաև ջրի մեջ Ավետարանի 4 տարի անվնաս պահպանվելը և Ավետարանի հայտնութիւնը երազի մեջ: Երկու տարրերն էլ հրաշապատում այս գրույցների կարևոր բաղադրիչներին են: Մասնավորապես Ավետարանի՝ ջրում հայտնվելը և չվնասվելը հիշատակվում է նաև Շուրիշկանի Ավետարանի պատումներից մեկում³³⁴: Մի ավանդութիւն համաձայն էլ՝ լճում, ապա գետում է հայտնվել «Զորավոր» Ավետարանը³³⁵: Ուշագրավ մի ավանդագրույց էլ առնչվում է ներկայումս Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ձեռագրատանը պահվող Հմր 2649 Ավետարանին, ըստ որի՝ նավաբեկութիւն ընթացքում այն Երուսաղեմի հայոց պատրիարք Հովակիմ Քանաքեռցու (1775-1793) հետ հայտնվել է ծովում և փրկել պատրիարքի կյանքը՝ չկրելով որևէ վնաս: Այդտեղից էլ այն ստացել է «Ծովի» Ավետարան անվանումը³³⁶, իսկ պատրիարքը՝ Ծովածին մականունը³³⁷:

³³³ **Գ. Տէր-Վարդանեան**, *Շորիշկանի Աւետարանը*, ՋԽԵ:՝ 1498, ստեղծումը, անցածը եւ ներկան, Երևան, «Վերնատուն», 2017, էջ 58:

³³⁴ Նշվ. աշխ., էջ 56: Տե՛ս նաև **Թ. Գևորգյան**, *Շորիշկանի Ավետարանի գործառնությունը պարսկաստանի ավանդական կենցաղում*, «Հայոց սրբերը և սրբավայրերը, ակունքները, տիպերը, պաշտամունքը» [հոդվածների ժողովածու], Երևան, «Հայաստան» հրատ., 2001, էջ 411-413:

³³⁵ **Ա. Հարությունյան**, **Ա. Սիմոնյան**, *նշվ. աշխ.*, էջ 16:

³³⁶ Տե՛ս Հայկական Երուսաղէմ. նկարագիր Աթոռոյ Սրբոյ Յակոբեանց, գրեց **Մ. արքեպ. Օրմանեան**, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1931, էջ 31, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ը., կազմեց **Ն. արքեպ. Պողարեան**, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1977, էջ 276:

³³⁷ *Միաբանք եւ այցելութք Հայ Երուսաղէմի*, աշխատասիրեց **Մ. եպ. Աղանունի**, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1929, էջ 346-347, [**Տ. Հ. Թ. Սաւալանեանց**], *Պատմություն Երուսաղէմի*, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց **Մ. եպ. Նշանեան**, հ. երկրորդ, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1931, էջ 796:

Նավաբեկուժյան հետեանքով դարձյալ ջրում է հայտնվել ու կրկին գրեթե չի վնասվել մեկ այլ Ավետարան, որը նորոգվել և ծաղկվել է Սպահանում Ստեփանոս Զուղայեցու ձեռքով: Հիշատակարանում կարդում ենք.

«Եւ առաւօտըն ելեալ տեսիմ, զի անն ընկըղմեալ էր ի մէջ ծովոյն: Եւ զաւորս հինգ բազում աշխատութեամբ եւ ջանօք հանեալ ի ցամաք, եւ տեսիմ, զի ամենայն ինչ ապականեալ, եւ զսորք Աւետարանս ի անցա մէջն անարատ մնացեալ, եւ զմիայն կողմն էր ապականեալ» [Հիշ. ԺԷ, Բ, 633]:

Երազը ևս կարևոր բաղադրատարր է այս ավանդազրույցներում. ժողովրդական բանահյուսուժյան մեջ հաճախադեպ են երազների մասին հիշատակումները, որոնցում երազը տեսնողին սովորաբար հայտնվում են սրբեր կամ սրբատեղիներ (որպես կանոն՝ այնուհետև երազը տեսնողներն ուխտի են գնում այդ սրբատեղիներ, մատաղ անում և այլն): Ժ. Դ. դ. տեր Սիմեոնի հիշատակարանի օրինակը ցույց է տալիս, որ Սուրբ Գրքերը ևս օժտված են երազի մեջ հայտնվելու հատկանիշով: Ավելին, երբեմն դրանք կարող են սրբավայրերի հետ միասին հայտնվել երազում: Գեղարքունիքի մարզի գյուղերից մեկում լեհ ազգագրագետ-հայագետ Կոնրադ Սիկիրսկու գրանցած մի հետաքրքիր զրույցում նշվում է, որ ոտքերից հաշմանդամ և խոսելու ունակութուն չունեցող մի աղջնակի երազում երևում են Սուրբ Խաչ և Սուրբ Հակոբ եկեղեցիները, Կարմիր և Ոսկեկող Ավետարանները, որոնք իրենց մոտ են կանչում աղջկան: Արթնանալուց հետո աղջիկն ուխտի է գնում նշյալ սրբատեղիներ, երկրպագում Ավետարանները և ապաքինվում³³⁸:

Ժողովրդական կենցաղում այդ երևույթի գրավոր վկայածություն հնուժյան հնուժյան տեսանկյունից Ժ. Դ. դարի նշյալ հիշատակա-

³³⁸ Ծնորհակալ ենք ազգագրագետին գրույցի մասին մեզ տեղեկացնելու և թեմային առնչվող իր գրառած նյութերին ծանոթանալու հնարավորություն տալու համար:

րանն ինքնին արժեքավոր է: Նույնքան հետաքրքիր և կարևոր է ժէ. դարասկզբի մեկ այլ ուշագրավ հիշատակարան՝ գրված 1606 թ. Սպահանում վանեցի խոջա Խլղաթի որդի Շաղավաթի ձեռքով³³⁹.

«Ես՝ Ծաղաւաթս, որդի խօջայ Խլղաթին ի վան քաղաքէ, էի ի Ծօշ քաղաք, որ է Սպահան, եւ գնացաք մատաղով ի Զագ վարդապետի սուրբ գերեզմանն լուխտ եւ տարաք զայս սուրբ Աւետարանս ի հետ Ա. (1) քահանայի: Եւ յորժամ յետ խաղաղական աղօթիցն ի քուն եղաք, տեսի ես տեսիլ անեղ եւ զարմանալի ի մէջ գիշերին: Եւ տեսի Գ. (3) սրբազգեստ քահանայք, եւ ի ձեռս իրեանց զայս սուրբ Աւետարանս առ ի կարդալ: Եւ ես հարցաւ. «Ո՞ւմ է գիրքդ այդ»: Եւ ասեմ. «Այս սուրբ Աւետարանս Խաչիկ երիցուն է՝ Հիզանցուն»: Եւ տեսի, զի բոց ելանէր յԱւետարանէն որպէս զլոյս, եւ ես ասեմ ընդ ընկերսն իմ. «Տեսէ՞ք, ո՛վ եղբարք, զի վառեալ է սուրբ Աւետարանն»: Եւ նոքա ասեմ ցիս. «Ոչ թէ լոյս է, այլ շատաւիղ արեգականն, զոսկին եւ զծաղիկն այնպէս ցուցանէ»: Եւ տեսի Ա. (1) ծեր քահանայ այլ, որ ասէր զմեզ. «Ո՛վ տխմարք, ոչ իմանաք զքսանչելիսն Աստուծոյ, լոյսդ այդ ոչ թէ յարեգական է, այլ ի սուրբ Աւետարանէս»:

Եւ ես զարթեալ եւ պատմեցի, եւ նոքա հիացեալ փառս ետուն Աստուծոյ» [Հիշ. ԺԷ, Ա, 221-222]:

Այստեղ էլ տեսնում ենք երազով Սուրբ Գրքի հայտնությունը և անորոշ քահանաների (նախ՝ երեք սրբազգեստ, ապա՝ մեկ ծեր) առկայությունը: Ըստ որում՝ ուշագրավ է, որ հիշատակագիրն այնքան է կարևորել երազի տարրը, որ նույնիսկ ավելորդ է համարել կենտրոնանալ և բացատրել, թե ինչպես պատա-

³³⁹ Ձեռագիրն ընդօրինակվել է Մոկրում 1605 թ., ծաղկվել Խիզանում. «Եւ արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառս Մոկաց, ձեռամբ Յոհանէս քահանայի եւ ծաղկեցաւ ի քաղաքս Հիզան, ձեռամբ Խաչատուր տգէտ քահանայի» [Հիշ. ԺԷ, Ա, 180]: Ստացողն է խոջա Աղաջանը:

Հեց, որ գերեզման ուխտի գնացածները աղօթքից հետո տեղում քնել են: Ավետարանից ճառագող լույսի կամ բոցի հիշատակումն, անշուշտ, դարձյալ խորհրդանշական պատկերի արտահայտություն է: Սուրբ Գիրքը մշտապես դիտվել է իբրև կենարար լույս, իսկ աստվածային սուրբ Երրորդությունը՝ պարզևիշ այդ լույսի:

Այսպիսի ավանդազրույցները եղել և շարունակում են մնալ ժողովրդական կենցաղի անբաժանելի մասը, և դրանց գրավոր վկայությունները անփոխարինելի արժեք ունեն այդ կենցաղի բացահայտման դիտանկյունից: Հիշատակարանային տեղեկություններն այս հարցում ևս կարող են իրենց նպաստը բերել բնագավառի ուսումնասիրություններին:

Ամփոփելով նշենք, որ միջնադարյան հիշատակարաններում տեղ գտած ժողովրդական կենցաղին վերաբերող մեծաթիվ մանրամասները նման են ամբողջական պատմության այսուայնտեղ ցրված բառերի ու նախադասությունների, որոնց մեկտեղումը միայն հնարավորություն կտա հյուսելու պատմությունը և վերհանելու դրա արժեքավոր կողմերը:

9. ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

«Երանի որ ունիցի զաւակ ի Սիովն
ևս ընտանեակը իցեն յԵրուսաղէմ» (Ես., ԼԱ. 9)

Հայագիտութեան մեջ վաղուց արդեն նկատված է, որ սուրբ-գրային վկայակոչումները հայ մատենագրութեան և հատկապես Ե. դարի մատենագիրների երկերում կարող են ինչ-որ առումով լույս սփռել Սուրբ Գրքի թարգմանութեան ընթացքի, վերջնական բնագրից առաջ գոյություն ունեցած խմբագրութեան կամ տարբերակների, ինչպես նաև բնագրի կրած հնարավոր ազդեցությունների վրա: Այդ դիտանկյունից արժեքավոր են հատկապես Խորենացու, Ագաթանգեղոսի, Կորյունի, Եղիշեի և հետագա մատենագիրների երկերում առկա սուրբգրային հիշատակումների առանձին բաղդատական ուսումնասիրությունները³⁴⁰, որոնք ի հայտ են բերում «պաշտոնական» Սուրբ Գրքից³⁴¹ տարբերվող

³⁴⁰ **Հ. Պ. Էսապլեան**, Հայերէն Աւետարաններու սկզբնագրի հարցը եւ Ազաթանգեղոսի ու Ղազար Փարպեցոյ կոչումները, «ՀԱ», 1935 (10-12), էջ 571-596, «ՀԱ», 1936 (1-3), էջ 22-40, «ՀԱ», 1936 (4-6), էջ 185-195, «ՀԱ», 1936 (7-9), էջ 338-349: **Ա. Չեյթունյան**, Աստվածաշնչի հին թարգմանության հետքերը Եղիշեի երկերում, «ՊԲՀ», 1980 (2), էջ 130-142: **P. Mouradian**, *Importance des citations bibliques rencontrées dans les documents littéraires et épigraphiques médiévaux Arméniens*, “Armenia and the Bible”. Papers presented to the International Symposium held at Heidelberg, July 16-19, ed. by **C. Burchard**, 1990, (University of Pennsylvania Armenian Texts and Studies, 12), Atlanta GA, Scholars Press, 1993, pp. 171-179. **Հ. Հ. Քյոսեյան**, Սուրբգրային վկայակոչումները Կորյունի «Վարք Մաշտոցում», «Էջմիածին», 1993 (Գ-Չ), էջ 39-49: **Մ. Շիրինյան**, Սուրբգրային վկայակոչումները վաղ շրջանի հայկական որոշ երկերում և հունարեն թարգմանություններում, «Էջմիածին», 2010 (Չ), էջ 45-52 և այլն:

³⁴¹ Նկատի ունենք հետևյալ հրատարակությունը, որն ընկած է նաև շարադրանքում բերվող սուրբգրային հաստվածների համեմատությունների հիմքում՝ Աստուածաշունչ մատենան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ նշգրիտ

Հատվածների կիրառությունները նշյալ մատյաններում: Նույն նպատակով անցյալում փորձեր են արվել նաև Հավաքելու և ըստ Աստվածաշնչի առանձին գրքերի ի մի բերելու Հայ մատենագրություն ինքնուրույն և թարգմանական երկերում սուրբգրային վկայությունները, որոնք նույնպես կարող են ծառայել Աստվածաշունչ մատյանի հայերեն հնագույն տարբերակների բացահայտմանը³⁴²:

Սուրբգրային վկայակոչումներով հարուստ են նաև Հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք այս դիտանկյունից ցարդ առանձին քննություն առարկա չեն եղել: Մյուս կողմից ուշագրավ է, որ հիշատակարանային որոշ մեջբերումների համեմատությունը երևան է հանում Սուրբ Գրքի «պաշտոնական» տարբերակից շեղումներ ունեցող Հատվածներ³⁴³: Ասել է թե, գրիչներն իրենց տրամադրության տակ ունեցել են այնպիսի տարբերակներ, որոնք աչքի են ընկնում սուրբգրային առանձին Հատվածների մասնակի կամ ամբողջական տարբերություններով: Հետաքրքիր է և այն, թե ինչ առիթով կամ ինչ նպատակով են հիշատակագիրները դիմել Սուրբ Գրքին: Ըստ այդմ՝ մեր ուսումնասիրության այս Հատվածում քննության ենք առնում գրավոր այս հուշարձաններում վկայակոչվող սուրբգրային տողերն ու նրանց առնչվող դրսևորումները: Մինչ այդ նկատենք, որ գրավոր այս հուշարձաններն ընդհանուր առմամբ խիստ առատ են աստվածաշնչյան թեմաներով, զրույցներով, ընդհուպ սուրբգրային բառակապակցություններով ու արտահայտություններով, որոնք հիշատակագիրները գործածում են ամենատարբեր երևույթների նկարագրության, բացատրության կամ

թարգմանության նախնեսց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականն բարբառ, աշխատասիրութեամբ Տեառն Հ. Յովհաննու Չօրապետն վարդապետի, բաժանեալ ի չորս հատորս, հ. Դ., Վենետիկ, ի գործարանի Սրբոյն Ղազարու, 1805:

³⁴² Աստվածաշունչ ըստ հայ մատենագրության (հայ ինքնուրույն գրականություն, 5-12 դդ.), Ա. Նոր Կտակարան, կազմեց՝ Ա. Մալխասյան, Հայաստանի աստվածաշնչային ընկերություն, [Երևան], 2005:

³⁴³ Ch. Hannick, *Biblexegese in armenischen Handschriftenkolophonen*, “Armenia and the Bible”, p. 86.

պարզապես պատեհ առիթով: Երբեմն այդ վկայակոչումները վերարտադրվում են հիշողությամբ կամ ակնարկի միջոցով, իսկ ավելի հաճախ դրանք աստվածաշնչյան մի որևէ հատվածի ուղղակի կամ բառացի մեջբերումներ են: Վերջինի դեպքում հիշատակագիրները համապատասխան մեջբերումից առաջ սովորաբար կիրառում են նաև «որպէս ասէ», «որպէս թէ», «ասէ թէ» կամ «ասէ» կառույցներից մեկը՝ ընդգծելով բառացի վկայակոչվող հատվածը:

Արձանագրենք, որ հիշատակագիրներն ազատ են աստվածաշնչյան հղումների հարցում, և նրանց ընտրությունը հիմնականում բխում է իրենց շարադրանքի նպատակադրումից: 1312 թ. Դանիել կրոնավորն իր ընդօրինակած ձեռագրի նկատմամբ խնամքով վարվելու, իր չարչարանքը գնահատելու խնդրանքով դիմում է եկեղեցու սպասավորներին, նշում, որ իմաստուն մարդիկ ծանոթ են աշխատանքի բարդությանը, և ապա որպես խրատ՝ հիշեցնում է երբայեցիներին ուղղված Պողոս առաքյալի թղթից մի հատված, որով, փաստորեն, կամենում է ընդգծել այն փաստը, որ նույնպիսի դժվարությունների միջով անցած մարդը միայն կարող է ըմբռնել գործի ողջ դժվարությունը³⁴⁴: Ահա գրչի տողերը.

«Աղաչեմ զսպասաւորքդ սուրբ եկեղեցոյդ, սրտացաւաբար պահել զգիրքս եւ պատրաստութեամբ սպասաւորել սմա, ո՛չ վայրապար շրջշոջել գթոյլ միւթս սորա, այլ խնամքով կարդալ զսա, վասնզի բազում եւ մեծ աշխատանաք

³⁴⁴ «Նմին իրի իբրեւ մարդ՝ անձամբ գփորձ առեալ, գիտէ այսուիետև ցաւակցիլ, աղետանալ ոչինչ ընդհատ քան զայլ վշտացեալսն: Գիտաց համակարիք լինել, գիտէ եւ գեղանակ նպաստելոյն, շարժի յօգնել եւ ՚ի մխիթարել», - գրում է հ. Գ. Ավետիքեանն այս հատվածի մեկնության մեջ, տե՛ս *Մեկնություն չորեքտասան թղթոց երանելոյն Պողոսի առաքելոյ, արարեալ ըստ ողջամիտ շատրաց վարդապետաց եկեղեցոյ, ընտրութեամբ հարսազատ բնագրի հայկական թարգմանութեան, հանդերձ բացաքննութեամբ այլոց թարգմանութեանց*, աշխատասիրութեամբ Տեառն Հ. Գ. արժոնակալ վարդապետի Աւետիքեան Կոստանդնուպոլսեցոյ, հ. Գ, Վենետիկ, Սբ. Ղազար, 1812, էջ 67:

կատարեցի գաս, գոր քաջ իմանան գիտնականքն եւ հոգե-
տորքն զաշխատանք սորա, ըստ առաքելոյն, որ ասէ, թէ. *Որ
զփորձ առեալ է, կարող է եւ փորձաորացն ազնւական յի-
նել* (Եբր., Բ. 18), ըստ այսմ եւ դուք արասցիք, զի արհմու-
թեանն Քրիստոսի արժանի լիջիք. ամէն» [Հիշ. ԺԴ, Ա, 220,
ընդգծումը մերն է – Խ. Հ.]:

*ԺԷ. դարի մի հիշատակագիր էլ Ղուկասի Ավետարանից հա-
մապատասխան մեջբերմամբ, կարծես, զգաստության կոչ է
հնչեցնում մատյանը պատշաճ կերպով չպահողներին. «Յամե-
նայն կողմանց պատրաստութեամբ լա՛ւ պահեցէք, որ վարձս ի
Քրիստոսէ առնուք, եւ թէ ոչ, նա դատապարտիք ի բանէ սուրբ
Աւետարանիս, որ ասէ. Ի բա՛ց կացէք յինէն ամենայն մշակոյ
անիրաւութեան» (Ղուկ., ԺԳ. 27)» [Հիշ. ԺԷ, Ա, 597]: Սիմեոն
Լեհացի գրիչն էլ պատգամում է ձեռագիրը չտրամադրել ան-
գետներին և անուսումներին. «զի հրամայէ Տէրն մեր Յիսուս
Քրիստոս, թէ Ս'ի՛ տայք զսրբութիւնն ձեր շանց (Մատթ., է. 6)»
[Հիշ. ԺԷ, Ա, 433]:*

*1298 թ. Հովսիան գրիչն իր հիշատակարանում ընթերցողնե-
րին խնդրում է «յիշման բարո արժանի համարել» իր գործակից-
ներին, որոնք սիրով օգնել են իրեն, անհրաժեշտ խորհուրդներ
տվել. «քանզի յոյժ կամակից էին գործոց մերոց՝ աւգնելով եւ
խրատ տալով յաղագս սիրո պատճառի,– գրում է Հովսիանը և
անմիջապես վկայակոչում է Պողոս առաքյալի խոսքերը,– Սէր
ընգերի իրում չար ոչ առնէ, լրումն արիւնաց սէր է» (Հռոմ., ԺԳ.
10) [Հիշ. ԺԳ, 836]: Առաքյալի խոսքերով Հովսիանն ընդգծում
է ընկերասիրությունը և որպէս երախտագիտության արտահայ-
տություն՝ խնդրում է անվանապէս հիշել իրեն սատարած ընկեր-
ներին:*

*Մեր պրպտումները ցույց են տալիս, որ հիշատակարաննե-
րում Սուրբ Գրքից առավել հաճախ մեջբերվել են երկրային
կյանքի անցողականությունը կամ երկնային հավերժությունն
ընդգծող, սրբազան պատվիրաններին, երկրային գանձերի
ապարդյուն կուտակմանը, մեղքերի թողությանը և հավատքի*

զորութեանն առնչվող հատվածներ, որոնք ներշնչման աղբյուր են հանդիսացել հիշատակագիրների համար և առիթ դարձել մատյանի ստեղծմանը, նորոգմանը, պատվիրմանը, փրկագնամանը, նվիրաբերմանը:

Հիշատակագիրների շրջանում ամենից տարածվածը, անկասկած, Եսայու մարգարեութեան մեջ արձանագրված Քրիստոսի հայտնի խոսքն է. «Երանի որ ունիցի զաւակ ի Սիոլմ եւ ընտանեակք իցեմ յԵրուսաղէմ» (Ես., ԼԱ. 9), որ տարբեր ձևափոխություններով բազմիցս կարելի է տեսնել հայերեն ձևագրերի հիշատակարաններում՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից: Գրիգոր Տաթևացու մեկնությունը՝ «գաւակը» խորհրդանշում է հոգևոր բարեգործությունները, իսկ «ընտանեակը»՝ պատարագներին մատուցված նվերները, որոնք հավատացյալ քրիստոնյայի անջնջելի ու անմոռանալի հիշատակի գրավականն են հավիտենական արքայությունում. «զաւակ ասէ զհոգեւոր ծնունդս բարէգործութեանց, զի յերկիւղն Աստուծոյ յղանամք...: Այլ եւ զընտանիս ունիմք զգալապէս յեկեղեցիս, որ է նոր Սիոն եւ Երուսաղէմ զնուէրս պատարագաց, որ է փոխանակ մեր միշտ անմոռաց յիշատակ եւ ընտանի են առաջի երեսաց Աստուծոյ»³⁴⁵: Աստվածաշնչյան հիշյալ տողերի ընտրությունն ու նրանց հաճախակի վկայակոչումներն, ըստ այսմ, պայմանավորված են հիշատակագիրների հոգևոր մղումով և Ահեղ ատյանի օրը հոգու փրկություն ակնկալիքով. «Արդ, ստացաւ զԱւետարանս զայս Ստեփանոս ընտրեալ քահանայ փրկական հոգոյ իւրոյ, քանզի ստացաւ զսա զաւակ ի Սիոն եւ ընտանի ի վերինն Երուսաղէմ», – կարդում ենք 1183 թ. Կարինի Խաչկա վանքում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում [Հիշ. Ե-ԺԲ, 238, ընդգծումը մերն է – Խ. Հ.]: Ահա մի քանի այլ վկայություն ևս. «Արդ, այս նախասացեալ պատրոն Խայտերս ստացաւ զսուրբ Աւետարանս զաւակ ի Սիոլմի եւ ընտանի յերուսաղէմն

³⁴⁵ **Ս. Գրիգոր Տաթևացի** (1346-1409), *Մեկնություն մարգարեությանն Եսայիայ*, աշխատասիրությամբ Հ. **Ջյուսեյանի**, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2008, էջ 73:

վերին» [Հիշ. ԺԳ, 121]: «Ըստացաւ զկենսաբեր Աւետարանս... ըստ գրեցելումն, թէ՛ Երանի որ ունիցի զաւակ ի Սիրոն եւ ընտանիք իցեն նորայ յԵրուսաղէմ» [Հիշ. ԺԳ, 134]: «Արդ, ես՝ նուաստ յամենայնի Մելիքշահս... զմտաւ ածի զայս ամենայն եւ յիշեցի զայն, որ ասէ, թէ՛ Երանի որ ունիցի զաւակ ի Սիրոն եւ ընտանեակ յԵրուսաղէմ, եւ գրեալ տվի զսուրբ Աւետարանս» [Հիշ. ԺԴ, 276]: «Յիշելով զբանն Եսայեա մարգարէի՝ Երանի որ ունիցի զաւակ ի Սիրոն, եւ ետու զծախս սուրբ Աւետարանիս, ստանալ զսա ինձ զաւակ հոգեւոր յեկեղեցի յիմանալիս՝ Երուսաղէմ» [Հիշ. ԺԳ, 140]:

Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ ձեռագրի ստեղծումը կամ գնումը, ինչպես նաև նրա ընծայումը եկեղեցուն ընկալվել են որպես բարի գործի կամ «հոգևոր բարեգործութեան» և հիշատակութեան արժանի դրսևորում: ԺԲ. դարի հիշատակարաններից մեկում գրված է. «Բազում ինչս ծախեցաք... եւ արարաք զսա յիշատակ հոգևոց մերոց, եւ ստացաք զսա մեզ զաւակ ի Սիրոն եւ ընդանեակ յԵրուսաղէմ» [Հիշ. Ե-ԺԲ, 331]:

Ուշագրավ է նշյալ հիշատակարանի «բազում ինչս ծախեցաք» նախադասութիւնը. այն մեկ անգամ չէ, որ կարելի է նկատել հայերեն ձեռագրերի հիշատակարաններում: Դրանց մեծ մասում շեշտվում է երկրային նյութական գանձերը վաճառելու, անտեսելու և երկնային գանձեր կուտակելու միտքը, որը, անկասկած, դարձյալ գալիս է Սուրբ Գրքից, և հիմքում կրկին հոգու փրկութեան և երկնային արքայութեան արժանանալու գաղափարն է: Ղուկասի Ավետարանում կարդում ենք Քրիստոսի հետևյալ խոսքերը. «Վաճառեցէ՛ք զինչս ձեր, եւ տո՛ւք ողորմութիւն. եւ արարէ՛ք ձեզ քսակս առանց հնանալոյ, զանձ անպակաս յերկինս, ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ասպականէ: Զի ուր զանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցիս» (Ղուկ., ԺԲ. 33-34): Նյութական հարստութեան կուտակման ապարդիւն ձգտումը, ըստ Քրիստոսի հիշյալ խոսքերի, հավատացյալ մարդու համար չպետք է առաջնային լինի, նրան պետք է մտահոգեն միայն երկնային հոգևոր այն գանձերը, որոնք երկրային կյանքի ըն-

Թացքում նա հասցրել է կուտակել բարի գործերով և առաքինի վարքով: Ղուկասի Ավետարանի այս հատվածի մեկնության մեջ Իգնատիոս Սևեռոնցին գրում է. «Եւ այսու օրինակաւ ամենայն ուրեք ստէպ խրատէ զմեզ յերկինս դնել զամենայն որ ինչ մեր է, եւ զայն շինել մեզ քաղաք բնակութեան, եւ անդ հաստատել զմիտս մեր ըստ գանձուցն, որ անփախուստն է եւ անդրժելին, զոր ոչինչ է որ լուծանել կարէ»³⁴⁶: Սևեռոնցին, այսպիսով, վերահաստատում է այն միտքը, որ երկնային գանձերը անհնար է գողանալ կամ կորստյան մատնել: Ահա այս հանգամանքով են պայմանավորված երկրային նյութական գանձերը թողնելու և երկնքում հոգևոր հարստություն կուտակելու վերաբերյալ բազմաթիվ վկայակոչումները հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, ինչպես՝ «Հրամանաւ տերունի, որ միշտ գոչէ յականջս հասարակաց, թէ՛ Գանձեցէք զձեզ գանձ անպակաս յերկինս, որ ոչ ցեց ուտէ և ոչ ուտիչ ապականէ, ստիպեաց զոմն ի դասէ երջանկաց, լուսերամ կրաւնաստանիս քահանա եւ կրաւնաւոր Յովանէս վերածայնեալ..., կամեցաւ ստանալ զաւակ ի Սիովն եւ ընտանիս յերուսաղէմ, այսինքն՝ ի նորս եկեղեցի, եւ երանաւէտ շնորհին արժանաւորիլ» [Հիշ. ԺԳ, 677]: «Արդ, ականջալուր եղեալ աւետարանական հրամանիս, որ ասէ՝ Գանձեցէք ձեզ գանձ յերկինս, ուր ոչ գող մերձենա եւ ոչ ցեց ապականէ, երիցս երանեալ երջանիկս այս... մեծաւ փափագմամբ ցանկացող եղեալ այսմ աստուածաշունչ կտակի եւ Աւետարանի» [Հիշ. ԺԵ, Ա, 315]: «Ըղձալի սրտիւ եւ ջերմ սիրով ստացան զսա՝ գանձ անկողոպտելի, յիշելով բան գրոյն, թէ՛ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանի յերուսաղէմ, եւ զպատուէր տէրունական հրամանին, թէ՛ Գանձեցէք ձեզ զգանձս յերկինս, ուր ոչ գող մերձանայ ու ոչ ցեց ապականէ»³⁴⁷:

³⁴⁶ Մեկնությունս սրբոյ Աւետարանին որ ըստ Ղուկասու, արարեալ սուրբ վարդապետին Իգնատիոսի, Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Պոլսեցոյ, 1735, էջ 190:

³⁴⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Բ., էջ 293:

Ահա թե ինչ է գրոււմ Հայրապետ գրիչը 1462 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում.

«Աստուծոյ հրամանքն գրած է ի սուրբ Աւետարանդ, թէ՛ Գանձեցէք ձեզ գանձս յերկինս, որ ոչ ցեց ուտէ եւ ոչ ուտիչ ապականէ. այս Աւետարանս այն գանձն է: Դարձեալ՝ անան է արքայութիւն երկնից սոն վաճառականի, որ գտանէ պատուական մարգարիտ մի, վաճառէ զամենայն ինչս որ ունի եւ զնէ զմարգարիտն այն. այս Աւետարանս այն մարգարիտն է» [Հիշ. ԺԵ, Գ, 439]:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում հաճախադեպ են նաև սաղմոսներից մեջբերումները, որոնցից առավել չափով տարածված են հետևյալ երկուսը. «Պատուիրանք Տեսուն լոյս եմ եւ լոյս տան աչաց» (Սաղմ. ԺԸ. 9) և «Ծրագ է բան քո ոտից իմոց, եւ լոյս տայ շաւղաց իմոց» (Սաղմ. ՃԺԸ. 105), որոնք երբեմն հանդես են գալիս միասին: 1154 թ. ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանում կարդում ենք. «Որոյ բուրաստանի ցանգացեալ մեծաւ տենչանաւք սուրբ եւ պատուական այրս այս Ստեփաննոս քահանայ, լուեալ ի գրոց սրբոց, եթէ՛ Պատուիրանք Տեսուն լոյս են եւ լոյս տան աչաց իմոց, եւ ճրագ են բանք Տեսուն, եւ ի լոյս ուղղեն զչաւեղս մեր» [Հիշ. Ե-ԺԲ, 167]: 1236 թ. ընդօրինակված Ավետարանի ստացող Բոնավորն իր հիշատակարանում գրել է.

«Արդ, ես՝ Բոնատրս, մեղուցեալ ծառայ Աստուծոյ եւ ամուսին իմ Տղայտիկին՝ աղախին Քրիստոսի, ոչ ունելով մարմնատր զաւակ, ցանկացող եղաք հոգեւոր զաւակի, ըստ ասելոյն, թէ՛ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանի Երուսաղէմ, եւ այլ թէ՛ Պատուիրանք Տեսուն լոյս եմ եւ լոյս տան աչաց իմոց, եւ այլ թէ՛ Ծրագ եմ բանք քո եւ լոյս տան շաւղաց իմոց» [Հիշ. ԺԳ, 194]:

Ստեփաննոս Կաղզվանցի գրիչը 1289 թ. Ավետարանն ընդօրինակելու իր համարձակությունը բացատրում է Սուրբ Գրքի

նկատմամբ տածած անհագուրդ սիրով: Այդ «խիզախությունը» հիմնավորելու համար իր հիշատակարանում գրիչը վկայակոչում է Հովհաննես առաքյալի Ա. թղթից հետևյալ հատվածը. «Մե երկեղ ոչ գոյ ի սէր, այլ սէրն կատարեալ ի բաց մերժէ գերկեղն» (Հովհ., Ա. թղթ., Դ. 18): Ըստ որում՝ ուշագրավ է, որ այս տողերը Ստեփանոս գրիչը վերագրել է Պողոս առաքյալին³⁴⁸: Նրա հիշատակարանում կարդում ենք.

«Այլ ես, ո՛վ լուսերամ դասք քահանայից, ի վաղուց ճետէ փափագէի այսմ աստուածախաւս մատենի, եւ թեպէտ եւ անկատար էի ի գրչական արճեստիս, բայց ըստ ասիցն Պօղոսի թէ՛՝ *Սէրն կատարեալ ի բաց մերժէ գերկեղն*, աներկեղ համարձակութեամբ սկսայ եւ Տերամբ Աստուծով կատարեցի ըստ կարգի տկարութեանն իմոյ» [Հիշ. ԺԳ, 630, ընդգծու-ւնք սերն է – Խ. Հ.]:

Ստեփանոս Կաղզվանցու հիշատակարանի նշյալ միտքը եզա-կի չէ, այն գտնում ենք նաև 1316 թ. Առաքել կրօնավորի գրչագրած Ավետարանի հիշատակարանում, ուր դարձյալ ընդգծվում է բազում դժվարությունների հաղթահարումը մատ-յանը ձեռքերելու նպատակով. «Այլեւ արդ, ստացաք զսա ոչ ի յաւելորդաց եւ կամ ի փարթամութենէ, այլ բազում տվայտու-թեամբ յաղթայարեալ ի սիրոյ սուրբ Աւետարանիս, ըստ գրեցե-լոյն, թէ. Սէր կատարեալ ի բաց մերժէ գերկեղն» [Հիշ. ԺԴ, Ա, 302]:

Ակնհայտ է, որ Սուրբ Գրքից կարճ կամ ընդարձակ մեջբե-րումները հարստացնում են հիշատակագիրների խոսքը, այն դարձնում առավել ճոխ ու ազդեցիկ: Հիշատակագիրներն իրենք

³⁴⁸ Գրչի այս շփոթմունքը, թերևս, պատահական է, սակայն շփոթի բուն պատճառը հավանաբար կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ Պողոս առաքյալի թղթերում ևս ստեպ-ստեպ խոսվում է սիրո և դրա գո-րավոր ուժի մասին, ինչպես ահա այս հատվածում. «Սէր երկայնամիտ է, քաղցրանայ, սէր ո՛չ նախանձի, ո՛չ անպարհաւանէ, ո՛չ հպարտանայ, ո՛չ յանդգ-նի... այլ խնդայ ընդ ստուգութիւն, ամենայնի տեսէ, ամենայնի հաւատայ, ամե-նելին յուսայ, ամենայնի համբերէ» (Կորնթ., Ա թղթ, ԺԳ. 4-7):

էլ գիտակցել են այդ և չեն վարանել ի ցույց դնել իրենց գիտելիքների խորութիւնը: Առանձին դեպքերում կարելի է նկատել, թե հիշատակագիրները որքան ստեղծագործաբար են մոտեցել իրենց գրութիւններին. շարագրված տողերը լավ մտածված են, իսկ մեջբերվող հատվածները՝ հմտորեն միահյուսված դրանց: Երբեմն միևնույն պարբերութիւն մեջ միաժամանակ կարելի է նկատել աստվածաշնչյան տարբեր հատվածների բառացի կամ հիշողութիւնամբ արված մեջբերումներ, որոնց ներքին կապն ակնհայտ է և տրամաբանված՝ ինչպես հոգևորականի խոսքը քարոզի պահին: Ընդամին՝ չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ միջնադարյան գրիչների, ստացողների գերակշիռ մասը կրոնական միջավայրից էր սերում, որն, անշուշտ, իր ազդեցութիւնն է թողել նաև հիշատակարանների բովանդակութիւն, լեզվի և ոճի վրա:

Առանձին դեպքերում կարելի է նկատել, որ հիշատակագիրները չեն սահմանափակվել սուրբգրային հատվածների պարզ մեջբերումներով, այլև ինքնուրույնաբար մեկնել, սեփական բառերով բացատրել են իրենց իսկ վկայակոչած տողերը, որոնք ընդգծում են հիշատակագրի կրթվածութիւնը, հարուստ գիտելիքներն ու ինքնատիպ մտածողութիւնը: Այդ առիթով անհրաժեշտ ենք համարում հիշատակել մի հետաքրքիր օրինակ ԺԴ դարից: Վասպուրականի գրչօջախի բազմադրույն գրիչ և ծաղկող Հովսիանը 1308 թ. իր հիշատակարանում Սաղմոսաց գրքից բառացի մեջբերել է հետևյալ հայտնի հատվածը. «Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաք Աստուծոյ» (Սաղմ. ԽԵ. 5), որին անմիջապես հաջորդում է գրչի ինքնատիպ բացատրութիւնը: Նկատենք, որ ԺԲ. և ԺԳ. դարերի եկեղեցական նշանավոր գործիչներ Ներսես Լամբրոնացին և Վարդան Արևելցին արդեն իսկ մեկնել էին Դավթի Սաղմոսները, այդ թվում՝ նաև այս հատվածը, որը, կարծում ենք, ծանոթ պետք է լիներ Հովսիանին, սակայն գրիչը նախընտրել է իր բառերով մեկնել այն՝ խուսափելով իր հայտնի նախորդներին ուղղակի կրկնելուց: Նույն հիշատակարանում կարելի է տեսնել, որ գրիչը ոչ միայն չի բավարարվել

սուրբգրային քաղվածքի մեկնությամբ, այլև շարունակել է ընդարձակել ու նորանոր քաղվածքներով հարստացնել քննվող հիշատակարանը:

Սաղմոսի նշյալ հատվածի մեկնության ինքնուրույնությունը երևում է հատկապես նախորդ մեկնությունների համեմատությամբ, որ կարելի է տեսնել ստորև բերվող սյունակներում:

**«Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաք Աստուծոյ»
(Սաղմ. ԽԵ. 5)**

Ներսես Լամբրոնացի	Վարդան Արևելցի	Հովսիսան
«Գետ» է շնորհք Հոգւոյն Սրբոյ, որպէս ասաց Քրիստոս: Իսկ «քաղաք Աստուծոյ» եւ «յարկ»՝ մերս բանական հոգի...: Արդ, Հոգին Սուրբ բաժանեալ է յեկեղեցի՝ ի զանազան առաջս գրոց մարգարէից եւ առաքելոց, եւ վարդապետաց սրբոց, եւ սոքա միշտ առողեն զմիտս մեր ի ձեռն ընթերցման եւ ուկնդրութեան, որովք եւ ուրախ լինիմք եւ սրբիմք յամենայն ատար խորհրդոց...: Այսպէս գիտեն ուրախացուցանել	«Աւետարանիչք եւ առաքեալք, յորոց յորովայնէ գետք քղիւեցին: Քաղաք՝ որ ոչ կարէ թագչել, որ գտանին ամենայն արուեստաւորք հոգեւոր հանճարոյ եւ ամենայն վաճառականք անապական հարլստութեան...» ³⁴⁹ :	«Այսինքն՝ զեկեղեցի հաւատացելոց, յորս եղան չորեքին Աւետարանք՝ գետք մշտախաղացք, որ ի Հոգոյ Սրբո ընգալան զազդումն յորդորութեամբ գնացից չորիք բաժանմամբ ըստ եղեմական բխմանն՝ արբուցանելով զչորեսինս տիեզերս ատարական քարոզութեամբ՝ յերկրպագութիւն Երրոր-

³⁴⁹ *Մեկնութիւն սաղմոսաց Դսպօի*, յօրինեալ սքանչելի աստուածաբանութեամբ սուրբ եւ երջանիկ տեառն մեծին **Վարդանայ Բարձրբերդոյ**, Յաճդարիսան, տպ. Արդութեանցի, 1797, էջ 163:

զներքին մարդս՝ «գքա-
ղաքն Աստուծոյ», եւ
արբել յամենայն աւ-
տար խորհրդոց
«զնացք գետոցն» Աս-
տուծոյ»³⁵⁰:

դուօթեանն» [Հիշ.
ԺԴ, Ա, 144]:

*Միջնադարյան մեկնությունների համեմատությունն ամբող-
ջացնելու նպատակով մեջբերենք նաև Գր. Տաթևացու մեկնու-
թյան համապատասխան հատվածը: Ահա թե ինչ է գրում
Տաթևացին. «Չորս գետք եղեմաբուխ՝ Դ.(4) աւետարանիչքն: Եւ
Բժ.ան (12) մեծ գետք՝ Բժ.ան (12) առաքեալքն եւ այլքն աշա-
կերտք նոցին: Եւ գետք կոչին առաքեալք. նախ՝ զի միշտ
բ[ղ]խեն, երկրորդ՝ անպակաս, երրորդ՝ առատ, չորրորդ՝ ծովէ ի
ծով գնան: Դարձեալ պահապանք են եւ բնակութիւնք, եւ օգուտ
եւ օրինակ իմանալի գետոց, եւ առաքեալքն՝ տիպ եւ կերպարան
բղխման Բանին եւ Հոգոյն Սրբոյ»³⁵¹:*

*Համեմատության մեջ զբոված հատվածները, թեև երևան են
հանում որոշ ընդհանրություններ նախորդ շրջանի մեկնու-
թյունների հետ, սակայն միևնույն ժամանակ ընդգծում են Հով-
սիանի ինքնատիպ մտածողությունը, որն ակնհայտորեն*

³⁵⁰ Ն. Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնութիւն» ստվարածավալ երկի բնա-
գիրն առայժմ անտիպ է. մեր շնորհակալությունն ենք հայտնում նշյալ բնա-
գիրը հրատարակության պատրաստող մեր գործընկեր Արուսյակ Թամ-
րազյանին Լամբրոնացու մեկնության սույն հատվածը մեզ տրամադրելու
համար:

³⁵¹ Բնագիրն անտիպ է, նշյալ հատվածը քաղել ենք 1413 թ. Հովհաննես
Եգնկացու գրչագրած ՄՄ Հ^մ 1198 ձեռագրի 69բ-70ա էջերից: Նկարագրու-
թյունը տես Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անունն Մատենա-
դարանի, հ. Դ., էջ 609-616:

դրսևորվում է ոչ միայն նրա մի շարք հիշատակարաններում, այլև բացառիկ հետաքրքիր մանրանկարներում³⁵²:

Այստեղ դարձյալ փաստենք, որ նման օրինակներն ի հայտ են բերում բազմաթիվ ստեղծագործ հիշատակագիրների, որոնց հիշատակարանները հեռու են լուրջ մեխանիկական աշխատանք լինելուց և դուրս են ամեն տեսակ կաղապարներից. նման հիշատակարանները կարելի է բնորոշել որպես լավ մտածված ու կառուցված խոսք, որ ծառայում է նաև որպես ինքնադրսևորման և սեփական մտորումներն արտահայտելու հարթակ:

Մեր խոսքի սկզբում նշեցինք, որ որոշ հիշատակարաններում սուրբգրային վկայակոչումներն առանձին տարբերություններ են ունեն «պաշտոնական» Սուրբ Գրքի համեմատություններ, ուստի՝ ավելորդ չենք համարում ստորև ներկայացնել որոշ օրինակներ, որոնք ընդհանուր պատկերացում են տալիս ասվածի վերաբերյալ.

1254 թ. Հռոմում ընդօրինակված Ավետարանի³⁵³ հիշատակարանում կարգում ենք.

«Եւ զամենայն կիրս մարդկային յանձին իրում կրեալ, բայց ի մեղաց, եւ քաղցրուտոյց վարդապետութեամբն իրով բարբառեալ ասեր. *Եկա՛յք առ իս, աշխատեա՛յք, եւ ես հանգուցից զձեզ* (հմմտ. Մատթ., ԺԱ. 28)» [Հիշ. ԺԳ, 274]:

Գրչի այս մեջբերումը հիշատակարանում տարբեր է Աստվածաշնչի Զոհրապյան հրատարակության համեմատ, որտեղ նույն հատվածի «վաստակեալք եւ բեռնաւորք» բառերն այստեղ փոխարինվել են «աշխատեալք» բառով: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գրչական պարզ վրիպակ է կամ չհիշելու հետևանք,

³⁵² **K. Matevosyan, E. Vardanyan**, *La miniature arménienne*, Matenadaran, Album publié à l'occasion du XVII^e Sommet de la Francophonie à Erevan, Erevan, 2018, pp. 213-216.

³⁵³ Զեռագիրը հայտնի է նաև «Հոմնի Ավետարան» անունով, տե՛ս **A. Sirinian, Ch. Aimi**, *I manoscritti armeni copiati a Roma nel XIII secolo*, pp. 135-136.

սակայն ինչպես ցույց է տվել Պ. Էսապալյանը, Մատթեոսի Ավետարանի այս տողերը մեկ անգամ չէ, որ տարբեր ընթերցումներով են հանդիպում՝ ներառյալ Հովհաննես գրչի նշյալ տարբերակը³⁵⁴։ Ըստ այսմ՝ պետք է ենթադրել, որ գրիչն իր ձեռքի տակ է ունեցել Մատթեոսի Ավետարանի մեկ այլ տարբերակ։

1294 թ. Դրագարկում Բարսեղ Երաժշտի գրած հիշատակարանն աչքի է ընկնում իր ծավալով և բովանդակությամբ, որում գրիչը նաև սուրբգրային մեջբերումներ է արել․

«Ըստ որում կարի գրեցի ձեռամբ իմով և աշխատութեամբ, որպէս և հրամատ Տէր Յիսուս, թէ *Գանձեցէ՞ք ձեզ գանձս յերկինս* (Մատթ., Զ. 20), և աստուածային աստփեսայն, թէ գանձ հոգետորական ունիմ զքեզ բարութիւն, և դարձեալ Տէրն ասէ, թէ՛՝ *Որ արբուցէ բաժակաւ ջուր ցուրտ յանուն աշակերտի, ոչ կորուցէ զվարձս իր* (հմմտ. Մատթ., Ժ. 42)» [Հիշ. ԺԳ, 730]:

Ընդգծված մեջբերումներից երկրորդի տարբերությունը «Զոհրապյան» հրատարակության համեմատ երևում է ստորև տրվող սյունակներում.

Բարսեղի հիշատակարան «Զոհրապյան» հրատ.

Մատթ., Ժ. 42

«Որ արբուցէ բաժակաւ ջուր ցուրտ յանուն աշակերտի, ոչ կորուցէ զվարձս իր»:

«Եւ որ արբուցէ միում ի փոքրկանցս յայցսանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուցէ զվարձս իր»:

Ահա հիշատակարանային ևս մեկ քաղվածք.

³⁵⁴ Հ. Պ. Էսապալյան, *Հայերէն Աւետարաններու սկզբնագրի հարցը և Ազատութեան Գրչի Պատմութիւնը*, «ՀԱ», 1935 (10-12), էջ 595-596:

«Վասն այսր եւ Տէրն ի գանազան կերպարանս դարձուցանէ զվարդապետութիւնն, երբեմն պատմէ եւ դնէ առաջի լսաւոյսն զանճառ փառաց մեծութիւն եւ զհանգիստ, զոր տալոց իցէ արքոցն. որպէս ասէ. *Բազմեցուցից զձեզ եւ անցեալ պաշտեցից եւ ուտիցէք եւ ընպիցէք ի սեղան արքայութեան իմոյ* (Բմմտ. Ղուկ., ԻԲ. 30) եւ որ սոցին նման» [Հիշ. ԺԴ, Ա, 193-194]:

Հիշատակարանը գրել է ակներցի գրիչ Գրիգորը 1311 թ.: Ընդգծված հատվածը կրկին տարբեր է նույն հատվածի «Զոհրայան» տարբերակի համեմատ.

Գրիգորի հիշատակարան «Զոհրայան» հրատ.

<p>Ղուկ., ԻԲ. 30</p>	<p>«Բազմեցուցից զձեզ եւ անցեալ պաշտեցից, եւ ուտիցէք եւ ընպիցէք ի սեղան արքայութեան իմոյ»:</p>	<p>«Զի ուտիցէք եւ ընպիցէք ի սեղան իմ յարքայութեանն իմում»:</p>
-----------------------------	---	--

Օրինակները շատ են, սակայն այսքանն էլ բավական է հիշատակագիրների մտածողության վրա Սուրբ Գրքի ազդեցութիւնը երևան հանելու համար: Եվ բնավ կարևոր չէ՝ ընդօրինակված մատյանը Աստվածաշունչ է, Ավետարան, Սաղմոսարան, Թե Տաղարան, Կանոնագիրք կամ Ոսկեփորիկ, հիշատակագիրների խոսքն անկախ է այդ տեսանկյունից, իսկ սուրբգրային մեջբերումներն արդյունք են միմիայն նրանց մտադրութեան: Հատկանշելի է, որ Սուրբ Գրքի ազդեցութիւնն արտահայտվում է ոչ միայն նրանից արված ուղղակի մեջբերումներով, այլև սուրբգրային տարբեր արտահայտութիւններով, բառերով ու ոճերով: Շատ հաճախ հիշատակագիրները նշում են աստվածաշնչյան որևէ գրվագ կամ պատմութիւն, անում համեմատութիւններ և այլն: Մաղաքիա գրիչը մտաբերում է Տնտեսի հայտնի առակը և այսպէս գրում.

«ՏՃտեսիսն զառակն յիշեցի,
Խորհեալ սկսա ես ի մտի,
Գիտեմ զիմչ պարտ է ինձ պատշաճի,
Չայն ես առնեմ, որ շահ ինձ լինի» [Հիշ. ԺԵ, Գ, 203-204]:

Արյունարբու մոնղոլներին բնորոշելիս 1236 թ. ձեռագրի ստացող Բռնավորը նրանց համարում է սատանայի զավակներ, որոնք Աստծուն չեն ճանաչել և վախ չունեն Ահեղ դատաստանից³⁵⁵: Ստացողը հոետորական հարց է հնչեցնում և ինքն էլ պատասխանում. «Ո՞վ են նոցա (իմա՛ մոնղոլների – Խ. Հ.) զաւրախիզն՝ դեւք եւ սատանէք» [Հիշ. ԺԳ, 194]: Մյուս կողմից մոնղոլական ավերածությունները հիշատակագիրները շատ հաճախ անվանում են «աստուածասատ բարկություն», որ հարուցել են քրիստոնյաներն իրենց մեղքերով:

Այսպիսով՝ ինչպես միջնադարյան հայ կյանքի տարբեր ծալքերում, հիշատակարաններում ևս անթաքույց է Սուրբ Գրքի ազդեցությունը, որն արտահայտվում է հիշատակագիրների մտածողության և նրանց շարադրանքների մեջ: Այս հանգամանքն ընդգծվում է սուրբգրային հատվածների վկայակոչումներով, որոնք խիստ հաճախադեպ են քննվող գրավոր աղբյուրներում: Ուշագրավ է, որ որոշ մեջբերումներ նկատելի տարբերություններ ունեն պաշտոնական Սուրբ Գրքի համապատասխան հատվածների համեմատ, որոնք միշտ չէ, որ կարելի է գրչական վրիպակով կամ հիշողությամբ գրված լինելով բացատրել: Հավանաբար այդպիսի դեպքերում առանձին հիշատակագիրներ իրենց տրամադրության տակ են ունեցել Սուրբ Գրքի այլ օրինակներ:

³⁵⁵ Տե՛ս Չ. Պոդոյանի դիտարկումն այս առիթով, **Z. Pogossian, Armenians, Mongols and the End of Times: An Overview of 13th Century Sources**, “Caucasus during the Mongol Period-Der Kaukasus in der Mongolenzeit”, ed. by **J. Tubach, S. G. Vashalomidze** and **M. Zimmer**, Reichert Verlag Wiesbaden 2012, p. 181.

10. ՈՎՔԵՐ ԵՎ ԻՆՆՆ ԵՊԱՏԱԿՈՎ ԵՆ ՍՈՎՈՐԱԲԱՐ ԵՇՎԵԼ ՏՐՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

«Ձնչեա՛ գձեռագիր յսնցանաց նոցա,
եւ գրեա՛ զանուն նոցա ի գիր կենացն անվախնանից»
Սարգիս գրիչ, ԺԳ. դար [Հիշ. ԺԳ, 906]

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններին ծանոթ յուրաքանչյուր ոք կարող է հաստատել, որ գրավոր այս հուշարձանները հարուստ են նաև հիշատակվող անձնանուններով. առանձին հիշատակարաններում կարելի է գտնել չորս տասնյակից ավելի անձանց անուններ, որոնք այս կամ այն կերպ ծանոթ են եղել հիշատակագիրներին, օգնել են նրանց, նպաստել գրչությանը կամ պարզապես հիշված են գրչությունից հետո ստացող-գեորդների կողմից: Քիչ չեն նաև այն հիշատակարանները, որոնցում նշվում է ընդամենը մի քանի անուն: Արդ, օրինակներով դիտարկենք ասվածը:

Գրչի թվագրումով հնագույն մատյանի՝ Լազարյան Ավետարանի 887 թ. հիշատակարանում 5 անուն է նշված՝ Գևորգ Բ. Գառնեցի կաթողիկոսը (877-897 թթ.), իշխանաց իշխան Աշոտը (Աշոտ Ա. Բագրատունի, թագավորեց 885-890 թթ.), Սմբատ Բագրատունին (որդի Աշոտ Ա.-ի, թագավորեց 890-914 թթ.), Սահակ Վանանդացի գրիչը և նրա հայրը՝ Վարդ Վանանդացին [Հիշ. Ե-ԺԲ, 40]:

1269 թ. Հոռոմում ընդօրինակված Աստվածաշնչի հիշատակարանում Մարգարե գրիչը նշել է 38 հոգու [Հիշ. ԺԳ, 368-372], որոնք միևնույն ժամանակ տեղական հայ համայնքի գոյության վկաներն են: Ոմանք նշվում են նաև իրենց մասնագիտությամբ կամ ծննդավայրով, ինչպես՝ Վարդան փոռնավարը, Սիրուն կոչկակարը (կօչկարը) կամ Ստեփաննոս իլաթեցին, Գրիգոր Կիլիկեցին (Կիլիկեցի): Մարգարեի հիշատակած անձանց նշյալ թիվը ուսումնասիրողներին հնարավորություն է տվել անգամ վերա-

կազմելու ժամանակին Հռոմի հայկական համայնքի անդամների մոտավոր թվաքանակը³⁵⁶:

1464 թ. Ստեփանոս գրիչն իր չափածո հիշատակարանում խնդրում է հիշել Ավագ վանքի իր հոգևոր եղբայրներին՝ ընդհանուր թվով 31 հոգու [Հիշ. ԺԵ, Բ, 206-211], որն իր հերթին որոշ չափով լրացնում է տվյալ ժամանակաշրջանում վանական կյանքի մասին մեր ունեցած գիտելիքները:

Անունների առատությամբ աչքի է ընկնում 1459 թ. Շատվան գյուղում (Ռչտունյաց գավառ, Վասպուրական) ընդօրինակված Ավետարանի հիշատակարանը, որում գրիչը նշել է իր և ստացողի հարազատներին՝ կենդանի և հանգուցյալ, ընդհանուր թվով՝ 44 հոգու [Հիշ. ԺԵ, Բ, 124-125], որն էլ իր հերթին մեզ ուղղակի պատկերացում է տալիս նշյալ շրջանում ընտանիքի անդամների մոտավոր թվաքանակի վերաբերյալ³⁵⁷:

³⁵⁶ **A. Sirinian**, *La presenza degli Armeni nella Roma medievale: prime testimonianze manoscritte ed epigrafiche (con un'iscrizione inedita del XVI secolo)*, "Atti della Pontificia Accademia Romana di Archeologia" (serie III), Rendiconti, vol. LXXXVI, anno accademico 2013-2014, Vaticano, 2014, p. 10 (nota 18). Նկատի ունենալով անվանապես հիշված մոտ չորս տասնյակ անձանց, ինչպես նաև նրանց մի մասի կանանց՝ հեղինակը հանգել է այն եզրակացությանը, որ «Հայոց հանգստարանը» տվյալ ժամանակ բաղկացած է եղել առնվազն 50 հոգուց: Տե՛ս նաև **Ա. Ծիրինեան**, *Հռոմում 1269 թ. գրուած հայերէն ձեռագիրը և նրա յիշատակարանը*, «Լևոն Խաչիկյան, հարյուրամյակ», էջ 70:

³⁵⁷ Այս տեսանկյունից հետաքրքիր են վերջին շրջանում կատարվող ուսումնասիրությունները, որոնք միտված են գրավոր հուշարձանների օգնությամբ բացահայտելու միջնադարում հայ ընտանիքի միջին թվաքանակը: Գ. Երանյանը, այս տեսանկյունից քննելով ԺԵ. դարի հիշատակարանները, եկել է այն եզրահանգման, որ նշյալ շրջանում հայ ընտանիքը բաղկացած է եղել 6-8 հոգուց՝ ծնողներ և 4-6 երեխա, տե՛ս **Գ. Հ. Երանյան**, *Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակը ըստ XV դ. ձեռագրերի հիշատակարանների*, Երևան, Պատմության ինստիտուտ, 2015, էջ 45: Ուշագրավ է, որ այս տվյալները գրեթե համընկնում են ԺԷ. դարին առնչվող համանման մեկ այլ հաշվարկի հետ. ընտրված 650 հիշատակարանների տվյալների համաձայն՝ նշյալ շրջանում հայոց ընտանիքը միջինում բաղկացած է եղել 7 անձից: Տե՛ս **Մ. Մալխասյան**, *Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում XVII դարի առաջին կեսին*, «Հայագիտության հարցեր», 2016 (1), էջ 97-98:

Մեր հաշվումների համաձայն՝ հայերեն ձեռագրերի հիշատակարաններում անունների գրանցման հաճախականությունը դարերի ընթացքում միայն աճել է: Ասվածը փորձենք ներկայացնել թվերով՝ հիմք ընդունելով հիշատակարանների հրատարակված հատորների անվանացանկերը: Այսպես, 357 միավոր պարունակող Ե-ԺԲ. դարերի հիշատակարանների ժողովածուի անվանացանկում արձանագրված է 932 անձ. ըստ այսմ՝ յուրաքանչյուր հիշատակարանին բաժին է ընկնում մինչև 3 անձնանուն ($\approx 2,7$)³⁵⁸: ԺԳ. դարի հատորը պարունակում է 832 հիշատակարանային միավոր, որոնցում հիշված անձանց ընդհանուր թիվը 2698 է, ուստի՝ մեկ հիշատակարանը պարունակում է 3-ից ավելի անձնանուն ($\approx 3,3$): Նույն ձևով ԺԴ. դարի խաչեկյանական հատորը պարունակում է 845 հիշատակարանային միավոր, որոնցում վկայված անունների թիվը 4859 է. մեկ հիշատակարանին բաժին է ընկնում մինչև 6 անուն ($\approx 5,7$): ԺԵ. դարի հիշատակարանների երեք հատորները միասին պարունակում են 2133 միավոր հիշատակարան, որոնցում արձանագրված անունները 17106-ն են: Այս դարի յուրաքանչյուր հիշատակարանին բաժին է ընկնում 8-ից ավելի անուն ($\approx 8,1$): ԺԶ. դարի հիշատակարանների եռահատորյակում վկայված անունների թիվը գերազանցում է նախորդներին, ուստի՝ վստահորեն կարելի է ասել, որ այստեղ էլ առկա է հիշատակված անձնանունների թվաքանակի աճ: Նկատենք նաև, որ այս թվերը վերջնական լինել չեն կարող՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կան բազում անտիպ կամ հրատարակված հատորներից դուրս մնացած հիշատակարաններ. ակնհայտ է, որ դրանց ավելանալուն զուգահեռ՝ կավելանան նաև անձնանունները³⁵⁹:

³⁵⁸ Ե-ԺԲ. դարերի ժողովածուում մեկ հիշատակարանի սահմանում արձանագրված անձնանունների առավելագույն քանակը 12 է [Հիշ. Ե-ԺԲ, 181]:

³⁵⁹ Բավական է կրկին հիշել ԺԴ. դ. հիշատակարաններն ընդգրկող նախորդ 1 հատորը և նրա փոխարեն նախատեսվող 4 նոր հատորները, որոնցից առաջինն արդեն լույս է տեսել, շուտով կհրատարակվի նաև երկրորդ հատորը:

Հարկ ենք համարում հատուկ կերպով ընդգծել, որ անձնանունների արձանագրման այսպիսի հաճախականությունը բացառիկ է ձեռագրական մյուս ավանդույթների համեմատ, որոնցից և ոչ մեկը չի պարունակում հիշատակված անձնանունների նման քանակ: Եվ սա, անկասկած, հայկական հիշատակարանների կարևոր առանձնահատկություններից է:

Հիշատակված անձնանունների քանակից զատ՝ մեծարժեք են և այն հիշատակարանները, որոնցում անվանակիրները նշված են իրենց մասնագիտություններով, հասարակական դիրքով և գործունեություններով, որոնք լայն հնարավորություններ են ընձեռում միջնադարյան կենցաղի վերաբերյալ մեր գիտելիքների հարստացման գործում:

Ստորև ներկայացվող աղյուսակում փորձել ենք ի մի հավաքել և խմբավորել հնարավոր բոլոր այն անձանց, որոնք սովորաբար նշվում են հայերեն ձեռագրերի հիշատակարաններում՝ առանց ժամանակային սահմանափակման³⁶⁰: Ըստ որում՝ պետք է արձանագրել, որ անձանց հիշատակումը, անկախ նրանց զբաղեցրած դիրքից, չունի կայուն հերթականություն. հիշատակագիրներն ազատ են այս հարցում³⁶¹:

³⁶⁰ Առանձին հիշատակարաններում կարող են նշվել կոստողները, կազմի համար կոճակներ հայթայթողները, ավել անողները, մաքրողները, ինչպես նաև մարդիկ, որոնց գրիչը պարզապես ճանաչել է և պատեհ առիթով հարկ համարել հիշել նրանց: Այդպիսի անձանց, որոնք անմիջական առնչություն չունեն ձեռագրի, ստացողի կամ որևէ հիշատակագրի հետ, զետեղում ենք 5-րդ խմբում: Աղյուսակում նշվող որոշ միավորներ կարող են խտացվել նաև մեկ անձի մեջ, այսինքն՝ գրիչը միևնույն ժամանակ կարող է լինել թանաք պատրաստող, ծաղկող, կազմող և այլն (1.1. = 1.2., 1.3., 1.8.): Աղյուսակում, բնականաբար, այդ գործի մասնակիցները ներկայացված են առանձին միավորներով:

³⁶¹ Կիլիկյան միջավայրում գրված ձեռագրերի հիշատակարաններում մեր կազմած աղյուսակի 2-րդ խմբում հաճախադեպ է հիշատակման *կաթողիկոս-թագավոր* (2.2.-2.1.) հերթականությունը, որը սովորաբար ունի՝ «ի հայրապետություն տեսան (անունը) հայոց կաթողիկոսի և ի թագապորթան (անունը)» կաղապարը: Կիլիկիայի տարբեր վայրերում և ժամանակահատվածներում ընդօրինակված 20 ձեռագրերի հիշատակարանից (Հիշ. ԺԳ.^Հ 8, 17, 52, 53, 61, 62, 63, 64, 67, 70, 218, 264, 266, 267, 275, 276, 277, 288, 295, 304) միայն վեցում (Հիշ. ԺԳ.^Հ 53, 61, 218, 264, 295, 304) է առկա *թագավոր-կաթողիկոս* (2.1.-2.2.) հերթականությունը:

ԱՂՅՈՒՍԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՆԾՎԱԾ ԱՆՁԱՆՑ

1. Ձեռագրաստեղծմանը կամ ձեռագրի վաճառքին / գնմանը մասնակցող կամ նպաստող անձինք

1.1. գրիչ

1.2. ծաղկող

1.3. կազմող

1.4. ուղղող կամ սրբագրող

1.5. օրինակ շնորհող

1.6. թուղթ շնորհող

1.7. թուղթ կոկող

1.8. թանաք պատրաստող

1.9. այլ օգնողներ (գրոց աշակերտներ, երբեմն հաց կամ ջուր բերողներ, հիվանդության պահին խնամողներ, գրչության գործը քաջալերողներ, գումարով կամ գրչանյութով աջակցողներ)

1.10. ստացող կամ գնորդ (այլև՝ մեկեմաս կամ միիրատու, գնմանը կամ փրկագնմանը մասնակցած անձ)

1.11. միջնորդ

1.12. նորոգող

3. Հիշատակագրի (գրչի, ստացողի կամ հետագայում մեկ ուրիշի) արյունակցական ընտանիքի անդամներ

3.1. պապ (հազվադեպ գրաբ. հաւ ձևով³⁶²)

3.2. տատ

3.3. հայր

3.4. մայր (հազվադեպ՝ խորթ մայր, ստնտու, սնուցող մայր³⁶³)

3.5. կողակից (նաև կեմակից և ամուսին ձևերով)

3.6. զավակներ (որդի / դուստր)

3.7. եղբայր (և նրա ընտանիքի անդամներ)

3.8. քույր (և նրա ընտանիքի անդամներ)

3.9. հորեղբայր (և նրա ընտանիքի անդամներ)

3.10. հորաքույր (և նրա ընտանիքի անդամներ)

3.11. մորեղբայր (ԺԳ. դարից

³⁶² «ի յիշատակ... հաւուն իւրոյ Թաղէոս քահանայի» [Հիշ. ԺԳ, 565]:

³⁶³ «Յիշելո արժանի՛ առէք... զմիւս սնուցանող մայր սորա՛ զՏիրանցն, որ աշխատեցաւ ի վերա սորա մինչեւ ի հասակ մեծութեան» [Հիշ. ԺԳ, 536]:

2. Աշխարհիկ և հոգևոր առաջ-
նորդներ

2.1. թագավոր / իշխան (տեղա-
կան առաջնորդ, վերակացու, այդ
թվում՝ օտարագզի)

2.2. կաթողիկոս

2.3. թեմակալ առաջնորդ

2.4. առաջնորդ ուխտի / անա-
պատի

սկսյալ՝ հաճախ քեռի ձևով³⁶⁴, և
նրա ընտանիքի անդամներ)

3.12. մորաքույր (և նրա ընտա-
նիքի անդամներ)

3.13. թոռ

4. Միաբանության կամ հոգևոր
ընտանիքի անդամներ

4.1. ուսուցիչ կամ րաբունա-
պետ

4.2. հոգևոր հայր

4.3. հոգևոր մայր

4.4. հոգևոր եղբայր

4.5. հոգևոր քույր

4.6. եկեղեցական տարբեր
գործիչներ (փակակալ, ժամա-
հար, լուսարար և այլք)

5. Այլ անձինք (միայն անվա-
նապես հիշատակվողներ)

Ձեռագիր պատվիրելը, նրա ստեղծմանը նպաստելը և այդպի-
սով՝ ձեռագրի հիշատակարանում անունն ամրագրելը հավատա-
ցյալ քրիստոնյայի համար կենաց գրուժ բարի գործերով հիշվե-
լու հուսատու գրավական էր: «Եւ արդ զինչ է պտուղն բարոյն,
եթէ ոչ խաչն եւ եկեղեցին եւ գիրքն, որով յորդորին աստուա-
ծասէր եւ բանաւոր մարդիկ, գործել եւ սիրել զբարիս, վասն
յիշատակի եւ փոխարինի հանդերձելոցն բարեաց», – գրուժ է
Ստեփանոս վանահայրը 1273 թ. [Հիշ. ԺԳ, 430]: Քրիստոնեական
ընկալմամբ՝ Քրիստոսի երկրորդ գալստին հաջորդելիք դատաս-
տանի ժամին մարդկանց գործերն են միայն վկայելու նրանց
մասին և ոչ սին խոսքերը: Հիշատակագիրների տողերը հաստա-
տում են այդ մտայնությունը. «Ողորմեսցի գթածն Աստուած
յաւրն կարեաց, ուր սնոտի բանքն սպառին եւ բարի գործքն
թագաւորեն» [Հիշ. ԺԳ, 612], «Մեղաց թողութիւն հայցեցէ՛ք...,
որ եւ զձերն թողու Քրիստոս ի հանդերձեալ գալստեանն իւրոյ,

³⁶⁴ «Յիշեցէ՛ք... գրեռին իմ՝ գրիգոր» [Հիշ. ԺԳ, 558]:

յորուժ աւուր գայ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, յորուժ աւուր բանք սպառին ամենեցուն եւ գործք թագաւորեն» [Հիշ. ԺԳ, 211])³⁶⁵:

1279 թ. գրչագրված մատյանի հիշատակարանում չափածո հորինվածքով գրիչ Ներսեսը թղթին է հանձնել Ահեղ դատաստանի մասին իր պատկերացումը.

«Աւուր վերջնունըն զարութեամբ
Ունի աթոռ իւր հրամանաւ դատողական,
Ի նմայ բազմի Քրիստոս ահեղ լուսոյ նման,
Փողն գոչեա առհասարակ գաբրիելեան,
Յառնեն մեռեալք փութանակի ի դատաստան,
Ի յայնմ ահեղ հրապարակին ընկեալ եւ մեզ յաջայկողմեան,
Խառնեալ ի դասս արդարութեան...» [Հիշ. ԺԳ, 491]:

Հիշատակագիրներին և առհասարակ միջնադարյան քրիստոնյայի այս ընկալումն ուղղակիորեն ազերսվում է Հովհաննես ավետարանչի Հայտնության այն հատվածին, որում նկարագրվում է, թե ինչպես են Աստծու աթոռի առջև սպասում մեռյալների հոգիները, և բոլոր նրանք, ում անունները նշված չեն կենաց մատյանում, հրե լիճն են նետվում. «...մեռեալս որք կային առաջի աթոռոյն Աստուծոյ. եւ գիր բանային իւրաքանչիւր գործոց: Եւ այլ գիրք բանային, որոց անուանք անցա գրեալ են ի դպրութիւն կենաց. եւ դատաստան եղեւ մեռելոցն ի գիրս ըստ իւրաքանչիւր գործոց իւրոց... եւ որ ոչ գտցի ի գիրս կենաց գրեալ անկցի ի լիճ հրոյն» [Հովհ. Հայտ., Ի. 12-15]:

Ահա թե ինչու աստվածավախ քրիստոնյայի համար այդքան բազմալի էր բարի գործերով, մինչև անգամ մի բաժակ ջուր բերելով, ավել անելով կամ թուղթ կոկելով կենաց մատյանում

³⁶⁵ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններում աստվածային ողորմությանն ու մեղքերի թողութայնն արժանանալու, կենաց գրում հիշատակվելու բանանկային մի շարք կաղապարներ տե՛ս նաև հետևյալ հոդվածում՝ **A. Sirinian, Libri per il paradiso: aspetti di mentalità nei colofoni armeni del XIII, "Orientalia Christiana Periodica", 2017 (2), pp. 277-292.**

անվանապես հիշատակվելը: Սեփական անվան ջնջումն այդ մատյանից սարսափեցնող միտք էր նրա համար և ինչ-որ առումով սպառնալիք՝ արդար դատաստանի չարժանանալու տեսանկյունից: Եվ միանգամայն ընկալելի են այն անեծքներն ու օրհնանքները, որոնք հասցեագրվում էին մատյանը կամ հիշատակարանը խնամողին և փչացնողին: Մխիթար քահանան, օրինակ, 1281 թ. թուղթ է կոկել այն հույսով, որ գրիչն իր անունն էլ կնշի հիշատակարանում. «ՅիշեսՆի՛ք եւ ի յաւարտ յիշատակիս զՄխիթար քահանայ, որ զթուղթս կոկեաց այսու յուսով, զի յիշատակեսցի անուն իւր ի զգիրս յայս» [Հիշ. ԺԳ, 519]³⁶⁶: Սարկավագ գրիչը սարսափում է դատաստանից, որի համար ապագա ընթերցողներին խնդրում է աղոթքներում իրեն ևս հիշել. «Յոյժ երկնչիմ ի դատաստանէն, զի աղաւթիւք ձերովք լինի ինձ ողորմութիւն եւ ձեզ. ամէն» [Հիշ. ԺԴ, Ա, 327]: Կարապետ գրիչն էլ իրեն մեղավոր է անվանում և կարծում, որ հրե լճում է տանջվելու.

«Որ մեղաւորս եմ, որպէս եւ է,
 Զիս նոյնգումակ հրով տանջէ» [Հիշ. ԺԴ, Ա, 321]:

Մատյանը կարող էր ստանձնել այն միջնորդի դերը, դառնալ բարի գործի այն երաշխիքը, որը հոգու փրկության հույս էր ներշնչում նրա պատվիրատուին կամ նրանում հիշատակվողին: Պատահական չեն հայերեն ձեռագրերում հաճախ հանդիպող այն մանրանկարները, որոնցում մատյանը ձեռքներին պատկերված են ստացողները, իսկ Ահեղ դատաստանը պատկերող մանրանկարներում հաճախադեպ են ծնկած կամ փոքր չափերով

³⁶⁶ Ոմանք հիշատակվել են անգամ կրկնանուններով ու մականուններով, ինչպես նշում է Հ. Պետրոսյանը, որպեսզի նույն անունների դեպքում շփոթ չառաջանա: Տե՛ս Հ. Պետրոսյան, *Խաչքարը և հիշատակի միջնադարյան ընկալումը*, «Հայոց պատմության հարցեր» (Գիտական նյութերի ժողովածու), 6, Երևան, Պատմության ինստիտուտ, 2005, էջ 208, նույնի՝ *The Book of Life in the Armenian Culture: the Ideology and the Iconography*, “Civilization Researches”, 13 (2015), p. 22.

նկարված և աստվածային ողորմությունն ու մեղքերի թողությունն հայցող տարբեր անձինք (գրիչ, ծաղկող, ստացող և նրանց ընտանիքների անդամներ, Հմմտ. նկ. 13-16): Այս դիտանկյունից ուշագրավ են երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի մատենադարանի ԺԲ. դ. թվագրվող Ավետարանի (Հ^{մր} 1796) 288բ երեսի մանրանկարը և առաջին հերթին՝ նրանում առկա մակագրությունները, որոնց վրա ժամանակին ուշադրություն է հրավիրել անվանի արվեստաբան Ս. Տեր-Ներսեսյանը³⁶⁷: Մանրանկարում պատկերված են գահին բազմած Քրիստոսը, որը ձախ ձեռքով բռնել է բացված Ավետարանը, իսկ աջով օրհնում է իր աջ կողմում կանգնած Մատթեոս կրոնավորին, որը Ավետարանի միաժամանակ գրիչն ու ստացողն է³⁶⁸: Մանրանկարում վերջինս դեպի Քրիստոսն է ուղղել իր ընդօրինակած Ավետարանը: Իսկ ահա Քրիստոսի ձեռքին բաց վիճակով պատկերված Ավետարանի հանդիպադիր էջերին կարմրով գրված է հիշատակագիրների համար բաղձալի խոսքը. «Ե՛րթ, վաճառեա՛ գոր ինչ ունիս եւ ա՛ն գԱւետարան քո եւ ե՛կ գկնի իմ եւ կեցցես» (Հմմտ. Մատթ., ԺԹ. 21. «Ե՛րթ վաճառեա գիմչս քո եւ տոր աղքատաց, եւ ունիցիս գանձս ի յերկիմս, եւ եկ գկնի իմ»): Հոգու փրկությունն հնարավոր է ակնկալել մեղքերի թողությունից հետո միայն, որն Աստուծո շնորհն է. ահա թե ինչու ստացողին օրհնող Քրիստոսի աջ ձեռքի վերևում կարելի է կարդալ հետևյալ խոսքը. «Ես եմ որ ջնջեմ գանաւրեմութիւնս քո եւ զմեղս քո ոչ եւս յիշեցից» (Հմմտ. Ես., ԽԳ. 25):

Այս ընկալումը, անկասկած, համաքրիստոնեական է. այդ է նաև պատճառը, որ հատկապես արևելաքրիստոնեական ձեռագրերի հիշատակարաններում նմանատիպ տողերը եթե ոչ բառացի, ապա իմաստային դիտանկյունից նկատելի առնչություններ են երևան հանում: ԺԱ. դարով թվագրվող վրացերեն մի հիշատակարանում ևս գրիչը թախանձում է հետագա ընդօրինակու-

³⁶⁷ S. Der Nersessian, *L'art Arménien*, Arts et Métiers Graphiques, Paris, 1977, p. 126, fig. 90, p. 129:

³⁶⁸ *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Զսլոթեսուց*, հ. 2., էջ 146-150:

Թյունների ժամանակ չջնջել իր անունը³⁶⁹, գրեթե նույնը տեսնում ենք ասորական գրչագրերի պարագայում³⁷⁰: Ձեռագրական այլ ավանդույթներում էլ հետագա սերունդերի հիշատակմանն արժանանալու ցանկությունն արտահայտված է գրիչների հիշատակարաններում: Ժ. դարի հրեա մի գրիչ այսպես է արձանագրել. «Գրեցի չորս գիրք, որոնք իմ հիշատակն ավելի վառ կպահեն, քան դա կանեին իմ որդիները»³⁷¹: Իսլամական արաբական ձեռագրերում միշտ չէ, որ գրիչները հոգացել են իրենց անունները թողնել, առավել ևս սակավ են ինքնախարագանող բառերի և արտահայտությունների շարքերը, որոնք, օրինակ, հաճախադեպ են հայկականում: Այնուամենայնիվ, ձեռագրական այս ավանդույթում էլ նկատելի են հիշատակվելու նպատակով անունների գրանցումներ, ընդհուպ մեղքերի թողության խնդրանքներ³⁷², որով վերջինները մերձենում են հայ հիշատակագիրների թողած մեզ քաջածանոթ հոգեփրկչական բովանդակությամբ տողերին:

Ամփոփելով նշենք, որ աստվածային ողորմությանն արժանանալու ցանկությունը դրսևորվում է միջնադարյան հայ կյանքի բոլոր ծալքերում, որոնց լուռ վկաներն են ամենատարբեր արձանագրություններն ու ձեռագրական հիշատակարանները: Կենաց գրքում հիշատակվելու և հոգեփրկչական ակնկալիքով պայմանավորված՝ նշյալ աղբյուրները հարուստ են բազմաթիվ անձնանունների հիշատակումներով, որոնք ներկա պայմաններում նոր հնարավորություններ են ընձեռում նախնյաց կենցաղավարությանն ու հատկանվանագիտությանը վերաբերող տարբեր հարցերի պարզաբանման համար:

³⁶⁹ G. Shurgaia, *Colophon e archeologia del codice*, p. 118.

³⁷⁰ S. P. Brock, *The Art of the Scribe*, pp. 259-260.

³⁷¹ M. Perani, *I colofoni dei manoscritti ebraici: tipologia, formule e caratteri specifici*, p. 360.

³⁷² A. D'Ottone, *Il colofone nei manoscritti arabo-islamici, alcune note*, p. 308. Արժեքավոր են հողվածի վերջում բերված ԺԲ-ԺԳ. դդ. հիշատակարանների նմուշները՝ իտալերեն թարգմանություններով, որոնք նաև որոշ պատկերացում են տալիս իսլամական արաբական հիշատակարանների ընդհանուր կադասյարների մասին:

11. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ.

ԳՐԻՉԸ՝ ՈՐՊԵՍ ՀԵՂԻՆԱԿ

*«Ձի որպէս անհնար է յօշնոց ի լուծ լծել եւ սկսաւ պատասել...
նոյնպէս առանց աշխատելոյ ի ամս ոչ որ
կարէ հասու լինել արուեստին մեծի գրչույթեան»
Ստեփանոս գրիչ, 1357 թ. [ՀՊՀ. ԺԳ, 426]*

Հիշատակագիրներից շատերը պատմական անցքերին, դեմքերին կամ ժողովրդական կենցաղին վերաբերող հատվածների նկարագրություններում աչքի են ընկնում իրենց գեղարվեստական մտածողությամբ և ստեղծագործական ինքնատիպ ունակություններով: Իրենց խոսքն առավել ազդեցիկ և տպավորիչ դարձնելու նպատակով նրանք հաճախ են դիմում լեզվի պատկերավորման տարբեր միջոցների (փոխաբերությունների, համեմատությունների, մակդիրների, այլաբանությունների, շրջաստությունների, չափազանցությունների և այլն), արձակից հաճախ անցում են կատարում չափածոյի, կիրառում լեզվաոճական և բանաստեղծական տարբեր հնարքներ և այլն: Այս ամենի շնորհիվ բազմաթիվ հիշատակարաններ, դուրս գալով հիշատակարանագրության դասական կաղապարներից, վերածվում են գրական ստեղծագործությունների, իսկ դրանց գրիչ-հեղինակները հանդես են գալիս նաև որպես ստեղծագործ անհատներ:

Այս ամենը քննվող գրավոր հուշարձաններին հաղորդում է գրական-գեղարվեստական որոշակի արժեք, որն աննկատ չի մնացել նաև հետազոտողների ուշադրությունից³⁷³: Առանձին

³⁷³ Այս դիտանկյունից արժեքավոր է Հ. Բախչինյանի առանձին ուսումնասիրությունը, որում բանասերը քննության է առել հայերեն ձեռագիր հիշատակարանների գրական-գեղարվեստական առանձնահատկությունները, ոճական արտահայտչամիջոցները և այլն: Տե՛ս Հ. Բախչինյան, *Հայկական ձեռագրերի հիշատակարանները*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:

օրինակների վկայակոչումներով փորձենք վերհանել հիշատակարանների գեղարվեստական հիմնական դրսևորումները և գրիչների կիրառած միջոցները:

Լենկ Թեմուրի սարսուզգու արշավանքների կործանարար հետևանքներն առավել պատկերավոր և ազդեցիկ դարձնելու նպատակով 1389 թ. Կարապետ գրիչն իր հիշատակարանում դիմում է ոճական հետաքրքիր հնարքների: Գրիչն իր խոսքը սկսում է գեղարվեստական (էպիկական) ստեղծագործություններին բնորոշ ընթերցողներին ուղղված կոչով. «Արդ, ս'վ եղբարք եւ հաւատացեալք Քրիստոսի, լուսարո՛ւք զպատուհաս բարկութեանս, որ եկն եհաս ի վերայ մեր» (Հմմտ. «Հէյ պարոններ, ախանջ արեք...», Հ. Թումանյան, «Թմկաբերդի առումը»): Շարունակելով խոսքը և դեպքերին հաղորդելով նաև ժամանակի ընկալումներին բնորոշ կրոնական շղարշ՝ Կարապետ գրիչը լենկթեմուրյան գործողությունները որակում է որպես աստվածային պատիժ՝ «վասն մեղաց մերոց... երթալով երթայր ընդ խոտորնակին ուժգին խոտորնակ»: Այս տողերին հաջորդում են և բուն պատուհասի նկարագրությունները. «Ոմանք երկրակարկափ պատառմամբ յանդունդս տապալեցան, ոմանք այսպէս եւ ոմանք այնպէս սաստկակսկիժ գանիւ տանջեցան»: Կարապետը պատկերն ավելի ազդեցիկ դարձնելու և սպանվածների քանակն ընդգծելու համար դիմում է լեզվի պատկերավորման միջոցներից չափազանցությունը (հիպերբոլա)՝ դրան միախառնելով նաև ընդգծված սարկազմը.

«Յագեցան գագանք, ձանձրացան թոչունք, տարակուսեցան գայլք, թէ գում ուտէիմ միս՝ զհայրապետս՞ց, թէ՞ զքահանայից, թէ՞ զսարկաւագաց, թէ՞ զպաշտումնէից, զճգնաւորս՞ց, թէ՞ լեռնականաց» [Հիշ. ԺԳ, 577-579]:

Մոնղոլների արտաքինի ուրույն նկարագրությունամբ աչքի է ընկնում 1236 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանը, որի հաղորդած տեղեկություններն ունեն նաև աղբյուրագիտա-

կան մեծ արժեք³⁷⁴: Կարգում ենք հիշատակարանում. «Յարեալ ազգ մի գազանաբարոյ եւ անողորմ եւ եհեղ բազում արիւն, եւ կերպարանն այսպէս՝ լայնաթիկունք եւ հաստաբազուկ, եւ գլուխն մեծ, եւ հեր գլխոյն ուղղորդ եւ ձարբ (իմա՛ կոշտ³⁷⁵), եւ աչն նեղ, եւ ճակատն լայն, եւ մորուքն քոսակ, բարքն մարդոյ, եւ քան զգազանս անողորմք ի վերայ մարդոյ»: Հիշատակագիրը մոնղոլների դաժանութիւնը գազանների դաժանութեան հետ համեմատելուց հետո դարձյալ դիմում է չափազանցութեանը՝ ցանկանալով ավելի ընդգծել նրանց վայրագութիւնները.

«Եւ այնչափ անողորմ էր, որ թէ հրեղէն լեզու ստանամ, ոչ կարեմ պատմել զանցս չարչարանաց» [Հիշ. ԺԳ, 196]:

Հարկ է նշել, որ պատկերավոր մտածողութեան այս ձևը, որը, անկասկած, լայնորեն տարածված է նաև բանավոր խոսքում, տարբեր ձևերով իր գրավոր արտահայտութիւնն է գտնում բազմաթիւ հիշատակարաններում ևս: Մասնավորապես դժնի տեսարանները չպատկերելու, բայց և դրանց մասին ակնարկելու համար գրիչները հաճախ են դիմում չափազանցութեանը, նշում են, որ բառերը չեն բավականացնի, և իրենք էլ անկարող են ամենը պատմել. «Եւ ո՞ք կարէ պատմել զաղետս տարակուսանաց»,— գրում է Դաւիթ գրիչը [Հիշ. ԺԳ, 891] կամ «Ո՞ք կարէ պատմել զանցս աղետի, զոր ընդ քաղաք մեր եղեւ» [Հիշ. ԺԴ, Ա, 29]: Հռոմկլայում 1292 թ. գրված հիշատակարանում Մարգարեկ գրիչն էլ երկրում առկա ծանր կացութեան առիթով գրում է.

«Եւ արդ, եթէ բաւանդակ ազգս պատմողք լինին, չկարեմ գորպէսն ասել զնեղութեանց ժամանակիս, որ եկն ի վերայ ազգիս Հայոց» [Հիշ. ԺԳ, 689]:

³⁷⁴ Z. Pogossian, *Armenians, Mongols and the End of Times*, p. 180.

³⁷⁵ Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 3, էջ 147:

Շատ հաճախ բնական աղետներն ու մորեխների հարձակումները ևս մեծ ողբերգությունների պատճառ են դարձել, մարդկանց զրկել իրենց բերք ու բարիքից: Այդ մասին նշումներ կան բազմաթիվ հիշատակարաններում, որոնցում գրիչները մեծ դառնությունք և խոր կսկիծով են արձանագրել վրա հասած աղետը: Որոշ գրիչներ անգամ այս մասին հիշատակագրելիս դիմել են ոճական տարբեր միջոցների: Այս դիտանկյունից առանձնահատուկ է 1314 թ. Սարգիս գրչի հիշատակարանը. թերևս ոչ մի ուրիշ հիշատակարանում այնքան պատկերավոր և սարսազողու կերպով ներկայացված է մորեխների ահազարհուր արշավանքը, ինչպես այդ արել է Սարգիս գրիչը: Իր խոսքն առավել պատկերավոր և տպավորիչ դարձնելու նպատակով նա դիմել է համեմատությունների, չափազանցությունների և լեզվի պատկերավորման այլ միջոցների, որոնք անտարբեր չեն կարող թողնել ընթերցողին: Սարգիս գրչին հաջողվել է ստեղծել գեղարվեստական այնպիսի պատկեր, որ թվում է՝ աչքիդ առաջ ուրվագծվում է մորեխի հավաքական և սարսափելի մի կերպար, որ պատրաստ է կուլ տալ ճանապարհին հանդիպածը: Արժանին մատուցելով գրչի պատկերավոր այդ մտածողությունը՝ ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել նրա կերտած այդ գեղեցիկ պատկերից մի ընդարձակ հատված.

«Արդ, յայսմ տարուջս եկն մորեխս սաստիկ ի վերայ երկրի, քանզի ոչ ոք ի մերում ժամանակիս ետես այնպես, ես ոչ հնումն պատմեցին մեզ այսպես խստագոյնս, քանզի գտասն ատոր ճանապարհն ի մի օրն անցաներ ես զքառասուն օրս այսպես խստագոյնս անցաւ, որ լեզու ոչ կարէ պատմել, ես ոչ ոք կարէ ընդ գրով արկանել զանթիւ բազմութիւն մորեխին, քանզի իբր զհեծեալս բազում, որ երթան զօրն եւ իջեաւնին զգիշերն ասեւնայն, այնպես գային մինչեւ յերեկոյ եւ ի վաղիւն, յորժամ շողանայր արեւն, յառնէր եւ յորժամ յառնէր, այնպես անանութիւն անրա, որպէս սաստիկ ձիւնոյ կամ յանձրեւոյ՝ երթայր եւ բարձրանայր, եւ ոչ ոք կարէր տեսանել

զբարձրութիւն Աորա, եւ ի թանձրութենէ Աորա փոխիւր գոյն արեգականն, գոչէր՝ իբրեւ զգետ, եւ անցանէր՝ իբրեւ զքամի» [Հիշ. ԺԴ, Ա, 261]:

Գրիչների խոսքում առատ են հատկապես համեմատությունները, որոնք երբեմն կարող են բավական ընդարձակ լինել: Վարդան քահանայի հոգատար վերաբերմունքն ընդգծելու համար գրիչ Ստեփանոսը հետաքրքիր համեմատություն է անցկացնում ձագերին թևերի ներքո առնող թռչնի և խնամածու Վարդան քահանայի միջև.

«Որպէս հաւ, զի ժողովէ զձագս իւր ընդ թեւաւք իւրովք եւ ի ծոց իւր կրեացէ գնոսայ, այսպէս եւ սայ ժողովեաց զմեզ եւ զամենայն պէտս մեր կատարեաց» [Հիշ. ԺԴ, Ա, 46]:

Կյուրակոս գրիչն էլ մատյանի օրինակումն ու ստացումն ավելի լավ է համարում, քան թանկարժեք քարը. «լաւ համարելով զսա, քան զականս պատուականս» [Հիշ. ԺԳ, 234]: Գրեթե նույն կերպ է արձագանքում մեկ այլ գրիչ. «Սա է գանձ հոգեւոր. լաւ է զսա ստանալ, քան զմեծութիւն աշխարհի» [Հիշ. ԺԳ, 75]: Սուրբաթցի գրիչ Ստեփանոսը առանձնահատուկ պատկերավորությամբ և ուշագրավ զուգահեռներով նշում է, որ գրչության արվեստը ամեն մեկի գործը չէ: Ստեփանոսն անվարժ գրչին համեմատում է անհմուտ մսագործի հետ, որ սխալ է անդամահատում կենդանուն և փչացնում միսը.

«Զի որպէս անհմար է թռչնոց ի լուծ լծել եւ ակաւս պատառել եւ կամ եզանց յադս վերանալ, նոյնպէս առանց աշխատելոյ ի սմս ոչ ոք կարէ հասու լինել արուեստին մեծի գրչութեան. եւ որ յանդրգնի համարձակել՝ ոչ կարէ գրել զճշմարիտն, այլ եղծանէ զարուեստն եւ աղաւաղէ զգրելին, ըստ անիմաստ խոհակերի³⁷⁶, այսինքն՝ մսագործի, որ ոչ

³⁷⁶ Հիշատակագրի այս հատվածը հիշեցնում է Դավիթ Անհաղթի հետևյալ տողերը. «...որ առնէ զբաժանումն յերուտ ձայնիցն, նման է արուեստաւոր

գիտէ գորոշումն յադուածին, այլ անհմտաբար հանէ զանդամսն միսն ի միս անդամն եւ զմիտոյն՝ ի միս այլն» [Հիշ. ԺԴ, 426-427]:

Մարդկային կյանքի ամենատարբեր երևույթները, առարկաները, սիրելի ուսուցիչներին, հոգևոր եղբայրներին գովերգելու, պատկերավոր կերպով և այլաբանորեն նրանց մասին արտահայտվելու համար հիշատակագիրները հաճախ են գործածել տարբերույթ մակդիրներ՝ «եռահրաշ եւ հոգիազարդ Աւետարան» [Հիշ. ԺԵ, Բ, 196], «քրիստոսահիմն, առաքելաշէն, մարգարէխոս այս գիրք» [Հիշ. ԺԵ, Ա, 249] «աստուածահանոյ, սրբասնունդ եւ սրբագործ քահանայ» [Հիշ. ԺԴ, 357] և այլն:

Խոսքի ոճավորման, տպավորությունները խտացնելու նպատակով որոշ գրիչներ դիմել են նաև բաղաձայների կուտակմանը, դրանց հաճախակի կրկնությանը միևնույն նախադասության մեջ (ալիտերացիա). ահա մի օրինակ, որում նկատելի է գ-երի և շ-երի առատությունը.

«Գրեցաւ գերարփիս այս, գերագոյն գերակատար, գերալուր եւ գերալգանց, գեղեղաշէջ եւ գեղեցկայնուագ, գերունակ իմաստիք հոգւոյն երգել զգովեստ Երրորդութեանն: Աստուածաբաշխ շնորհիւ շնորհատրեալ շնորհագիծ սուրբ Աւետարանս» [Հիշ. ԺԴ, Ա, 213]:

Հատուկ ուշադրության են արժանի չափածո հիշատակարանները: Չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ դրանց զգալի մասն օժտված է գեղարվեստական հատկանիշներով և

խոհակերի, որ ըստ յօդից առնէ զքակմունսն, իսկ որ ի մակեղուտսն առնէ, նման է փցուն խոհակերի, որ ոչ ըստ յօդից առնէ զքակմունսն, այլ վայրապար», տե՛ս *David the Invincible, Commentary on Porphyry's Isagoge*, Old Armenian Text with the Greek Original, an English Translation, Introduction and Notes by **G. Muradyan**, Leiden-Boston, Brill, 2014, p. 184 (այս հուշման համար շնորհակալ ենք Մատենադարանի թարգմանական մատենագրության բաժնի վարիչ, ք. գ. դ. Գոհար Մուրադյանին):

գրված է գրական այս տեսակին հատուկ կանոններով³⁷⁷: Աչքի են ընկնում հատկապես հանգավոր հիշատակարանները, քիչ չեն նաև ծայրակապի (ակրոստիքոս) սկզբունքով հորինված չափածո հիշատակարանները, որոնց տողերի սկզբնատառերով հիմնականում հոգվում են հիշատակագիրների անունները: Նկատենք, որ հանգավոր հիշատակարաններ հանդիպում են նաև ձեռագրական այլ ավանդույթներում³⁷⁸, սակայն հայերեն հիշատակարաններում դրանք առավել հաճախադեպ են և աչքի են ընկնում նաև իրենց ընդարձակ ծավալներով: Օքսֆորդի համալսարանի պրոֆ. Թեո Մաարտըն վան Լինտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԺԳ-ԺԴ. դդ. սկսած՝ հայերեն չափածո հիշատակարանների թիվը ժամանակի ընթացքում անշեղորեն աճել է՝ քանակի տեսանկյունից իր բարձրակետին հասնելով ԺԷ. դարում³⁷⁹: Ստորև նշենք մի քանի տիպական օրինակ.

1284 թ. Աղբերց վանքում Մատթեոս գրչի ընդօրինակած մատյանի հիշատակարանում գետեղված է նրա՝ 88 տողից

³⁷⁷ Երկայումս այդտեսակ հիշատակարանների ուսումնասիրությամբ զբաղվում է մեր գործընկեր Գոհար Չատյանը, տե՛ս **Գ. Չատյան**, ԺԱ.-ԺԲ. դարերի չափածո հիշատակարանների գեղարվեստական առանձնահատկությունները, «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի գեկուցումներ, (Երևան, 2017 թ., նոյեմբերի 28-30)», Երևան, «Արմավ» հրատ., 2018, էջ 82-95:

³⁷⁸ ԺԵ. դ. իտալացի մի գրչի հիշատակարանում կարդում ենք՝

“Per Gesu Cristo ti prego lettore
 Che vogli lui con affetto pregare
 Per la salute del compilatore
 Il qual ridusse in rima per volgare
 E se del nome suo nascesse errore
 Per questo modo si puo dichiarare
 Che Domenico fu da Monte Chiello

El monco zoppo pova vecchiarello” (ընդգծումները մերն են – Իս. Հ.):

Տե՛ս **B. du Bouveret**, *Colophons de manuscrits occidentaux des origines au XVI^e siècle*, t. 1, A-D, p. 430 (no. 3461).

³⁷⁹ **T. M. v. Lint**, *Armenian Colophons in Vers, 1641-1660*, “Colofoni armeni a confronto”, p. 81.

բաղկացած և ի-ով վերջավորվող միահանգ ոտանավորը, որից ներկայացնում ենք մի հատված.

«Այլ եւ իմոյ անարժանի
Հոգւոյ զաւակ ինձ եղիցի,
Որք ընթեռնուն ընդ յատենի,
Յիշման առնեն զմեզ արժանի,
Երեսս անկեալ արտասուելի,
Մերձակայիցդ Քրիստոսի,
Խոշորութեանս մի լիցի
Տրտունջ ի ձէնջ աններելի» [Հիշ. ԺԳ, 553]:

Լենկ Թեմուրի արշավանքների սարսափելի տեսարանների նկարագրություններ պարունակող Գր. Խլաթեցու «Յիշատակարանք աղէտից» հայտնի պոեմի ստորև բերվող հատվածում հեղինակը բայերը գրել է տողավերջում և գրաբարի անցյալ անկատար ժամանակաձևով՝ ապահովելով հանգավորումը.

«Ձոմանց զլուխ քերթէին,
Հանդերձ հերաւքն խըլէին,
Զալլոց ըզշունչսն արգելուին
Եւ հեղձամահս խեղդէին,
Որպէս զոշխարըս մորթէին,
Փոկս ի թիկանցըն հանէին.
Զկէսըս հըրոյ խորոյէին
Եւ ճենճերոյքն ցընծային
Շատք ըզՔրիստոս ուրանային
Եւ ըզՄահմետ դաւանէին...»:³⁸⁰

1314 թ. Գլաձորում Պողոս Կիրիկեցու ընդօրինակած Ավետարանի հիշատակարանի վերջում գրված է հանգավոր մի ոտանավոր, որի մեկընդմեջ տողերի սկզբնատռերով ընթերցվում է հետևյալ նախադասութիւնը՝ «ՏԷՐ ՍԱՐԳՍԻ Է ԱԻԵՏԱՐԱՆՍ»

³⁸⁰ Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան, *Գրիգոր Խրայթեցի Ծերեկնց*, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 2000, էջ 125:

[Հիշ. ԺԴ, Ա, 253]: Մաշտոցյան Մատենադարանի Հ^մ 3291 ժողովածուի երկրորդ միավորի (Բ. ձեռագիր) գրիչ նորջուղայեցի Ազարիան չափածո հիշատակարանի տողերի սկզբնատառերով կազմել է «ԱԶԱՐԻԱ ԳՐՁԷՍ ԸՆԿԱԼՅԻՐ» նախադասությունը³⁸¹: Ուշագրավ օրինակ է 1425 թ. Առաքել Բաղիչեցու հորինած ողբ-հիշատակարանը սիրելի ուսուցչի՝ Գրիգոր Խլաթեցու նահատակության առիթով: Հիշատակարանի յուրաքանչյուր քառատողի սկզբնատառերով հորվում է «ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՅԱՌԱՔԵԼԷ ՆՈՐԻՆ ԱՇԱԿԵՐՏԷ» կապակցությունը: Հիշատակարանը հետագայում ընդօրինակվել է նախազաղափար օրինակից և մեզ հասել 1477 թ. գրչագրված Հայսմավուրքով [Հիշ. ԺԵ, Ա, 329-333]: Չափածո ծավալուն հիշատակարաններն առավել հաճախադեպ են դառնում ԺԷ. դարում: Հակոբ երեց Թոխաթեցին, օրինակ, Սաղմոսարանը տաղաչափյալ ձևով շարադրելուց հետո հորինել է 30 տնից (յուրաքանչյուրը՝ 4-ական տող) բաղկացած ընդարձակ մի հիշատակարան՝ «Յիշատակարան շարագրողի Սաղմոսիս», որի բոլոր տողերը նույնահանգ են և ավարտվում են -ան վանկով.

«Եւ յիշելոյ արժան արեք զիս զանարժան,
 ԶՅակոբ երեցըս Թօխաթցի տաժանական,
 Որ եմ պանդուխտ յայսմ աշխարհի տարաբնական,
 Լեհացն երկիրն ի նոր քաղաքըս Զամօսցան»³⁸²:

Հայերեն ձեռագիր հիշատակարաններում իրենց ուրույն տեղն ունեն անեծքներն ու օրհնանքները, որոնց մասին խոսել ենք մատյանների և նրանց հիշատակարանների պահպանման առիթով: Սակայն բանահյուսական ժանրին հատուկ այս միավորների գործածության նպատակադրումները տարբեր են և չեն սահմանափակվում միայն ձեռագրապահպանմամբ: Առանձին

³⁸¹ Մայր ցուցակի հայերեն ձեռագրաց Մաշտոցի անունն Մատենադարանի, հ. Ժ., էջ 1205-1206:

³⁸² Հինգ պանդուխտ տաղասացներ, գրեց Հ. Ն. Վ. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1921, էջ 171:

խոսմբ կարող են կազմել նաև թշնամիներին, գավթիչներին և բռնակալներին հասցեագրված անեծքներն ու թշնամիների դեմ մարտնչողներին, ժողովրդին պաշտպանողներին կամ սիրելի մարդկանց ուղղված օրհնանքները, որոնք երբեմն աչքի են ընկնում ընդարձակ և ուրույն շարադրանքով: 1273 թ. Ասոմ գրիչն իր հիշատակարանում զորություն է խնդրում Աստծուց իրենց առաջնորդի համար, որպեսզի վերջինս կարողանա հաղթել իր թշնամիներին, ապա հնչեցնում է նաև իր բարեմաղթանքը.

«Զի տացե թագաւորիս մերոյ Ապաղայ դանիս զարութիւն եւ յաղթութիւն սնայ ի վերայ թշնամեաց խաչին. սուրբ թշնամեաց սորա մտցեն ի սիրտս իրեանց, եւ մի կարասցեն կեալ ընդդէմ սորայ փակառակորոք սորայ, այլ եղիցին թշնամիք սորա կոխան ամենայն ազգաց քրիստոնէից. ամեն, եղիցի կամաւն Աստուծոյ» [Հիշ. ԺԳ, 438]:

Ստեփաննոս գրիչը 1293 թ. Սկևռայի նշանավոր վանքում ընդօրինակած իր Ավետարանի հիշատակարանն ավարտում է հետևյալ տողերով. «Գրեցաւ ի սուրբ ուխտս Սկևռայ, ընդ հովանեաւ աստուածընկալ սրբութեանցս, ի մեծ թուխ ՉևԲ. (1293), յորում վարէր զարքայական տէրութիւնն աշխարհիս Կիլիկեցւոց աստուածասէր Հեթում, որդի Լևոնի, որդւոյ Հեթմոյ, որոց ժամանեցէ ազգութիւնն Աստուծոյ, անշէջ մնալ նրազ ի տանն Ռովբինեանց ի փառս Աստուծոյ» [Հիշ. ԺԳ, 726, ընդգծումը մերն է – Խ. Հ.]:

Հիշատակագիրներն ի նշան երախտագիտության օրհնանքի խոսքեր են հնչեցնում նաև լավություն անողներին, իրենց սատարողներին, անգամ մեկ բաժակ ջուր տվողին: Միմէոն գրիչն իրեն ուտելիք բերած Մարկոսի համար Աստծուն այսպիսի խնդրանքով է դիմել. «Տէ՛ր, տո՛ւր նմայ քո անմահ բաժակդ. ամէն»:

Անեծքների և օրհնանքների մի զգալի մասը թեև ունի կաղապարային բնույթ և մասնավոր տարբերություններով կրկնվում է հիշատակարանից հիշատակարան, այնուամենայնիվ, որոշ օրի-

նակներ ուշագրավ են իրենց արտասովոր բովանդակությամբ: Նման մի ընդարձակ և ինքնատիպ անեծքի վրա ենք հրավիրում ընթերցողի ուշադրությունը: Սեբաստիայի Սուրբ Նշան վանքի հովանու ներքո գրիչ Բարդամի որդի Միքայելը 1673 թ. ավարտին է հասցրել Ավետարանի ընդօրինակումն ու նկարազարդումը, որի համար գաղափար օրինակ է ծառայել վանքի մատենադարանում պահվող Թորոս Ռոսլինի 1262 թ. ընդօրինակած և ծաղկած չքեղ Ավետարանը (ներկայումս Ուոլթերս թանգարանի Հ^մ W. 539 ձեռագիրը³⁸³): Միքայելի գրչագրած Ավետարանի ստացողն է ոմն մահտեսի Մարկոս, որը և թողել է մեզ հետաքրքրող հիշատակարանն իր ինքնատիպ և խիստ եզակի ընդարձակ անեծքով: Մեջբերում ենք այն ամբողջությամբ.

«Մարկոս ծառայ՝ ստացող մատենիս աղաչեմ, զի մի՛ որ վաճառեսցէ զսուրբ մատեանս եւ մի՛ որ գնեսցէ սակս շահից, եւ կամ վասն յիշատակի: Եթէ որ յանդգնեալ վաճառեսցէ եւ գնեսցէ, զպատիժն Կայեմի առցէ ի մարմին իւր յԱստուծոյ: Եւ զգին դորա ծախեսցէ ի պատանս սիրելեաց իւրոց, եւ ի գին բժշկութեան ցաւոց անձին իւրոյ: Եւ ջբաւորութիւն իւր՝ մի՛ լցցի ընչիւք ի կեանս իւր, եւ ես առաւել տառապեսցի, եւ մի՛ ողորմեսցի եւ մի՛ լուիցէ ձայնի հեծութեան իւրոյ Աստուած: Եւ որդիք իւր վաճառեսցի ի գերչաց, եւ գնեսցի ի խստասրտաց, եւ ինչք իւր կապտեսցի յաւազակաց եւ կողոպտեսցի յափշտակողաց: Ասասցեն հրեշտակք եւ մարդիկք. Եղիցի, եղիցի, բայց հոգին անպարտ լիցի: Եւ թէ որ վասն յիշատակի գնեսցէ, մի՛ ընդունեսցի Տէր, եւ մի՛ ընկալցի եւ մի՛ գրեսցէ ի գիրն կենաց, եւ մի՛ մնասցէ իւր ժառանգ յիշատակի ի վերայ երկրի: Զի թէ յիշատակ կամի, ինքն ի գրչաց ստացի, եւ մի՛ զիմս յափշտակեսցէ: Եւ թէ որ զիշտակարան սորա կտրեսցէ, կտրեսցէ ինքն ի դպրութենն կե-

³⁸³ S. Der Nersessian, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, 1973, pp. 10-30.

Անց: Իսկ ի ձեռնաց անօրինաց թափօղմ օրհնեսցի, եւ
զվարձս իւր Քրիստոս հաստուցէ. ամէն»³⁸⁴:

*Հիշատակարանը բացառիկ է անեծքների շարքով, որոնք
աչքի են ընկնում աստիճանական սաստկացմամբ և սարսուղ-
դու ինքնատիպ պատկերներով: Աստիճանավորումը ոճական
Հայտնի եղանակ է, որով ամեն Հաջորդող բառով, բառակա-
պակցությամբ կամ նախադասությամբ փորձ է արվում ավելի
ուժեղացնել խոսքի ազդեցությունը³⁸⁵: Տպավորություն է, որ
այդպիսով Մարկոս ստացողն այստեղ ի մի է հավաքել մարդկա-
յին բոլոր Հնարավոր վախերը, որոնք կարող են զսպիչ դեր
խաղալ մատյանը գողացողների կամ վաճառողների, Հիշատա-
կարանը եղծողների համար:*

*Երբեմն խոսքը սաստկացնելու նպատակով կարող են կողք
կողքի դրվել նաև հոմանշային հարաբերություն մեջ գտնվող
բառեր, որոնցից յուրաքանչյուրը նախորդի համեմատությամբ
ավելի է սաստկացնում տպավորությունը: Այդ հնարքին է
դիմել, օրինակ, Կիրակոս ստացողը 1334 թ. հիշատակարանում.
«Զմեղաւք դատապարտեալս եւ զանարհեստ գծող տառիս աղա-
չեմ, պաղատիմ, խնդրեմ, աղերսեմ, հառաչեմ, գոչեմ, ձայնեմ,
մաղթեմ մեղաց թողութիւն խնդրեցէք ի Հաւրէ մերմէ եւ ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ. ամէն» [Հիշ. ԺԴ, 263, ընդգծումը
մերն է – Խ. Հ.]: Բացառիկ է հատկապես Կարապետ գրչի վերո-
հիշյալ հիշատակարանը, որում Լենկ Թեմուրի Հրոսակների դժնի
ու անխնա գործողությունները նկարագրելիս գրիչն առատորեն
կիրառել է ոճական այս հնարքը: Աղաղակել բայի համար Կարա-
պետն ընտրել է հոմանշային հարաբերություն մեջ գտնվող
հետևյալ շարքը.*

384 **Խ. Հարությունյան**, *Միքայել անվամբ ԺԷ. դարի երկու գրիչ*, էջ 128:

385 **Լ. Եգեկյան**, *Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ)*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 359: **Թ. Շահվերդյան**, *Դասական գրարարի շարահյուսական ոճաբանություն*, Երևան, «Հայաստան» հրատ., 2007, էջ 175:

«Եւ թէ ոք ընդդիմանայր Աոցա անտոիկ դղեկաւ, վաղվա-
դակի անդր ժամանէին իբրեւ զբազմութիւն մարախոյ, բոլո-
րէին, ճշէին, գոչէին, ոռնային, բառաչէին, հաջէին, հառա-
չէին, խխրճէին, որոտային, գոհալս դմորմէին, զԱղարա-
լսն հարկանէին» [Հիշ. ԺԴ, 578]:

*Շարունակելով հիշատակարանը՝ գրիչը ավերել իմաստն
արտահայտել է հոմանիշ այլ բառերի միջոցով. «քանդէին,
քարայտակէին, փորէին, փոս հատանէին, կռփէին, կռանէին,
զամաց հագարաց շինուածս՝ միաւրեա անհետ կորուսանէին»:
Վախենալ բայիմաստի արտահայտման համար գրիչը դիմել է
հետեյալ բառերին. «Իսկ նոքա, որ ի ներքս ամրոցին էին,
տապէին, տագնապէին, թուլանային, սարսէին, սարսափէին,
ծարաւէին, նքթէին, նքողէին, երկիւղիւ երկնչէին» [ն.տ.]:*

*Պատկերի ստեղծման, տպավորութեան սաստկացման նպա-
տակով հոմանշային հարաբերութեան մեջ գտնվող բառերի
դիմել են բազմաթիւ այլ գրիչներ ևս: Վարագում 1488 թ.
գրչագրված Ճաշոցի հիշատակարանում Հովհաննես գրիչը
մարդկային արատներն ու բացասական կողմերն է թվարկում.
«Զի փոխանակ բարոյ չարք եղաք, ամբարտաւանք, ամբարհա-
ւաճք, վէսք, սնափառք, ստախաւսք, նենգաւորք, բամբասողք,
չոգմոգք, հայհոյիչք, մարդահաճոյք, կեղծաւորք, արատաւորք,
նախանձոտք, երախտամոռացք, եղբայրատեսցք, մանաւանդ թէ
եւ աստուածատեսցք իսկ» [Հիշ. ԺԵ, Գ, 112]:*

*Նշված օրինակները հավաստում են, որ հիշատակագիրները
չեն սահմանափակվել գուտ գրչագրական բնույթի տեղեկու-
թյուններ հաղորդելով, նրանցից շատերը հիշատակարաններում
հանդես են եկել որպես ստեղծագործ անհատներ, որոնք աչքի
են ընկնում իրենց կերտած գեղարվեստական հետաքրքիր
պատկերներով և ստեղծագործություններով: Եվ բոլորովին
պատահական չէ, որ որոշ հիշատակարաններ հրատարակվել են
որպես գրական-պատմական առանձին արժեք ներկայացնող
միավորներ, ինչպես Գրիգոր Խլաթեցու «Յիշատակարանք աղէ-*

տից»-ը³⁸⁶ կամ Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանը»³⁸⁷: Առանձին ողբ կամ տաղ հիշատակարաններ են թողել մի շարք տաղասացներ, այդ թվում՝ Առաքել Բաղիչեցին, Ստեփանոս Թոխաթեցին, Հովհաննես վրդ. Սեբաստացին և ուրիշներ: Ժէ. դարի նշանավոր տաղասաց Ստեփանոս Զուղայեցու առիթով Վիեննայի Մխիթարյան Հայր Ն. Ակինյանը նշում է, որ տաղասացի որոշ հիշատակարաններ դուրս են գալիս գրավոր այդ հուշարձանների դասական սահմաններից և ձեռք բերում տաղի նկարագիր³⁸⁸:

Հարկ ենք համարում այստեղ ընդգծել, որ հայերեն ձեռագիր հիշատակարաններում կարելի է նկատել գրական այլ ժանրերի դրսևորումներ. շատ հաճախ ժանրային տարբեր ուղղվածություններ ունեցող գրական տեսակներն այստեղ միաձուլվում են և վերածվում, օրինակ, տաղ-հիշատակարանի, վարք-հիշատակարանի, մեկնություն-հիշատակարանի, ինքնակենսագրական-հիշատակարանի և այլն: Տաղ-հիշատակարաններով առավելապես հարուստ են Ժէ-ԺԸ. դարերի ձեռագրերը. ըստ որում՝ աչքի են ընկնում հատկապես տաղասացների հիշատակարանները: Ժէ. դարի հայտնի տաղասաց Ստեփանոս Թոխաթեցին, օրինակ, հորինել է մի չափածո ինքնակենսագրական տաղ-հիշատակարան, որում մանրամասն պատմվում են պատմական դեպքեր, հիշատակվում են պատմական անձինք, և նշվում են այլ տեղեկություններ [Հիշ. Ժէ, Ա, 244-252]:

Բովանդակություններից առանձնանում են նաև այն հիշատակարանները, որոնցում հիշատակագիրները տեղեկություններ են հաղորդում իրենց դպրատների, նրանցում ստացած կրթության վերաբերյալ, հիշատակում են իրենց ուսուցիչ-

³⁸⁶ Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան, *Գրիգոր Խոյաթեցի Ծերենց*, էջ 124-135:

³⁸⁷ *Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը*, հրատարակեց իւր առաջաբանով Կ. Կոստանեանց, Թիֆլիզ, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892:

³⁸⁸ *Տաղասացներ և տաղեր*, գրեց հ. Ն. Ակինեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 1968, էջ 166:

ներին և անհրաժեշտ համարում շարադրել վերջիններիս կենսագրական տվյալներ, որով մերձենում են նաև վարքագրության ժանրին: Այդ հիշատակարանները կարելի է բնորոշել որպես վարք-հիշատակարաններ: Միրելի ուսուցչի մասին նման մի վարք-հիշատակարան է գրել Մաշտոց Ա. Եղիվարդեցի Հայոց կաթողիկոսի (897-989) աշակերտ Ստեփանոսը՝ «Յաղագս վարուց երանելոյ տեառն Մաշտոցի»: Հիշատակարանում կարդում ենք. «Եւ կատարեցաւ գրկուեսս ի Սեւան կղզոջ Գեղա մեծ ծովակիս, ի ձեռն իմ անարժան Ստեփանոսի կրաւնաւորի, աշակերտ երիցս երանելոյ սուրբ ձգնաւորն Քրիստոսի տեառն հաւրն Մաշթոցի» [Հիշ. Ե-ԺԲ, 41]³⁸⁹: 1190 թ. հիշատակարանում ներսես Լամբրոնացու վարքն է շարադրել նրա աշակերտ Սամվել Սկևռացին կամ Ծերուհին՝ «Պատմութիւն Ներսիսի վարուց եպիսկոպոսին, երգոցս Սաղմոսիս քննաւղի» [Հիշ. Ե-ԺԲ, 255]³⁹⁰:

1623 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում Ստեփանոս Զուղայեցին շարադրել է ավետարանական խորանների մեկնությունն³⁹¹, 1668-1673 թթ. ընթացքում Միքայել գրչի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում էլ տեսնում ենք Քրիստոսի ծննունդը, երկրային կյանքը, խաչելությունն ու համբարձումը ներկայացնող ընդարձակ չափածո մի պատմություն³⁹²: Նամակ-հիշատակարան է հիշեցնում Կեսարիայի

³⁸⁹ Տե՛ս նաև *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 89, **Ք. Տեր-Ղավթյան**, *Հայկական արքայախոսություն. վարքեր և վկայաբանություններ (V-XVIII դդ.)*, Երևան, «Նաիրի» հրատ., 2011, էջ 135: Տե՛ս նաև *Մայր Մաշտոց*, հ. Ա., գիրք Ա., ըստ հնագույն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատությամբ Աստուածաշունչ մատենաի, բնագրական եւ կանոնացանկային յանդիմանով, աշխատասիրությամբ **Գ. Տեր-Վարդանեանի**, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., Ս. Էջմիածին, 2012, էջ 722-737:

³⁹⁰ *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 541, **Վ. Ղազարեան**, *Խորանների մեկնություններ*, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 1995, էջ 126-139: Տե՛ս նաև **Ք. Տեր-Ղավթյան**, *նշվ. աշխ.*, էջ 215:

³⁹¹ *Տաղասացներ և տաղեր*, գրեց հ. **Ն. Ակիմեան**, էջ 168-169:

³⁹² **S. Der Nersessian**, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, pp. 116-121:

Կոստանդ եպիսկոպոսի գրութիւնը՝ ԺԳ-ԺԴ. դդ. Գլածորի համալսարանի նշանավոր բաբունապետ Եսայի Նչեցուն [Հիշ. ԺԳ, 848]³⁹³:

Երբեմն գրիչներն իրենց հիշատակարանները վերածել են ժամանակագրութիւնների կամ պատմական դեպքերի և դեմքերի, վերջինների գործունեութեան մասին ուշագրավ գրութիւնների: Ահա օրինակ՝ Գրիգոր Երևանցի գրիչն իր հիշատակարանի մի ընդարձակ հատված հատկացրել է Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Ա. Եղեսացու շինարարական գործունեութիւնը արձանագրելուն: Գրիչը մանրամասն թվարկել է կաթողիկոսի բարենորոգչական աշխատանքները, ապա եզրափակել. «Եւ բազում շինուածս եւ աշխատանս եւ արդիւնս հոգեւորս արար Սրբոյ Աթոռոյն էջմիածնի եւ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի եւ առ ազգս Հայոց, զոր ոչ ոք երբէք արար յառաջնոց հայրապետաց»³⁹⁴:

Նշյալ օրինակները բավարար են հայերեն ձեռագիր հիշատակարանների գեղարվեստական առանձնահատկութիւններն ու նրանց բովանդակային բազմազանութիւնն ընդգծելու համար: Այժմ մի քանի խոսք գրիչների անհատականութեան դրսևորման, նրանց հայացքների և դեպքերին ու դեմքերին համապատասխան գնահատականներ տալու ինքնուրույնութեան մասին:

Հիշատակարանը, որպէս ձեռագրում գրչի անձնական տարածք, վերջինի համար ծառայել է ոչ միայն որպէս ստեղծագործելու, այլև երբեմն որպէս հասարակական, քաղաքական, կրօնական և կենցաղային տարբեր խնդիրների արծարծման ինքնատիպ հարթակ: Որոշ դեպքերում գրիչները չեն թաքցրել նաև իրենց անձնական վերաբերմունքը, հանդես են եկել իբրև դեպքերի կամ դեմքերի քննադատ և իրենց գնահատականն են հնչեցրել բացասական տարբեր երևույթների նկատմամբ: Խոսքն այստեղ ոչ թե թշնամիների կամ բնակչութեանը կոտորելու

³⁹³ Տե՛ս նաև **S. Der Nersessian**, *Les portraits d'Esayi Nč'ec'i, supérieur de Glajor*, p. 233.

³⁹⁴ *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Եսկոբեանց*, հ. Չ., էջ 367-368:

եկած գանազան ավագակախմբերի վերաբերյալ արձագանքների, այլ ներքաղաքական կյանքի և կենցաղի մասին է. մինչև անգամ կարելի է հանդիպել օրվա աշխարհիկ և հոգևոր իշխանուժյուններին քննադատող գրիչների, որոնք աներկբայորեն արձանագրել են այն ամենը, ինչը, իրենց կարծիքով, սխալ էր կամ անընդունելի:

Արդ, տիպական օրինակներով դիտարկենք հայերեն ձեռագրերի հիշատակարաններում նկատվող այդ ուշագրավ դրսևորումները:

Հայոց Հեթում Բ. Թագավորի (ընդհատումներով՝ 1289-1306 թթ.)՝ գահից պարբերաբար հրաժարումների հետևանքով նրա հարազատ եղբայրների միջև սկիզբ առած գահակալական կռիվներին ականատես և դրանց մասին ցավով արձանագրող Թումաս գրիչը «չար ժամանակ» է կոչում իր օրերը. մի կողմից գահի համար ազգականների միջև նյութվող դավերը, մյուս կողմից՝ Թագավորի և օրվա կաթողիկոս Գրիգոր է. Անավարզեցու (1293-1307 թթ.) լատինամետ հակումները լրջագույն սպառնալիք էին դարձել պետականուժյան և եկեղեցու հիմքերի համար³⁹⁵: Այս ամենին սրտացավ գրիչը խոր կսկիծով է հետևում և չի վարանում Թագավորի ու կաթողիկոսի քայլերը դավաճանուժյուն որակել՝ գրելով.

«Մերքս ընդ մեզ պատերազմին. ոչ միայն այլասեռ քրիստոնեայք վիճին ընդ մեզ վասն հաւատոյ, այլև մեր իսկ թագաւոր եւ կաթողիկոս հանել ջանան զմեզ յաւանդութենէ սրբոյն Գրիգորի եւ այլոց հարց» [Հիշ. ԺԴ, Ա, 130]:

Եթե Թումաս գրչի տագնապի պատճառը ծիսական և դավանաբանական խնդիրներն էին և դրանցից ծայր առնող ազգադավ մյուս գործողուժյունները, ապա Մաշտոցյան Մատենադարանի Հ^{մր} 7534 Ավետարանի գրիչներից Ստեփանոս Վահկացին իր հիշատակարանում արձանագրել է թշնամու հարձակմանն անպատրաստ կիլիկյան Լևոն Գ. (1269-1289 թթ.) Թագավորի և նրա

³⁹⁵ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը*, հ. Բ, էջ 375-376:

բանակի անգործությունը: Հիշատակարանն իր հետաքրքիր բովանդակությամբ չի վրիպել հետազոտողների ուշադրությունից. մասնավորապես, այն առանձին քննության է առել Ա. Շիրինյանը՝ ընդգծելով հիշատակարանում տեղ գտած գրչի անթաքույց քննադատության ուշադրավ կողմերը³⁹⁶: Մեջբերում ենք Ստեփանոս Վահկացու ընդարձակ հիշատակարանից մի հատված.

«Արդ, եղև զրաւ սորա յայսմ ամի, որ է Հայոց թուականն 2ԻԴ. (1275), զոր կարճ ի կարճոյ ճշդիւ եւ համառաւ յիշել պարտ է զրաւմաբեր ժամանակս ի վերայ երկրիս Կիլիկեցոց: Յամենանս մարտի, որ ար Ի եւ Ե. (25) էր, յերկուշաբթի, գոռոզն փարաւոն, արբանյակն սատանայի... զարածողով արարեալ զամենայն երկիրն Եգիպտացոց՝ ի մեծէ մինչեւ ցփոքունս, մինչ գրեթէ Ժ. (10) բիւր էր զարք ճորա, եւ եկեալ երկիրս Կիլիկեցոց, եւ գտեալ անպատրաստ զամենայն...: Եւ զայս ոչ միտ առեալ թագաւորին մերոյ եւ ամենայն զարաց ճորա, այլ որպէս արբեալք եւ յիմարեալք կային եւ ոչ կարէին զդէմ ունել, եւ հրեշտակութիւնս առաքէին ի խաղաղութիւնս եւ կամ տալ հարկս, զի մի եկեալ գերեսցէ զամենեսեանս» [Հիշ. ԺԳ, 454]³⁹⁷:

Թե որքան է գրիչն իրավացի և անաչառ իր գնահատականներում, դժվար է միանշանակ ասել. պատճառն այն է, որ նույն շրջանի տարբեր հիշատակարաններում կարելի է գտնել իրարամերժ այլ տեղեկություններ, որոնց համադրումն ու վերլուծությունը միայն կարող են բացահայտել դեպքերի իրական ընթացքը: Օրինակ՝ 1276 թ. Ռոմանոս գրիչը հայտնում է, որ Լևոն

³⁹⁶ **A. Sirinian**, *Caratteristiche dei colofoni armeni e un gruppo in particolare: i colofoni della critica alle autorità politiche e religiose*, “Colofoni armeni a confronto”, pp. 22-28, 37-38.

³⁹⁷ Բնագրի այս հատվածի ընթերցումը (ՄՄ Հ^ժ 7534, 273բ-4ա) մասնավոր տարբերություններ ունի Ա. Մաթևոսյանի հրատարակության հետ, հմմտ. նաև **A. Sirinian**, *Caratteristiche dei colofoni armeni e un gruppo in particolare*, pp. 37.

Թագավորը չի վստահել իր զինվորներին անգամ. «Եւ Թագաւորն Լեւոն ոչ վստահացեալ զանձն զաւրաց իւրոց, գիտելով զխարդախութիւն Նոցա՝ ոչ էլ (իմա՛ ել – Խ. Հ.) ի պատերազմն ընդդէմ անաւրինացն» [Հիշ. ԺԳ, 462]: Ավելի վաղ գրված հիշատակարաններում կարելի է գտնել անգամ այս իրադարձությունների որոշ դրդապատճառների մասին տեղեկություններ³⁹⁸:

Այստեսակ նշումները մեկ անգամ ևս հավաստում են, որ բազմաթիվ գրիչներ չեն վարանել ներկայացնել իրենց դիտարկումները, կարծիքները, քննադատական հայացքները, շատ հաճախ չեն թաքցրել նաև իրենց վերաբերմունքը, ինչպես կարելի է տեսնել մեր հաջորդ օրինակում:

1639 թ. Լվովում ընդօրինակված Ավետարանի գրիչ Մկրտիչ դպիրն իր հիշատակարանում ժամանակի հոգևոր և աշխարհիկ առաջնորդների կողքին արժանի չի համարում հիշատակել տեղի հայերի հոգևոր առաջնորդի անունը, որը, անշուշտ, Նիկողայոս արքեպիսկոպոսն էր, ավելի հայտնի որպես Նիկողայ (Նիկոլ) Թորոսովիչ, որին դեռևս 1626 թ. լեհահայոց եպիսկոպոս էր ձեռնադրել³⁹⁹ թիոռակից կաթողիկոս վատահամբավ Մելքիսեդեկը⁴⁰⁰: Նիկողայ Թորոսովիչին չհիշատակելու իր այդ քայլը գրիչ Մկրտիչը «նախատինք» է որակում, քանի որ լեհահայ առաջնորդը հայտնի էր ոչ միայն իր փողափրությամբ, շողո-

³⁹⁸ Տե՛ս, օրինակ, Ստեփանոս գրչի հետաքրքիր տեղեկությունները՝ թողնված 1273 թ. Սկևռայում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում [Հիշ. ԺԳ, 434] և այլն: Ծնորհակալություն ենք հայտնում Կիլիկիայի Հայկական թագավորության ժամանակաշրջանի մասնագետ Սամվել Գրիգորյանին՝ սույն հիշատակարանի վրա մեր ուշադրությունը հրավիրելու համար:

³⁹⁹ Լեհահայոց տարեգրության մեջ կարդում ենք. «1626. ՌՀԵ. Մելքիսեթ կաթողիկոսն ժամանեալ ի Լեհս՝ ի Լեօպոլիս, եւ գտեալ զարոռն պարսպ, ձեռնադրէ զարեղայ տէր Նիկողայոս Թորոսովիչ՝ եպիսկոպոս Հայոց Լեհացոց», տե՛ս, *Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ հաստատեաց յաւերածութիւն*, [կազմեց՝ **հ. Ղ. մ. Ալիշան**], Վենետիկ-Ս. Ղազար, 1896, էջ 137:

⁴⁰⁰ Այս մասին տե՛ս **Առաքել Գալիթեցի**, *Գիրք պատմութեանց*, էջ 293: Տե՛ս նաև **Մ. արքեպ. Օրմանեան**, *Ազգայատում*, հ. Բ., էջ 2694-2701 (§1598-1602), 2709-2711 (§1608):

քորթությամբ, այլև տեղացի հայերին առաքելական եկեղեցուց անջատելով և դեպի կաթոլիկութիւնն ուղղորդելով⁴⁰¹: Մկրտիչը գրում է.

«Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս... ի ժամանակս հայրապետութեան սուրբ Էջմիածնայ տեառն տէր Փիլիպպոս կաթողիկոսին եւ թագաւորութեան Իլախաց Չորրորդ Վլատիշլավին: Բայց զսուաջնորդ նահանգիս զապստամբեալն ի հայրապետէն ոչ համարեցայ արժանի յիշատակել աստ, ոչ եթէ ի բարիս, այլ եւ ի նախատինս, քանզի բազում եւ անասելի նեղութիւնս հասոյց ժողովրդեանն Լէվայ» [Հիշ. ԺԷ, Բ, 785]:

Հասարակական, քաղաքական և հոգևոր կյանքի բացասական երևույթները նկատող և իրենց հիշատակարաններում դրանց քննադատաբար արձագանքող գրիչները ժամանակի մտածող անհատի մարմնավորումն են: Նրանց հայտնած տեղեկութիւնները մեծացնում են գրավոր այս հուշարձանների գրավիզութիւնն ու աղբյուրագիտական արժեքը: Հատկանշելի է, որ հայ պատմիչների կամ ժամանակագիրների երկերը, սակավ բացառութիւններով, հիմնականում չեն արտացոլում ժողովրդական տրամադրութիւնները, հասարակ անհատի վերաբերմունքը տարաբնույթ իրադարձութիւնների կամ անձանց վերաբերյալ, և այդ բացը ինչ-որ առումով լրացնում են դեպքերին ականատես հիշատակագիրները, որոնց անկեղծ մտահոգութիւններն ու այդ առիթով գրած նրանց տողերը հիշյալ ժողովրդական տրամադրութիւնների առաջնային ցուցիչներն են:

⁴⁰¹ Ն. Թորոսովիչի և նրա գործունեության մասին մանրամասն տե՛ս **С. Мутафян, La saga des arméniens de l'Ararat aux Carpates**, Les Belles Lettres, Paris, 2018, pp. 210-220. Արժեքավոր է հատկապէս Գաբրիել Այվազյանի ուսումնասիրությունը Նիկոլ Թորոսովիչի և լեհահայոց դարձի վերաբերյալ, տե՛ս *Նիկոլ եպիսկոպոս և պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթողիկոսութիւն, գրեաց Գ. արքեպ. Այվազեան, Վաղարշապատ, տպ. Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, 1877:*

12. ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇՏԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

«Խոշորությունն եւ սղալանացս մի՛ մեղադրէք,
զի միտքս շնոր էր եւ տեղիս դալապս»
Սարգիս քսիսնա, 1322 թ. [ՀՂ. ԺԴ, Ա, 456]

Ձեռագրերի անսխալ ու ճշգրիտ ընդօրինակումից բացի՝ գրիչները ձգտել են նաև գրագետ ու սխալագերծ հիշատակարաններ թողնել: Դրան նպաստել է նաև միատեսակ արտահայտությունների, կաղապարային կառույցների և քերականական տարածված ձևերի առկայությունը, որոնք, անկասկած, իրենց ազդեցությունն են թողել հիշատակարանների լեզվական ընդհանուր նկարագրի վրա: Արդ, տեսնենք, թե լեզվական ինչ պատկեր ունեն հայերեն ձեռագրերի հիշատակարանները:

Գրավոր այս հուշարձանների լեզուն գերազանցապես գրաբարն է. անկախ ընդօրինակման ժամանակից՝ հիշատակագիրները փորձել են կարելվույն չափ գրաբար շարադրել իրենց հիշատակարանները: Որքանով է դա նրանց հաջողվել, այլ հարց է և ուսումնասիրության այլ ոլորտ, ակնհայտ է, սակայն, որ բոլոր ժամանակներում հայերեն հիշատակարանները գրվել են հիմնականում գրաբար կամ առնվազն գրաբարախառն լեզվով: Առանձին դարաշրջաններով լեզվական նյութի ուսումնասիրությունը միայն հաստատել է այս իրողությունը: Քննելով ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն՝ լեզվաբան Լիանա Հովսեփյանը եկել է այն եզրակացություն, որ հետազոտված ժամանակաշրջանի հիշատակարանների լեզուն առավել չափով գրաբարն է⁴⁰²: Մենք ևս հիմնականում նույն

⁴⁰² Լ. Հովսեփյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն, Երևան, «Վան Արյան» հրատ., 1997, էջ 7:

կարծիքին ենք հանգել ժԴ-ԺԵ. դդ. հիշատակարանների լեզվի քննություն առիթով⁴⁰³: Հետագա դարերում ևս հիշատակարանագրության ավանդույթը լեզվական դիտանկյունից էական փոփոխություն չի կրել: Հատկանշելի է, որ այս հանգամանքը պայմանավորված է ոչ թե գրաբարի տարածվածությամբ կամ նրա իմացության ցուցադրումով, այլ մեր խորին համոզմամբ՝ հիշատակարանագրության դարավոր ավանդույթով, որն իր ձևավորումից ի վեր, որպես այս ժանրի լեզու, հաստատել էր գրաբարը: Ահա թե ինչու հիշատակագիրներն իրենց գրավոր խոսքում փորձել են խոսսափել բարբառային կամ կենցաղային լեզվին հատուկ տարրեր ներմուծելուց՝ ձգտելով հարազատ մնալ ավանդույթին, իսկ կաղապար օրինակների, պատրաստի արտահայտությունների կամ բառաձևերի, քերականական և շարահյուսական քարացած տարբեր կառույցների առկայությունը միմիայն օժանդակել է դրան: Ըստ այսմ՝ միանգամայն հասկանալի է ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի հուսահատ արձագանքն առ այն, որ գրավոր հուշարձանները սպասված չափով չեն արդարացրել իր հույսերը՝ բարբառային հարուստ տվյալների փնտրտուքի տեսանկյունից⁴⁰⁴:

Պատահական չէ, որ ձեռագրերի գրչությունը հաջորդած շրջանում անգամ մատյանների նոր սեփականատերերը կրկին փորձել են հետևել այս ավանդույթին. նրանցից ոմանք էլ դիմել են այնպիսի անձանց օգնությունը, որոնք կարող էին իրենց անունից հավուր պատշաճի նոր հիշատակարան հավելել ձեռագրում: Ահա մի օրինակ. 1274-1275 թթ. Կիլիկիայում ընդօրի-

⁴⁰³ Քննությունը կատարել ենք ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնում հաստատված «ԺԴ-ԺԵ. դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» թեմայով մեր ատենախոսության շրջանակներում (գիտական դեկավար՝ ք. գ. թ., դոցենտ Նարինե Դիլբարյան), որը պաշտպանել ենք 2014 թ.: Ատենախոսությունն անտիպ է:

⁴⁰⁴ Գ. Զահուկյան, *Բարբառային երկույթներ հայկական հիշատակարաններում*, Երևան, «Վան Արյան» հրատ., 1997, էջ 8:

նակված ՄՄ Հ^մ 7534 Ավետարանը հինգ տասնամյակ անց՝ 1322-1323 թթ., տեսնում ենք Կարնո Բլրակ գյուղում⁴⁰⁵, ուր ստացող Հակոբբոսի և նրա կնոջ անունից հիշատակարան է գրել Սարգիս քահանան. «Նաեւ զգծողս՝ Սարգիս քահանա, զսակաւ գրուս յիշեցէ՛ք ի Տէր, – ապա սուլն հատվածի գրիչը ներողություն է խնդրում հիշատակարանում իր հնարավոր սխալների և խոշոր գրի համար, – եւ խոշորութեան եւ սղալանացս մի՛ մեղադրէք, զի միտքս շմոր էր եւ տեղիս ղալապա» [Հիշ. ԺԴ, Ա, 456]:

1476 թ. ոմն Արապ ձեռագիր է պատվիրել և ստացել, ապա նրա իսկ ցանկությամբ գրիչը նաև հիշատակարան է գրել: Ուշագրություն է գրավում այն փաստը, որ հիշատակարանի վերջին պարբերությունը հիշատակագիրն առաջին դեմքով է շարադրել՝ ստացող Արապի անունից.

«Արդ, ես Արապս, եւ ամուսինս իմ ստացաք գտորք Աւետարանս եւ տուաք օրել զյիշատակ մեզ եւ զաւակաց մերոց, եւ նուիրեցաք զաա ի գեղաքաղաքիս մերոյ Երեւանոյ՝ ի դուռն սուրբ Կաթողիկէիս, Սուրբ Աստուածածնիս՝ անմոռաց յիշել եւ կարդալ զյիշատակարանս ի յատենի ամենայն ամի...» [Հիշ. ԺԵ, Բ, 398]:

Այս ամենը գալիս է հաստատելու, որ գրաբարը հայկական հիշատակարանային ժանրի լեզուն էր, նրա կառուցվածքի մի մասը. այլապես դժվար է բացատրել, թե ինչու ԺԲ., ԺԳ., ԺԴ. կամ նույնիսկ ԺԹ. դարի հիշատակագիրները, ժամանակի ժողովրդախոսակցական լեզուն կամ իրենց կենդանի ու հարազատ բարբառները թողած, նախընտրել են գրաբար հիշատակագրել՝

⁴⁰⁵ Այս անունով մի քանի տեղանուններ են հայտնի, տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, էջ 703: Հաշվի առնելով նույն ձեռագրում 5-6 տարի անց Կարինում և Ծվանից անապատում գրված մեկ այլ հիշատակարան՝ ենթադրում ենք, որ նշյալ Բլրակը «Տեղանունների բառարանում» նշված Կարնո գյուղերից է: Տեղորոշման համար կրվան կարող է լինել նաև մեզ հետաքրքրող հիշատակարանի վերջում Կարնո եպիսկոպոսի մահվան մասին Սարգիս հիշատակագրի նշումը. «...յայսմ ամի, որ Կարնոյ եպիսկոպոսն կատարեցաւ» [Հիշ. ԺԴ, Ա, 456]:

մինչև անգամ գրաբարյան գերճշգրտությունների, քերականական կամ շարահարկական տարատեսակ սխալների ու արհեստական կառույցների գնով, որոնք շարունակաբար արձանագրում են հետազոտողները⁴⁰⁶:

Մեր այս կարծիքի օգտին է խոսում ևս մի ուշագրավ գործոն: Ուշ միջնադարի, մասնավորապես ԺԶ-ԺԸ. դդ. բազմաթիվ գրիչներից մեզ են հասել ոչ միայն նրանց ընդօրինակած ձեռագրերն ու նրանցում թողնված հիշատակարանները, այլև տարբեր ստեղծագործություններ (հիմնականում՝ չափածո): Ընդամենը՝ գործ ունենք հեղինակ-գրիչների հետ, որոնց ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններն աչքի են ընկնում գրաբար կամ գրաբարախառն շարադրանքով, մինչդեռ հեղինակային քերթվածներում նրանց լեզուն արտացոլում է ժամանակի կենդանի և անմիջական խոսքը: Նման դեպքում հնարավորություն է ստեղծվում առանձին քննելու գրչի հիշատակարանի և ստեղծագործության լեզուն և ոճը: Իբրև օրինակ՝ մատնանշենք ԺԷ. դարավերջի սեբաստացի գրիչ Միքայելին, որի լեզվին առանձին անդրադառնալու առիթ ենք ունեցել⁴⁰⁷: Միքայելի հիշատակարանները շարադրված են գրաբար, հարուստ են գրաբար տարատեսակ կառույցներով՝ երբեմն խրթին ու բարդ, ինչպես նաև գրաբարի բառակազմական կաղապարների հատուկ նորակերտ բառերով: Բոլորովին այլ լեզվական պատկեր է Միքայելի հեղինակած երկու պոեմներում, որոնք նա թողել է իր ընդօրինակած ձեռագրերից մեկում: Դրանք շարադրված են բավական պարզ ոճով, կենդանի կամ բնական խոսքին հատուկ բարբառային տարրերով ու միջավայրին բնորոշ լեզվական

⁴⁰⁶ Տե՛ս, օրինակ **Վ. Խաչատրյան**, *Քերականական արհեստական անսովոր իրողություններ 17-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում (1601-1640 թթ.)*, «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական երկրորդ գիտաժողովի գեկուցումներ (Երևան, 2012 թ., հունիսի 14-15)», Երևան, «Չանգակ» հրատ., 2012, էջ 142-156:

⁴⁰⁷ **Խ. Հարությունյան**, *Միքայել անվանք ԺԷ. դարի երկու գրիչ*, էջ 110-121:

փոխառութիւններով: Իհարկե, սա եզակի օրինակ է, բազմաթիւ է են հատկապէս այն տաղասաց կամ բանաստեղծ գրիչները, որոնց տաղերը, ոտանավորներն աչքի են ընկնում ժամանակի լեզվի ողջ համ ու հոտով, մինչդեռ նրանց մատյանների վերջում գրված հիշատակարանները շարադրված են գրաբար կամ գրաբարախառն լեզվով:

Նման համեմատութիւնը, փաստորեն, վերհանում է հիշատակարան գրելու գրչական սովորութեան ևս մի հետաքրքիր կողմ, այն է՝ հիշատակարանի լեզուն՝ ժանրով և ավանդույթով թելադրված: Պետք է ընդգծել նաև, որ ձեռագրի բովանդակութիւնը (Ավետարան, Գանձարան, Տաղարան, Քերականութիւն և այլն) հիշատակարանի լեզվի հարցում որևէ ազդեցութիւն չի ունեցել⁴⁰⁸:

Ասվածից չի հետևում, իհարկե, որ հայերեն ձեռագրերի հիշատակարաններն ունեն միօրինակ լեզու կամ ոճ, բնավ այդպէս չէ. մի կողմից հիշատակարանը գրաբար գրելու ժանրային ավանդույթն ու դրան հետևելու հիշատակագիրների

⁴⁰⁸ Այս տեսանկյունից ուշագրավ են ԺԵ. դ. իտալական մի շարք ձեռագրերի հիշատակարանների լեզվական քննության արդյունքները. պարզվում է, որ առանձին դեպքերում հիշատակարանի լեզվի ընտրության հարց է եղել՝ ըստ ձեռագրի բովանդակության և ոչ միայն: Այսպես, եթե ձեռագիրն ունեցել է աստվածաբանական, դավանաբանական բովանդակություն, ապա այն ընդօրինակող որոշ գրիչներ իրենց հիշատակարանները շարադրել են լատիներեն, մինչդեռ աշխարհիկ բովանդակությամբ երկերի պարագայում նախապատվությունը տրվել է իտալերենին: Որոշ դեպքերում լատիներեն հիշատակարան գրելը ծառայել է նաև որպէս գիտելիքի դրսևորման միջոց: Օրինակ՝ իտալերեն բնագիրը գրչագրելուց հետո որոշ գրիչներ իրենց հիշատակարանը գրել են լատիներեն՝ ցանկանալով ընդգծել դրա իմացությունը ևս: Մանրամասն տե՛ս **M. Moreton**, *Pious Voices: Nun-scribes and the Language of Colophons in Late Medieval and Renaissance Italy*, “Essays in Medieval Studies”, 29, 2014 (1), pp. 60-61. Չնայած լեզվական որոշ շեղումների՝ լատիներենը բավական երկար շարունակել է մնալ հիշատակարանագրության ավանդական լեզուն եվրոպական ձեռագրական ավանդույթում, տե՛ս **M. Schiegg**, *Scribes' Voices: The Relevance and Types of Early Medieval colophons*, pp. 136-137.

ձգտումը, մյուս կողմից ժամանակի խոսակցական տարբեր շերտերի ազդեցությունն ու հիշատակագիրների կրթվածությունն աստիճանը իրենց ակնառու հետքն են թողել գրավոր այս հուշարձանների լեզվական ընդհանուր նկարագրի վրա: Նշյալ գործոններով են պայմանավորված դասական ձևերի համեմատ այն բազմաթիվ սխալագրությունները, հղովման և խոնարհման համակարգերում նկատվող զուգաձևությունները, գրաբարյան գերծշգրտությունները, բարբառային տարաբնույթ դրսևորումները, շարահյուսական սխալ կառույցները և այլն, որոնք վկայված են հայերեն ձևագրերի հիշատակարաններում⁴⁰⁹ և որոնց առավել մանրամասն մտադիր ենք անդրադառնալ առաջիկայում:

Այստեղ ընդգծենք, որ որքան էլ հիշատակագիրները փորձել են խուսափել իրենց հիշատակարաններում բարբառային կամ միջավայրին հատուկ ժողովրդախոսակցական տարրեր ներմուծելուց, միշտ չէ, որ դա նրանց հաջողվել է. ժամանակի ընթացքում ժողովրդական լեզվի զանազան իրողություններ ներթափանցել են հիշատակարաններ՝ ավանդելով բարբառային հետաքրքիր բառեր ու բառաձևեր: Ըստ որում՝ նման երևույթներն առավել հաճախադեպ են դառնում ԺԶ. և հետագա դարերի հիշատակարաններում:

Հարկ է նկատել նաև, որ ժողովրդախոսակցական լեզվի դրսևորման տեսանկյունից առանձնանում են հատկապես կարճ՝ մեկ-երկու նախադասությունից բաղկացած հիշատակարանները, որոնք սովորաբար գրվել են մատյանի լուսանցքներում կամ ազատ մնացած հատվածներում և ավելի հաճախ առնչվում են տվյալ մատյանի գրչության ընթացքին, գրչի ապրումներին, մինչև անգամ եղանակին: Դրանք շատ հաճախ տարբերվում են նաև իրենց հուղական բովանդակությունը, ուրույն երանգավոր-

⁴⁰⁹ Լեզվական առանձին դրսևորումների քննությանը վերաբերող նյութերը տե՛ս սույն գրքի *Մասնագիտություն* բաժնում:

մամբ և անկաշկանդ լեզվով, որոնք անտարբեր չեն թողնում նաև ընթերցողին: Ուշագրավ այս երևույթը մեզ թույլ է տալիս անելու հետևյալ դիտարկումը. ամենայն հավանականությամբ՝ գրիչներն իրենց գլխավոր հիշատակարանները նախապես հորինել, ստուգել և սրբագրել են, ապա արտագրել մատյանի՝ նախապես առանձնացված հատվածում, իսկ փոքրածավալ այդ գրությունները, որպես կանոն, նման ուշագրության չեն արժանացել. դրանք ավելի շուտ իրադրային (սպոնտան), տվյալ պահով պայմանավորված հիշատակագրություններ են, որոնց գրությամբ ի հայտ են գալիս նաև հիշատակագիրների լեզվական միջավայրն ու նրանց կենդանի խոսքը: 1270 թ. Հակոբոս գրչին ընդօրինակման ժամանակ խիստ նեղություն են տվել քունը և ճանճերը, և բարկացած Հակոբոսը ինչ-որ պահի գրել է. «Ո՛հ, սպանանեաց զիս քունն յայսմ տեղոջ, կենդանի է Տէր, եւս առաւել ճանճն զաչս իմ եհան» [Հիշ. ԺԳ, 392, ընդգծումները մերն են – Խ. Հ.]: Դարձյալ ճանճերից է դժգոհել մեկ այլ գրիչ. «Ո՛հ, զխոշոր թուխթս, որ զիս ի յաջ իզն եբեր, ու ճանճես» [Հիշ. ԺԵ, Ա, 652]: «Գրոցս տերովն հրամանաւն մեծցուցի զգիրս», – կարդում ենք հիշատակարաններից մեկում [Հիշ. ԺԳ, 803]: Սիմեոն գրիչն էլ որդի է ունեցել հավանաբար ձեռագրի ընդօրինակման ժամանակամիջոցում, և նորածնին գիրկն առնելու բերկրանքը դրոշմել է իր հիշատակարանում. «Որդեակ իմ Գէորգ առաք ի գրկակս մեր, ձգեց զձեռն իւր տղայաբար» [Հիշ. ԺԳ, 478]: Ակնհայտ է, որ նշված օրինակներից և ոչ մեկը չէր կարող նախապես մշակված և սրբագրված խոսք լինել. դրանք գրվել են տվյալ պահին՝ որպես պահի արձագանք, որն իր հերթին բացատրում է դրանցում դասական ձևերի փոխարեն ընդգծված շեղումների առկայությունը (սպանանեաց փխ. սպան, տեղոջ փխ. տեղոջ և այլն):

Հաջորդ օրինակը հաստատում է մեր այս դիտարկումը: 1303 թ. աղթամարցի գրիչ Դանիելի ընդօրինակած ձեռագրի գլխավոր հիշատակարանը շարագրված է գրաբար, մինչդեռ նույն ձեռա-

գրի տարբեր էջերին կարելի է տեսնել մանր հիշատակագրություններ ժամանակի խոսակցական լեզվին բնորոշ քերականական ձևերով՝ սահմանական եղանակի կու մասնիկով կազմություն, -եր հոգնակերտի գործածություն, -ած վերջավորությամբ հարակատար դերբայի կազմություն և այլն: Ահա այդ հիշատակագրություններից մեկը. «Աւճղ գայս շո՛քս ու զնաններս զաչխ կու հանեն» [Հիշ. ԺԴ, Ա, 39]: Խիստ ուշագրավ է մեկ այլ փոքրիկ հիշատակարան, որ գրել է Զաքեոս գրիչը 1474 թ. Վայոց Ձորում իր ընդօրինակած Հայսմավուրքի էջերից մեկին. «Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին» [Հիշ. ԺԵ, Բ, 358]: Այս կարճ նախադասության մեջ շատ արժեքավոր է «գրում» անկատար դերբայով բաղադրված սահմանական եղանակաձևը («գրում ի»), որը, փաստորեն, վավերացնում է -ում մասնիկով անկատար դերբայի կիրառությունը, միաժամանակ նաև սահմանական եղանակի կազմության ձևը նշյալ վայրում և նշյալ ժամանակաշրջանում⁴¹⁰:

Լեզվական այս և համանման հետաքրքիր դրսևորումները կարևոր տվյալներ են հաղորդում հայոց լեզվի պատմությանը: Ունենալով շատ հաճախ գրչի թվագրում և գրչավայրի նշում՝ հիշատակարաններում արձանագրված լեզվական ուշագրավ ձևերը ձեռք են բերում վստահելի սկզբնաղբյուրային արժեք և նպաստում լեզվի ամենատարբեր իրողությունների բացահայտմանն ու քննությանը:

Առանձնահատուկ հետաքրքրություն ունի նաև հիշատակագիրների բառապաշարը: Ըստ այսմ՝ հայերեն ձեռագրերի հիշատակարանները մշտապես եղել և շարունակում են մնալ հայ բառարանագիրների ուշադրության կենտրոնում: Կարելի է ասել, որ չկա, թերևս, գրաբարին, միջին հայերենին, վաղ աշխարհա-

⁴¹⁰ Այս մասին տե՛ս նաև Ս. Մ. Անթոսյան, *Բայր և նրա խոնարհման համակարգը*, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 305:

բարին (նաև հայկական հատկանվանագիտությանը) նվիրված մի բառարան, որի աղբյուրների ցանկում հիշատակարաններ նշված չլինեն: Բառարանագիրներից զատ՝ առանձին հետազոտողներ ևս զբաղվել են գրավոր այս հուշարձանների բառային կազմի քննությամբ⁴¹¹, սակայն հայերեն ձեռագրերի հիշատակարանների շարունակական ուսումնասիրությունն ի հայտ է բերում բազմաթիվ բառեր, բառակապակցություններ, դարձվածքներ, որոնք հայոց լեզվի պատմական տարբեր փուլերին առնչվող բառարաններում չեն արձանագրվել կամ լավագույն դեպքում հայտնի են եզակի նմուշներով⁴¹²: Այս վերջինի առիթով նշենք մեկ օրինակ՝ դարձյալ հիշատակելով ԺԴ. առաջին կեսին Աղթամարում գործած բեղմնավոր գրիչ Դանիել կրոնավորին⁴¹³: Վերջինիս հիշատակարաններն աչքի են ընկնում իրենց ծավալով, հագեցվածությամբ, գրագետ շարադրանքով և ուրույն բառապաշարով: 1312 թ. ընդօրինակված Ճաշոցի հիշատակարանն այս տեսանկյունից առանձնանում է [Հիշ. ԺԴ, Ա, 217-221]. գրիչն այստեղ հյուսել է մի ընդարձակ շարադրանք՝ դրանում վերակենդանացնելով և կրկին գործածության մեջ դնելով իրենից շուրջ երեք դար առաջ ապրած Գրիգոր Նարեկացու կերտած այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ նանրախորհուրդ, վրիպալուր, մահաձիգ, մոլորաշալիղ, պատուամատոյց, ունայնաբոյս, սրտացաւաբար և այլն, որոնք մեծ վարդապետը հորինել է իր նշանավոր «Մատյան»-ը գրելիս, և ՆՀԲ-ի հեղինակներին էլ

⁴¹¹ Տե՛ս սույն գրքի *Մատենագիտություն* բաժնում:

⁴¹² Այս մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածում **Խ. Հարությունյան**, *Հայ բառարանագրությունը՝ ԺԸ դարի երկրորդ կեսից սկսյալ, և հայերեն ձեռագրերի հիշատակարանները. նորաստեղծ բառեր Ժ-ԺԲ դարերի հիշատակարաններից*, էջ 158-161:

⁴¹³ Դանիել գրիչ մասին լրացուցիչ տե՛ս Աղթամարի պատմաձևակերպային ժառանգությունը, հեղինակ-կազմող՝ **Կ. Մաթևոսյան**, Սբ. Էջմիածին, 2013, էջ 120-121:

այդ բառերը հայտնի են միմիայն տվյալ երկիր⁴¹⁴: Ուշագրավ է, սակայն, որ Դանիել գրիչը ոչ միայն գործածել է Նարեկացու հարուստ բառապանծից որոշ նմուշներ, այլև ներշնչվել է դրանցով և նարեկացիական ոճով նոր բառեր կերտել, ինչպես՝ գաղձնաբեր (հմմտ. գաղձնաուր – Նարեկացի⁴¹⁵), ունայնասէր (հմմտ. ունայնաբան – Նարեկացի⁴¹⁶), դժնատեսակ, պտղահատոյց և այլն:

Հիշատակարանների բառապաշարի անբաժանելի մասն են կազմում նաև բարբառային բառերը, տարբեր լեզուներից խոսակցական հայերեն ներթափանցած փոխառությունները, հիշատակագիրների բառախաղերը, որոնց գրավոր վկայությունները շատ հաճախ հետաքրքիր տվյալներ են հաղորդում առանձին բառերի կամ բառատարբերակների գործածությունների վերաբերյալ և իրենց վրա են հրավիրում ուսումնասիրողների ուշադրությունը: Որոշ գրիչներ աչքի են ընկնում նաև բառերի ստուգաբանության ուրույն և սրամիտ փորձերով: 1403 թ. Թումա Թավրիզեցի գրիչը մեկնում է Թամուր անձնանունը. «Նեոին կարապետին՝ Թամուրին (նկատի ունի Լենկ Թեմուրին, որը հայկական աղբյուրներում հիշվում է նաև Թամուր Բէկ, Թամուր Ղան, Թամուր Լանկ և այլ ձևերով – Խ. Հ.), որ թարգմանի դա մուր (ընդգծումը – Լ. Խ.), զի ուր եւ հասանէ մթնատեսակ եւ մրրատեսակ առնէ՝ զոմն կողոպտելով, զոմն սպանելով» [Հիշ. ԺԵ, Ա, 31]:

Ամփոփելով պետք է արձանագրել, որ թեև սկզբնավորումից ի վեր հիշատակարանների լեզուն ժանրային ավանդույթի ուժով եղել է գրաբարը, այնուամենայնիվ, գրավոր այս հուշարձաննե-

⁴¹⁴ Նոր հայկազեան բառարանի տվյալների հիման վրա Վ. Առաքելյանը գրում է, որ «Մատյան»-ում Նարեկացու կերտած բառերի թիվը կազմում է 700-750, տե՛ս Վ. Առաքելյան, *Գրիչոր Նարեկացու լեզուն և ոճը*, Երևան, ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 42-43:

⁴¹⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, էջ 524:

⁴¹⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, էջ 549:

րի լեզուն կամ ոճը կարելի է անմիօրինակ համարել: Գրված լինելով տարբեր ժամանակներում, աշխարհագրական տարբեր հատվածներում և իհարկե, տարբեր անձանց ձեռքով՝ հայերեն ձեռագրերի հիշատակարանները առավել կամ պակաս չափով կրել են նաև տվյալ լեզվական միջավայրի ազդեցությունը: Այս վավերագրերը կարևոր սկզբնաղբյուրներ և հարուստ շտեմարան են հայոց լեզվի պատմության տարբեր բնագավառների ուսումնասիրման համար: Ստեղծագործ գրիչների կիրառած լեզվական ինքնատիպ հնարքները, գեղեցիկ և նորակերտ բառերն ու բառակապակցություններն էլ իրենց հերթին ընդգծում են նրանց յուրահատուկ և ստեղծագործ վերաբերմունքը հիշատակարանների լեզվի նկատմամբ:

13. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱՎՈՐ ՆՄԱՆԱԲՆՈՒՅԹ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

«Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա,
եւ անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա»
Եղիշե

Մեզանում այսօր շատ կան անցյալում կերտված արձանագիր տարաբնույթ առարկաներ՝ գորգեր, ասեղնագործ սփռոցներ և նմանիք, խեցեղեն, դռներ, եկեղեցական սպասք, վարագույրներ, տարատեսակ հանդերձներ, զարդեր, կենցաղային զանազան իրեր և այլն: Այս առարկաների վրա դրոշմված արձանագրությունները, առարկայի չափերով պայմանավորված, հիմնականում աչքի չեն ընկնում ընդարձակ շարադրանքով. դրանցում, որպես կանոն, հիշատակված են ստեղծման ժամանակը և որոշ հատկանուններ՝ պատվիրատուի և այն անձի կամ սրբատեղիի, որի հիշատակին կամ որին նվիրված է տվյալ առարկան: «Յիշատակ է Անտոնին Հոգոյն ի դուռն Սուրբ Գէորգայ, թվին ՌՃԺԹ (1670)», – կարդում ենք Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մայրավանքի կանթեղներից մեկի վրա⁴¹⁷, նույն վայրում աշտանակներից մեկի ստորին մասում հետևյալ արձանագրությունն է. «Յիշատակ է մահտեսի Գասպարին ի դուռն Սուրբ Գլխադրին. ՌՄԾԹ (1810)»⁴¹⁸: Շատ հաճախ նման արձանագրությունները կարող են սահմանափակվել անգամ մեկ անձնանվամբ և ստեղծման թվականով: 1786 թ. կերտված մի փսեթի վրա կարդում ենք.

⁴¹⁷ Յիշատակարանք սպասուց Սրբոց Յակոբեանց մայր տանարի, պատրաստեց Բ. վրդ. Գալեմտերեան, Երուսաղեմ, 2008, էջ 41³⁷:

⁴¹⁸ Նույն տեղում:

«Մարտիրոսի որդի Եղիեայ, ՌՄԼԵ. (1786)»⁴¹⁹, մեկ այլ փոստին հետևյալ գրությունն է. «Ի վայելումն Աղասին, ՌՄԽԷ. (1798)»⁴²⁰: 1810 թ. կերտված թասն էլ ունի այս արձանագրությունը. «Գրիգոր պատրիարզն Պօլսոյ ետ յիշատակ Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն, որ ի գեօղն էջմիածնի, 1810»⁴²¹ և այլն:

Չափերով ավելի մեծ առարկաներն այս հարցում ավելի շատ հնարավորություններ են ընձեռում: Սրբոց Հակոբյանց վանքի վարագույրներից մեկի վրա կարելի է կարդալ հետևյալ գրությունը.

«Յիշատակ է վարագոյրս հանգուցեալ Ծամիր Սուլթանումեանին դուստր եւ Թաղեանց Յարութիւն Յակոբեանին կողակից հանգուցեալք Թամարին եւ դրստերն՝ Աննայ: Էտ ի վայելումն աստուածակոյս քաղաքն սուրբ Երուսաղէմայ, որ ընծայեցաւ ի ժամանակի պատրիարգութեան արբազան Պետրոս արքեպիսկոպոսին եւ ձեռամբ ի անանւ առաքեցեալ արբակոսն տէր Սարգիս ծայրագոյն վարդապետին եւ նուիրակին առ Հնդիկա՝ ի Մաղրաս, մայիս ամսոյ 1 եւ ամի Տեառն 1798»⁴²²:

Այստեսակ գրությունները նույնպես հիշատակարաններ են բառի ավելի լայն իմաստով, քանի որ գրություններն ընդունած առարկաները, ինչպես և ձեռագիր մատյանները, պատվիրվել, կերտվել կամ նորոգվել են հիշատակման արժանանալու և հոգևփրկութեան ակնկալիքով. այլ խոսքով՝ սրբավայրերին նվիրված սպասքը կամ մատյաններն ունեն հոգեփրկչական միևնույն գործառույթը: Նշանավոր բանահավաք Գ. Սրվանձտյանցն

⁴¹⁹ Ա. Հարությունյան, Ա. Բաբաջանյան, Պղնձն արձանագիր առարկաներ Սարդարասպատի Հայոց ազգագրության թանգարանից, «Մեդրակ Բարխուդարյան – 120», Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., Երևան, 2019, էջ 143s:

⁴²⁰ Նշվ. աշխ., էջ 144r:

⁴²¹ Նշվ. աշխ., էջ 145r:

⁴²² Բ. վրդ. Գալեմտերեան, նշվ. աշխ., էջ 54s:

այսպես է գրում: «Եւ, բազումք՝ խաչ, սկիհ, գգեստ, աւետարան, շարական եւ այլն, կռել, կարել եւ գրել տալով, կամ խորան մը, յարկ մը կառուցանելով, իրենց անունն օրհնութեան արժանի ըրած են, եւ ի Քրիստոսէ վարձք ստանալու հաւատով աշխարհէս մեկնած, եւ յաշխարհի ապրած են»⁴²³: Եվ պատահական չէ, որ հիշատակի ստացման «բանաձևը» նույնն է գրավոր այս հուշարձաններում՝ անկախ առարկայի տեսակից: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի պատարագամատույց սեղաններից մեկի մոմակալի և ձեռագիր մատյանի հիշատակագրությունները՝ ստորև բերվող համեմատությունը ևս այդ մասին է վկայում:

ՋԵՌԱԳՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Յիշատակ է այս Մաշտոցս Ծառհուզիմ եւ իւր կողակցիմ՝ Մանուշակիմ, եւ իւր որդոցմ՝ Նաւրուզիմ, Ծաքարիմ, հարսնէրուն՝ Խաթունիմ, Մայրամիմ. ամէն» [Հիշ. ԺԷ, Ա, 35-36]:

Ահա ևս մեկը՝

ՋԵՌԱԳՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Յիշատակ է տետրակս Տիլանիմ եւ հօրմ՝ Ծատարեւիմ, մօրմ՝ Խանտուլթանիմ, հօրեղբօր՝ Խումարիմ, Բարսեղիմ, ի դուռն Սուրբ Կարապետիմ. թվիմ ՌՂԵ (1646)» [Հիշ. ԺԷ, Գ, 221]:

ՄՈՄԱԿԱԼԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Յիշատակ է աշտանակս Ծամբեցի մահուեսի Միրզի որդի՝ մահուեսի Անտրիասի եւ իւր որդոց՝ Յարութիւնիմ, Միրզայիմ, Կարապետիմ»⁴²⁴:

ՋԵՌԱԳՐԻ ՍՓՈՌՑԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Յիշատակ է Յովակիմիմ, Աննայիմ, Վարդենիիմ ի դուռն Սուրբ Աստուածածնիմ, որ ի Տըրապիզոն. ՌՄԽԹ (1800)»⁴²⁵:

⁴²³ Թորոս աղբար, մասն Բ., էջ 245-246:

⁴²⁴ Բ. վրդ. Գալէմտէրեան, նշվ. աշխ., էջ 45⁶⁰:

⁴²⁵ Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ 1, Հայերեն արձանագրությանը առարկաներ, աշխատասիրությանը Ե. Մուշեղյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 113¹⁵⁰:

Օրինակների թվարկումը կարելի է դեռ երկար շարունակել, սակայն վերը նշվածներն էլ բավական են գրավոր այս հուշարձանների ընդհանրություններն ընդգծելու համար: Նմանատիպ իրերի վրա առկա գրությունների առիթով մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ձեռագիր հիշատակարանների հետ այստեսակ գրությունների ընդհանրությունները հիմնականում արտահայտվում են ստացողի (կամ ում հոգու փրկությունը նվիրված է տվյալ իրը) անվան հիշատակման, թվականի գրանցման, երբեմն էլ ընծայման վայրի նշման բաղադրիչների սահմաններում: Միաժամանակ պետք է նկատել, որ համեմատաբար ծավալուն արձանագրությունները, ինչպիսիք հանդիպում են դռների կամ վարագույրների վրա, ընդարձակում են այդ ընդհանրությունների շրջանակն ու սահմանները:

Պատկերը բոլորովին այլ է վիճաբեր և ձեռագիր հիշատակարանների համեմատության պարագայում. գրանյութով և գրչությամբ եղանակներով տարբեր գրավոր այս հուշարձանները նկատելի ընդհանրություններ ունեն միաժամանակ բովանդակային, կառուցվածքային և լեզվաոճական դիտանկյուններից: Միավրած չենք լինի, եթե ասենք, որ ձեռագիր հիշատակարանների համար մեր առանձնացրած բաղկացուցիչ տարրերի և նրանց դրսևորումների զգալի մասը բնորոշ է նաև վիճագրերին: Նույնիսկ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «գրիչ», «կազմող», «գծող», «նկարող» կամ «կազմել», «ծաղկել» և այլն, որոնք, թվում է՝ զուտ ձեռագրակերտմանն առնչվող եզրեր են, կիրառություն են գտել նաև վիճագրերում⁴²⁶, որոնք իրենց հերթին երբեմն «հիշատակարան» են կոչվել: Ահա մի քանի օրինակ. Գնդեվանքի 1309 թ. մի արձանագրության ավարտին

⁴²⁶ Այս տեսանկյունից ուշագրավ է խաչքարագործ վարպետների առիթով Հ. Պետրոսյանի այն դիտարկումը, ըստ որի՝ միջնադարում այդպես էլ չստեղծվեց միասնական մի եզր այս մասնագիտության տեր անձանց անվանելու համար: Թերևս դրանով պետք է բացատրել «գծող», «կազմող» և նմանատիպ այլ բառերի կիրառությունը վիճագրերում: Տե՛ս Հ. Լ. Պետրոսյան, *Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը*, էջ 241:

կարդում ենք. «Գրիգոր գրիչ յիշեցէ՛ք»⁴²⁷: 1216 թ. Լմբատավանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու ընդարձակ վիճազրի վերջում Մանասե վիճազրիչն իր անունը փորագրել է տառերի հակառակ դասավորութեամբ այնպես, որ ընթերցվում է ԶԻՐԳԵՍՍՆԱՄ (=Մանասե գրիչ. ճիշտ նույն եղանակով, որը կիրառել է Անդրեաս գրիչը նկ. 11-ում)⁴²⁸: Արենիի Սուրբ Աստվածածին եկեղեցու արևմտյան մասում գտնվող խաչքարի 1559 թ. արձանագրութեան մեջ վկայված է «Ակոբ նկարող»-ը⁴²⁹: Մեկ այլ վիճազրում կարդում ենք. «Կազմեցաւ ձեռամբ Շնհաւորիս ի թվին ԶԼԲ. (1283). որք ընթեռնուք, յիշեցէ՛ք ի Տէր»⁴³⁰: Գեղարքունիքում նշանավոր է եղել Քիրամ կազմողը. «Ես՝ Քիրամս, խաչս կազմեցի», – կարդում ենք նրա արձանագրություններից մեկում⁴³¹: Ուշագրավ մի օրինակ է նաև Սևանավանքի նշանավոր դռան արձանագրությունը, որից քաղում ենք մի փոքրիկ հատված.

«Ծաղկեցաւ դուռն տաճարիս
Առաքելոցն Քրիստոսի,
Զեռամբ սորին աշակերտի
Անարժանի Աբրահամի,
Նաեւ եղբար մեր սիրելի
Շնորհաւք ի լի Գրիգորիսի»⁴³²:

⁴²⁷ Դիվան հայ վիճագրության, պր. III, Վայոց ձոր. Եղեգնաձորի և Ազիզբեկովի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 1610:

⁴²⁸ Դիվան հայ վիճագրության, պր. X, Շիրակի մարզ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2017, էջ 70-71¹⁰³⁻¹⁰⁴:

⁴²⁹ Դիվան հայ վիճագրության, պր. III, էջ 3166:

⁴³⁰ Նշվ. աշխ., էջ 183⁵⁶³:

⁴³¹ Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարոզող վարպետներ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1963, էջ 193⁶⁴:

⁴³² Հ. Ղ. մ. Ալիշան, Միասկան, տեղագրություն Միւնեսց աշխարհի, Վենետիկ, Ս. Ղազար, 1893 էջ 84: Տե՛ս նաև Տեղագիր Գեղարքունի ծովագաղղ գաւառի, որ այժմ՝ Նոր-Բայազիտ գաւառ, գրեց Մ. արքեպս. Սմբատեանց Նախիջեւանցի, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1895, էջ 120:

Հանգավոր այս արձանագրությունն ավելի շատ նման է ծաղկողի մի իսկական հիշատակարանի, որպիսիք հաճախաբար են ձեռագիր մատյաններում, և դա, անշուշտ, պատահական չէ. նույն Աբրահամը միաժամանակ դասվում է ժե. դարի արդյունաշատ և տաղանդավոր գրիչ-ծաղկողների շարքին, որից մեզ հայտնի են մեկ տասնյակի չափ ձեռագրեր⁴³³, իսկ Սևանավանքի նշյալ դռան գեղարվեստական հարդարանքը խիստ նման է Աբրահամի կերտած «Հոգեգալստյան» տեսարանն արտահայտող մանրանկարին՝ պատկերված 1450 թ. ընդօրինակված մի ծաշոցում⁴³⁴:

Առանձնանշելի է, որ գրավոր այս երկու հուշարձանների նմանություններն առաջին հերթին պայմանավորված են նրանց ստեղծման նպատակով և գործառութային ընդհանրություններով: Ինչպես ձեռագիր, այնպես էլ վիմագիր հիշատակարանները հիմնականում գրվել են որպես տվյալ հուշարձանի պատվիրման, ստեղծման, նորոգման կամ հուշարձանին արված նվիրատվության վավերագրեր, որոնցում գրեթե միշտ արձանագրվել են նրանց ստեղծողների, մեկենաս-ստացողների, նվիրատուների, նորոգողների և այլոց անունները՝ որպես կենաց մատյանում բարի գործերով հիշատակված լինելու առհավատոյա: Մի դեպքում մագաղաթի կամ թղթի, մյուս դեպքում որևէ կարծր իրի վրա իրենց և իրենց հարազատների համար հիշատակագրերը հայցել են աստվածային ողորմություն, սրբերի բարեխոսություն և իբրև հոգու փրկության միջնորդ՝ հանդես է եկել այն ձեռակերտ առարկան կամ աստվածահաճո գործը, որը կյանքի է կոչվել հենց այդ նպատակով: Ձեռագիր հիշատակարաններից մեկում կարդում ենք.

⁴³³ Ն. արքեպ. Ծովական [Պողարեան], Հայ նկարողներ (ԺԱ.-ԺԷ. դար), էջ 119-122: Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ. մատենագիտություն, IX-XIX դդ., էջ 21-25:

⁴³⁴ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Թ., կազմեց Ն. արքեպ. Պողարեան, Երուսաղեմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1979, էջ 543:

«Ո՛վ տիրամայր Աստուածածին,
Լե՛ր բարեխաւս քո Միածնիս...
Ողորմեա՛ Յոխանիսիս՝
Սուտանուն քահանայիս» [Հիշ. ԺԵ, Բ, 110]:

1479 թ. խոջա Հովսեփը Ավետարան է ստացել և գրչի ձեռքով հետեյալը գրողմել հիշատակարանում. «...ունելով զսուրբ Աւետարանս միջնորդ եւ անբարբառ բարեխաւս առ Միածին Որդին Աստուծոյ, եւ յիշատակ անջինջ հոգոյն իւրոյ ի սուրբ եկեղեցի» [Հիշ. ԺԵ, Բ, 438]: Միևնույն ժամանակ վիմագրերում և հատկապէս խաչքարային արձանագրություններում հաճախադեպ են «Խաչս բարեխաւս է» կամ «Կանգնեցի / Կանգնեցաւ խաչս ի բարեխաւսութիւն» և նմանօրինակ կապակցությունները, որոնք նույնպէս ընդգծում են այդ հուշարձանների հոգեփրկչական նշանակությունը: «Խաչս բարեխաւս է Զոհրապին, թվին ԶՂԳ. (1545)», – կարդում ենք կարճառոտ մի արձանագրության մեջ⁴³⁵, նմանատիպ մեկ այլ գրություն է 1660 թ. կերտված տապանքարին. «Սուրբ խաչս բարեխոս Սամուէլին. թվին ՌՃԹ. (1660)»⁴³⁶: Մեկ ուրիշում արձանագրված են հուշարձանը կանգնեցնողի և հիշատակը ստացողի անունները. «Ես՝ Միրզայ Մկրտիչ, կանգնեցի զխաչս հաւրն մեր Աթանասին թվին ԶՂԳ. (1544)»⁴³⁷ և այլն:

Այստեղ տեղին ենք համարում կրկին մեջբերել Համազասպ երեցի հիշատակարանից մի հատված, որում հիշատակագիրը պարզաբանում է.

«Յաղակս փրկութեան հոգոց իրեանց... ոմանք շինեն եկեղեցի՝ տուն Աստուծոյ, եւ ոմանք կանգնեն խաչս՝ յանուն խաչելոյն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է բարեխաւս առա-

⁴³⁵ Գիվան հայ վիմագրոյթյան, պր. IV, Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1973, էջ 172⁷⁰²:

⁴³⁶ Նշվ. աշխ., էջ 194⁷⁹⁸:

⁴³⁷ Նշվ. աշխ., էջ 205⁸⁵⁷:

ջի աճեղ աստեճին Քրիստոսի, եւ ոմանք կարողանան գրել գիրս առաքելոց եւ ի մարգարէից, նայ եւ զտէրունական հրամանքն, որ է Աւետարան, զի ոմանք գերի ազատեն յանուն ազատողի Քրիստոսի, որ ազատեաց զԱդամ ի ձեռաց սատանայի»⁴³⁸:

Համազասպ երեցի նշյալ տողերն ամբողջացնում են այլ հիշատակագիրներէ խոսքերը.

ՋԵՌԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Սուրբ Աւետարանիս ստացաւ եղէ ես՝ Սարկաւագ կրաւնաւոր, եւ ետու գծագրել... վասն անոնաց յիշատակի եւ փրկութեան հոգոյ իմոյ եւ ծնաւդաց եւ եղբարց իմոց» [Հիշ. ԺԳ, Ա, 70]:

ՎԻՄԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«ՈՂԴ (1245) ես՝ Ամադ, կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգոյ իմոյ: Որ կարդայք, յաղաթս յիշեցէ՛ք»⁴³⁹:

Ահա հիշատակի ստացման ևս մեկ կաղապար՝ դարձյալ հոգու փրկութեան սպասումով.

ՋԵՌԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Արդ, ես՝ Բոնաւորս, մեղուցեալ ծառայ Աստուծոյ եւ ամուսին իմ Տղայտիկին՝ աղախին Քրիստոսի, ոչ ունելով մարմնաւոր զաւակ, ցանկացող եղաք հոգեւոր զաւակի...» [Հիշ. ԺԳ, 194]:

ՎԻՄԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Կաման Աստուծոյ ես՝ Հազարի եւ ամուսին իմ՝ Մլըք, ոչ ունէաք զաւակ երկրաւոր, ստացաք զաւակ անձեռանալի զսուրբ Աշանս»⁴⁴⁰:

⁴³⁸ Մ. վրդ. Մաքսուտեան, *Նկարագրութիւն և յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանոց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց*, «Արարատ», 1911 (3), էջ 218:

⁴³⁹ *Դիվան հայ վիմագրութեան, սյր. V, Արցախ, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1982, էջ 68*¹⁸⁸:

⁴⁴⁰ *Դիվան հայ վիմագրութեան, սյր. III, էջ 224*⁷⁰⁹:

Հոգևոր զավակը, որը մի դեպքում Ավետարանն է, իսկ մյուս դեպքում՝ կանգնեցված հուշարձանը, Ահեղ դատաստանի օրը ծառայելու է իբրև միջնորդ և բարի գործերի արդյունք, այդպիսով նաև՝ հիշատակագիրների կամ հիշատակը ստացած անձանց հոգիների փրկության գրավական: Վիմագրերում էլ երբեմն կարելի է գտնել հիշատակարաններում տարածված սուրբգրային այն միտքը, որ դատաստանի օրը խոսքերը սպառվելու են, և գործերն են թագավորելու. «Կանգնեցի զնշան սուրբ Երրորդութեանն վասն իմ հոգոյս փրկութեան, թերեւս ողորմութիւն գտից ի յապագային ի տիեզերակալ հրապարակին, ուր բանքն ըսպառին եւ գործքն թագաւորեն», – կարդում ենք Յաղաց քարի արձանագրություններից մեկում⁴⁴¹: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ միանգամայն պարզ է դառնում գրավոր այս երկու հուշարձանների՝ գործառութային միևնույն նպատակադրումով պայմանավորված ընդհանրությունները:

Վիմագրիչներն էլ ձեռագրի գրիչներին նման իրենց ընդարձակ շարադրանքը սկսում են այն հավաստումով, որ գործը ձեռնարկվել և ավարտին է հասցվել աստվածային ցանկությամբ և օժանդակությամբ: Իբրև այդ բաղադրիչի արտահայտություն՝ դարձյալ կիրառվում են «Կամաւն Աստուծոյ», «Շնորհիւ Տեառն» և նման կաղապարային արտահայտություններ:

ՁԵՌԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՎԻՄԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Ի թվին ՉՀԴ.ին (1325) կամաւ ամենակալին Աստուծոյ եւ՝ տէր Վանական, գտի ճնացել եւ աւերել գտորք Աւետարանս եւ ետու

«Ի թվին ՊԵ (1356) կամաւն Աստուծոյ եւ՝ Սամասար վարդապետ, միաբանեցայ Սուրբ Աստուածածնիս ետու :Ա: (1) արծաթի

⁴⁴¹ Հ. Լ. Պետրոսյան, *Իտալքար, ծագումը, գործարտչոյր, պատկերագրոյթյունը*, էջ 253:

վերստինն անորոգել» [Հիշ. ԺԳ, Ա, 513]:

Շնորհիւ եւ ողորմութեամբ ամե-
նախնամ Աստուծոյ յանկ եղեալ
կատարեցաւ մատեանս» [Հիշ.
ԺԳ, 390]:

խաչ ու ալ գրեանք»⁴⁴²:

«Շնորհիւն եւ ողորմութեամբն
Աստուծոյ ես՝ Աստուածատուր, եւ
ամուսին իմ՝ Խաթութ, կանգնեցաք
սուրբ Գշանս»⁴⁴³:

*Ընդարձակ վիճազրերում սկզբի այս կաղապարին կարող են
հաջորդել լրացուցիչ տեղեկութիւններ պատվիրատուի կամ նրա
հարազատների, տվյալ հուշարձանի, նրա կերտման հանգա-
մանքների, նպատակների և այլնի մասին: Ձեռագիր հիշատակա-
րանների նման վիճազրերը ևս աչքի են ընկնում բովանդակա-
յին բազմազանութեամբ⁴⁴⁴, հուշարձանի ստեղծման կամ հիշա-
տակի գրութեան ժամանակի պարտադիր նշումով, ժամանակի
հոգևոր ու աշխարհիկ առաջնորդների, պատվիրատուների,
նվիրատուների, հիշատակը ստացողների, նրանց հարազատների
և այլոց անունների հիշատակումով⁴⁴⁵: Խաչքարերի արձանա-
գրութիւններում սովորաբար նշվում են նաև վարպետների
անունները, որով վերջիններս դարձյալ մերձենում են ձեռագրե-*

⁴⁴² Դիլիան հայ վիճագրության, սյր. IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Գ. Բարխուդարյան, Կ. Գ. Ղաֆադարյան, Ս. Տ. Սաղումյան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2012, էջ 81¹³⁸:

⁴⁴³ Նշվ. աշխ., էջ 294⁶¹⁹:

⁴⁴⁴ Վիճագրագետ Գ. Գրիգորյանը վիճագրերը, ըստ բովանդակության, դասակարգում է 6 խմբի՝ «հիշատակագրային, շինարարական, նվիրատվական, իրավա-կանոնական, կրոնա-բարոյախոսական, խառն»: Տե՛ս Գր. Գրիգորյան, Հայկական վիճագրություն, Երևան, Չանգակ հրատ., 2000, էջ 67:

⁴⁴⁵ Գրավոր այս երկու հուշարձաններում հիշատակվող անձնանունների վերաբերյալ տե՛ս մեր դիտարկումը. Խ. Հարությունյան, Անձնանունները վիճագրերում և ձեռագրերի հիշատակարաններում. Նորահայտ անձնանուններ վիճագրերից, «Սեդրակ Բարխուդարյան – 120», գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., Երևան, 2019, էջ 121-124:

րին⁴⁴⁶: Վիմագրերը հարուստ են նաև ծածկագրերով, կենցաղի ամենատարբեր երևույթների մասին նշումներով, սուրբգրային վկայակոչումներով և մի շարք այլ դրսևորումներով, որոնք իրենց զուգահեռներն ունեն ձեռագիր հիշատակարաններում, և ավելորդ ենք համարում դրանց առանձին թվարկումն այստեղ:

Գրավոր այս հուշարձաններում հորդոր-խնդրանքները ևս նույնն են՝ չփչացնել հուշարձանը, չվնասել նրա գիրը և հատկապես, չեղծել անունները: Խնդրանքի առանցքային մասը շարունակում է մնալ հիշատակված անձանց «յիշման արժանի առնել»-ը, որ կրկին արտահայտվում է «յիշէ՛ք», «յիշեցէ՛ք», «յիշման արժանի արասջիք» և նմանատիպ բառաձևերով: Պատգամներին չհետևողներին են հասցեագրված ձեռագիր հիշատակարաններից մեզ քաջածանոթ անեծքները.

ՁԵՌԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՎԻՄԱԳԻՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

«Զինչ մարդ, որ զսայ կտրել ջանալ, խեղութեամբ ՅԺԸ (318) հայրապետացն Ագովել եղիցի» [Հիշ. ԺԳ, 785]:

«Թէ ոք յանդգնի գողանալ զսայ, կամ վանառել, կամ գրաւել, կամ զինչ և ե պատճառի հեռացուցանելոյ ի դրանէ Աստուածածնիս Աղթամարու, ինքն հեռացեալ եղիցի յողորմութենէն Քրիստոսի եւ մասն եւ բաժին գՅուդայիս եւ իսաչողացն աոցէ, ո ոք եւ է՝ թէ՛

«Որ զգրելս մեր խափանէ ի յիմոց կամ յաւտարաց, :Գ: հարիւր :ԺԸ: հայրապետացն Ագովել եղիցի»⁴⁴⁷:

«Էթէ ոք յիմոց կամ յաւտարաց, ի մեծաց կամ ի փոքունց զգեղն իւլէ կամ հակառակ կա եւ զմեր յիշատակն խափանէ, Յուդայի եւ իսաչահանուացն մասնակից է, :ՅԺԸ: (318) հայրապետացն Ագոված է, մեր ազգի եւ մեր մեղացն պարտական է առաջի Աստուծոյ»⁴⁴⁸:

⁴⁴⁶ Տե՛ս Հ. Լ. Պետրոսյան, *Խաչքար, ծագումը, գործառույթը, պատկերագրությունը*, էջ 240:

⁴⁴⁷ *Դիվան հայ վիմագրության*, պր. I, էջ 1962:

⁴⁴⁸ *Դիվան հայ վիմագրության*, պր. IX, էջ 367⁸⁰⁸:

երէց, թէ՛ աշխարհակամ, թէ՛ այր
եւ թէ՛ կիմ» [Հիշ. ԺԴ, Ա, 120]:

«Որք ընթեռնուք, յիշեցէ՛ք» [Հիշ.
ԺԵ, Ա, 211],

«Որք ընթեռնուք, յիշեցէ՛ք ի
Տէր»⁴⁴⁹:

«Ով կարդէք, յաղաթս յիշե-
ցէ՛ք»⁴⁵⁰:

Հատկանշական է, որ գիրը եղծողին ու անուն ջնջողին անեծքներ են հասցեագրվել նաև սեպագիր արձանագրու-թյուններում: Կ. Բասմաջյանի վերծանությամբ Ջվարթնոցի տաճարի հայտնի սեպագիրն ավարտվում է գիրը եղծողին կամ նրա բովանդակությունն իրեն վերագրողին ուղղված նզով-քով⁴⁵¹, և առհասարակ, անցյալի գրավոր այս հուշարձանների ուշագիր դիտումը վերհանում է հետաքրքիր մի շարք ընդհան-րություններ, որոնք հիշատակարանագրության ակունքները պատմության շատ ավելի խորքերն են տանում⁴⁵²:

Առանձին հետաքրքրություն կարող է ունենալ վիմագրական կաղապարների ուսումնասիրությունը, որը ցայսօր հետազոտ-ված չէ: Ձեռագրերի հիշատակարանների առիթով արդեն նկատել ենք, որ կաղապարները կարող էին ունենալ միջավայ-րին հատուկ բառային կամ ոճական առանձնահատկություններ,

449 Դիվին հայ վիմագրության, պր. III, էջ 183⁵⁶³:

450 Նշվ. աշխ., էջ 185⁵⁶⁹:

451 Կ. Բասմաջյան, *Չուպրթնոց եկեղեցու բեռնաձեռն արձանագրությունը*, «Արարատ», 1901 (4), էջ 225-226:

452 Այս տեսանկյունից հատկապես ուշագրավ են ասորա-բաբելոնական սեպա-գրերում նկատվող հիշատակագրության նմուշները, որոնք պարունակում են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են փորագրիչի և պատվիրատուի անունները, գրչի հորդոր-ցանկությունները, գրչության ժամանակը, անեծքներ, օրհնանքներ և այլն: Մանրամասն տե՛ս **C. Karasu**, *Observations on the Similarities and Differences between the Hittite and Babylonian-Assirian Colophons*, “Akten des IV Internationalen Kongress für Hethitologie, Würzburg, 4-8 Oktober 1999”, ed. G. Wilhelm (StBoT 45), Wiesbaden: Harrassowitz, pp. 248-254.

